



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1999

2000

43825-62

# ՄՐԵԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հիմ կոտակարանի

ՀԱՅ ՏԱԿԵՆ ԵՒ ԱԴՋԱՆԵՑ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

2210



Աշխատասիրեց Պ. Ս. Հայոց  
[Handwritten note: Եպիփանիա]

~~~~~+800101000000+~~~~~

ԱՌԵՑՈՒՅ

1872



ԹԻՖԼԻԶ

28285-62 թ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՑՈՒՄԱՅ ԵՆԹԱԶԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

ԱՐԴՅՈՒՆ ՎԱՐԺԱՐ

Եպարքայի օրենսդրություն

Եպարքայի օրենսդրություն

Եպարքայի օրենսդրություն



---

Дозволено Цензурою Тифлисъ 3-го Февраля 1872 года.

---

28 1919

1812-600

ՏՀ - 708888

ԻՐ ՍԻՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ

ԵԿ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

աշխատասիրողը

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԲ:

Սկզբում ստեղծեց Աստուած Երկնքն և Երկիրը.  
բայց Երկիրն էր անպատճառ, ծածկած խաւարով  
և ջրով և Աստուծոյ Հոգին շրջում էր ջրերի վերաց:

Աստուած ասաց. «Թող լինի լրյա» և Երևեցաւ լրյա:  
Աստուած անուանեց լրյար օր և խաւարը գիշեր: Եւ ե-  
ղաւ Երեկոյ և եղաւ առաւօս՝ առաջն օրը:

Աստուած ասաց. «Թող լինի հաստատութիւնը» և  
Երևեցաւ հաստատութիւնը կամ Երկնքը, որ տեսնում  
ենք: Եւ եղաւ Երեկոյ և եղաւ առաւօս՝ օր Երկրորդ:  
Ասաց Աստուած. «Թող հաւաքվին ջրերը միասին և Երեկի  
ցամաքը», և ջրերը բաժանվեցան ցամաքից, կազմեցին լը-  
ճեր, գետեր և աղբիւրներ, որոնք վազում են և թափում  
ջրերի մեջ ժողովի մէջ: Աստուած անուանեց ջրերի այս  
մեջ ժողովը ծով և ցամաքը գետին կամ Երկիր: Աստ-  
ուած հրամայեց Երկիրին տալ իրենից տունկեր և նա ծածկը  
վեցաւ խոսով, ծաղկներով, թփերով և ծառերով,  
որոնք տալիս են պտուղներ, ամենը իւր կերպով: Եւ եղաւ  
Երեկոյ և եղաւ առաւօս՝ օր Երրորդ:

Ասաց Աստուած. «Թող Երևին լուսաւորները Երկնա-

յին հաստատութեան վերայ, նոքա պէտք է լուսաւորեն և տաքացնեն երկիրը, բաժանեն օրը գիշերից և ցյց տան ժամանակը՝ օրերը և տարիները։ Եւ փայլեցաւ արեգակը՝ օրուան լուսաւորը և գիշերը երկեցան լուսինը և աստղերի անթիւ բազմութիւնը։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր չորրորդ։

Դեռ չկար երկրիս վերայ ոչ մի կենդանի, որ զուարձանար Աստուծոյ այս գեղեցիկ արարածներով։ Այն ժամանակ ասաց Աստուած, «Ժող լքցվն ջրերը ձիներով և օդը թռչուններով, որոնք թռչում են հաստատութեան տակ»։ Եւ ջուրը լքցվեցաւ զանազան մեծ և փոքր ձիներով և թռչունները սկան թռչել օդում։ Աստուած օրհնեց նրանց, ասելով, «աճեցիք և բազմացիք, լքցրէք ջրերը և թռչունները թռջ բազմանան երկրիս երեսին»։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր հինգերորդ։

Ասաց Աստուած, «Ժող լինին երկրիս վերայ կենդանիք», և զանազան անսասուններ, զեռուններ և զազաններ երկեցան երկրիս վերայ։ Սարերի ծայրին և ձորերի մէջ, ամէն տ' յայտնիեցաւ կեանք և ուրախութիւն։ Աստուած ասաց, Եկ ստեղծենք մարդուն մեր պատկերով և նմանութեամբ և ժող տիրէ նա ծովային ձկներին, երկնային թռչուններին և ամէն արարածներին, որոնք կենում են երկրիս երեսին։ և ստեղծեց Աստուած մարդուն։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր վեցերորդ։

Եյալէս ստեղծեց Աստուած աշխարհս ոչնչեց, միայն իւր ամենակարող խօսքով։

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԴՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Երբ երկինքը և երկիրը ամէն իր զարդերով պատրաստ էին, Աստուած առաւ գետնից հող ստեղծեց նրանից մարդուն, կենդանացըրեց նրան իւր չոգուով՝ տուեց նրան հոդի անմահ և անուանեց նրան Ադամ։ Աստուած դրաւ իւր ստեղծած մարդուն ամենագեղցիկ նդեմայ դրախտի մէջ, ժողովեց նորա մօտ ամէն կենդանիներուն և Ադամը տուեց նրանց անուն, ամէնին համեմատ իր բնաւորութեան։ Բայց բոլոր արարածների մէջ չկար արարած նրան, նման։ Աստուած ասաց. «մարդուն համար լսու չէ մէնակ լինելը, Եկ ստեղծենք նրան օգնական», իւր նման։ Աստուած զցեց Ադամի վերայ խորը քուն, առաւ նորա կողերից մէկը և ստեղծեց նրանից կին։ Սրան տեսնելով Ադամ ասաց. «Սա է ոսկր իմ ոսկրներից և մարմին իմ մարմնից»։ Նա անուանեց կնոջը Եւա, որ նշանակում է կենդանիների մայր։ Աստուած օրհնեց նրանց ասելով. «աճեցիք, բազմացիք, լքցրէք երկիրը, իշխեցիք նրան, տիրեցիք ծովի ձկներին, երկնքի թռչուններին, երկրիս ամէն անսասուններին, գաղաններին և վեռուններին»։

Եյալէս Աստուած առաջին երկու մարդոց ձեռքով օրհնեց բոլոր մարդկութիւնը հայրական սիրով և կարգեց ամուսնութեան սուրբ կապը։

Աեց օրում վերջացնելով Աստուած իւր արարչագործութիւնը, աեսաւ որ ամէն բան բարի էր։ Յօթներորդ օրը հանգստացաւ Աստուածիւր գործերից և սրբ-

բեց այս օրը: Այս ժամանակից դրած է պատուիրան, վեց օր աշխատել և եօթներորդ օրը նուիրել բարեգործութեան և մանաւանդ Աստուծոյ պաշտօնին:

ԳԼՈՒԽ Գ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴՈՅ ԱՆՄԵՂ ԿԵԱՆՔԸ ԴՐԱԽՏԻ ՄԷջ:

Աղամ և Եւան էին անմեղ և ազատ ցաւերից և մահից: Նոքա բնակում էին գեղեցիկ պարտիզի մէջ, որ նոցա համար Աստուած ինքը տնկել էր և ոռոգանում էին նրան չորս մեծ գետեր: Ամէն կենդանիները հպատակում էին մարդուն և նա չուներ պատճառ նոցա գաղանութիւնից վախենալու: Զգիտենալով մեղք, Աղամ և Եւան չորերի կարօտութիւն էլ չունին և չին ամաչում բողոքալին իրենց մերկութիւնից, անմեղ երեխաների նման: Նոքա չէին զգում և տրտմաւթիւն: Վերջապէս երես երեսի խօսակցում էին նոքա իրենց արարչին և նորա հրեշտակների հետ, որ երջանկութեան կատարելութիւնն է: Եգեմի երկային դրախտին մէջ կային ամենիեր ծառեր, որ դուքալի էին աչքի համար և տալիս էին քաղցրահամ պատուղներ. դրախտի մէջտեղում էին երկու հրաշալի ծառեր՝ այն է կենաց ծառը և բարւոյ ու չարի գիտութեան ծառը: Աստուած ասաց Աղամին: «Աեր այս պարտիզի ամէն ծառերի պատուղներից, միայն մի ուտեր բարւոյ և չարի գիտութեան ծառի պտղեց: Երբ կ'ուտեք այս ծառի պաղեցը, խաղյն անպատճուռ կ'մեռնէք»: Այս պատուիրանքով կամեցաւ Աստուած փորձել Աղամին և Եւային, որովհետեւ միայն անպայման:

Խոնարհութեամբ և երեխայական հնագանդութեամբ նոքա կարող էին ցոյց տալ թէ իրենց կատարեալ հպատակութիւնը, թէ Ճմարիտ մերը և թէ հաւատարմութիւնը գետի երկնային Հայրը:

ԳԼՈՒԽ Գ.

ՆԱԽԱՀԱՐՅ ՄԵՂՔԻ ՄԷջ ԸՆԿՆԻԼ:

Աստանան երկրիս կենդանիներից ամէնից խորամանկի՝ օձի կերպարանքով յայտնվեցաւ Եւային և ասաց նրան: «Ինչո՞ւ Աստուած արգելց ձեզ ուտել զրախտի ամէն ծառերի պատուղներից»: Եւան պատասխանեց: «Աստուած հրամայեց մեզ այս պարտիզի ամէն պատուղները ուտել և միայն այն ծառի համար, որ զրախտի մէջտեղումն է, ասաց. «Ո՞ ուտէք նորա պատուղներից և մի մօտենաք նրանց, որ չմեռնիք»: — «Դուք չէք մեռնիլ». ասաց օձը: «Աստուած գիտե, որ եթէ դուք ուտէք այդ պաղեց, ձեր աչքերը կ'բացվին և դուք կ'լինիք, ինչպէս աստուածներ, կ'ճանաչէք բարին և չարը:

Եւան նայեցաւ ծառին ցանկութեամբ ուտելու նորա պաղեց և այսպէս մեղքը արդէն գործած էր նորա սըրտում: Ովոր շարժիում է փորձութեան ժամանակը, զայթակրիում է և նայում է ցանկութեամբ. և յօժարութեամբ արգելած բանի վերայ, նա արգէն մեղանչումն է սրտում: Այսպէս արաւ Եւան էլ: Արհամարհերվ Աստուծոյ պատուիրանը, նա կերաւ արգելած պաղեցը և առելց նրանից իւր մարդուն էլ, որ նմանապէս կերաւ: Այն ժամանակ աւեսան նոքա, որ մեղանչեցին, զըրկ-

վեցան իրենց անմեղութիւնից և նորա հետ միասին դրախտի երջանկութիւնից և ամօթից թափնվեցան թրվերի մէջ։ Աստուած ասաց. «ուր ես Ադամ»։ — «Ես լեզի քո ձայնով պարտիզում»։ պատասխանեց Ադամ. «Ա թափնվեցայ, որովհետեւ մերկ էի»։ — «Ո՞վ կ'յայտնէր քեզ քո. մերկութիւնդ, թէ դու չեիր կերել արգելած ծառի պատլից, ասաց Աստուած. «ինչո՞ւ անցար դու իմ պատուիրանից»։ — Ադամ պատասխանեց. «Կինը, որ դու ինձ տուիր, տուեց ինձ պատուզը և ես կերայ»։ Կինը ասաց. «օձը ինձ խաբեց»։ Յանցանքին հետեւեց պատիժըն։ Աստուած ասաց օձին. «Դու անիծածն ես երկրիս ամէն կենդանիներից, դու կ'սովաս երկրի երեսին և ես կ'զնեմ թշնամութիւն քո և կնոջ ծնունդների մէջ։ դու կ'խայթես նորա գարշապարը. բայց կնոջ ծնունդը կ'ջախ ջախի քու գլուխով»։ Կնոջը ասաց Աստուած. «կ'շտացնեմ քո վիշտերդ։ Ցաւ ով կծնես որդիներ և ամենայն բռնում պէտք է հպատակես մարդուդ»։ Վերջապէս Ադամին էլ ասաց Աստուած. «որովհետեւ լեցիր քո կնոջը և չպահեցիր իմ տուած պատուիրանս, չարչարանքով կ'գործես երկիրը, որ անիծածն է քո պատճառով»։ Նա կ'գուրս բերէ քեզ տատասկ և փուշ և դու քո երեսիդ քրտինքով կ'ստանաս նրանից քո հացդ, մինչեւ որ կրկին հող կ'գտանաս, ընչեց որ առած ես. դու հող ես և հող կ'գտանաս»։ Աստուած տուեց Ադամին և Եւային կաշեէ շորեր և արտաքսեց գրախտից։ Աստուած զրեց զրախտում Քէրովէին, որ պահէ հրեղէն թրով կենաց ծառի ճանապահը։ Ադամ, պատրած դրախտից, սկսագործել երկիր, որից ինքը առած էր. Այսպէս ճանա-

չերով մեղքը, առաջին մարդիկ կորցրին իրենց առաջվան երջանկութիւնը։ Միակ ուրախութիւնը նոյն և յոյսը էր Աստուածոյ խոստումն, թէ կնոջ սերմը կ'ջախ ջախի օձի գլուխը, այսինքն Կոյսի Որդին կ'ջնջէ սատանայի իշխանութիւնը։

ԳԼՈՒԽ Ե.

### ԱԴԱՄԻ ՈՐԴԻՔԸ:

Ադամ և Եւա ունեին երկու որդի Կայէն և Արէլ։ Կայէնը էր երկրագործ և էր խիստ բնութեան տէր. ընդհակառակն Արէլ, հեղ երխտասարդ, էր Հովիւ։ Երկու եղայրներն էլ բերին Աստծուն մատաղ. Կայէնը երկրի պատուզներից, իսկ Արէլ իւր խաչների անգրանիկներից։ Մատաղ բերելիս Կայէն նկատեց, որ իր մատազը հաճելի չէ Աստծու, բայց բարեպաշտ Արէլի մատազը ընդունելի եղաւ Աստծուն։ Կայէն խիստ արտմեցաւ։ Բայց Աստուած ասաց նրան. «Ինչո՞ւ համար արտմեցար։ թէ բարի կ'գործես, ուրախ կիննես, թէ չէ, զգոյշ կայ մեղքից։ Նա արդէն զրան մօտ է»։ բայց Կայէն, աղղիկիուտեղ, կանչեց իր եղբօր դաշտը և սպանեց նրան։ Այն ժամանակ Տէր Աստուած ասաց Կայէնին. «Ո՞ւր է Արէլ եղայրդ»։ Կայէնը պատասխանեց. «չզիտեմ. մի՛թէ ես նորա պահապանն եմ»։ — «Այս ի՞նչ գործեցիր»։ ասաց նրան Աստուած. «քո եղբօրդ արինի ձայնը գոչում է ինձ։ Դու անիծածն ես այս երկրիս երեսին, որ քո ձեռովդ ծածկեցաւ եղբօրդ արիւնով։ դու կ'ատանես, չտանելով ոչ մի տեղ քեզ հանդիսաւ ապատան։

Արանից յետ կայէն գնաց Նայիդ երկիրը, որ միքանի ժամանակից շնուց առաջին քաղաքը, որ նորա Ենոք որդու անունով կոչվեցաւ: Նորա ամէն յետագաները չար էին և սուրբ զբքում կոչվում են որդիք մարդկան: Երեւելները նոցանից էին Յովեալ, որ հնարեց երգ և քնար և թորէլ, որ էր ճարասարապետ դարբին պինձի և երկաթի: Տէր Աստուած մեղքացաւ Ադամին և Եւսոյին, և տուեց Նրանց, Աբէլի տեղ, որից Սէթ անունով: Սորսա որդին էին բարեպաշտ և սուրբ զբքի մէջ անուանվում են որդիք Աստուածոյ: Երեւելները նոցանից էին Ենոք, որ միշտ Աստուածոյ կատքին էր հետեւում և կենդանի փոխվեցաւ երկինք ու Մաթուասդա, որ ամէն մարդկիներից աւելի երկար կեանք ունեցաւ՝ այսինքն իննչարիւր վախտուն ինն տարի:

Բացի Սէթից Ադամ՝ ունէր էլ շատ որդիք և աղջիկներ: Նա կեցաւ ինը հարիւր երեսուն տարի և մեռաւ, դառնալով հող, որից առած էր:

Գլուխ 2.

ԶՐՀԵՂԵՂ:

Սէթի որդիներից մէկը, Նոյ անունով, կենում էր այն ժամանակ, երբ մարդիկ, բազմանալով երկրիս երեսին, բոլորովին զեղիւցան: Նոքա չէին մատածում Աստուածոյ վերայ, որ ամէն օր անում էր Նրանց բարերարութիւն, մոռացան նորա պատուիրանները և մոռածում էին միացն, որ ոչ թէ իւրեանց պարտաւորութիւնները կատարեն, ոյլ իրենց սրտի ցանկութիւնները: Մինչև Սէթի

բարեպաշտ յետագաները անգամ, իրենց անմիտ կապակցութեամբ Կայէնի յետագաների հետ, զեղիւցան և մոռացան Ճշմարիտ Աստուած: Այս ամէն չար մարդոց մէջ արդար էր միայն Նոյ: Սա բարեպաշտութեամբ մեծացլեց իւր բոլոր որդոց և աշխատում էր նրանց հեռացնել ամէն չար օրինակից, որով նոքա պատած էին: Աստուած վճռեց ջնջել մարդկացին ցեղը ջրհեղեղով և պահէլ ընդհանութ մահից միայն բարեպաշտ Նոյին, իր ընտանիքով:

Աստուած հրամայեց Նոյին շնել տապան, այսինքն մի մեծ նաւ անփուտ փայտից և ծեփել այն նաւթով, որ կարողանաց կենալ ջրի երեսին: Այս տապանը երեք դրամիկոն էր, որոնց ամէն մէկը շատ մասեր էր բաժանած: Պատուհանն էր վերելից և դուռը կողքից: Նոյ, Աստուած հրամանով, առաւ տապանի մէջ մի մի զոյգ ամէն կենդանիներից և մի քանիսից, որ առաւել օգտաւէտ էին մարդոց, և որ չէին կարող կենալ ջրում, մինչև անգամ եօթն եօթն, որ պահպանվի նոցա ցեղը մահից և առաւ նոցա համար մի տարուան կերակուր էլ: Վերջապէս Աստուած հրամայեց Նոյին մտնել տապանը իւր երեք՝ Սեմ, Քամ և Յարէթ որդիներով և նոցա կանացով: Ամէնը միասին ութը հօգի էին: Աստուած փակեց նրանց տապանի մէջ, պանից յետ երկինքը ծածկը վեցաւ ամպերով, որոնցից եկաւ սաստիկ անձրեւ քառասուն օր և քառասուն դիշեր շարունակ: Բացի պանից ծովերը և գետերը բարձրացան իրենց ափերից և ջուրը այնքան շատացաւ, որ դաշտերը, ծառերը և մարդոց բնակութիւնները ծածկվեցան ջրով և տապանը սկսու

Ծաղալ։ Մարդիկ և գաղաններ փախչում էին դաշտերից բլուրների զագալթը, միայն ջուրը հասաւ նրանց այն տեղ էլ։ Բլուրների վերայ էլ չգտնելով ապաստան վեր եղան ամենաքարձր սարերի զագալթները, միայն այս տեղ էլ հասաւ նրանց ջուրք։ Ջուրը բարձրացաւ ամենից բարձր սարերից էլի տասնուշինդ կանգուն աւելի։ Ամէն բան ոչընչացաւ. միայն տապանն ապահով շրջում էր ջրի երեսին։ Նորա մէջն էին երկրագնդիս բոլոր բնակիչները՝ ութը հոգիք, որոնք Աստուծոյ ամենակարող պաշտպանութեանն առակ էին։

Հարիւր յիսուն օր ջուրը ամենեին չէր փոքրանում երկրիս երեսից։ Սրանից յետոյ փչեց հողմ, ցրեց սմակերը և փոքր առ փոքր ջուրը սկսաւ նստել։ Տապանը, որ շրջում էր ջրի երեսին, կանգնեցաւ Մասիսի գլխին։ Նոյ, կամենալով գիտենալ, որ արդեօք ցամաքել է երկիրը, թէ չէ, բաց թողեց ազուաւին, որ էլ յետ չդարձաւ և չբերաւ համբաւ երկրի գրութեան վերայ։ Փոքր ժամանակից յետ թողեց աղաւնուն, որ երկրիս վերայ ցամաք տեղ չըգտնելով, որ հանգատանայ փոքր ինչ, յետ դարձաւ և նոյ ձգելով իր ձեռք առաւ նրան էլի ներս տապանի մէջ։ Յօթը օրից յետ նոյ միւսանդամ բաց թողեց աղաւնուն, որ երեկոյեան գարձաւ տապան, կացում ձիթենու Ճիւղ բռնած։ Խնձորէս ուրախացան տապանի բնակիչները, երբ այսպէս իմացան, որ ծառերը էլ ջրի տակ չեն։ Յօթը օրից յետոյ նոյ կրկին բաց թողեց աղաւնուն, որ էլ յետ չդարձաւ, որով հետեւ երկիրը արդէն ցամաք էր։ Նոյ վեցհարիւր տարեկան էր, երբ Աստուծ ասաց նրան. «Պուրս եկ տա-

ալմից բոլոր ընտանիքովդ և ամէն կենդանիներով, որոնք քեզ հետ միասին փակված էին այն տեղ։ ԱՃեցէք և բազմացէք երկրիս վերայ»։

Տապանից դուրս գալից յետոյ, նոյ շինեց սեղան և բերաւ Աստծու Ծորհակալութեան մասուդ, որ այն պէս հաճոյ եղաւ Աստծու, որ այս երախտագիտութեանը համար նա օրհնեց երկիրը և մարդկութիւնը ասելով. «Ամէնչ երկիրս կայ, անսպական կ'լինինորա երեսից ցամաքը և հունձը, ամսուր կ'հետեւէ ձմեռին և գիշերին կ'ըհմատեէ ցերեկը և այսպիսի ջրհեղեղ էլ չփլինիլ երկրիս վերայ»։ Նոյ նայեցաւ երկինք և տեսաւ ամպերի մէջ փայլուն աղեղը. «Այս աղեղը ամպերի մէջ, ասաց Աստծուած, է նշան և զբաւական իմ ողորմութեանս մարդոց. երբ կ'հաւաքվեն երկնկում ամպերը և իմ աղեղս կ'երեսի նոցա մէջ, թող մարդիկ ծորհակալութեամբ յիշեն իմ ուխտո՞ թէ էլ չեմ խրկիլ ջրհեղեղ»։ Այսպէս աղեղը երեւելով երկնքում միտերս է բերում մեզ մեր արարչ ողորմածութիւնը և մարդակիութիւնը։

ԳԼՈՒԽ.

### ՆՈՅԻ ՈՐԴԻՒՔԸ

«Եց, Արարատից ցած գալից յետ, սկսաւ գործել երկիրը և տնկեց խաղողի ծառ։ Երբ պտուղը հասաւ, քամեց նորա ծուծը, և որովհետեւ երբէք չէր փորձած նորա զօրութիւնը, խմեց անչափ շատ նրանից, այնպէս որ հարրեցաւ։ Թուղացած գինուց թմրեցաւ և պառկեցաւ տան մէջ ամենեին մերկ։ Քամ, տեսնելով իւր հօրը այս-

պիսի անվայել դրութեան մէջ, սկսաւ ծիծաղել նորա վերայ և յայտնեց այն իր եղայրներին էլ: Բայց Սէմ և Յարեմ մտան վրանը և քամակով դէպի հայրը դարձած առան շորերը և ծածկեցին նրան, առանց տեսնելու նորա մերկութիւնը: Նոյ, երբ զարթեցաւ, իմանալով քամի անպատիւ վարմունքը, ասաց. «Անիծած դու. Քո յետագաներդ, քանանու որդիք, կ'լինին քո եղայրների որդուց սարուկները. բայց Սէմին և Յարեմին, որոնք պատուեցին իրենց հօր մինչեւ անվայել դրութեան մէջն էլ և ծածկեցին նորա վարմունքը, ասաց. «օրհնում եմ ձեզ, ձեր որդիքը կ'բազմանան երկրիս երեսին և կիշշ խն քամի յետագաների վերայ: Նոյի դուշակութիւնը իր որդուց յետագաների վերայ կատարեցաւ:

«Եսի երեք որդիներից, Սէմից, քամից, և Յարեմից, ծագեցան աշխարհիս ամէն մասերի բնակիչները: Ի՞նքը նոյ ջրհեղեղեց յետոյ էլի երեք հարիւր յիտուն տարի ապրեցաւ:

ԳԼՈՒԽ

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԱԾԻՆՈՒԹԻՒՆԸ:

«Եսի որդիքը բազմացան և ամէնքը իրեւ մի ապդ խօսում էին մի լեզուով: Բազմանալով սկսան նորա ցըր վել երկրիս երեսին. բայց բոլորովին ցրվելց և մէկ մէկից հեռանալից առաջ վճռեցին շինել ընդարձակ քաղաք և բարձր աշտարակ, որի գլուխը համեր մինչեւ երկինք և երեկ հեռուցից: Բայցի սրանից նորա ուզում էին, որ այս շինուածքը լինի նոյսա յետագաների համար նշան

իրենց զօրութեան և խմասութեան: Բայց Աստուած ջընջեց նոցա այս հպարտ ձեռնարկութիւնը: Նա խառնեց նոցա մնաքում բառերը և միտքերը ուստի և աշտարակի շինողները չասկանալով մէկ մէկու, չկարողացան շարունակել իրենց շինութիւնը և ստիպվեցան ցրվելու զանազան կողմեր. իսկ սկսած և անկատար մնացած աշտարակը և քաղաքը մնացին յիշատակ մարդոց անմութեան, որոնք ձեռք խփեցին մի դրծքի առանց Աստուծոյ օրհնութեան: Այս քաղաքը անուանվեցաւ Բարիլոն. որ երբայցերէն նշանակում է խառնակութիւն, որովհետեւ նորա շինութեան ժամանակ Աստուած խառնեց մարդոց լիզուն:

ԳԼՈՒԽ

Ա.Բ.Ա.Հ.Ա.Մ:

Վարդիկ ցրուելով երկրիս վերայ, բաժանեցան զանազան ազգեր և մոռայսն Ճշմարիտ Աստծուն, նոքա սկսան պաշտել իրենց շինած կուռքերը, զանազան կինդանիներուն, արեգակը, լուսինը և այս պատճառով կոչվեցան կրապաշտներ: Այս կրապաշտների մէջ էր Սէմի ցեղեց մի բարեպաշտ մարդ Աբրահամ անունով: Աստուած, Ճշմարիտ հաւատու հաստատ պահելու համար երկրիս վերայ, ընտրեց նրան և նորա ցեղը:

Աբրահամ թարայի որդին էր և ուներ երկու եղայր, Նաբուկը և Առան անունով: Այս վերջնոր իր հօր թարայից առաջ մեռաւ, թողնելով իրանից յետոյ մի որդի Պովտ անունով, որին Աբրահամ իր մօտ առաւ: Բայց որովհետեւ կրապաշտութիւնը տարածվեցաւ ոչ միայն

Աբրահամի հայրենիքում այլ և նորա հօր ընտանիքի մեջ  
էլ, Աստուած ասաց Աբրահամին. «Հեռացիր քո հայ-  
րենիքիցդ և աղքականներիցդ և գնա այն երկիրը, որ  
Նս քեզ ցոյց կտամ. դու կ'լինիս մեծ աղջի հայր; Ես  
օրհնում եմ քեզ և քեղմով կօրհնվին երկրիս բոլոր աղ-  
զերը»:

Թօհէւ յցժ ցաւալի էր Աբրահամի համար իւր հայ-  
րենիքը թողնել բայց նորա հաւատոր Աստուծոյ վերայ  
այնպէս հաստատ էր, որ ոչ մի բռակէ չտատանեցաւ նա,  
այլ առաւ իր Սարա կնոջ, Դուխու եղբօլորդուն, իր ծառա-  
ներուն և աղախիմններուն, հաւաքեց իր խաշները և ամէն  
իր ստագուածներով հեռացաւ հայրենիքից:

Արբահամ գնաց քանան անուանված գեղեցիկ և բերրի  
երկիրը և երբ հասաւ Ալքեմի պատղաբեր հովիտը, Ասո-  
ուած առաջ նրան. առհա այն երկիրը, որ տալիս եմ  
քեզ և քո որդուոցդ։ Աբրահամ, շարժած շնորհակալու-  
թիւնից, կանգնեց Աստծուն սեղան այնտեղ, ուր նա ե-  
րեցաւ իրեն։

፩፻፲፭፯

ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ՂՈՎՏ:

Աբրահամ և Ղովտ բնակում էին միասին և երկուսն էլ ունեին բազմաթիւ խաչեր: Բայց Աբրահամ ակը էր շատ մեծագին գանձերի, որոնք իր առաքինութիւններն էին: Նա էր Աստուծմէ երկնչող մարդ, արդար, մեծահոգի, ցաւակից խեղջերին, հիւրասէր, լեզը կենդանի հաւատով դէպի Աստուծած, հպատակ Նորա կամքին և հաւատարիմ իր մերձաւորներին: Ինքը միշտ ճշմարտու-

թեամբ վարվելով, կամենում էր ուրիշների մէջ էլ միշտ  
ծշմարտութիւն տեսնել: Նր հողւց այս գեղեցիկ որպիս-  
ութիւնների համար հածոյ էր նա Աստծուն, սիրելի մար-  
դոց և բաւական ինքը իրմոլ: Քանանու բնակիչները  
խիստ սիրով ընդունեցին նրան: Բարեպաշտ մարդիկ ամէն  
տեղ Աստուծոյ պաշտպանութեան տակն են լինում:  
Արքահամբ և Վովտի խաչները այնպէս բազամաթիւ էին,  
որ արածելու տեղը, ուր նոքա կենում էին, չը բաւա-  
կան: Նոյս հովիւնների միջ յաճախ ծագում էր վէճ.  
այս պատճառով Արքահամբ ստիպվեցաւ իր եղբօրորդուն  
ասելու: «Անք ազգականներ ենք և չպէտք է վիճենք  
մէկ մէկու հետ ծառաններիս համար, աւելի լաւ է իրեւ  
բարեկամներ հեռանալ մէկ մէկից: Տես ահա բոլոր եր-  
կիրը առջեղ է, ընտրիր, ուր կամենում ես կենալ. թէ  
դու կ'երթաս աջ, ես ձախ կերթամ»: Արքահամբ, թէ և  
Վովտից առաւել մէծ էր և զօրեղ, բայց ընտրութիւնը  
տուեց Վովտին, որովհետև ամէն իր վարմռների մէջ էր  
միշտ մեծահոգի: Վովտ իր խաչների համար ընտրեց բեր-  
րի հովիտը, որ ոռողանում էր Յորդանան գետը և  
ուր էին շննած հարուստ Սոդոմ և Գոմոր քաղաքները:  
Եւ նա ինքը բնակեցաւ Սոդոմ քաղաքում: Խակ Արքահամբ  
խփեց իր վրանները Մամբրէի մայրի մօտ, որ Քէբ-  
րանի մօտ էր:

Ըստ Առվինի ընտրութիւնը յաջողակ էր. Սոդոմի բը-  
նակիչները չար մարդիկ էին :

Ը թղակաց երկիրները բաժանած էին փոքրիկ տէլու-  
թիւններ, որոնց ամէն մէկը իր առանձին թագաւորը ու-  
նէր: Այս թագաւորների մէջ սկսաւ պատերազմ, որին

մասնակից էր Սոդոմի թագաւորն էլ: Արան թշնամի կողմը յաղթեց, և զովու իր ընտանիքով, ծառաներով, աղախիններով, բաղմաթիւ խաչներով, Սոդոմ և Գոմոր քաղաքների միւս բնակիչների հետ միասն գերի ընկաւ:

Մէկ գերութիւնից ազատված մարդ գնաց և պատմեց Արքահամին, ինչոր նորա եղօրորդուց զլիին եկել էր: Արքահամ շուտով ժողովեց իր ամէն ծառաներուն, որոնք ողջը երեք հարիւր տասնը ուժ հոդի էին: Նորա դաշնակիցները էսքող, Աւնան, Մամրէ միացան նմանապէս նորա հետ իրենց մարդիկներով և շտապով գնացին գերիների ետելից: Սոքա հասան թշնամիների ետելից դիշերով, ջարդեցին նրանց և քշեցին, ալպանեցին զովոին և ամէն միւս գերիներուն և խեցին թշնամիների տարած բոլոր աւարը: Արքահամ Զովոտի, նորա ընտանիքի, բոլոր նորա մարդիկների և Սոդոմի բնակիչների հետ մրամին յետ դարձաւ:


Այս յաղթութիւնից յետ դառնալիս Արքահամ անց էր կենում Շաղէմ քաղաքի մօտով, ուր այն ժամանակ թագաւորում էր բարեպաշտ Մէլքիսեդէկը, որ ճշշմարիւ Աստուծոյ քահանայ էլ էր: Սա Արքահամին առաջը դուրս եկաւ և ասաց. «օքհնած է Արքահամ բարձրեալ Աստծումէն, որ երկնաքը և երկիրս ստեղծեց, և օքհնած է Աստուծ, որ մասնեց թշնամիներուդ քո ձեռքդո: Այս ասելով տուեց նրան հաց և զիսի: Արքահամ պատուելով Մէլքիսեդէկի քահանայով թիւնը և Աստուծոյ հոգւով նորա մէջ յաւիտենական քահանայապետի (Յիսուս Քրիստոսի) օրինակը տեսնելով, տուեց նրան առած աւարի տասանորդը:

Սոդոմի թագաւորն էլ դուրս եկաւ Արքահամի առաջը և ասաց նրան «յետ տուր ինձ միայն մարդիկս, ու բոնց դու գերութիւնից ազատեցիր, իսկ մնացած Սոդոմից թալանած հարստութիւնները թող քեզ մօտ»: Սոդոմի թագաւորը չէր կարծում, որ Արքահամը իրեն մէկ բան յետ կ'գարձնէ. բայց Արքահամ պատասխանեց. «Աստուծ չանէ, որ ես որիշի ստացուածքից շահվել կամենամ: Ես յետ եմ դարձնում քեզ ամէնը, բայց նրանից, ինչ որ կերան մարդիկս և բայցի դաշնակիցներիս բաժնից: Այս ասելով յետ տուեց թագաւորին ամէնը, ինչ որ թշնամին նորա տէրութեան մէջ յափշտակել էր:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԲՐԱՀԱՄԻ ՄՕՏ:

Արքահամ, ընայելով իր հարստութեանը, տուն չուներ այլ բնակում էր վրանում, որ տեղափոխում էր իր հետ միասն այնտեղ, ուր արածում էին նորա խաչները: Մէկ անգամ կեսօրին նա նստած էր իր վրանի զրանը մօտ և տեսաւ իր առջեւը երեք անցուորականներու: Նա նոցա առաջ դուրս եկաւ և մինչև գետին երկրսպագութիւն տալով ասաց. «Եթէ կամենում էք իմ բարիս, մի՛ անցնէք իմ վրանիս մօտով: Հանգստացէք փոքր ինչ այս ծառիս տակ, ես կ'ըերեմ ջուր ոտներդ լուանպու և կ'սպարաստեմ ձեզ ձաշ: Արա, ինչպէս ստում ես» պատասխանեցին նոքա: Այն ժամանակ Արքահամ շուտով մօտաւ վրանը, հրամացեց իր կնկան լաւնաշեհից թիւն նկաններ, յետոց դնաց խաչների մօտ,



Ըստրեց ամէնից լաւ հորթը և հրամայեց ծառաներին պատրաստել նրան հիւրերի համար, բերեց նոցա համար նմանապէս կարագ և կաթ. իսկ ինքը կանգնած ծառայում էր նրանց ճաշի ժամանակ :

Ճանապարհորդները էին հրեշտակներ և Աստուած մարդու կերպարանկով: Տէր Աստուած ասաց Աբրահամին. «Ո՞ր է քո կինդ Սառանու: «Նա վիանումն է. պատասխանեց Աբրահամ: «Առաջիկայ տարի այս ժամանակ Սառան կ'ունենայ որդի», ասաց Աստուած: Սառան կանգնած էր վրանի զրան ետև և լսելով այսպիսի խոստումն ծիծաղեցաւ, որովհետեւ չէր հաւատում և ասում էր ինքը իրեն. «ի՞նչպէս կարող է այդ պատահել, կարող եմ միթէ ես ունենալ որդի, այն ինչ ես էլ, իմ մարդը էլ ծերացել ենք (այն ժամանակ Սառան 90 տարեկան էր և Աբրահամ 100): Բայց Աստուած ասաց Աբրահամին, «ինչո՞ւ է ծիծաղում Սառան. կայ արդեօք անկարելի բան Աստուածոյ համար»: Սառան վախեցաւ տեսնելով, որ Վնյատորին յայտնի էր մինչև անգամ՝ նորա միոքն էլ. Նա գուրս եկաւ վրանից, կամենում էր ներողութիւն ինչպէլ, ասելով, թէ ինքը չէ ծիծաղել Բայց Աստուած ասաց. «Ես գիտեմ որ դու ծիծաղեցար»: Աբրահամ համար համապվեցաւ, որ իր առջեւ եղողները հասարակ Ճանապարհորդներ չին:

«Սոքա վեր կացան և գնացին դէպի Սոդոմ: Աբրահամը Ճանապարհ գցեց նրանց: Աստուած ասաց. «Ես չեմ ծածկիլ իմ ծառայից» Աբրահամից, ինչ որ կամենում եմ անել: Ես գիտեմ, որ նա կ'սովորցնէ իր յետապաներուն Ճշմարիտ Ճանապարհով գնալ և բարեպաշ-

տութեամբ կենալ»: Աստուած յայտնեց Աբրահամին, որ միտք զրել է Սոդոմ և գոմիր քաղաքները իրենց ընակիչների անօրէնութեան համար ջընջելու: Աբրահամ հարցրեց Աստուած, կինսայէ արդեօք նա քաղաքին, թէ գտնվին նորա մէջ յիսուն կամ թէ տան էլ արդար մարդիկ: Տէր Աստուած պատասխանեց, թէ կինսայէր քաղաքին, եթէ դանավին նորա մէջ միայն տան հոգի արդար մարդիկ էլ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

### ՍՈԴՈՄ ԵՒ ԳՈՄՈՐ:

Աբրահամը հրեշտակները Ճանապարհորդների ձեւով մըտան երեկոյեան Սոդոմ: Ղովտ, որ նասած էր քաղաքի զրան մօտ, տեսաւ մտնողներուն, միայն չէր իմանում, թէ ով են: Նա մօտեցաւ նրանց և երկիրպագաններով նրանց մինչև գետին խնդրեց, որ մտնեն իր տուն և գիշերը իր մօտ անց կացնեն: «Չէ, պատասխանեցին հրեշտակները, մենք կանցկացնենք զիշերը փողոցում: Բայց Ղովտ այնքան խնդրեց, որ նոքա վերջապէս համաձայնեցան: Նա ուեեցրեց նրանց ընթրիք և երբ քնելու ժամանակ էր և կամենում էին պատկեր, քաղաքի բնակիչները պատեցին Ղովտի տունը և պահանջում էին, որ նա իրենց ձեռը մասնէ օտարականներուն, որոնք նորա մօտ եկել են: Ղովտ գուրս գալով ժողովրդի առաջ, փակեց գուռը իր ետեից և խնդրում էր, որ վնաս չտան օտարականներին Բայց Սոդոմի բնակիչները գուռում էին նրան ասելով. «Դու ինքդ մեր մէջ պահպուխտ եկած ես և դեռ մեր գատաւորն էլ կամենում ես լինել»: Այս խօսքերով յար-

ձակեցան Ղովտի վրայ. միայն հրեշտակները մոցրին նրան ներս և դուռը փակեցին վրայից: Այսպէս Ղովտ ազատեցաւ Սոդոմի բնակիչների կատաղութիւնից. որնք կուրացած չկարողացան նորա տուն մանելու ճանապարհը գանել:

Միւնոյն գիշեր հրեշտակները ասացին Ղովտին. «մենք զրկած ենք Աստուծմէ այս քաղաքը քանդեմու. նորա բը նակիչների անօրէնութիւնը բարձրացաւ մինչև երկինքը»: Երբ սկսաւ առաւատանալ, հրեշտակները առին Ղովտին, նորա կեղծ և երկու աղջիկներուն և հանեցին քաղաքից դուրս: «Այժմ ազատվեցէք, ասաց հրեշտակը. «մի՛ մը նաք այս հովոում, այլ գնացէք սարը, և յետ մի՛ նայէք»: «Տէրո, ասաց Ղովտ, ես չունիմ զօրութիւն, մինչև սարը գնալու. բայց ահա մօտումն փոքրիկ քաղաք կայ, արդեօք չմը կարող այնտեղ ազատվել. «Այս բանումն էլ թող կատարվի քո խնդիրդ. գնա շուտ այնտեղ, մինչև որ դու քաղաքը չմանես, ես ոչինչ չմը կարող անել»: Արեի ծագելիս, Ղովտ հասաւ քաղաքը, որ այնուշետեւ Սեգովի անուանվեցաւ: Այն ժամանակ վեր եկաւ երկնքից կրակ և ծծումը և ջնջեց Սոդոմ և Գոմոր քաղաքները, բոլոր նորա շրջական, ամէն բնակիչներուն, դաշտերը և խաչները: Ղովտի կինը, հրեշտակների հրամանից անցնելով, յետ մնաց իր ընտանիքից, յետ նայեցաւ և դարձաւ աղի արձան:

Աբրահամը վեր կացաւ առաւատը, գնաց նայելու այն կողմը, ուր էին Սոդոմ և Գոմոր քաղաքները և աեսաւ, որ այն աեղից բարձրանում է թանձր ծուխ և բաց:

Գևորգ քառ.

### ԻՍԱՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ. ԱԳԱՐԻ ԵՒ ԻՍՄԱՅԷԼԻ ԱՔՍՈՐՈՒՄՆ

Վատուծոյ խոստմանը համեմատ տարուան վերջին Սառան ծնաւ որդի, որին անուանեցին Խաչակի: Սառան ասում էր. «Աստուծած տուեց ինձ ուրախութիւն ծերութեան ժամանակ, ամէնքը, ով կլտէ իմ որդուս ծնունդը, կուրախանայ ինձ հետ միապին: Երեխան մեծանում էր և զօրանում: Աբրահամ՝ հարիւր տարեկան էր և Սառան իննառուն, երբ ծնաւ նրանց որդի:

Խամայէլ, Աբրահամի որդին Ագարից, էր մեծ Խաչակից քանի մի տարով և յաճախ զըկում էր իր եղբօրը: Սառան նկատեց այս և պահանջեց Աբրահամից, որ նա աքսորէ Ագար աղախնին իր որդուով, այն պատճառով, որ նորա չեն պատփում նորա որդուն Խաչակին: Աբրահամ խիստ տրոտեցաւ այս պահանջման համար. բայց Աստուծած ասաց նրան. «արա ինչպէս Սառան կամենում է: Աբրահամ, որնոր միշտ անպայման հրպատակում էր Աստուծոյ կամքին, վեր կացաւ առաւատը վաղ, առաւ մի քանի հաց և տիկ ջրով, ողջը դրաւ Ագարի ուսին և Խամայէլին էլ տալով նրան աքսորից երկուսին էլ: Ագար թափառելով անսպատում կորցրեց Ճանապարհը և Խամայէլը թուլանում էր ծարաւից. Ագար թողեց նրան ծառի ստուերի տակ և ինքը մէկ վտաւան հեռու նրանից նատեցաւ. «ես չեմ կարող տեսնել որդուս մահը», ասում էր նա լալով: Խամայէլ ծարաւից նեղացած, գուռում էր և լաց լինում: Աստուծոյ հրեշ-

տակը յայտնեցաւ Աղարին և ասաց նրան. «Ի՞ լար, Ա-  
ստուած լսեց քո որդուդ ձայնը, վեր կաց, բռնիր նրան  
ձեռից և տար քեզ հետ: Նրանից կ'ծագէ բազմաթիւ  
ազգ»: Այն բովին Աղար տեսաւ յստակ ջրի աղբիւր,  
մօտեցաւ նրան, լքցրեց իր տիկը ջրով և խմացրեց ջուր  
խմայէլին: Աստուած օրհնեց նրան, նա մեծացաւ, բնա-  
կում էր անապատում, դարձաւ ճարտար աղեղնաւոր և  
Եգիստացի կին առնելով ունեցաւ տասներկու որդի և  
բազմաթիւ ցեղ: Խմայէլից դուրս են եկած Արարացի-  
ները, որ այս պատճառով երբեմն խմայէլացիք էլ  
են կոչվում:

Գլ.ՈՒԽ ԺԴ.

ԽՍԱՀԱԿԻ ՄԱՏԱՂ. ԲԵՐՎ.ԻԼ.Բ:

Աստուած, փորձելով Արրահամի հաւատը, մի անգամ  
ասաց նրան. «Արրահամ, Արրահամ»: — «Այստեղ եմ  
ևս Տեր, պատախանեց Արրահամը: Վեր առ քո միտելի  
որդուդ խահակին», ասաց Աստուած, «Գնա նորա հետ  
միասին այն սարի գլուխ, որ ես քեզ ցոյց կ'տամ և այն  
տեղ բեր նրան ինձ մատաղ ողջակեղ»:

Եռաւուր վաղ վեր կայաւ Արրահամը, պատրաստեց  
փայտ, բարձեց այն իշխ վրայ, առաւ հետը երկու ծառա-  
ներ և խահակին ու ընկաւ ճանապարհ: Երրորդ օրը նո-  
քա հասան նշանակած տեղը, ուր յետոյ Սողոմոն շինեց  
Ճմարփու Աստուծոյ տաճարը: Այն ժամանակ Արրահամը  
ասաց իր ծառաներին. «մնացէք այստեղ և սպասեցէք ինձ.  
իսկ ես իմ որդուն կ'երթամ սարի գլուխը աղօթք ա-  
նելու»: Նա վեր առաւ մատաղի կրակը ու դանակը և

Խսահակ վեր առաւ փայտը: Սարը բարձրանալիս խա-  
հակ ասաց իր հօրը. «Հայր իմ, մենք ունինք կրակ և փայտ.  
բայց ո՞ւր է մատաղի ոչխարը»: — «Որդեակ, ասաց Արրա-  
համ, Տէր Աստուած կ'զրկէ մեղ մատաղի ոչխար: Ի-  
սահակի խիլի մողովն էլ չէր անց կենում, որ ինքը նշա-  
նակված է զոհվելու: Նրբ սարը վեր ելան, Արրահամ  
կանգնեց սեղան և դրաւ նորա վերայ փայտը: Խսահակ  
համեստ հպատակութեամբ, բոլորսին առանց ընդդիմու-  
թեան, թողեց իրեն կապել և փայտի վերան դնել: Ար-  
րահամ բարձրացրեց արդէն իր ձեռը և դանակով  
կամենում էր մորթել իր որդուն և աշա լսեց Աս-  
տուծոյ հրեշտակի ձայնը, որնոր ասում էր. «Արրահամ,  
Արրահամ»: — «Ես այս տեղ եմ», պատախանեց Արրա-  
համ: «Չեռդ քեզ քաշիր, ասաց հրեշտակը, մի սպա-  
նիր որդուդ. Աստուած բաւական է քո հպատակութեամբ,  
որովհետեւ գու չխնայեցիր նորա միրոյն համար մինչեւ քո  
միրելի որդուդ էլ: Աստուած կ'վարձատիք քեզ և քո  
զաւակիդ կ'բազմանայ ինչպէս ծովի աւաղը և քո զաւա-  
կովիդ կ'օրհնվին երկրիս բոլոր ազգերը: Այս նշանակում  
էր, որ Արրահամի ցեղից, պէսք է, ծներ երկրիս փրկիցը:

Յետ նայեցաւ Արրահամ և տեսաւ մի խոյ, որնոր ծա-  
ռից կախված էր, առաւ նրան և զոհեց Աստծոն իր որ-  
դու տեղը և յետոյ խահակի հետ միասին դարձաւ տուն:

Ասուա մինչեւ խահակի ամուսնութիւնը կենդանի ըր-  
մաց: «Նա մեռաւ հարիւր քան եօթը տարեկան: Մին-  
չեւ այս ժամանակ Արրահամ, չնայելով իր հարառու-  
թեան, չունէր սեպհական երկիր, ուր կարողանար թաղել  
իր կնոջ: Այն ժամանակ դեռ հասարակաց հանգստարան-

Ներ չկային այլ ամենը թաղում՝ էր իր մեռելներուն իր սեպհական կալուածքում։ Աբրահամ գնեց այն երկրի բնակիչներից մէկից, որի անունն էվիլոն էր, երկիր մի այրով, ուր և թաղեց իր կնոջ։ Ուրեմն Աբրահամի առաջին սեպհականութիւնը այս երկրում էր ազարակ մի այրով, ուր էր գերեզմանը։

Գևորգ ծե.

ԻՍՈՀԱԿԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ:

Աբրահամ, խորին ծերութեան հասած, իր մահից առաջ կամեցաւ իր որդու Խասհակի վիճակը կարգաւորել։ Նա չէր ուզում նորան կին առնել ոչ մի քանակացի աղջիկ, այլ վճռեց ընտրել նորա համար կին իր հայրենիքից և ազգականներից, ուստի և կանչեց իր ծառաներից մէկին, որին նա հաւատում էր և որ կառավարում էր բոլոր նորա կալուածները և ասաց նորան, «Երդում տուր ինձ մեր Աստուծոյ անունով, որ երկինք և երկիր ատեղծեց, որ գու իմ որդուս Խասհակի համար կին չես ընտրիլ քանանացի աղջիկներից, այլ կ'երթաս իմ հայրենիքս, իմ ազգականներիս մօտ և այն տեղից կ'առնես նորան կին։ Տէր Աստուածը, որի պատուիրանները բոլոր կեանքիս մէջ ես սրահել եմ, կ'առաջնորդե քեզ և քո առաջիդ կ'զրպիէ իր հրեշտակին։» Ծառան երդումով խոսանցաւ Աբրահամի ամէն հրամանները կատարելու, առաւ տան ուղար, բարձեց նոցա վերայ իր տիրոջ հարսատութիւններն և գնաց Միջազեաք, ուր Աբրահամ թռողել էր իր Նաքովը եղօրը։ Երբ այն քաղաքին մօտացաւ, ուր բնակում էր Նաքովը, նա մնաց դրան մօտ և իր ուղ-

տերը կանգնեցրեց նոյն ջրհորի մօտ, որից ջուր առնելու գալիք էին քաղաքի բոլոր աղջիկները։ Եղիազար (Աբրահամի ծառայի անունն է) սկսաւ աղօթք անել Աստծու, որ նա ցցց տայ իրան Խասհակի ապագայ կնոջ։ «Թող այն աղջիկը, ասաց Եղիազար իր աղօթքի մէջ, որին ես կ'ասեմ, յածացրու ասփորդ, որ ես խմեմ և նա կ'ասէ, խմիր ես կ'խմեցնեմ քո ուղտերիդ էլ, թող այն աղջիկը լինի Խասհակի կմնը։ Հազիւ աւարտեց իր աղօթքը, գուրս եկաւ քաղաքից մի աղջիկ սափորով, մօտեցաւ աղբիւրին, լքցրեց իր սափորը և կամենում էր արդէն հեռանայլ Եղիազարը մօտենալովնրան ասաց, «առուր ինձ խմել քո սափորիցգ»։ «Խմիր ինչքան ուղում ես։ պատասխանեց աղջիկը բարութեամբ, սափորը նրան տառվ։» «Ես կ'խմեցնեմ քո ուղտերիդ էլ, աւելցրեց նա յետոյ հանելով ջուր լքցրեց այն տաշոր, որ դրած էր անասուններուն ջրելու համար և ջրեց ողջ նորա ուղտերուն։ Զարմացած այնպիսի բարեհոգութեան վերայ, լուռ նայում էր օտարականը նորա վերայ և յետոյ հանելով ոսկի օղեր և ասպարանջաններ ընծայեց նրան և ասաց, «Ում աղջիկն ես, ուր են քո ծնողներդ։ չունե՞ք արդգօք ձեր տանը տեղ ինձ և իմ ուղտերիս համար»։ «Ես եմ Ուերեկա, Բաթուելի աղջիկը, որ նաքովի որդին է Մելքա կնոջից», պատասխանեց աղջիկը։ «Եր ասնը կայ տեղ քեզ համար, ով օտարական, կայ նմանազէս տեղ քո ուղտերիդ համար էլ։ Մենք շատ ունենք յարդ և խոտ։ Այն ժամանակ երկրագագեց Եղիազար Աստծուն ասելով։ «օրհնեալ է Աբրահամի Տէր Աստուածը։ Նա երբէք չէ թռողնում նրան և ինձ ուղիղ առաջնորդեց դէպի նորա եղօր տունը»։

Ուերեկան շուտով գնաց տուն։ Նա ունէր մի եղբայր զարան անունով։ Սա, տեսնելով թանկագին ընծաները, որոնք իր քոյլը ստացել էր, շտապով գնաց օտարականի մօտ և ասաց։ «Ե՞կ մեր տուն, դու, Աստուծմէ օրհնածդ։ Ես պատրաստել եմքեզ համար տեղ կայ տեղ հանգստանալու քո ուղարկելով համար էլ»։ Նա տարաւ իր հետ Եղիազարին, վեր առաւ ուղուերի բեռները և տուեց նրանց ուտելու խոռ և յարդ։

Խնչպէս Եղիազար ներս մտաւ թէ չէ, բերին նրան ընթրիք։ բայց նա ասաց. «Ես ոչնչ կերակուր չեմ գնիլ բերանա, մինչեւ չկատարեմ իմ տիրոջս կամքը»։ Այժմ պատմեց նա իրեն եղած յանձնարարութիւնը և խղնդրում էր վճռական պատասխան։ Բաժուել և զարան ասացին։ «Աստուած ինքը կարգադրեց այս բանը՝ ահա Ուերեկան քո առաջեւդ է, առ նրան և գնա, թող լինի նա քո տիրոջդ որդու կինը, ինչպէս Աստուած Հրամայեց»։ Այս լսելով Եղիազար երկրագութիւն տուեց Աստծու և շնորհակալ եղաւ նրանից։ Բերաւ ոսկի և արծաթի բաներ, գեղեցիկ շորեր և ողջը տուեց Ուերեկային։ Նոյնպէս ընծաներ տուեց նորա ընտանիքին էլ Արտանից յետոյ ամէքը նատան ընթրիքի։ Միւս օր առաւօտ վաղ վեր կենալց յետ, Եղիազար ասաց. «այժմ թող ինձ, գնամ տիրոջս մօտ»։ Աղջկան ծնողները ասացին. «Թող Ուերեկան մնայ մեզ մօտ էլի մի՛ տասն օր գոնչ»։ Բայց նա պատասխանեց. «մի՛ բռնէք ինձ, Աստուած օրհնեց իմ ճանապարհ և ես ակտոք է գնամ շուտով ու իմ տիրոջս ուրախացնեմ»։ Մայրը և Եղիազարը ասացին, «մէնք կ'կանչենք Ուերեկային, թող նա ինքը վճռէ»։ Երբ Ուերեկան ներս

մտաւ, Հարցրին նրան. «Կերթամ դու այս մարդու հետո։ —«Կերթամ»։ պատասխանեց Ուերեկան։ Այն ժամանակ աղջականները օրհնեցին նրան, հրաժարական ողջոյն տուին և Ուերեկան, առնելով իր աղախիններուն գնաց Եղիազարի հետ խահակ ամուսնանալով նորա հետ, խստ սիրում էր նրան։ իր առաքինութիւններով Ուերեկան եղաւ նրան ուրախութիւն և մխիթարում էր նրան մօր մահուան համար, որի վերայ լալցց նա չըր գալարում։ Արքահամ խորին ծերութեան մէջ մեռաւ, թողնելով բոլոր իր կալուածքը Խահակին։ Նորա որդիք՝ Խահակ և Խամայէլ թաղեցին նրան այն այրի մէջ, ուր շատ ժամանակ առաջ թաղած էր Սառա»

ԳԼՈՒԽ ԺԶ.

### ԽՍԱԻ ԵՒ ՑԱԿՈՎԲ

Աստուծոյ ընտրած աղջի նահապետները ուղղակի Աստուծմէ ստանում էին հրամաններ, իսկ իրենք կառավարում էին և պահում իրենց ընտանիքը, ընդոծիններուն և այն աղջականներուն, որոնք չունէին բաւական հարատութիւն, որ բաժանվէին նրանցից։ Ամէն նահապետ էր մի և նոյն ժամանակ քահանայ էլ իր տան մէջ և միջնորդ Աստուծոյ և իրենների մէջ։ Նահապետների ընտանիքների մէջ աւագ որդին ունէր առաւել արտօնութիւններ քան թէ նորա եղբայրները որովհետև հօր մահից յետ ժառանգում էր քահանայութեան և ախրջ իրաւոնքը։ Բայցի սրանից աւագ կամ անդրանիկ որդին ունէր ամէնից մեծ իրաւոնք՝ այն է յոյս ունենալը, որ իսկ իր ցեղից կ'ծավի խոստացած աղադայ Փրկիչը աշ-

իսարհիս: Արլասհամ էր տէր և քահանայ իր տան մէջ:  
Նրանից յետ միւնոյն իրաւունքները ժառանգեց նորա  
որդին իսահակը:

Իսահակից և Ռեբեկայից ծնան երկու եղբայրներ՝ եր-  
կուորեակներ՝ Եսաւ և Յակոբ: Եսաւ ծնաւ առաջ, ու-  
րեմն համարվում էր աւագ: Նորա մարմինը ծածկած էր  
մազերով ինչպէս բրդով. նա էր զօրեղ, քաջ, միայն շատ  
վայրագ և թեթևամիտ, նորա սիրելի պարապմունքն էր  
վայրի կենդանիների որսը. նորա առարը Խասհակի սիրելի  
կերակուրն էր. ուստի և Եսաւին առանձնապէս սիրում էր  
հայրը: Խակ Յակովն էր հեղ, բարեպաշտ երիտասարդ. օդ-  
նում էր իր մօր տան գործքերում և սիրում էր հո-  
վուի հանդարա կեանքը. այս շատ գուր էր գալիս մօրը:  
Յակովը Ռեբեկայի սիրելին էր:

Մի անգամ Յակովը եփեց իրեն համար ոսպէ թան և  
ուստում էր այն: Նոյն ժամանակ որսից յետ դարձաւ Ե-  
սաւ, դադրած և քաղցած: «Տուր ինձ քո կերակուրիցով».  
ասաց նա, «Ես շատ դադրած եմ և շատ քաղցած:—  
«Տուր ինձ քո անդրանկութիւնդ, պատասխանեց Յակովը,  
ես էլ կտամքեղ իմ կերակուրա»:—«Վնչ հարկաւոր է  
ինձ անդրանկութիւնս, ահա ես մեռնում եմ սովից».  
պատասխանեց թեթևամիտ Եսաւ և երջումնով՝ խառա-  
ցաւ տուլ իր եղբօր իր անդրանկութեան իրաւունքը: Սը-  
րանից յետոյ Յակովը էլ տուեց նրան իր կերակուրը: Ե-  
սաւ կերաւ, խմեց և գնաց, ամենելին չհոգալով իրեն  
եղբօրը վաճառած իրաւունքների վերայ: Եսաւ, երբ քա-  
ռասուն տարեկան դառաւ, ամուսնացաւ մի այլազգի աղջ-  
կան հետ. որ ամենելին չէր պատվում Ռեբեկային:

Գլուխ ժէ.

ԻՍԱՀԱԿԻ ՕՐՀՆՈՒՄ է ԻՐ ՈՐԴՈՅԸ:

Իսահակը, երբ շատ ծերացաւ, կուրացաւ և զգալով,  
որ մահը արդէն մօտ է, կանչեց իր որդուն Եսաւին և  
ասաց նրան. «որդեակի, ես արդէն ծեր եմ և իմ մահուա-  
նըս օրը չգիտեմ: Գնա՞ դաշտ, որս արա՞ և պատրաստիր  
ինձ նրանից այն կերակուրը, որ ես սիրում եմ: Ես մա-  
հեցս առաջ կամենում եմքեղ տալ օրհնութիւնս, ինչ-  
պէս անդրանիկ որդուս»: Եսաւ այն բուգեին գնաց: Բայց  
Ռեբեկան, որ լսեց Խասհակի այս խօսքերը և կամե-  
նում էր անդրանկութիւնը առաւել արժանաւոր Յակո-  
վին տալ, հրամայեց սրան իրեն Խաչնից երկու ուղեր-  
քերել, պատրաստեց նրանցից Խասհակի Ճաշակին յար-  
մար կերակուր. յետոյ Յակովը վեղը և ձեռները փաթա-  
թեց ուկերի մորթով, հազցրեց նրան Եսաւի լաւ շո-  
րերը և տալով նրան պատրաստած կերակուրը, զրկեց իր  
հօր մօտ, որ ստանայ անդրանկութեան օրհնութիւնը:  
Լսելով, որ մէկը վրան ներս մտաւ, հարցրեց կոյր ծերու-  
նին. «Չվ եկաւ: «Եսաւ, քո անդրանիկ որդին», պատաս-  
խանեց Յակովը. «Ես կատարեցի հրամանդ, ահա իմ և  
օրհնիր ինձ»:

«Պատեցիր ինձ առաւել, ասաց Խասհակ, ես կամենում  
եմքեղ շօշափել. որ Ճշնարիսը իմանամ, թէ դու արդեօք  
իսկ իմ որդիս Եսաւն ես»: Յակովը մօտացաւ: Խասհակը  
նրան շօշափելով ասաց. «Զայնդ նման է Յակովը ձայնին,  
իսկ վեզդ և ձեռներդ Եսաւինն են»: Այսպէս ծերունին  
Խարվեցաւ, կերաւ բերած կերակուրը և ասաց. «մօտեցիր

ինձ որդեակ և համբուրիր ինձ»; Խնքն էլ նրան տուեց իր օրհնութիւնը ասելով, «Եղիր տէր եղօրդ վերայ, քո մօրդ որդիքը թող հպատակեն քեզ, անիծած լինի, ովոր քեզ կ'անիծէ և օրհնած, ով քեզ կ'օրհնէ»:

Հազեւ Յակովը դուրս եկաւ թէ չէ, Եսաւ վրանը մուաւ: «Ով եկաւ, հարցրեց Խասհակը—«Ես Եսաւ, քո անդրանիկիդ»: Ապատախանեց Եսաւ: «Որդեակ իմ, ասաց Խասհակ, «Քո եղբայրդ Յակովը յափշտակեց օրհնութիւնը, որ քեզ համար էր նշանակած»: Եսաւ երկուղից և բարիութիւնից սկսաւ լսց լինել և ասաց. «Հայր մի՛թէ ինձ համար էլ ուրիշ օրհնութիւն չունես»: Նորա արտասունքներից շարժած, ծերունին օրհնեց նրան էլ ասելով. «Թող ընակեցնէ Տէր Աստուած քեզ էլ բարեբեր երկրի մէջ, միայն դու պէտք է կենաս սրովդ և լինես եղօրդ իշխանութեան տակ»: Այս ամէնը կարգադրած էր Աստուծոյ նախախնամութիւնից, որ յաճախ իր շնորհքը խորում է ապերախաններից ու անարժաններից և տալիս է այն երկիւղած մարդոց:

Այս ժամանակից Խսաւ առեց իր եղօր և ասում էր մորում, «Երբ կ'մեռնի մեր հայր Խասհակը, ես եղօրս կ'ապանեմ»: Ուերեկան, այս խմանալով, խորհուրդ տուեց Յակովընի անից փախչել Միջագեաք իր եղօր Կարանի օմա»: «Թող նա այն աեղ ընտրէ իրեն կին, ասաց Ուերեկան Խասհակին, ես չեմ ուզում որ նա ամուսնանայ քանանացի աղջկայ հետ. Խսաւի կինը քանանացի է, իմ բոլոր կեանքս մաշեց նա. Եթէ Յակովը էլ քանանացի կին առնէ, էլ ինչու համար է իմ կեանքս աշխարհիս վերայ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՅԱԿՈՎԻ ԵՐԱԶԸ:

Խասհակ կանչեց Յակովընի իր մօտ, օրհնեց նրան Ճանապարհ ընկնելիս և յետագայ հրամանը տուեց նրան. «մի՛ առներ քեզ կին քանանացիներից, այլ գնա Միջագեաք, քո մօրդ հօր՝ Բաթուելի տունը և ամուսնացիր մօրեղբօրդ Լաբանի աղջիկներից մեկի հետ: Խակ Աստուած կ'օրհնէ քեզ, կ'մեծացնէ և կ'բավարարացնէ: Խմ հօրս Արքահամի օրհնութիւնը կ'այս նա քեզ և քո զատակներիդ»: Յակովը, ծնողայ օրհնութիւնը տունալից յետ, Ճանապարհ ընկաւ գէպի Միջագեաք իր մօրեղբօր Լաբանի մօտ:

Եսաւ լսելով, որ Խասհակ օրհնեց Յակովըն և խրկեց նրան Միջագեաք, որ Լաբանի աղջիկներից մեկի հետ ամուսնանայ, որովհետեւ քանանացի աղջիկներուն չէր հաւանում, ինքն էլ գնաց իր հօրեղբօր Խամայէլի մօտ և կին առաւ իրեն նորա Մայելէթ աղջկան:

Երբ Յակովը, իր ծնողների հրամանով, գնում էր Միջագեաք, մի անսապատ տեղում զիշերը նրան վրայ հասաւ: Նա պառկեցաւ գետնի վերայ, զիլի տակ քար գըրաւ և քնեցաւ հանգատում: Արագում տեսաւ նա երկրիս վերայ սանդուղ գրած, որի զլուխը համում էր մինչեւ երկինք: Հրեշտակները իջնում էին և բարձրանում նորա վերայ, խակ զլսին կանդնած էր ինքը Աստուած և ասում էր. «Ես եմ քո Տէր Աստուածդ, Արքահամի Աստուածը, Խասհակի քո հօրդ Տէրը, մի՛ վախիր. Ես կ'տամ քեզ և քո զաւակներիդ երկիլը, որի վերայ դու այժմ

քնում ես. քո ազգդ կ'բազմանայ ինչպէս ծովի տւագը և կ'սարածվի դէպի արևելք, արևմուտք, հիւմիս և հարաւ, և քեղմով ու քո զաւակներովդ կ'իջնի օրհնութիւն և բոլոր մարդկութեան վերայ: Ես կ'լինիմ քեզ չետ, ամէն ճանապարհներում կ'պահէմ քեզ, կ'դարձնեմ քեզ կրոկին այս երկիրը և չեմ թողնիլ քեզ, մինչեւ չկատարվի ամէնը, ինչոր Ես քեզ ասացի՞: Յակովը զարթեցաւ և ասաց. «Ասուած է այս տեղում և ես չէի իմանում. այս տեղ է Ասուածոյ տունը և երկնիքի դուռն» և առաւ այն քարը, որի վերայ քնած էր, կանդնեց նրան արձանի պէս, ածեց նորա վերայ իւղ և ասաց. «Երբ Ասուած ինձ յետ կ'դարձնէ, կ'շնում այս տեղ սեղան, այս տեղ կ'լինի Ասուածոյ տունը և ես իմ ասացուածներիս տասանորդը կ'տամ նրան»: Սանդուղը էր օրինակը Ասուածամօր և Յիսուսի Քրիստոսի երկրիս վերայ իջնելուն: Տեղը, ուր Յակովը տեսաւ մարդարէական տեսիլ, այն ժամանակից յիտ կոչվեցաւ Բեթէլ, այսինքն Տուն Ասուածոյ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

### ՅԱԿՈՎՔԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Յակովը շարունակեց իր ճանապարհը դէպի արևելք իր մօրեղօր Լաբանի մօտ: Յրկար ժամանակ գնալից յետ, հասաւ մի ջրհորի մօտ, որ դաշտի մէջ էր և որի մօտ երեք խաչներ հանգստանում էին, և ջրհորը ծածկած էր մեծ քարով: Յակովը հովիւներին ասաց. «Եղայրներ, որտեղ կեց էք»: — «Մենք Խառան քաղաքից ենք», պատասխանեցին հովիւները: «Ճանաչում էք դուքս Յամանիք կ'անջնութիւնը և առաջանակը անցնելից յետ, Լաբանը համաձայնեցաւ: Յակովը եօթն տարի արածում էր նորա խաչները: Նշանակած ժամանակի անցնելից յետ, Լաբանը խնջոյք պատրաստեց և հարանիք կանչեց շատ հիւրեր: Այն ժամանակվան սովորութեամբ հարսը պէտք է իր երեսը ծածկէր պատկի ժամանակ քօղով: Երբ Յակովը միւս առաւտաւ իր կնոջ առանց քօղի, իւ-

նեցին հովիւները. «Եւ ահա Հռաքէլ նորա աղջիկն էլ գալիս է ջրհորի մօտ նորա ոչխարհներով: «Դեռ վաղ է խաչները ժողովելու». ասաց Յակովը. «Ինչո՞ւ չէք ջրում խաչներդ և չէք քշում՝ նրանց արածելու մինչեւ իրիւնուն»: — «Մենք սպասում ենք միւս հովիւներուն», պատասխանեցին նրան, «որ գլորենք քարը, ջրենք միասին մեր ոչխարհներուն և յետոյ կրկին ծածկէնք ջրհորը»: Այս միջոցին մօտեցաւ Հռաքէլն էլ իր հօր խաչներով: Արան տեսնելով, Յակովը շատաքեց քարը գլորելու ջրհորի բերանից, ջրեց Լաբանի ոչխարհներուն և յետոյ բարեկց Հռաքէլին, լսց եղաւ ուրախութենից և ասաց, որ ինքը նորա հօրաքրոջ Ռեբեկայի ողովին է: Այս իմանալով Հռաքէլ վազեց տուն, որ բոլոր պատմէ իր հօր: Երբ Լաբանիր քեռողուու գալուստը լսեց, գնաց նորա առաջ, գրկեց նրան, համուրեց և տարաւ իր տուն:

«Դու իմ ազգականա ես», ասաց Լաբան Յակովին, քայց ես չեմ ուզում, որ գու ինձ ձրի ծառայես. ասա, ինչ վարձ ուզես, կ'ստանաս քո ծառայութեանդ համար»: Լաբան ունէր երկու աղջիկ, երեցը անուանվում էր Լիա, որի աչքերը ցաւում էին, և կրտսերը Հռաքէլ, որ գեղեցիկ էր շատ դէմքով: «Ես կ'ծառայեմ քեզ եօթն տարի կրտսեր աղջիկանդ Հռաքէլի համար», պատասխանեց Յակովը, «Եթէ կ'տաս գու նրան ինձ կին»: Լաբանը համաձայնեցաւ: Յակովը եօթն տարի արածում էր նորա խաչները: Նշանակած ժամանակի անցնելից յետ, Լաբանը խնջոյք պատրաստեց և հարանիք կանչեց շատ հիւրեր: Այն ժամանակվան սովորութեամբ հարսը պէտք է իր երեսը ծածկէր պատկի ժամանակ քօղով: Երբ Յակովը միւս առաւտաւ իր կնոջ առանց քօղի, իւ-

մայսու, որ իրան Հռաքելի աեղ, Վիային են տուել։ Յակովը զնաց Լաբանի մօտ և ասաց. «գու խաքեցիր ինձ ես եօթն տարի քեզ ծառայեցի Հռաքելի համար և դու ինձ Վիային տուիր»։ — Մենք սովորութիւն չոնինք կրտս սեր քրոջը մեծից առաջ կին տալու», պատասխանեց Լաբան. «Եթէ կուզես մի շարաթից կտամ քեզ Հռաքելին ել, միայն եթէ կհամաձայնիս ելի եօթն տարի ինձ ծառայել»։

Յակովը ամուսնացաւ Հռաքելի հետ և ծառայեց Լաբանին ելի եօթն տարի։ Բայց իր երկու կոտից աւելի սիրում էր նա գեղեցիկ Հռաքելին։ Այս գերազանցութիւնը շատ արտմեցրեց Վիային, բայց Աստուած, նրան մսիթարելու համար այս արտմութիւնից, տուեց նրան շատ որդիք. իսկ Հռաքելը երկար ժամանակ ամուլ էր։ Վերջապէս ամուսնութիւնից շատ տարի յետոյ. երբ արդէն Յակովը տան որդի ունէր, Հռաքելն ել ծնաւ որդի, որին անուանեցին Յովսէվ։

Գև. ՈՒԽ Ի.

ՅԱԿՈՎԸԻ ՂԱԲԱՆԻ ՄՕՏ ԿԵՆԱՅԻ.

Տամնքորս տարիից յետ Յակովը ասաց Լաբանին. «Աս ծառայեցի քեզ հաւատարմութեամբ, երբ ես քեզ մօտ եկայ, սոսցուածդ մեծ չէր այնքան, այժմ դու հարուստ ես։ Եւ ես պէսք է արդէն իմ որդոց համար հոգ քաշեմ։ Թող ինձ որ իմ հայրենիքս երթամ։ Լաբան գիտենալով. որ Ճշմարտիւ Յակովը խիստ մեծացրեց իրեն ստացուածքը, քաղցրութեամբ պատասխանեց նրան։ «Ինդիում եմ քեզ, մնա իմ մօտ ելի մի քանի

Ժամանակը ես տեսնում եմ, որ Աստուած օրհնեց ինձ սյն ժամանակից, երբ դու իմ տանս բնակում ես. նըշանակիր ինքդ քեզ քո աշխատանքիդ համար վարձ։ Յակովը նշանակեց իրեն վարձ այն խայտախարիւ (գոյն զգոյն) գառները և սպիտակ ուլերը, որոնք կ'ծնեն Լաբանի խաչնի մէջ։ Լաբանը համաձայնեցաւ։

Սրանից յետ Յակովը մնաց ելի ծառայելու Լաբանին և շատ անբաւականութեանց համբերեց։ Եթէ մի անառուն կորչում էր խաչից կամ պատառվում էր վայրինի գաղաներից, Յակովը ստիպված էր Լաբանին նորա համար վարձատրելու։ Բայց սրանից Լաբանը քանի անդամ փոխեց պայմանը, որ զրել էր Յակովը հետ։ Բայց Աստուած էր Յակովի պաշտպանը, օդնականը։ Երբ Լաբանը նշանակում էր Յակովը համար խայտախարիւ ծնած գառները ու ուլերը, ողջ գառները խայտ էին ծնում, իսկ երբ Լաբան միւս տարին պայմանը փոխում էր և Յակովին ման էր նշանակում սպիտակ գառները, ծնում էին սպիտակ։ Այսպէս Յակովը կամաց կամաց ունեցաւ բազմաթիւ խաչներ ու լավագների և այծերի, որով կարողացաւ շատ ծառաների ել աել դառնալ և ուրիշ անսառներ ել շատ գնել։

Գև. ՈՒԽ Ի.Ա.

ՅԱԿՈՎԸԻ ԴԱՐՁՐ.

Լաբան երբ տեսաւ, որ Յակովը շատ հարստացաւ, սկսաւ նրան նախանձել և չէր կարողանում հանդարս աչքով նայել նորա վերաց. Յակովը նկատեց այս բանը և շատ արտմեցաւ այսպիսի վարժուաքի համար։ Այս

Ժամանակ Աստուած ասաց նրան. «Սյօմ՝ դուրս եկ այս երկից, ես քեզ կ'գարձնեմ հայրենիքդ, ես քեզ հետ կ'լինեմ»։ Յակովը պատրաստեցաւ ճանապարհ ընկնելու առանց Լաբանի դիտոթեան, նատացրեց իր կողջներուն և որդոցը ուղարկերի վերայ և ճանապարհ ընկաւ դէպ իր հայրենիք։ Լաբանը ետևներից ընկաւ և բռնութեամբ կամենում էր նրանց կանգնացնել. միայն Աստուած արգելեց նրան, որ ոչ մի կերպի նեղութիւն չտայ Յակովը ըմբն Ռւսի և Լաբանը, եղր հասաւ նրանց Գաղապադ Երան մօտ, Հրաժարական ողջյն տուեց Յակովին, իր աղջիկ ներին և թոռներին ու խաղաղութեամբ բայ թողեց նրանց։

Յակովը, երբ Յորդանան գետին մօտ հասաւ, վախեցաւ իր եղբօր Նսաւին միար բերելով։ Նա իմաց տուեց նր կամ իր գալուստը։ Խրված մարդիկը յետ գարձան և ասացին. «Անկը տեսանք եղբօրդ Նսաւին, նա գալիս է քո առաջդ շրա հարիւր հոգով»։ Յակովը զարհուրեցաւ, կարծելով թէ նա գալիս է յափշտակելու իր բոլոր ստացուածքը։ Նա երկու մասը բաժանեց իր մարդոց և խաշ ները, ասելով. «Եթէ Նսաւը կ'ջնջէ ստացուածքիս մի մասը, միւսը էլի կ'մնայ ինձ»։ Յետոյ, ամէն խաշնից մի քանի անստուն վատելով, և ամէն մէկը այս փոքրիկ խաշ ներից յանձնելով իր հաւատարիմ մարդոց, Հրամայեց նրանց Նսաւի առաջը դուրս գնալ։ Յւ եթէ Նսաւը նր ըստոց հանդիպելով կ'հարցնէր թէ ում է պատկանուր այս խաշը, ծառաները, պէտք է, ասէին, «քո ծառայիդ Յակովին, որ խրկում է այս քեզ ընծայ և ննքը գալիս է ետելից»։

Կյա ամէնը այսպէս կարգազրելց յետ Յակովը ըսկ-

սաւ աղօթել, ասելով, «Իմ հայրերիս՝ Արքահամի և իսահանի Տէր Աստուածը, որ հրամայեցիր ինձ դառնալիմ հայրենիքս ազգականներիս մօտ և խոստացար ինձ Քո ողբանութիւնսդ, արժանի չեմ ամէն բարերարութեանցդ, որ ինձ արկը Դու: Երբ ես Յորդանան անցայ, բայի գաւազանիցս ոչինչ չունեի. սյօմ տէր եմ երկու մեծ խաների: Ազատիր ինձ եղբօրս ձեռքից, որովհետեւ ես վախենում եմ, որ չլինի, թէ նա դայ և ազանէ ինձ և մօրը իր որդիներոցք: Երբ զիշեր եղաւ, Յակովը մնաց մէսակ: Նորա մօտ եկաւ մի անծանօթ մարդ և մարտնչեց (կովեցաւ) նորա հետ բոլոր զիշերը և այն միջոցին վասպեցաւ նորա ոտը, ինչից էլ Յակովը կարում էր բոլոր իր կեանքի մէջ: Առաւատեան մօտ, երբ անծանօթը կամենում էր թողնել նրան և գնալ, Յակովը բունեց նրան և ասաց. «Ես քեզ չեմ թողնիլ, մինչև ինձ չօրհնես»: Խորհրդաւոր մարդը հարցրեց. «Անունդ ի՞նչ է»։ — «Յակով»։ պատասխանեց նա: «Այսուհետեւ քեզ», ասաց անծանօթը, «Խարսյէլ կ'անուանեն, որովհետեւ դու մարտնչեցիր Աստուածց հետ, և զօրաւոր կլնիս դու պատերազմում մարդոց դէմ էլ»։ — «Բո անունդ ի՞նչ է»։ Հարցրեց Յակովը։ — «Մի հարցներ իմ անունա, նա հրաշլի է», պատասխանեց Աստուած. յետոյ օրհնեց նրան և անհետացաւ: Յակովը այս անցքի յիշատակի համար, անուանեց այն տեղը փանուէլ (տեսիլ Աստուած), որովհետեւ դէմ յանդիման տեսաւ Աստծուն և չմեռաւ: Աստուածը տեսաւ նա իր եղբօր՝ Նսաւին, որ գալիս էր նորա առաջը»:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀԱՇՑՎԻԼ:

Եսաւ բնակում էր Սէիր երկում: նա եղաւ այր զօրեղ, հարուստ և շատ ժամանակից՝ ի վեր մօռացել էր իր եղօր Յակովը վերայ ունեցած ովար: Երբ Յակովը դրա կած մարդիկ ծանուցին նրան իր եղօր գալուստը, Եսաւ ուրախութեամբ դուրս եկաւ նորպա առաջ և նրան առաւել պատիւ ցյց տալ կամենալով, առաւ հետք չորս հարիւր հոգի էլ: Յակովը նրան տեսնելով, առաջ կարգեց իր աղախիններուն իրենց որդիններովը: յետոյ Լիսին իր երեխաններով ու վերջապէս Հռաքէին և նորա որդուն՝ Յովսէփին: Խակ ինքը գնաց իր եղօր առաջ և երկրապագեց նրան մինչև գետին եօթն անդամ: Եսաւը լմկաւ նորա վիզը, եղայրաբար զրկեց նրան և երկուն էլ սկսան լալ ուրախութենից: Նայելով կանաց և երեխանների վերայ, որոնք իր առջել կանդնած էին, հարցրեց Եսաւ: « ով են առքա: Սոքա իմ զատկներս են, որով ինձ օրհնեց Աստուած և իմ կանայքս են», պատասխանեց Յակովը: Այն ժամանակ մօռեցան աղախինները իրենց երեխաններով և երկրապագեցին Եսաւին: Նրանց հետեւց Լիսին իր որդիններով և նմանապէս երկրապագեց և վերջապէս եկաւ Հռաքէլ Յովսէփի հետև երկրապագութիւն տուեց Եսաւին: « Այն ում խաշներն էին, որոնք ինձ հանդիպեցան Ճանապարհին». Հարցրեց Եսաւ: « Ես զրկեցի նըրանց քեզ ընծայ, որ արժանանամ քո ողորմութեանդ», պատասխանեց Յակովը: « Եղբայր, նոքա ինձ հարկաւոր չեն», ասաց Եսաւ, քեզ առ նրանց ես առանց նոցա էլ բաւական եմ իմ ունեցածովս»: « Առ նրանց ասաց Յա-

կովը և եղեր ինձ ողորմած, ընդունիր այն ընծան իբրև Աստուծոյ օրհնութիւնը, որով նա ինձ այսպէս առատաձեռնութեամբ վարձատրեց: Յակովը չգաղաքեց իրներելց, մինչև որ Եսաւ համաձայնեցաւ ընդունել այն ընծան:

Արանից յետոյ, նոքա հեռացան միմեանցից և գնացին ուրիշ ուրիշ Ճանապարհին ներով: Ճանապարհին Հռաքէլ ծնաւ Յակովը ինձնաւ Յակովը ինձն մի որդի էլ բենեամին անունով և ինքը վախճանեցաւ:

Աերջապէս Յակովը, քսանամեայ առանձնութիւնից յետ, դարձաւ կրկին իր հօր՝ Խաչահակի մօտ, որ այս ուրախալի տեսութիւնից յետ էլ երկար չապրեցաւ: Նա մեռաւ հարիւր ութսուն տարեկան և իր որդիքը՝ Եսաւ և Յակովը թողեցին նրան:

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՅԱԿՈՎԾԻ ՈՐԴԻՔԸ:

Յակովը ուներ տասներկու որդիքը, ահա նոցա անունները աւագութեան կարգով. Ուռքէն, Շմաւոն, Պետր Յովոդա, Զարուղոն, Խապար, Գան, Գաղ, Ասեր, Նեփթաղեմ, Յովսէփ և Բենիամին: Երկու վերջիններն էին նորա սիրելի կոտը՝ Հռաքէլ որդիքը: Մեծ որդիքը պարապում էին Յովուութեամբ և իրենց վարքով միշտ արժանի չեն լինում ծնողական սիրոյն: Բենիամինը՝ ամէնից փոքրը դեռ երեխայ էր. Խակ Յովսէփի գեղեցիկ, հեղ և բարեպաշտ երիտասարդը, էր խիստ սիրելի հօրու Յակովը կարեց նրան գեղեցիկ ծաղկեց շորեր: Մեծ եղայրները նախանձում էին Յովսէփին և ատում էին նրան: Նոցա

Համար, որ հայրը նրան նոցանից գեղազանց էր դասում, և նոցա ատելութիւնը աւելացաւ մանաւանդ այն ժամանակից, երբ Յովսէի պատմեց նրանց երկու զարմանալի երազներ, որնք տեսել էր նա: Մի անգամ ասաց նա եղայրներին: «Ասեցէք, ի՞նչպիսի զարմանալի երազ տեսայ ես: Ես երազումն տեսայ, որ մենք դաշտում ցորէն էինք հնձում և որայ կապրում: իմ որայս կանգնած էր ուղիղ: իսկ ձեր որաները պատեցին իմ որայս և երկու պազութիւն տուին նրան»: «Մի՛թէ գու կ'դառնաս մեր թագաւորը և մենք քո հապոտակները»: ասացին նրան եղայրները բարկութեամբ:

Ըստ պահնից յետ Յովսէի տեսաւ էլլ մի երազ, որ նմանապէս պատմեց եղայրներին: «Ես տեսայ երազում», ասաց նա, «որ արեգակը, լուսինը և տասնըմէկ աստղեր երկրպագում էին ինձ»:

Յակովը այս լսելիս, սասաեց նրան սաելով: «այդ ի՞նչ կրազ է, մի՞թէ ես, իմ կինա և եղայրներդ կ'գանք քեզ երկրպագութիւն տալու»: Եղայրները շատ չարացան Յովսէիի վերայ այսպիսի երազների համար, բայց Յակովը, որ ինքը տեսնում էր տեսիներ, որնք Աստուած նրան զրկում էր, չմոռացաւ այն երազները և թաքուն մոածում էր Յովսէիի խօսքերի վերայ: «Երեխ» ասում էր նա ինքը իրեն, «Աստուած նշանակում է իմ Յովսէիիս մեծ բանի համար»: Եւ ճշմարտիւ, որ Յովսէի, իր հօրը սիրելին, իր առաքինութեանց պատճառով արածանացաւ Աստուծոյ առանձին շնորհին:



ԳՅՈՒԽԻ ԽԳ.

ԵՎ.ԲԱՅՐՆԵՐԸ ԾԱԽՈՒՄ ԵՆ ՑՈՎՍՔԻՆ:

Յակովը որդիք արածում էին իրենց հօր խաչները: Մի անգամ նոքա խաչները շատ հեռու քշեցին հօր անից և որովհետեւ հայրը երկար ժամանակ համբաւ չուներ նոցա վերայ, ասաց Յովսէիին: «Պնա տես, առողջ են արգեօք եղայրներդ և մեր խաչներ և յետ դառնալով իմաց առւր ինձ, ինչոր այն տեղ լինում է»: Յովսէի հագաւ իր գեղեցիկ շորերը և գնաց եղայրների մօտ: Եղայրները, երբ գեռ հեռուից տեսան նրան, ասացին մեկ մէկու «ահա գալիս է մեր երազատեաը, եկէք սպանենք նրան և ասենք մեր հօրը, թէ վայրենի գազանները պատառել են նրան: Տեսնենք ինչպէս կ'կատարվին նորա երազները»: Ոուրէն, ամէնից մեծ եղայրը, զարհուրեցաւ, լսելով նոցա այս միտքը և ամէն կերպով աշխատելով Յովսէիին ապատել, ասաց: «մի՛ սպանեք նրան, մի՛ թափէք անմեղ արիւն, մի՛ պղծէք ձեռներդ ձեր եղքօր սպանելով». լսւ է, որ զցեց նրան այս անծուր փոսի մէջ»: Նա այս առաջարկեց նորա համար, որ կամենում էր զիշելով գալ, հանել նրան փոսից կամ անծուր ջըհորից և տանել հօր մօտ: Երբ Յովսէիը մօտեցաւ եղայրներին, սոքա հանեցին նորա շորերը, զըցեցին նրան փոսի մէջ: Սորանից յետ, իբրև ոչինչ չար բան չէին արած, հանդիսան նատան ուտելու: Բայց Ոուրէն շիարողացաւ ուտել նոցա հետ, նա հեռացաւ և մոածում էր, թէ ի՞նչպէս աղատէ Յովսէիին:

Երբ Ոուրէն հեռացել էր, եղայրները տեսան իւ-

մայելացի, վաճառականներուն, որոնք այնտեղից անց էին կենում ուղարկով։ Այս խմայելացիներն էին Խամայել յաջորդները։ Նոքա տանում՝ էին զանազան վաճառներ Եղիպատոս։ Յուղան ասաց եղայրներին, «Բնչու համար սպաննենք Յովսէփին։ Նա մեր եղայրն է և ինչ օգուտ մեզ», թէ նրան սպաննենք. լսու է, որ ծախենք նրան այս վաճառականներին։ Այսպէս Յովսէփին էլ հանեցին փոսից և չնայելով նորա խնդրելուն, լացին և արտասուքին ծախեցին Խամայելացիներին քան դահեկանով։

Մի քանի ժամանակից եկաւ Ռուբէն, որ հանեց Յովսէփին փոսից։ Նա զարհուրեցաւ, երբ չդուաւ նրան այն տեղ և ինքը շատ նեղացած, վազեց եղայրների մօտ. «Թշուառ երեխացին ինչ արիք», հարցրեց նա, «ես չդուայ նրան փոսում, ինչ կլինի ինձ այժմ»։ «Մենք ծախեցինք նրան», պատասխանեցին եղայրները։ Յետոյ իրենց յանցանքը հօրից ծածկելու համար մոլթեցին մի այծ, թրջեցին նորա արիւնով Յովսէփի շորերը և դրկեցին այն հօրը, հրամայելով ասել. «ահա արիւնու շրերը, որոնք գտանք գաշտի մէջ, տես արդեօք սա Յովսէփինը չէ»։ Յակովը խկոյն Ճանանչեց իր սիրելի որդու շորը և յուսահատած աղաղակեց։ Այս շորը Յովսէփինն է, նրան պատառել են վայրենի գաղանները։ Երկար ժամանակ ողբաց նա իր սիրելի որդու վերայ, բոլոր որդիքը և աղջիկները հաւաքվեցան նրան միմթարելու, բայց խեղջ հայրը անմիտիթարելի էր։ »Ո՛հ, ասում էր իր նա, սրտի ցաւը ինձ էլ շուտ կիծեցնէ գերեզման, ես շուտով կ'միանամ իմ որդուս Յովսէփի հետո։

Գլ. Ակա Խ.

ՅՈՎՍԵՓԸ ԵԳԻՊԵՏՈՒԹԻՒՄ.

Խամայելացիք, երբ Եղիպտոս հասան, ծախեցին Յովսէփին մի Յէտավիլէս անունով մարդուն, որ Երդիպտոսի թագաւորի մեծամեծների մէկն էր։ Պետափիրէսը տեսնելով, որ Յովսէփին է շատ խեղք, արդար, հեղ և բարեպաշտ մարդ, շնորհ նրան առաջին մարդ իր տան մէջ և յանձնեց նրան բոլոր իր ստացուածքը։ Կաւ մարդոց ամէն տեղ լսու է լինում։ Նոքա ամէն տեղ գտնում էն բարեկամ և պաշտպան։

Պետափիրէսի կինը չար կիսկ էր. նա կամենում էր համազել Յովսէփին, որ իր չետ միասին խարէ նորա մարդուն. բայց որովհետեւ Յովսէփ չհամաձայնեցաւ. Նորա առաջակութեան, այս չար կինը գտաւ. հնարք նրան իր մարդու Պետափիրէսի առջեւ զրաբարտելու, այնպէս որ սա հրամայեց անմեղ Յովսէփին այն բանով զցել, ուր պահվում էին արքունի յանցաւորները։ Բայց Տէր Աստուած միշտ անմեղութեան և առաքինութեան պաշտպանն է։ Յովսէփի խկ բանափ մէջ էլ գտաւ բարեկամ ներ։ Բանապետը սիրեց նրան, և իրեւ սորուկի խիստ չէր պահում. այլ շնորհ նրան երկրորդ մարդ իրանից յետոյ և ասաց նրան, որ նայէ ամէնի վերայ, որոնք բանդումն բոնած էին։

Յովսէփի կաղանաւորութեան ժամանակ Եղիպտոսի թագաւորը բարկացաւ երկու ալքունի պաշտօնեաների վերաց և հրամայեց նրանց բանով զցել։ Արանցից մէկն էր տակաւապետը, որ գինի էր թագաւորին տալիս և միւսը մատակարարը (հացագործը), որ վերկացու էր

թագաւորի սեղանին։ Այ անդամ՝ առաւօտը երբ Յովհակի մասաւ նրանց մօտ, տեսաւ որ խիստ մոտածութեան մէջ են։ Նոքա ասացին նրան։ «մենք տեսանք զարմանալի երազներ, որոնց մեկնութիւնը խիստ կուղենք իմանալ։ բայց այստեղ բանտի մէջ այնպիսի հմտա երազի մեկնիչ չկայ»։ Յովսէփի ասաց. «Ճեսիլքի մեկնութիւնը Աստուծմէ է կախած, ասացէք, ի՞նչ երազ տեսաք»։ Այն ժամանակ տակառապետը առաջին սկսաւ. «Ես տեսայ երազում», ասաց նա, մի որթ, որ ուներ երեք ճիւղ և ճիւղերին վերայ խաղող հասած։ ինձ երեւում էր, թէ հաւաքում էի սրուղը, քամում էի ծուծը թագաւորի բաժակի մէջ և տալս էի նրան»։ Յովսէփի ասաց նրան. «Երեք ճիւղերը նշանակում են երեք օրայս միջոցի անցնելց յետոց, թագաւորը կհրամայէ քեզ ազատել և կյանձնէ քեզ էլի քո առաջվան պաշտօնը։ Քո բաղդաւորութեանդ ժամանակ միտդ բեր ինձ և աշխատիր ինձ ազատելու բանդից, ուր ես փակված եմ ՚իգուր»։ Արանից յետ մատակարարն էլ սկսաւ պատմել իր երազը. «Ես տեսայ երազում, ասում էր նա, որ երեք խան զլիխս զրած ունէի, վերին խանում էին ամէն կերպի կերակուրներ, որոնք թագաւորը գործածում է, և թռչունները ուսում էին նրանցից»։ Այն ժամանակ Յովհակի ասաց նրան. «Երեք խանները նշանակում են երեք օրը, այս ժամանակի անցնելց յետ թագաւորը կհրամայէ քեզ կախազանի վերայ կախել, ուր թռչունները կուտեն մարմինդ»։ Ամէնը կատարվեցաւ ինչպէս Յովսէփի գուշակեց։ Ապերախտ տակառապետը, իր բաղդաւորութեան ժամանակ մոռայաւ Յովսէփին. բայց Աստուծ,

որ երեք չէ թողնում անմեղ մարդոց, էր Յովսէփի հետ և նորա թշուառութիւններն էլ դարձրեց բաղդաւորութիւն։

ԳԼՈՒԽ ԽԶ.

### ՅՈՎՍԷՓԻ ԱԶԱՏՎԱԿԻԾ.

Երկու տարիից, ինքը ֆարաւոն Յովսէպոսի թագաւորը (ֆարաւոն բառը Յովսէպոսի թագաւորների ախտղոն էր) տեսաւ զարմանալի երազ։ Նա տեսաւ երազում, որ ինքը կանգնած է զետի մօտ, որից գուրա եկան եօթը գէր կովեր և արածում էին ափում։ Սոյա ետեից նոյն Նեղոս գետից գուրս եկան եօթը վտիտ կովեր, որոնք կերան եօթը գէր կովերուն։ Փարաւոն զարթեցաւ, բայց կրկին քննելով տեսաւ էլի երազում եօթը լիք և գեղեցիկ հասկեր մի փնջի վերայ։ Նոյա մօտ և նոյն փնջից գուրս եկան եօթն ազագուն և չըր հասկեր, որոնք կերան եօթը լիքը հասկերը։ Այս երազները խիստ անհանգստացրին թագաւորին։ Երբ առաւօտ եղաւ, հրամայեց բոլոր երազահաններուն իր պալատում ժողովել։ Միայն ոչոք չկարողացաւ մեկնել ֆարաւոնի երազները։

Այն ժամանակ ապերախտ տակառապետը միտը բերեց կալանաւորութեան ընկերին՝ Յովսէփին և ասաց ֆարաւոնին. «Ես այժմ յիշեցի իմ յանցանքաւ Երբ գու, տէր արքայ, բարկացար իմ և մատակարարի վերայ և երկուսիս էլ հրամայեցիր բանար գցել, ամէն մէկս տեսաւ մի մի զարմանալի երազ։ Նոյն բանդումն կար մի նբրայեցի երիտասարդ էլ. մենք պատմեցինք նրան մեր երազներս, նա մեզ երկուսիս էլ մեկնեց և կատարվեցաւ

այնպէս, ինչպէս նա ասաց, ևս ստացայ առաջվան պաշտօնս և մատակարարը կախվեցաւ կախաղանի վերայ»:  
ֆարաւոն իսկոյն զրկեց Յովսէփի ետեւից. Նրան հաղցրին հարուստ շորեւ և բերին թագտորի առաջ.

Փարաւոնը ասաց Յովսէփին. «Ես տեսայ երադ, բայց ոչք չէ կարողանում մեկնել նրան: Ինձ ասացին, որ դու մեկնում ես երազներ»: Հեղ Յովսէփը պատասխանեց. «Ես ինքս ոչինչ չեմ կարող անել: Միայն Աստուած կարող է, տէր արքայ, տալ քեզ քո շամեկացած մեկնութիւնդ»:  
Այն ժամանակ ֆարաւոն պատմեց իր երազները:

«Երկու երազներդ էլ մի նշանակութիւն ունին», ասաց Յովսէփ, «Աստուած նրանցինը ասում է թագաւորին. եօթն գեր կովերն և եօթն լեբը հասկերը նշան են եօթն պաղպեր տարիներին. իսկ եօթն վտիս կովերն և եօթն ազազուն հասկերը նշան են եօթն սովոր տարիներին: Ահա ինչպէս այս ամէնը կ'պատահի. Բոլոր Եղիպատում եօթն տարի շարունակարար կ'լինի մեծ առասութիւն հացի. նրանից յետ կ'գան միւս եօթն տարիներ, երբ ոչինչ չի դուրս գալ և ինչ որ պատրաստած էր պաղպեր տարիներում, բոլորը կ'ծախվի սովոր տարիներում. բայց ֆարաւոնի երկու միակերպ երազներ տեսնելը ցոյց է տալիս, որ Աստուածոյ կամքը գուցէ շուտով էլ կատարվի: Պէտք է թագաւորը նշանակէ մի իմաստում, գործունեայ մարդ, որ պաղպեր տարիներին հաւաքէ ամենայն կերպի ցորէն այնքան, որ բաւական լինի բոլոր ժողովրդեան, անպաղպեր տարիների ժամանակի:

Հաս հաւանելի թռւեցաւ այս ֆարաւոնին և նորա պաշտօնեաներին. «ո՞ւր կ'գանեմ», բայցի Յովսէփից մի

մարդ, որի մէջ լինի Աստուածոյ ողին» ասաց Փարաւոն, քեզ յայսնեց Աստուած իր խորհուրդը, ուրեմն դու ուրիշներից իմաստումն ես: Քեզ կ'զնեմ ես զլուխ բոլոր Եղիպատուի վերայ, երկրորդ մարդը կ'լինիս դու ինձանից յետոյ. միայն զահով բարձր կ'լինեմ ես քեզանից: Այս ասելով ֆարաւոն հանեց իր մատոնին և հաղցրեց Յովսէփի մատին. նմանապէս հրամանեց բեհեղեայ շոր հաղցնել նրան, վզն սոկի մանեակ կախել և արքունի կառքով շրջեցնել մայրաքաղաքի մէջ պատուվ, որ ամէնքը իմանան նորա մեծութիւնը:

Գլուխ ոչ.

ՅՈՎՍԵՓԻ ԵՊԲԱՅՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳԱԼՈՒՍՑԸ

ԵԳԻԴՈՑՈՒՄ:

Պաղպերութեան ժամանակ, Յովսէփ շնեց Եղիպատուի մէջ ահազին մեծութեամբ շաեմարաններ, ու ժողովեց անչափ ցորէն: Վերջապէս եկան սովոր տարիները: Այն ժամանակ Յովսէփի բացեց շաեմարանները և բաժանեց ցորէն աղքատ Եղիպատացիներին: Օտար երկիրներից էլ գալս եին Յովսէփի մօտ ցորէն զնելու:

Քանանացւոց երկրում նմանապէս սով ընկաւ: Յակովը սասաց իր որդւոց. «Ես լսում եմ, որ Եղիպատում ծախտում են ցորէն, գնացէք և գնեցէք, ինչքան հարկաւոր է, որ սովոր չմեռնենք: Յովսէփի տան մեծ եղբայրները գնացին Եղիպատու. միայն թենիամինը մնաց հօր մօտ: Յակովը վախում էր, որ չլինի, թէ ճանապարհին պատահի նրան մի անրազդութիւն:

Յակովի որդեկ հասան Կղիպտոս: Այսուեղ առանց Յովսէփի գիտութեան ոչքը հրաման չունէր ցորէն ծախելու: այս պատճառով նոքա գնացին նորա մօտ: Նոքա ծանաչցին նրան և մինչև գետին երկրագութիւն տուին նրան յարդութեամբ: Յովսէփ խիջն ձանաչեց նրանց և միտք բերելով իր երեխայութեան տեսիլները, խորին երխագիտութեամբ սկսաւ մոտածել Աստուծոյ անհասանելի նախախնամութեան վերայ:

Բայց ինքը ցոյց տուեց, իրու թէ չէ ձանանչում իր եղայրներուն և չէ հասկանում նոցա լեզուն: Նա խրատութեամբ ասաց նրանց թարդմանի բերանով: «Դուք քատես էք և եկել էք իմանալ, ինչոր լինում է Եղիսաբետի երկրում: »Չէ, տէր, մենք Ճշմարիտ մարդիկ ենք, ասացին եղայրները. մենք երբեք լրտես չենք եղել և եկանք այս տեղ, որ գնենք ցորէն: Մեր հայրը կենում է Քանանացւոց երկրում և մենք ողջու տասմաներկու եղբայրներ էինք: Մեղանից մէկը կորաւ և փարու մնաց տանը մեր հօր մօտու:—«Չէ, դուք կասկածելի մարդիկ էք», ասաց Յովսէփ: «Ես կամենում եմ փորձել, արդեօք ուղիղ են ձեր խօսքերը և չեմ թողնիլ ձեզ Եղիսաբետ սից, մինչև ձեր եղայրը չդայ այս տեղ: Վրկեցէք ձեզ նից մէկին ձեր եղօր ետեկից, բայց միւսներդ մնացէք իմ մօտ գերի, մինչև ես իմանամ, որ դուք իսկ Ճշմարիտ էք ասում»: Նա հրամայեց նրանց բանար տանել:

Արէժինդրութիւնը բարեպաշտ հոգւոյ յատկութիւն չէ: Յովսէփ չէր ուղում իր եղայրներից վուժ հանել, այլ ուղղել նրանց: Երեք օրից նա հրամայեց բերել նրանց իր առջել և ասաց նրանց: «Ես երկիւղած

եմ Աստուծոյ և չեմ նեղացնում ոչքին: Եթէ դուք Ճշմարտիւ արդար մարդիկ էք, թուղ մէկը ձեզնից մնայ ոյս տեղ բանառում, իսկ միւսերը գնած ցորենով զնաշ ցէք տուն, ու յետ գարձէք էլի ձեր փոքր եղօր հիտ. այն ժամանակ ես կ'հաւատամ ձեր խօսքերին և դուք Կաղառիքիք ձեզ ապառնող մահից»:

Թշուառութիւնը եղաւ սկիզբն Յովսէփի եղայրների ողղվերուն. նոքա ասում էին մէկու. «Երեխ մէնք պատժիցանք մեր խառարատութեան համար, որ մէնք ցոյց տուինք մեր եղօր Յովսէփին: Մենք տեսանք նորա հոգւոյ արամութիւնը և արտասուրը և ականջ չզրինք նորա խնդրելուն:—«Ես չասացի՞ ձեզ», կրկնեց Ռուբէն, «որ դուք չմեղանչէք ձեր եղօր դէմ: Դուք ինձ չլսեցիք, այժմ նորա արիւնը մեզնից պահանջվում է:»

Արքա կարծում էին, թէ Յովսէփ չէ հասկանում իրենց խօսակցութիւնը, որովհեաւ նոքա խօսում էին նորա հետ թարդմանի բերանով: Յովսէփ, լսելով նրանց խօսակցութիւնը, խիստ սրտին կատաւ նոյս զզջումն, յետ գարձաւ և լսց եղաւ: Բայց Ճշմարտութեամբ նոցա զդացմունքը խմնալու համար, գարձաւ նրանց և հրամայեց ամէնին առջւ կապել Շմաւոնին: Այս կատարելից յետ Յովսէփի ծառաները լքցըն միւս եղայրների պարկերը ցորէնով և նոյս ցորէնի համար բերած փուղերը, նմանապէս Յովսէփի հրամանով, զրին պարկերի մէջ թաքուն, տուին նրանց նոյնովէս ձանապարհի պաշար էլ: Պարկերը բառնալով իշերի վերայ: Յովսէփի եղբայրները գնացին տուն, սաստիկ հրաման ստանալով, որ միւս անգամ առանց իրենց փոքր եղօր չերեն Յովսէփի աչքին:

Երբ դարձան հօր մօտ, նոքա տրտմութեամբ պատռմեցին ամէնը, ինչոք պատահեցաւ և խիստ զարմացան, երբ ցորենը թափելիս պարկերի մէջ գտան իրենց փողերը:

«Օերունի Յակովը ցաւում էր Շմաւոնի վերայ. բայց ամէնից աւելի վախենում էր բենիամինի համար. «Յովակին էլ չկայ,» ասում էր նա է, «Շմաւոն բանան է գցած, այժմ ուզում էք ինձնից լոել իմ բենիամինին էլ. ամէն թշուառութիւնները իմ գլխիս ընկան: Զեմ թողնիլ ես Բենիամինին Եղիպտոս, նրան մի թշուառութիւն կ'պատահի և դուք այն ժամանակ իմ ցաւուլ լիք ծերութիւնս գերեզման կ'իջուցանէք:»

ԳԼՈՒԽ ԻՔ.

ՅՈՎԱԿԻՓԻ ԵՂԻՊՏՈՒԹԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ  
ԵԳԻՊՏՈՍ:

Սովոր էլի շարունակվում էր քանանցուցոց երկրում: Եղիպտոսում գնած հացը կերան. Յակովը ասաց իր որդոյց: «Գնացէք էլի Եղիպտոս և եթէ կարելի է, զընեցէք ցորէն»: «Եղիպտոսի իշխանը». պատասխանեց Յուդան, ասաց մեզ, որ չերեխնք նորս աչքին, թէ շտանենք մեր հետ մեր փոքր եղորդ թող մեզ հետ երեխայն էլ, թէ չէ, չենք կարող ցորէն ստանալ և մենք ամէնքս, պէտք է, մեռնենք սոլից, դու էլ, մենք էլ, մեր որդիքն էլ: Բենիամինին ես իմ ձեռու եմ առնում, նրան դու ինձանից պահանջիր, եթէ ես նրան յետ չըրերեմ և քո առջեկ չկանգնեցնեմ, թող նորա յանցանքը իմ վերայ լինի բոլը իմ կեանքում: Նթէ մենք այսպէս չէնք ուշացել, մենք արգէն երկու անդամ Եղիպտոս գնացած և եկած կ'լինէնք»:

Աերջապէս Յակովը տխուր պրտով ասաց, «Եթէ այդ շատ կարեւոր է, աշա ինչ արէք. վեր առէք այս երկրի լու բերքերից և տարէք ընծայ Եղիպտոսի իշխանին՝ ուետին, մեզը, խունկ, ստաշին, բեեկին և ընկոյլ և պարկերում գտնաված փողերը յետ դարձրէք: Առէք ձեր հետ բենիամինին էլ: թող ամենազօր Աստուածը օգնական լինի ձեզ, որ Եղիպտոսի իշխանի ողորմութեան արժանաք. որ կարողանաք կրկնն հետերդ բերել ձեր այն տեղ իբրև զրաւ մնացած եղօր և բենիամինին: Բայց թէ ինձ Աստուածմէ նշանակած է անզաւակ լինիլ, թող լինի այնպէս»:

Յակովը որդիք կրկնն գնացին Եղիպտոս: Յովսէփ, երբ խմացաւ, որ բենիամինն եկել է իր եղբայրների հետ, հրամայեց իր տան Հազարապետին պատրաստել Հաւրուս սեղան և հրատիրել նոր եկածներուն: Երբ Հազարապետը մոոցրեց նրանց ներա Յովսէփի տուն, նոքա դողով սկսան պատմել նրան այն փողի վերայ, որ գտել էն իրենց պարկերում, կարծելով թէ իրենց ստրուկ կ'շնչն այն փողի համար: «Մի հոգաք դորա մասին». պատասխանեց Հազարապետը, «Աստուած ինքը յետ է դարձրել ձեզ այն փողերը, ես ամէնը ստացել եմ ինչպէս հարկն էր»: «Աս բերեց Շմաւոնին էլ և ամէնը միասին մնան Յովսէփի տուն: Հազարապետը յայտնեց նրանց, որ նոքա կ'մնան այն տեղ ճաշելու և որ նոյս էշերն էլ կ'ստանան կերակուր:

Յովսէփի գալուն սպասելով նոքա պատրաստեցին ընծաները: Երբ Յովսէփ ներա մտաւ, բոլը եղբայրները չոքեցին նորա առջեւ և ամէն մէկը բռնած ունէր ձեռին իր

լնծան։ Նա քաղցրութեամբ բարեւց նրանց և հաղցրեց։ «առնդջ է ձեր հայրը, կենաւանի՞ է երդեօք դեռ ծերունին»։ Առքա պատավաննեցին։ «Մեր ծերունի ծնողը, քո ծառայն, առողջ է»։ Երբ Բենիամինին տեսաւ Յովսէփ հաղցրեց։ «ամ է ձեր փոքր եղացըրը, որի վերայ դուք ինձ ասացիք։ Աստուած օրհնէ քեզ որդեակ», ասաց նա երեխային և շուտ հեռացաւ, որ թաղցնէ իր արտասուքը։ Նորա սիրաը վառվում էր իր փոքր եղբօր սիրով։ Արտասուքը աղբիւրի պէս վազում էին աչքերից, նա դնաց իր ներքին սենեակ և այն տեղ փակված լաց էր լինում։

Երեսը լուանալից յետ, Յովսէփ դարձաւ իր եղացըր ների մօա և աշխատերվ պահել իր արտասուքը, ասաց։ «Երերէք կերակուր»։ Եղացըներուն նատացրին սեղան աւագութեան կարգով։ աւագին ամէնից ցած։ Նոքա մէկ մէկու վրայ նայերով, զարմանում էին և չեն կարողանում հասկանալ, թէ որտեղից այդպէս լաւ յայտնի են նրանց իրենց տարիքը։ Իսկ ինքը Յովսէփ թէև միասին նոցա հետ էր ուտում միայն առանձին սեղանի վերայ։ Իր հաղաղատ եղօր Բենիամինի, իր մօր Հռաքէլի որոշուն նա աւելի պատիւ էր տալիս, ամէն խմէշքներից և կերակուրներից նրան հինգ անդամ աւելի էին տալիս քան թէ ուրիշներին։ Ամէնը կերան և խմէցին առատութեամ։

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՅՈՎԱԿ ՅԱՅՏՆՎՈՒՄ է ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ։

Յովսէփ էլ մի անդամ կամենում էր փորձել իր եղացըրներուն։ Նա հրամայեց իր հաղարապեամին, որ լքցնէ

նոցա պարկերը ցորէնով, ու դնէ նոցա մէջ ցորենի համար բերած փողերն էլ։ Իսկ Բենիամինի պարկի մէջ հրամայեց դնել իր արծաթմի սկիցն էլ։ Հաղարապետը կատարեց Յովսէփի հրամանը և միւս օրը Յակովը որդիկը ճանապարհ ընկան գէսվի հայրենիք։

Հապեւ կարողացան նոքա քաղաքից դուրս դնալ, Յովսէփի կամչեց հաղարապետին և ասաց։ «շատպիք, համիր այն օտարականներին և ասա նրանց, «դուք չարութիւն էք հատուցանում բարութեան փոխանակ, դուք դողացել էք այն սկիցը, որից միշտ իմ տէրս խմում է»։

Հաղարապետը ամէն բան այնպէս կատարեց, ինչպէս իրեն հրամայած էր։ «Այս ի՞նչ է նշանակում», ասացին Յովսէփի եղացըրները, ինչպէս կարելի է մոռածել։ որ մենք այդպիսի չար գործքի լնուունակ լինինք. քո միտող է, որ մենք վանանացւոց երկրից յետ բերինք պարկերում դոնված փողերը, մի՛թէ մենք կ'զողանայինք քո տիրոջդ անից արծաթմի սկից։ ում մօտ կ'գտնիվ, թող նա սպանվի, իսկ ողջ մնացածներս լինինք քո տիրոջդ սորուիները։ Նոքա իշերի բեռները վեր բերին, առան պարկերը և բաց արին։ Հաղարապետ ինքը նայում էր պարկերը, ամէնից մեծից սկսերվ և երբ կարգը հասաւ փոքրին, սկիցը գտնվեցաւ Բենիամինի պարկում։ Անպատմելի տրտմութիւնից Յովսէփի եղացըրները պատառեցին իրենց շրերը։ Պարկերը կրկին իշերի վերայ բարձած, նոքա էլի յետ դարձան քաղաք։ Ամէնքը գնացին Յովսէփի մօա։ Իսկ Յուղան նորա ոտերը լնիներով սկսաւ խիստ լաց լինիլ։ «Այս ի՞նչ արիք», ասաց Յովսէփ, մի՛թէ կարծում էլք, որ ինձ կ'խարէք։ «ո՞չ հ, աղալակից Յուղան, ի՞նչ ասէնք

մեղ արդարացնելու համար, Աստուած պատժում է մեղ մեր վարուց արած չարութեան համար, աշա՞ նա, ում մօտ որ գտնվեցաւ սկիհը, մենք ամէնքս մնում ենք քեզ ծառայու:—«Չե», պատասխանեց Յովսէփի, այդ անհօրէնութիւնն կլինէր, ես չեմ ուզում, որ անմեղները նեղութիւն քաշն յանցաւորի համար Ռւմ մօտ որ գտնվեցաւ իմ սկիհս, նա միայն կլինի իմ ծառայա, խկ դուք յետ դարձէք խաղաղութեամբ ձեր հօր մօտ:

Յուդան մօտեցաւ Յովսէփին և ասաց. Տէր իմ, տուր ինձ հրաման քեզ մի քանի խօսք ասելու, մի' բարկառ համարձակութեանս վերայ, որով ես համարձակում եմ խօսել քեզ հետ. որ առաջն մարդն ես թագաւորից յետց: Դու միանգամ հարցրիր մեղ, կինդանի՞է արդեօք, մեր ծնողը և ունենք ուրիշ եղայր էլ: Այն ժամանակ մենք պատասխանեցինք, որ մեր հայրը կենդանի է և թէ մենք ունենք էլ մի փոքր եղայր, որ մեր հօր համար աշխարհիս վերաց ամէն բանից առաւել թանգարին է: Դու հրամայեցիր մեղ, որ բերենք նրան, բայց մենք պատասխանեցինք, թէ մեր հայրը կը մեռնի, եթէ բաժանվի իր սիրելի որդիից: «Եթէ դուք չեք բերել ձեր փոքր եղօր, դուք էլ իմ երես, չպէտք է, տեսնէք», ասացիր դու: Մենք այս ամէնը յայտնեցինք մեր ծնողին և երբ նա երկրորդ անգամ կամենում էր զրկել մեղ Ադիստոս, մենք ասացինք նրան, որ մենք չենք համարձակիլ դաշտ այս տեղ առանց մեր փոքր եղօր: Այն ժամանակ մեր հայրը ասաց մեղ. «Դուք զիտեք, որ ես իմ սլքելի կոտջեց՝ Հռաքէլից միայն երկու որդի ունեցայ, մինք անից դուքս եկաւ և դուք ինձ

ասայիք, որ վայրենի զազանները պտտառեցին նրան և եռ այն ժամանակից ՚ի վեր նրան չեմ տեսած: Եթէ դուք կտանեք Հռաքէլի միւս որդուն էլ և նորա հետ էլ կպատահի մի անբազգութիւն, ես կմեռնեմ արտամութիւնից»: Եւ բեմն եթէ մենք դառնանք տուն առանց երախային, մեր հայրը, որ իր կեանքից աւելի սիրում է նրան, կմեռնի ցաւից: Կս նրան իմ ձեռս եմ առել, ես յանձնառու եղայ, որ կպահպանեմ նրան, ես ասացի ծնողիս, որ ես իմ կեանքս կտամ երեխայի համար. ուրեմն թող ես մնամ քեզ ծառայ. բայց նրան բաց թող գնալ տուն եղայրներիս հետ: Վ՞նչպէս ես պէտք է երեխիմ ծնողիս աչքին, եթէ երեխան հետա չլինի. ես չեմ կարող տեսնել նորա արտառութիւնը»:

Եյժմ տեսաւ Յովսէփ, որ իր եղայրները ուղղվել են. էլ չփառղանալով տեկի անցայտ մնալ, հրամայեց ամէն իրեն պատող Նդիստացիներին գուրս գնալ և երբ ինքը մենակ մնաց եղայրներին հետ բարձր ձայնով սկսաւ լալ և ասաց. «Ես Յովսէփն եմ. կենդանի՞է արդեօք զեռ մեր հայրը»: Եղայրները վախից մնացին անշարժ և չեմն կարողանում մի խօսք էլ ասել:

Յովսէփը կամենալով քաջալիրել իր եղայրներուն ասաց. «Ամաեցէք ինձ, ես ձեր եղայր Յովսէփն եմ, նա, որին դուք ծախսեցիք: Աստուած բերաւ ինձ այս աեղ էլի ձեր լսութեան համար: Անցան սովի երկու տարիները և անպատճութիւնը դեռ կշարունակի էլի հինգ տարի: Բոլոր այս ժամանակը ոչ կցանեն և ոչ կհնձնն. ուրեմն Աստուած զրկեց ինձ այսակեղ նորա համար, որ դուք միջոց ունենանք կերակրիլու, որ դուք ինձմով պատավիք սովի մահից: Ես ոչ թէ ձեր կամքով, այլ

Աստուծոյ զօրութեամբ եմ ևս պյառել։ Աստուծոյ շենց ինձ երկրորդ մարդ Փարաւոնից յետ, հաղարապետ նորա տան և իշխան բոլոր Եղիպատոսի վերայ։ Շտապով յետ դարձէք մեր հօր մօտ և յայտնեցէք նրան, որ Յովսէփը, նորա որդին, հրամայեց նրան ասել։ «Թէ Աստուծուած իրեն զրաւ իշխան բոլոր Եղիպատոսի երկրի վերայ, առանց ուշանալու թող գայ ինձ մօտ, նա կընսակի Եղիպատոսի ամէնից լաւ տեղում։ կ'լինի ինձ մօտիկ իր որդիներով, թոռներով և բոլոր իր ստացուածներով։» Կա կ'չոգամ նորա վերայ և ինչ որ նրան պատկանում է, կ'կերասկրեմ ձեզ ամենքիդ, որովհետեւ սովոր էլ հինգ տարի կ'առեւ երկրիս երեսին։—Այժմ զորք առեմում էք, որ ես խօսում եմ ձեզ հետ ձեր լիզուով առանց թարգմանի։ Վնացէք յայտնեցէք իմ հօրա իմ փառքս և պատիւս Եղիպատոսի մէջ, պատուցէք նրան ամէն ըան, ինչոր տեսաք, շատպեցէք յետ դարձէք ինձ մօտ շուտով և բերէք հետերդ իմ հօրս։

«Սա զրկեց իր եղբօր Բենիսամինին, համբուրեց և լաց եղաւ նորա վերայ, նմանապէս էլ Բենիսամինը լալիս էր նորա զրկում։ Յետոյ կարգով զրկեց միւս եղբայրներուն էլ և թափում էր արտասուք։»

ԳԼ. ՈՒԽ 1.

### ՅԱԿՈՎԲԻ ԵԳԻՊՏՈՍ ՏԵՂԱՓՈԽՎԻԼԻ.

Փարաւոնը խիստ ուրախացաւ, երբ լսեց, որ Յովսէփի Եղբայրները եկել են։ Նա տուեց իր կառքերից մի քառնիքը, որ բերեն Յովսէփի հօր, Եղբայրներուն, նոցա կանաց և որդւոց; Յովսէփը ամէն Եղբայրներին ընծայեց մի

ձեռք շոր, իսկ Բենիսամինին տուեց հինգ ձեռք շոր և երեք հարիւր արծաթի դաշեկան։ Կր հօրն էլ զրկեց տար էշ բարձած Եղիպատոսի լաւ բերքերով և տան էլ մատակ էշեր բարձած ցորէնով և ճանապարհի գառնագան պաշարներով։ Կր Եղբայրներուն Ճանապարհի գրցերիս ասաց. «Ճանապարհին չփիճէք մէկ մէկու հետ»։

Պայց ծերունի հայրը էս միջոցին արտանոթեամբ և անհանդասութեամբ սպասում էր իր որդւոց դառնալուն։ Յակարծ յայտնիցան նորա առաջ բոլոր որդիերը, Բենիսամինն էլ նոցա հետ և ասացին. «Քո որդիդ Յովսէփի կենցանի է. Նա է այն հզօր իշխանը Եղիպատոսի, որի վերայ մէնք քեզ պատմեցինք»։ Ներունին չէր կամենում նրանց հաւատալ։ Այն ժամանակ նոքա պատմեցին Յովսէփի բոլոր պատմութիւնը և կրիսնիցին ամէն նորա խօսքերը։ Յակովը, եղբ տեսաւ Փարաւոնին զրկած կառքերը և հարուստ ընծաները, հաւատաց ու կարծես թէ քնից զարթերով աղաղակեց. «Իմ որդիս Յովսէփը կենդանի՞ է, կ'երթամ, կ'առեմնեմ նրան մեռնելցու առաջ»։

Յակովը առանց ուշանալու պատրաստվեցաւ Ճանապարհ ընկնելու։ Նորա որդիերը նատեցրին իրենց որդոց և կանանց Փարաւոնի կառքերի վերայ, առան հետերը բոլոր իրենց խաչները և ստացուածները և գնացին Եղիպատոս։ Ողջը միամին էին եօթանասուն հինգ հոգի։ Քանանացւոց երկրի սահմանին վերայ Յակովը Աստուծոյ մատաղ բերաւ։ Նա էր վճռում թողնել Երկիրը, որ խոստացած էր իրեն և իր զաւակներին Աստուծում։ Աստուծոյ ասաց նրան գիշերվան տեսիլքում. «Ես եմ քո հօրդ Աստուծը, գնա աներկիւդ Եղիպատոսոց Երկիր, ևս քեզ հետ

կլինիմ: Այն տեղ քո ցեղդ կ'գառնայ մեծ ազդ և ես կ'գարձնեմ նրան քեզ և քո նախնիքներիդ խոսացած երկիրը: Յովսէփի կ'ծածկէ քո աչքերդ: Այս տեսիլը հանգստացրեց բարեպաշտ ծերունիին, որ աներկեզ շարունակեց իր ճանապարհորդութիւնը դէպի Եղիպտոս: Յուղան առաջ գնաց, որ իմաց տայ Յակովի գալուարը: Յովսէփի նստաւ իր կառքը և շասավեց առաջ դուրս գալու իր հօրը: Երբ նրան տեսաւ, կառքից իջաւ, ընկաւ նորա գիրկը և լաց էր լինում երկար ժամանակ: Ծերունին ասաց, «այժմ ես հանգիստ կ'մեռնիմ. ես տեսաց քո երեալ, դու դեռ կենդանի ես»:

Յովսէփի խնաց արաւ ֆարաւնին իր հօր գալու առ և թագաւորը ասաց, «բոլոր Եղիպտոսի երկիրը բաց է քո հօրդ, եղբայրներիդ համար, ընտրիր նոյց բնակութեան համար իմ թագաւորութեանս ամենից լաւ տեղը»: Յովսէփի ինքը տարաւ իր հօր ֆարաւնին մօտ: Բարեպաշտ ծերունին օրհնեց ֆարաւնին, որ հարցրեց նրան, «թէ քանի՞ տարեկան է: Յակովը պատասխանեց, «Հարիւր երեսուն տարեկան եմ»: Սակաւ եղան և ախուր իմ օրերըս, նոքա ամենելին չեն հաւասարվում իմ նախնիներիս պանդիստութեան օրերին»: Նա միւսանդամ օրհնեց ֆարաւնին և շարժած սրատվ դուրս եկաւ: Յովսէփի իր ընտանիքի ընակութեան համար, ֆարաւնի հրամանքով, ընտրեց Եղիպտոսի ամենից լաւ երկիրը, այն է գեսէմ: Նա հոգս էր քաշում իր ազգականներին վերայ և ամէն նոյց հարկաւորութիւնները լքցնում էր:

ԳՏ. Ա. Խ. 1. Ա. Յ. ՅԱԿՈՎԸԲԻ ԵՒ ՅՈՎՍԷՓԻ ՄԱՀԸ:

Յակովը հասաւ խորին ծերութեան: Նա հարիւր քառասուն եօթը տարեկան էր, ելք զգաց իր մահուան մօտենալը և զրկեց Յովսէփի ետեխց, որ եկաւ նորա մօտ շուտով և բերաւ հեար իր երկու որդոյ՝ Մանասէնին և Ելիլէմին, որոնք ճնան նորա Ասանէթ կնոջնցը, որ Արէգ քաղաքի քրմապետի աղջիկն էր: Յակովը իր զօրութիւնը հաւաքերով նստաւ մահճի վերան և ասաց, «ով են աղքա, «երեխայք, որով Աստուած օրհնեց ինձ». պատասխանեց Յովսէփի. «Մատեցնուր զրանց ինձ», ասաց Յակովը. «Ես կամենում եմ զրանց օրհնել»: Յովսէփը մօտեցնց նրանցը մեռնող ծերունիի մօտ, որ որդեզեց նրանց, զրկեց, համբուրեց և յետոյ ասաց Յովսէփին. «Ես կարծում էի, թէ քեզ ել չեմ տեսնիլ երբէք, բայց Աստուած բերաւ ինձ, որ ես տեսնէի քեզ և քո որդոցը»: Վերջապէս օրհնելով Յովսէփի, որդոց իր ձեռքերը խաչի պէս նոցա գլխին զրած, ասաց բարեպաշտ ծերունին. «Աստուածը, որին հեծելի էին իմ հայրերս Արքահամ և Խաչակ, և որ կերակրեց ինձ երեխայութիւնից մինչեւ այժմ. Հրեշտակը, որ ազատեց ինձ չարից, թող օրհնեն այս երեխաներուն»: Յետոյ, գառնալով դէպի Յովսէփի, շարունակեց. «Ես մեռնում եմ. բայց Աստուած միշտ կ'լինի ձեզ հետ, նա կ'գարձնէ, ձեզ ձեր հայրերի երկիրը: Քեզ առանձնապէս, բայց միւս ժառանգութիւնից, տալիս եմ ես Սիկիմն էլ»:

Յակովը հրամայեց բոլոր որդոցը, որ հաւաքվեն իր մահճի ըրս կողմում. օրհնեց նրանց ամէնուն. խի Յու-

գային ասաց յետագոյ մարդարէականն խօռքերը՝ ուղղ Յուղա՛, քեզ թողի օրհնեն եղայլներդ, քեզ երկարագութիւն տան քո հօրու որդիքը, թագաւորները և զօրավարները կլինեն քո յետագաներդ, մինչեւ կոյ խաղաղաբարը՝ ամէն ազգերի Յոյսը»:

Յետաց ասաց նա ամէն որդոյ, «թաղեցէք ինձ քանա՞նցւոյ երկրում այրումը, ուր թաղած են Արքահամ։ Սառան, Խասհակ և Ռեքեկան, այնտեղ ուր զրի ես Հիսու մարմինը»։ Այս ասաց, պարկեցաւ իր մահճին վերայ և վախճանեցաւ։ Այսպէս խաղաղ և հանդիստ մեռնում է նա, ով վարում է բարեպաշտ կեանք։

Յովսէփը Փարաւոնի հրամանով, բոլոր եղայլներով, Նդիսէպաշի մեծամեծներով և բոլոր իր ընտանիքով տարաւ Յակովի մարմինը Քանանայւոյ երկիր և թաղեց այրում, որ Արքահամ զնեց Սատային թաղերու համար; Բայց երբ Եղիսաբոս դարձան, եղայլները նորա վախճանալով, որ նա գուցէ վրէժը հանել ուղենայ իրանցից, ասացին նրան, ամէնք շատ յանոյաւոր ենք քո առաջիւ. բայց մեր հայրը մեռնելիս պատուիրեց, որ դու մեզ ներես, վրէժ մի՛ հանիր մեղնից. մենք քո ծառաներդ ենք»։ — «Եւ ես Աստուծոյ ծառան եմ. պատասխանեց Յովսէփի։ Ուստուած բարի արաւ, թէ ինձ համար և թէ ձեզ համար այն չարութիւնը. որ դուք ինձ կամենում էիք անել։ Հանդիստ եղէք. ես միշտ կլինեմ ձեր պաշտպանը»։

Յովսէփ հարիւր տասն տարի ապրեցաւ. նա տեսաւ իր որդոց, թռուներուն և թռուների որդոցը։ Իր մեռնելց առաջ ասաց նա իր եղայլներին, «այժմ ես մեռնում եմ.

բայց Աստուած կ' գարձնէ ձեզ մեր հայրերին՝ Արքահամին, Խասհակին և Յակովին խոտացած երկիրը. երդումն տուէք ինձ, որ երբ կ' պատահի այս տեղափոխութիւնը, դուք կ' պատուիրէք ձեր որդւոյ և նոյս յետագաներին, որ տանին իմ մարմինս էլ իրանց հետ։ Նորա երդումն տուին և նա մեռաւ կատարեալ հաւատով և յուսով։ Նորա բարեպաշտ կեանքը ոչ մի անօրէնութեան բիծ չունեցաւ։ Նորա մահը հանդիստ էր շատ։ Ամէնը նորա վերայ լոյց եղան սրտանց։ Նորա մարմինը զրին դադաղի մէջ և թռողեցին Նդիսէպատում։

Գ. Պ. Դ. 1. Բ.

ԱՐԴԱՐ ՅՈՒՎ. Բ. Բ.

Աստուածանչի մէջ նկարագրած է մի բարեպաշտ մարդու. կեանք, որ բնակում էր Արարիսի մէջ Աւագդ (Աւատեր) աշխարհումը, գեռ Մովսէսից առաջ։ Նորա մեռնն էր Յովը. աս էր անարատ, արդար, բարեպաշտ և ամէն անօրէնութիւններից հեռացած մարդ։ Երկիրը, ուր նա բնակում էր, գեղեցիկ էր և պաղաբեր. նա տէր էր բազմաթիւ խանների, ունէր արծաթ ու ոսկի շատ, ամէնը պատփում էին նրան և նորա բազզը կատարեալ էր մանաւանդ նորա համար, որ այս ամէն բանի հետ միահին ունէր գեղեցիկ և բազմաթիւ ընտանիք էլ։ Նա ունէր եօթն որդիք, երեք աղջիկներ, որոնք էին նորա ուրախութիւնը։ Ամէն բան միացել էր, որ Յովին բազզաւ որսացնէ։ Այս օրինակով Աստուած կամեցաւ ցոյց տալ, որ Ճշմարիտ բարեպաշտ մարդը չի փոխիլ թէ բազզաւրութեան և թէ անբարդութեան մէջ։ Սատանան բայ-

բասեց Յովեին Աստուծոյ առաջ ասելով թէ այս բարեպաշտը միայն այն պատճառով այնպէս հաւասարիմ ծառայում է Նրան, որ Նա առատաձեռն տուել է Յովեին ամէն երկաւոր բարիքները: Աստուած Յովեի ստայուածների իշխանութիւնը տուեց ստանային:

Եսրա որդիքը, որոնք շատ սիրով կենում էին միմիանց հետ, շուտ շուտ ինձնքներ էին պատրաստում մէկ մէկու համար, միայն Յովեր ինքը իսկի մասնակից չէր լինում այս ուրախութիւններին, այլ հեռանալով նրանցից աղօթք էր անում Աստծու իր որդոց համար: Մի անգամ երբ երիտասարդները ինձնք պատրաստել էին, ուրախանում էին և Յովեր աղօթք էր անում, ծառաներից մէկը վազելով եկաւ ասելու, որ Արարացի աւազակները փախցրին բոլոր նորա եղներուն և իշերուն: Նրանից յետ եկաւ երկրորդ ծառան և համբաւ բերեց, թէ երկնքից կրակ ընկաւ և այրեց բոլը ոչխարներուն և հովիւներուն: յետոյ երրորդը եկաւ ու համբաւ բերեց, թէ ասպատակաւորներ եկան, յափշտակեցին բոլոր ուղտերուն և Հովիւներուն ապանեցին: Վերջապէս չորրորդը եկաւ և ասաց, որ անապատից մեծ հողմ փշեց և քանդեց տունը, ուր նորա որդիքը և աղջեկները ուրախանում էին և մեռան ամէնքը: Յովե շատ արտմեցաւ, մանաւամնդ այս վերջին համբաւովը: Նա ափսութիւնից պատառեց իր շրմերը, բայց մոտածելով, որ այս ամէն անբաղդութիւնները Աստուծոյ զրկած են, ասաց նա: Աստուած տուեց ինձ ամէնը. Աստուած էլ առաւ, որ հնեալ լինի նորա անունը:

Յովե աղքատացաւ: Նա տիրում էր որդոց կորսոի

վերայ բայց երբէք չէր տրտնջում Աստուծոյ վերայ և մնաց հաստատ իր բարեպաշտութեան մէջ: Այս անը բաղդութիւններից յետ, Աստուած թողեց ստանային, որ նորից էլի փորձէ Յովեի համբերութիւնը: Նորա բոլը մարմինը ծածվեցաւ սասափիկ խոյելով, բայց նա համբերութեամբ տանում էր իր ցաւին և օրհնում էր Աստծուն: Յովեի կոոջը անստանելի էին թիւմ՝ նորա չարչարանքները, նա խորհուրդ էր տալի, որ լաւ է մեռնի, քան թէ համբերէ այդպիսի տանջանքների: «Մի խոպանակ Աստուծոյ դէմ: ասաց նա և մեռիր»: «Դու խօսում ես ինչպէս անմիտ կին», պատասխանեց Յովե: «Եթէ մենք ընդունեցինք Աստուծոյ ձեռքից բարութիւնները, միթէ չպէտք է համբերներ այն չարչարանքներին էլ, որոնք նա զրկում է մերը»:

Յովեի բարեկամները, և ծանօթները, տեսնելով նըրան այս զրութեան մէջ, կարծում էին, յայտնի բան է, թէ Աստուած պատժում է նրան, երեխ, թաքուն յանցաքների համար: Անկարելի է, կարծում էին նոքա, որ Աստուած, այնքան բարի և արգարադաս զորպ, այդպէս խիստ պատժէ անմեղ մարդուն: Նոքա չէին մատծում, որ Աստուած շատ անգամ փորձում է արգարներուն էլ թշուառութիւններով, որ նոցա առաքինութիւնը առաւել կփայլի թշուառութիւնների մէջ և վերջապէս կայ ուրիշ աւելի լաւ կեանք, ուր արգարը ստանում է վարձ իր քաշած նեղութիւնների, իր հաստատութեան, որով համբերեց նրանց, և իր առաքինութիւնները կատարելագործելուն համար: Խիստ բարեկամները յայտնեցին թշուառ Յովեին իրանց անարդար կակածները նո-

բա վերայ: Յովլը, զուրկ մնացած որդիներից, ստացուածքից, առողջութիւնից, տեսաւ, որ կամենում են իրանից խել մինչև անգամ իր բարի անունն էլ. բայց նորա խղճմանկը յատակ էր և յցալ Աստուծոյ վերայ հաստատ: Կա ասում էր. «կորչողներուն աղասում էի, ախուր որբերուն միսիթարում էի, կոյրի համար աչք էի ես, անոտ մարդուն ցուպ, խղճերին հայրը: Մի և նոյն ժամանակ խարազան էի աւագակների և յափշտակողների համար, իզում էի նրանցից ապօրէն աւարը, ջարդում էի մեղաւորների ատամները: Եթէ ես զնացել եմ մեղքի ճանապարհով, եթէ ես խարել եմ մէկն, թող զրիէ Աստուծ իմ վերայ ինձ արժանի պատիժա, բայց իմ խղճմանկը հանգիստ է: Հարցը էր իմ ծառաներուս, արդեօք բարի տէր չէ՞ նոցա համար, բաց չէր արդեօք իմ գուռս ճանապարհորդի համար, արդեօք պատրաստ չէ՞ աղքատին օգնելու: Չէ, իմ յոյս ես արծաթի և ուկու վերայ չէ դրած. չէ: Կա վախենում էի Աստուծմէ, իմ յոյս Նորա վերայ էր:

Ին ժամանակ անսիրտ բարեկամները, իրենց զատողութիւններով աշխատում էին խել Յովլից նորա միակ մնացած միսիթարութիւնը: Նորա աշխատում էին նրան այն տեղը հասցնել, որ նա իրեն մեղաւոր կարծէ և այսպէս շատ նեղացնում էին արդար մարդուն: Զարչարմած ցաւով և իր խիստ բարեկամների դատողութիւններով, Յովլը երբեմն երեկոնց ցոյց էր տալիս անհամբերութիւն, գանդատում էր Աստուծ իր վիճակի վերայ և մինչև անգամ անիծեց իր ծննդեան օրն էլ: Աստուծ ինքը եղաւ միջնորդ Յովլի ու նրան չարչա-

րող բարեկամների մէջ: Աստուծ յայտնիցաւ նրանց միրկում և ամպերում և ասաց, որ Աստուծոյ Ճանապարհները անհասանելի են մարդկային մոքին և թէ մարդուս պարտաւորութիւնն է անպայման հպատակել Աստուծոյ կամքին և զդատել Կախախմանամութեան Ճանապարհների վերայ:

Աստուծ վարձատրեց Յովլին կրինապատիկ ամէն քաշածներին համար: Յետ դարձեց նրան իր հարատութիւնը և առողջութիւնը: Նրան ծնան էլի եօմն որդիւներ և երեք աղջիկներ: Յովլը ապրեցաւ սրանից յետոյ էլի հարիւր եօմանասուն տարի և տեսաւ որդոցը և թոռներուն, մինչև չորրորդ ազգը:

Գ.Ա.Պ. 1.Դ.

ՄՈՎԱԽԵՍԻ ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ.

Քանոնացւոց երկում Սբրահամի ցեղից ոչոք չկար այն տեղ հանգստանում էին միայն նորա ընտանիքի ուկիները. իսկ Նղիպտոսում Սբրահամի ցեղը ժամանակով բազմացաւ շատ և հզօր ազդ դարձաւ: Յակովլը լոչվեցաւ Խորայէլ, ուստի և այն սղզն էլ ստացաւ նորա Խորայէլ կամ Խորայէլացիք անունը: Յակովլը տասներկու որդի ունէր և Խորայէլացւոց ազգն էլ տասներկու տոհմէր բաժանվեցաւ, որոնց ամէն մէկը իր ցեղապետի անունովն էր անուանվում:

Յովլէիի ժամանակվան Փարաւոնը վաղուց մեռած էր, թագաւորեց ուրիշ Փարաւոն, որ չէր իմանում Յովլէիի գործքերը: Օտար ազգը, որ բնակում էր նորա աելութեան մէջ, երկիւղալի թուեցաւ նրան, նա վա-

իննում էր, որ Խրայէլացիք գուցէ միանդամ միանան իր թշնամիների հետ և այս պատճառով, կամնալով նրանց ջնջել կամ թուլացնել, հրամացեց ամէն կերպով նեղել նրանց: Նրանց ամէն ծանր աշխատանքի համար գործածում էին, կերպակում էին վատ, վարփում էին հետերը տմարդաբար. բայց չնայելով այս բանին ուրախութեամբ Խրայէլացոց ազգը շարունակ էլի բազմանում էր: Վերջապէս Փարաւոնը հանեց տմարդի հրաման, որ ամէն Երրայէցի նորաձին արու երեխաներուն սպանեն և դեալ պցէն:

Այս ժամանակիներում կենում էր մի բարեպաշտ և Աստուածասէր Խրայէլացի կնիկ, որի մարդը նմանապէս բարեպաշտ էր և զեկի ցեղեցն էր ինքը. այս կինը ծընաւ մէկ գեղեցիկ որդի: Նա ինչպէս որդեսէր մայր շատ ս իրում էր նրան և պահում էր մօռը թագուն մինչեւ երեք ամիս: Ել չկարողանալով երկար թաքցնել երեխային, նա հիւսեց մի կողով պատուից, ծեփեց նըրան կարով, որ ջուրը ներա չմննէ, դրաւ նորա մէջ իր փոքրիկ որդուն և բաց թողեց կողովով ջրի մէջ: Կարելի է, մոտածում էր նա, Աստուած զրկէ մէկին, որ մէղքանայ իր գեղեցիկ երեխային: Իսկ երեխայի քոյրը, փոքր ինչ հեռու կանդնած, նայում էր, թէ ի՞նչ կը լինի իր եղբօր հետ:

Թագաւորի աղջիկը իր աղախինների հետ միասին զնաց ջրի ափը լուացվելու: Նա տեսաւ թփի մէջ ծեփած կողովս, հրամացեց իր աղախիններին, որ առնեն այն և բաց անելով աեսաւ նորա մէջ երեխային, որ լաց էր լինում: Շատ մէղքացու երեխային. «յայտնի է» ասաց

նա, «որ այս Խրայէլացի մանուկ է»: Արեխայի քոյրը տեսնելով, որ թագաւորի աղջիկը ոլորմած է շատ, համարձակեցաւ, մօտեցաւ. նրան և ասաց. «իշխանուհի. թէ կ'հրամացես, ես կ'բերեմ մի Խրայէլացի կին, որ կ'մնուցանէ երեխային»: «Բարի է, ասաց թագաւորի աղջիկը. «ես քեզ գորա համար կ'վարձաբեմ»:

Ի՞նչպիսի ուրախութեամբ, ինչպիսի սրանց շնորհակալութեամբ բարձրացրեց խեղջ մայրը իր աչքերը դէպ երկինք երբ կրկն տեսաւ. իր փոքրիկ երեխային իր զըրկումը: Նա կերակրեց նրան և երբ փոքր ինչ մեծացաւ, տալաւ Փարաւոնի աղջկան մօտ, որ կրթեց նրան իր որդուն պէս և անուանեց Առաքէս, որ նշանակում է Ջրից հանած.

ԳՅՈՒԽ Է.Գ.

### ՄԱՎԱՐԱՐ ՅՈԹՈՐԻ ՄՕՏ

Ովկակը, երբ մեծացաւ, էր հզօր մարմուկ և հողով և սպած էր բոլոր իմաստութիւնը Ապիպուացւոց Բայց չնայելով առատութեան և բաղդասորութեան, որով նա պատաժ էր, նա չէր մնուանում իր նեղացած եղացրներուն՝ Խրայէլացիներուն: Նա չէր կամնում թագաւորի որդի անուանվել. նա աւելի լաւ էր համարում Աստուծոց ժողովրդի աղքատութեանը մասնակից լինել, քան թէ վայել մեղալց քաղցրութիւնները Փարաւոնի տան մէջ: Նա կրապաշների մէջ ըլումուացաւ Ճշմարիտ Աստծուն և բոլորովին կարեկից էր նեղացած Խրայէլացիների խեղջ միջնակին:

Մի անդամ, երբ այցելութիւն արաւ իր եղայնե-

բին, տեսաւ, որ մի Եղիպատացի անողորմարար ծեծում՝  
Եր Խորսյէլացիին Սովուէս ամէն կողմը նայեցաւ, տե-  
սաւ, որ ոչ ոք չկայ: Իսկոյն իր ազգակցին պաշտպան  
կեցաւ և սպանեց Եղիպատացիին ու ծածկեց նորա մար-  
մինը աւագի տակ, կարծելով, թէ ոչ ոք չի խմանալ  
նորա այս մարդասպանութիւնը. բայց Փարաւոնը խմա-  
ցաւ և Սովուէսը դուցէ իր սիրոյն համար իր կեանքը  
կարցնէր, եթէ Եղիպատացի չփախչէր:

Եղիսպատից փախչելով դնաց Մաղիամու երկիրը և  
ձևնապարհից գաղբած լինելով, նստաւ մի ջրհորի մօտ  
Այս աեղի մօտ բնակում էր մի բարեպաշտ քահանայ,  
որ եօթն աղջիկ ուներ, նոքա արածում էին իրենց հօր  
խաշները: Երբ այս աղջիկները ջուր էին հանում, որ  
ջրեն իրենց ոչխարներուն, եկան ջրհորի մօտ կոպիտ հո-  
վիւներ, որոնք ուզում էին աղջիկներուն դուրս անել,  
որ առաջ իրենց ոչխարներուն խմաննեն: Մովսէս, որ  
միշտ թոյլերին և նեղացածներին պաշտպանում էր,  
հովիւներուն չժողեց խստութիւն անել և օգնեց աղ-  
ջիկներին իրենց խաշները ջռելու:

Այս ժամանակ Յոթորի աղջիկները ոչխարներուն տուն  
քշեցին: Նրբ հայրը նրանց տեսաւ, հարցրեց: «Ինչո՞ւ  
համար այսօր այսպէս շուտ յետ դարձաք»: Մի Եղիսկ-  
տոսից եկած անծանօթ մարդ օդնեց մեղ ջռւր հանե-  
լու ու ոչխարներուս ջրելու»: Ապատասխանեցին աղջիկ-  
ները: Հայրը, շատ բաւական մնաց օտարականի այսպիսի  
գործքով և հարցրեց աղջիկներուն: «Ո՞ւր է այն օտա-  
րականը, ինչո՞ւ չկամչեցիք նրան մեր տուն: զնացէք շու-  
առվ և հրաւիրեցէք նրան մեղ մօտ ընթրիքի»: Մոլ-

սէս դնաց Յոթորի մօտ և որովհետեւ լսու մարդիկը շուտ  
տովվ բարեկամանում են մէկ մէկու հետ, Մովսէս շուտ  
բարեկամացաւ Յոթորի հետ, որ նրան կին առաջ իր  
աղջկանը Սէպիովային:

Գլուխ Եղիշե

ԱՆԿԵՐ ՄՈՐԵՆԻՆ

Սովորէս արածում էր իր անելոց Յոթորի խաշները:  
Սովորէս յաճախ մտածում էր իր եղբայրների՝ Խայր-  
Ելայինների վերաց և ազօթք էր անում Աստծու, որ  
ապատէ նրանց Եղիսաբետոց ծառայութիւնից:

Սի անգամ՝ Քորէք լեռան տակ ոչխաղները արածեւ  
լիս աեւառ Մովսէս մի մզրենի, որ այս տեղերում դուքս  
է գալիս, պատաժ կրակով։ Կրակը վառ փուլ էր, բայց  
թուփը անվնաս էր։ Մովսէս մօտացաւ տառել, որ լաւ  
տեսնէ այս հրաշալի երեսոյթը։ Յանկարծ թփի մէջնց  
նա լսեց ձայն, որ կամնչում էր. «Մովսէս, Մովսէս», — «Ես  
եմ, Տէր. Ի՞նչ է»։ պատախաննեց Մովսէսը: «Ես եմ քո  
հայրերի Աստուածը, Արքահամի Աստուածը, Խահամի  
և Յակովը Աստուածը», ասաց ձայնու:

Պովածս, լի երախտաղիառութեամբ և յարգութեամբ  
ծածկեց իր երեսը Աստուած շարունակեց. «Ես տեսնում  
եմ ժաղովրդեանս թշուառութիւնը Նզիապատի մշջ.  
լում եմ նորա աղաղակը, և հասաւ ինձ նորա աղօք-  
քը. Ես կամենում եմ աղասել նրանց Եզիապացւոց  
ձեռքից, և մայնել գեղեցիկ, ընդարձակ երկիրը, ուր  
բղխում է մեզու և կաթ, այն է քանանացւոց երկիրը:  
Ես զրկում եմ քեզ՝ Փարաւոնի մօտ, որ հանես իմ

Ժողովուրդս Եղիպատոսից: Մովսէս Խոնարհութեամբ աւսաց. «Տէր Աստուած. Ես ո՞լ եմ, որ Համարձակիմ Թագաւորի առաջը դուրս գալ և Խրայէլացիներուն հանել Եղիպատոսից: Եւ Խրայէլացիներն էլ չեն լիլ խճ և չեն հաւատալ, որ ինձ Աստուած յայտնվեցաւ: Աստուած ասաց. «Այդ ի՞նչ է ձեռումդ»: — «Գաւազմն»: պատասխանեց Մովսէս: «Գի՞ր դրան գետնին վերայ»: գցեց գաւազանը գետնին վերայ և զաւազանը դարձաւ օձ: Մովսէս վախեցաւ և կամենում էր փախէլ: բայց Աստուած ասաց նրան. «Ճի՞ր ձեռքդ և վեր առ օձին»: Մովսէս ձգեց ձեռը, վեր առաւ օձին և նա կրկին դարձաւ զաւազան: Աստուած կրկին ասաց նրան. «Ճի՞ր ձեռքդ ծոցդ: Մովսէս զրաւ իր ձեռքը ծոցը, ու երբ հանեց տեսաւ, որ ձեռը ծածկած է բորով: բայց երբ երկրորդ անգամ տարաւ նրան ծոցը, Աստուածոյ հրամանով հանեց բոլորովին առողջ: «Այս հրաշքները, ասաց Աստուած, Կ'հաւատացնեն Խրայէլացիներուն, որ նոցա հայրերի Աստուածը յայտնվել է քեզ»: «Տէր Աստուած», ասաց Մովսէսը. «Ես ծանրապեղու եմ, որ ժուարութեամբ եմ արտասահնում բառերը»: Աստուած ասաց. ով տուեց մարդուն բերան, Ով է մարդուս կոյր կամ ականի շնուռմ. ոչ արդեօք զնա, գնա, Ես կընիմ քո բերանդ. Ես կ'սովորյնեմ, ինչ որ պէտք է խօսես»: Մովսէսը, որ գեռ էլի իրան ընդունակ չէր համարում այս մեծ գործին, ասաց. «Տէր Աստուած, ինդրում եմ քեզ, զիկիր մի ուրիշը»: Աստուած ասաց նրան. «Քո եղբայրդ Ահարոնը ճարտարախօս է, նա կը հանդիպի քեզ ուրախութեամբ. դու կ'ատնես իմ պղ-

դամներս նորա բերանը, նա քո տեղ կ'խօսի ժողովողի հետո»: Մովսէս հպատակնեցաւ: Նա գնաց Յոթորի մօտ և խնդրեց, որ իրան թողնէ Եղիպատ երթալու: Յոթորը ասաց. «Պնա խաղաղութեամբ»: Մովսէս նատացրեց իշերի վերայ իր կնոջ, երկու որդոցը, առաւ իր դաւազանը և ճանապարհ ընկաւ: Աստուած ասաց Ահարոնին. «Պնա անսպասութ քո եղօրդ՝ Մովսէսի առաջ»: Ահարոն շուտ գնաց և զրկելով համբուրեց նրան, սրբանց ուրախացած: Մովսէս պատմեց նրան. Բնչու համար Աստուած իրեն զրկեց և երկուսը միասին գնացին Խրայէլացիներին մօտ: Ահարոն յայտնեց Աստուածոյ հրամանը և Մովսէս արաւ հրաշքները, որոնք Աստուած նրան ցոյց տուեց: Բոլոր ազգը հաւատաց և երկիւ զածութեամբ երկրպագեց Աստծու:

91, 010, 1, 2.

### ԵՒԻՊՏԱՑԻՈՑ ՏԱՍՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ:

Այս ժամանակ զրեթե բոլոր աշխարհքը ընկղմած էր կրապաշտութեան և ամեն կերպի մնուխապաշտութեան մեջ: Եղիպատոսը այս մնուխապաշտութիւնների աղքիւ ընէր: Եղիպատացիները, ոչ միայն երկային լուսաւորներին էին երկրպագութիւն տալիս, այլ կենդանիներին էլ անդամ: Նոքա պաշտում էին կուռքեր, և կարծում էին թէ սոքա լսում են իրանց աղօթքները և կարող են օգնել իրանց: Ասծու հաճոյ թուեցաւ իրան յայտնել հրաշլի զիպուածներում՝ մարդոցը, որ սոքա ճանաչեն վերջապէս ճշմարիս մի Ասծուն, որ է երկնիքի և երկրի Արարիչը»: Եղիպատացիները ինձ կ'ճանաչէն Աստուած

ամենապօք», ասաց Նա Սովորէսին»։ Կ'ձգեմ իմ ձեռք և  
կ'հանեմ նրանցից Խրայէլացիներուն։

Երկու ծերունիները՝ Մովսէս ութառուն տարեկան և  
Ահարոն ութառուն երեք տարեկան, յայտնիցան Փարա-  
ռանի առաջ: «Նոքա յայտնեցին նրան Աստուծոյ կամքը:  
Աստուծ ասաց», կրիսեցին նոքա», թողի իմ ժողովրդիս:՝  
Փարառնը, հպարտութեամբ փրփած, պատասխանեց: Ո՞վ  
է այն Աստուծը. որին կամենում էք, որ Ես հպատա-  
կեմ. ես չեմ ճանաչում ձեր վատծուն և ձեր ազգին  
էլ չեմ թողնիլ։

Մովսէսը, կամենալով համարել Փարառնին իր նշա-  
նակութեան Ճշմարտութիւնում, զցեց նորա առաջ իր  
գաւազանը, որ օձ գարձաւ. նա ցոյց տուեց իր բորսո  
ձեռքը, որ կրիմն բժշկեց. Եղիպտացի քուրսերն էլ ա-  
րին մի և նոյնը, միայն Մովսէսի օձը կերաւ. Եղիպտացի-  
ների օձերուն: Փարառնը Համոզիցաւ այս հրաշքնե-  
րով և շարունակեց շարչաբել Խրայէլացիներուն առաջ-  
վանից առելի:

Մովսէսը Փարառնի առջև խփեց գաւազանով Նե-  
ղոս գետի ջրին, և ջրերը ոչ միայն Նեղոս գետում,՝  
այլ և Եղիպտասի ամէն ջրհորներում և լիձերում գար-  
ձան արիւն. ոչ ոք չեր կարօզանում խմել և բորս ձրկ-  
ները սասակեցան: Բայց Փարառնի միրտը չկակղեցաւ։

Մովսէս ձգեց իր գաւազանը Եղիպտասի գետի, աղ-  
բիւրների և լճերին վերաց և այս ջրերից դուրս եկան  
անթիւ բաղմութեամբ գորտեր, որոնք ծածկեցին բոլոր  
երկիրը. թագաւորի պալատը, ամէն աները, անկողիները,  
շահմարանները, ամէն բան լիք էր գորտերով: Փարառնը

խօսացաւ թողնել Խարայէլացիներուն, բայց հազիւ դոր-  
տերը Մովսէսի նշանով Ծննդվեցան թէ ոչ, Փարառնի  
միրտը կրկին խօսացաւ։

Մովսէս խփեց գաւազանով դեռնին և բոլոր աւազը  
ու փոշին գարձան մնան (մնակ) բայի Գեսէմ երկրից, ուր  
ընակում էին Խրայէլացիները. բոլոր Եղիպտասի մէջ  
մնանք չարչարում էր մարդոց և այլ կենդանիներուն.  
բայց հպարտ Փարառնը չէր վախիսում: Եղիպտացոց  
քուրմերն էլ աշխատում էին մի և նոյնը անել. բայց  
չկարողացան և ստիպվեցան ասել Փարառնին. այդ Աս-  
տուծոյ ձեռն է»։

Յետոյ շանաձաննը լքցրեց արքունի սպալատը և Փա-  
րառնի ծառաների աները, գաշտեր և ամէն բան, ինչ  
որ կար դաշտերում: Այն ժամանակ Փարառն խօսա-  
ցաւ Աստուծոյ ժողովրդին թողնել. բայց երբ Եղիպտասը  
աղասիցեցաւ այս պատմից էլ, թագաւորը էլի չխատա-  
րեց իր խօսառմն։

Փարասափելի մահ էրեւցաւ կենդանիների մէջ բոլոր  
Եղիպտասում, բայի Գեսէմի երկրից: Աւզուերը, Էշերը,  
եզմերը, ոչսարները, ամէնը մեռնում էին, բայց Փարա-  
ռնը մնաւմ էր էլի անհամոզելի։

Մովսէս վեր առաւ ձեռնին մնախիր և ցանեց այն օդում  
Փարառնի առջև: Կեղը և խաղաւարոր ծածկեցին բոլոր  
Եղիպտացիներուն և բոլոր նորա մնացած կենդանիներուն,  
բայց Փարառնը այս էլ բանի տեղ չդրաւ։

Մովսէս բարձրացրեց իր գաւազանը գէպի երկներ և  
ահա վերկացաւ սաստիկ միրիկ, ինչպիսի երեք չեր  
զած: Եղիպտասում. գոռում էր սաստիկ զոռովքը ան-

ընդհատ փայլում էր փայլակը, որ լուսաւորում էր թանձը անգերով ծածկած. երկինքը եկաւ այնպիսի սատիկ կարկուտ, որ դաշտերի բոլոր բոյսերը և ծառերը ջարդվեցան և շատ մարդիկ, որոնք տնից դուրս էին, կոտորվեցան: Փարաւոնը աղաղակեց. «Ես մեղանեցի, արդար է Աստուածը, որ պատժում է ինձ և իմ ազգիս, աղօթք արէք, որ այս սարսափելի մրրիկը վերջանայ. ես կ'թողնեմ Խարայէլացիներուն»: Բայց հաղու երկինքը կ'ցոյց ապա ձեզ, թէ որպէսի դանապանութիւն է դնում Աստուած Եղիպատրուց ազգի և խրոցիւացուց ազգի մէջ:

Մովսէս էլ մի անգամ ձգեց իր գտազանը Եղիպատրուի միջրան և երևեցաւ անթիւ բազմութեամբ մարախ օգումն և ծածկեց բոլոր երկիրը սցնալիս, որ ոչինչ չէր երևում: Դաշտերում և ծառերի վերաց ոչ մի կանանչ տերեւ չմնաց. այն արտերը, կանանչները և բոյսերը, որոնք կարկուտից ազատվել էին, բոլորովն ջնջվեցան մարախից: Փարաւոն ինչդեռ ողորմութիւն, խոստացաւ կատարելու ամէն բան, ինչ որ Մովսէսը պահանջում էր, բայց իր խօսքը չպահեց:

Վանպիսի խաւար պատեց բոլոր Եղիպատրու, որ երեք օր շարունակ ոչինչ չէր կարելի տեսնել: Միայն Գեսեմի երկրում ցերեկով փայլում էր արեգակը և զիշերը լուսաւորում էր լուսինը և փայլում էին ասաղերը: Փարաւոն սաստիկ բարկացած ասաց Մովսէսին. «Հեռացիր աշքից, եթէ ես քեզ մեկ տեղ տեսնեմ, կ'հրամացիմ քեզ սպանել»:

Գևորգ Ավ.

ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՐԻՒՅ ԳԱԼԻՔ

Մովսէս, Աստուածոյ հրամանովը, վերջին անգամ դնաց Փարաւոնի առաջ և յայսնեց նրան յետագայ խօսքերը,

«Աստուած ասաց, Երբ կէս զիշեր կլինի, ամէն անդրանիկները բոլոր Եղիպատրուի մէջ կ'մասնին, թագաւորի որպից սկսած մինչև վերջին աղախնի որդին, նոյնապէս էլ անսառների անգրանիշները: Եղիպատրուի բոլոր երկրում կլինի ողջ, որպիսի երբեք չէ եղած. բայց Խարայէլացւոց մէջ ամէն բան յանոցակ կլինի: Այս վերջին հրաշքը կ'ցոյց ապա ձեզ, թէ որպէսի դանապանութիւն է դնում Աստուած Եղիպատրուց ազգի և խրոցիւացուց ազգի մէջ: Արմանից յետ շարունակեց Մովսէս ասերով գրուր քո ծառաներդ, բոլոր հպատակներդ կ'զան ինձ մօտ և ոտերս ընկնելով կ'ասեն. այնա այս տեղից կու և քո ազգդ և ես գուրս կ'երթամն: Փարաւոնը սարսափեցաւ: Գիշերը մօտնում էր: Աստուած Մովսէսի ձեռքով Խարայէլացիներին յետագայ հրամանը տուեց, ամէն ընտանեաց զբուխը Խարայէլացիներից պէտք է մորթեր մի ոչխար մի տապնիան, անսարա, այսինքն առանց բծի և վնասի և խորոշէր կրակի վերաց ամբողջ, ուկրները շրկուրած: Ամէն տանտիկնն, պէտք է պատրաստէր խմոր, որ եփէ բաղարջ. այս վերջին ընթրէքը Եղիպատրուի մէջ պէտք է լիներ զօրացուրիչ կերակուր ճանապարհի համար և միենայն ժամանակ յիշաւակ Աստուածոյ հովանաւորութեամբ: Որ ընտանիքը փոքրաթիւ էր, պէտք է հրաւիրէր զրացիին, որովհետեւ ընթրէքից ոչինչ չպէտք է մնալու Խարայէլացիներին հրամայած էր ուտել այս ընթրէքը կանչնած, ճանապարհի շորերով և գաւազներ ձեռներին: Նւ ոչխարփի արիւնովը սրակած էին ամէն Խարայէլացիների գուները: Մահուան հրեշտակը, որ կ'արթեց այս զիշեր բոլոր Եղիպատրուի անգրանիշներուն. անյ

Էր կենում Նըրայէցւոց տների մօսով՝ որոնք դատկի գառնի արիւնով նշանակած էին:

Ահս զիշերը եկաւ, ամէն Խրայէլացւոց անելում կատարում էին զատիկը, այսինքն ուտում էին պատերի գառը: Այս ժամանակ կատարվում էր Եղիպատացւոց տուած վերջին պատիմը Աստուծոյ: Ամէն անդրանիկ լուսանիքի մէջ մեռաւ, թագաւորի գահի ժառանդից սկսած մինչև վերջին աշխատաւորին: Նմանաղէս սատակեցան անսասունների անդրանիկներն էլ: Փարաւոնը, նորա ծառաները և բոլոր ազգը պատած էր սարսափանքով: Ողորմելի ազաղակ, լաց և ողը լսելի եղան յանկարծ բոլոր Եղիպատոսի մէջ: Ոչ մի տուն չէր խնայած: ամէն տան մէջ մեռել կար: Փարաւոն զիշերով հրամացեց կանչել Սովոչսին և Ահարոնին և ասաց նրանց, «Չուտով հեռացէք իմ երկրից, գուք և բոլոր Խրայէլացիներոց: Առէք ձեր հետ բոլոր ձեր անսասուններուն էլ և ձեր զուրս զալից տռած օրհնեցէք ինձ: Եղիպատացիները ստիպում էին Խրայէլացիներուն, որ շուտով հեռանան: «Շտապէցէք, ասում էին նոքա, թէ չէ, մնք ամէնքս կ'կոտորվինք»: Խրայէլացի կանայք ստիպվեցան եփել հացը չխմրված և շատերը մինչև չեփած էլ առան հետերը: Միայն չմոռացան հետերը առնելու Յով ուփի ուկիները: \*

Եղիպատացւոց ծառայութիւնից ազատվելու յիշառակին համար Խրայէլացիները մինչև սյժմ տօնում են պատերը, այսինքն ուտում են զիշերով պատերի զառը և բոլոր շաբաթը բաղարջ: Այս կատարում են նոքա գարոնիքի առաջին ամսի կէսին, որովհետեւ այս ժամա-

նակ զուրս եկան նոքա Եղիպատակց, բայց Նըրայէցւոց պասէքը այժմ ոչինչ նշանակութիւն չունի. նա օրինակ էր ազագային և նորա տեղ բռնեց այժմ իսկ Ճշմարիտ քրիստոնէական պատերը: Պատերի գառը, որի արիւնը ազատեց Նըրայէցիներուն մահուան հրեշտակի կոտորածից, օրինակ էր Ամենամնքուր Գառին՝ Ցիսուսին Քրիստոսին, որի արիւնովը հաւատացովները ազատվում են յաւիտենական մահից:

Յակովը մասւ Եղիպատոս եօթանսասունհինդ հոգւով: Զորս հարիւր երեսուն տարի մնաց նորա ազգը Եղիպատասում. և երբ Մովսէս հանեց Խրայէլացիներուն, նոքա վեց հարիւր հազար հողեր էին, չհամարելով կանանց և երեխաներուն:

ԳՅ.Ա.Խ. 1.6.

ԿԱՐՄԻՐ ԾՈՎՔ ԱՆՑՆԵԼԻ:

Այսպէս ազատեց Աստուած Խրայէլացիներուն ծանր ծառայութիւնից: Աստուած ինք ցոյց էր տալիս նրանց ձանապարհը. հրաշալի ամազն առաջնորդում էր Աստուածոյ ժողովութեան. ցերեկով ամոցը էր խաւարին որ պաշտպանում էր նրանց արեգական ձառագայթներից և զիշերով. երեսում էր նա հրեղին և լուսաւորում էր նոցա ձանապարհը: Ելք, Խրայէլացիները ամպին հետեւելով, հասան կարմիր ծովի ափը, բանակ զցեցին մի հովախ մէջ:

Բայց այս միջոցին Փարաւոնի և նորա ազգի միաքը փոխվեցաւ: «Այս ի՞նչ արինք մենք» ասում էին նոքա, «ինչո՞ւ թողինք այնքան բաղմութիւնը մեր ծառայութիւնից»: Փարաւոնը ասաց. նրանց պատում է անսալտուր,

նոքա չեն գտնել ճանապարհ։ Համնենք ետևներից։ Ես  
շուտ հրանցեց պատրաստել վեց հարիւր լաւ պատե-  
րազմական կառքեր և բոլոր իր զօրքով, բոլոր հեծեալ-  
ներով և զօրավարներով Խրայէլացիների ետևից ընկաւ  
և հասաւ նրանց հարմիր ծովի ափի մօտ։

Պիշերը մօտենում էր Խրայէլացիները պատաժ էին  
առջն կողմից, առաջներին ծովի էր և ետևներին Փարա-  
ւանի անթիւ զօրքը։ Ահը պաշարեց նրանց։ Մէկ քանիսը  
աղօթք էին անում, լսնդրելով Աստուծմէ օդնութիւն։  
իսկ միւսերը պարաւում էին Մովսէսին տսելով։ «Ճի՞թէ  
փոքր էր զերեզմանի տեղ մեղ համար Նղիպտում։  
Նշո՞ւ բերիր մեղ այս տեղ, որ ամենքս անսալատում  
կորչում ենք։ Աւելի լաւ էր մեղ համար, որ ծառայ-  
էինք Նղիպտացիներին քան թէ այս տեղ մեռնենք»։  
այսպէս անհանդիստ լինում է մարդուս սիրաը, եթէնորա  
յոյսը Աստուծոյ վրայ հաստատ չէ։

«Ովնչ բանից մի՛ վախենաք, ասում էր Մովսէս գործ  
է տեսնեք, ինչպիսի հրաշք կ'գործէ, Աստուծ ձեր ազա-  
տութեան համար։ Շուտով այս Նղիպտացիները, որոնք  
այնպէս հոգարտ կանգնած են ձեր առաջին, յաւիտեան  
կ'կորչեն ձեր աչքից։ Այսպէս հանդիստ և հանդիստ  
լինում է այն մարդուս սիրաը, որ գնում է իր բոլոր յոյ-  
սը Աստուծոյ վերայ։

Եյն ժամանակ Աստուծ ասաց Մովսէսին, «Ճո՞ղ վեր  
կ'ենան Խրայէլացիները և շարունակեն իրանց ճանապար-  
հը, իսկ դու առ զաւագանդ և ձգիր ձեռդ ծովի վերայ։  
Զուրը երկու կ'բաժանի և Խրայէլացիները կ'անցանեն  
յանձնավով։ Նղիպտացիները կ'իմանան, որ Ես եմ Տէր

Աստուծը Ես ցոյց կ'տամ իմ զօրութիւնս Փարաւանի,  
նորա կառքերի և հեծեալների վերայ։ Ամազ բարձրա-  
ցաւ և կանգնեցաւ Նղիպտացիների և Խրայէլացիների  
մէջ։ Խրայէլացւոց կողմում նա վայլում էր կրակի պէտ  
և ցրում էր գիշերացին խաւարը իսկ Նղիպտացիների  
կողմում էր խաւարային։ Այսպէս գիշերով երկու բա-  
նակները մէկ մէկու չկարողացան հանդիպել։

Մովսէս ձգեց իր զաւագանը Կարմիր ծովի վերայ և  
ծուրը բաժանվեցաւ երկու մասն։ Սաստիկ հողմը ցամա-  
քացրեց ծովի յատակը և բոլոր գիշեր Խրայէլացիները անց  
էին կ'ենում ծովի ցամաքած յատակի վրայով։ Նոքա  
զնում էին և երկու կողմում կանգնած էին պատերի  
պէտ բարձրացած ջրերը։ Երբ լրւացաւ, Փարաւանը, տես-  
ներով որ Խրայէլացիները անց են կ'ենում ծովի միջով  
ինչպէս ցամաքի վրայ, յանկարծ ընկաւ նոցա ետևից և  
իւր կառքերով, այրուծիրվ և բոլոր զօրքով մտաւ մէջ-  
ակեզր։ Այն ժամանակ վեր կացաւ միրիկ սաստիկ, եկան  
ամպերը, գոռաց գոռոցը, փայլեցան փայլակները։ «Ճի՞տ  
դատնանք, յետ, ազագակեցին սարասիած Նղիպտացինե-  
րի։ Աստուծ ինքը պաշտպանում է Խրայէլացիներուն,  
վախչենք նորա բարկութիւնից։ Բայց Աստուծ հրա-  
մացեց Մովսէսին, որ բոլոր Խրայէլացիներով անց էր կա-  
ցել միւս ափը, գարձնել իր զաւագան Նղիպտացիների  
գէմ։ Մովսէսը ձգեց իր ձեռք և ծովը սարսափելի ձայ-  
նով թափիլեցաւ Նղիպտացիների վերայ, ծածկեց կառ-  
քերը, այրուծիրն և բոլոր զօրքերուն, ոչ մի Նղիպտացի  
կ'իմանակ չմնաց։

Եյն ժամանակ Մովսէս բոլոր Խրայէլացիների հետ

միսաին երգեցին Աստուծոյ շնորհակալութեան երդ, առելով. «օրհնենք Տիբոջը, որովհետեւ փառաւորիած է Նա: Թղնական և պաշտպան է Նա ինձ, Նա եղաւ իմ փրկութիւնս, Նա է իմ Աստուծում և փառաւորում եմ Արքան. իմ Հօրս Աստուծուն է Նա և բարձրացնում եմ Նրան. և այն: Մովսէսի քոյլը Մարիամ ուրիշ Եղիալտացի կանանց հետ միսաին առանձին պար կազմելով, կրկնում էր մի նոյն խօսքերը:

ԳԼՈՒԽ 1.Թ.

ՀՅ. ԵՐԿՆՔԻՑ ԵՒ ԶՈՒԲ ՔԱՐԻՑ:

Երբ Խարայէլացիները անցան Կարմիր ծովը բանակ զցեցին ընդարձակ, անպաղաքեր և անբնակ սննապատռում. մի տեղ չեր երեւում ոչ ցանք և ոչ խրճիթ: Խարայէլացիները մանաւանդ զգում էին ջրի պակասութիւն. Մի անպատմ գտան նոքա ջուր. միայն դառն էր այն: Աստուծութ հրամայեց Մովսէսին զնել նորա մէջ մի կտոր փայտ և ջուրը բոլորովին լաւացաւ և խմելու ջուր դարձաւ: Եղիալտահից կուրս գալից երեք օր յետ Խարայէլացիների հայր պակասեցաւ և զգիտէին, որտեղից առնեն հաց.

Ամէն այն հրաշքներից յետ, որնք Աստուծութ նոցա ազատութեան համար գործեց, կարելի էր արդեօք, որ Խարայէլացիները երկմտէին Աստուծոյ ողորմածութեան մասին: Բայց նոքա, բոլորովին իրենց յոյսը Աստուծոյ վերայ զնելու տեղ, տրամնջում էին և ասում էին Մովսէին և Ահարոնին. «ինչու չմնացինք մենք Եղիալտահում: Մեղ համար այն տեղ լու էր, մենք հաց շատ ունեինք

և մեր առաջը դրած էին մնով լիք կատաները: Դուք բերիք մեղ անապատը, որ բոլոր աղջր կոտորվի սովոր: Ճայելով, որ այս խօսքերը Երատ անմիտ և անշնորհակալ էին, էլի Աստուծութ մեղքացաւ այս անդամ էլ այն փոքրողի աղջրին: Նա ասաց Մովսէսին. «Ես կ'զրկեմ ձեզ հաց երկնքից, թող ժողովուրդը ամէն առաւոտ դուրս գայ վրաններից և հաւաքէ հաց, ինչ քանի իրեն հարկաւոր է: Թող նոքա տեսնեն, որ Յա նմ ձեզ Տէր Աստուծութը: Մովսէս և Ահարոն յանդիմանում էին ժագովորին ասելով, «Մենք ի՞նչ ենք. դուք արտնջումէք ոչ թէ մեր վերայ, այլ Նրեն Աստուծոյ վերայ:

Վաւաւոր վաղ, երբ ցօղը իջաւ, բոլոր անապատը, կարծես թէ, ծածկած էր ձիւնով, առքա էին մաներ սպիտակ հատիկներ, նման զինձի և ունէին մեղրով խառնած սպիրի համ: «Այս ի՞նչ է», աղաղակիցին Խարայէլացիները: Այս այն հայն է, որ ձեզ դրկում է Աստուծութ: պատասխանեց Մովսէս: «Հաւաքեցէք, ինչքան ամէն մէկիդ բաւական է մի օրվան համար»: Այս կերակուրը կոչվում էր Մանանայ: Խարայէլացիները հաւաքում էին նրան ամէն առաւոտ և կերակուրում էին նրանով.

Վանանան մի օրից աւելի չեր պահպում, միայն այն մանանան, որ շաբաթ օրվան համար քաղում էին զիմանում էր երկու օր: Շաբաթ օրը չեր իջնում և այս պատճառով Խարայէլացիները շաբաթի առաջնկայ օրը պատրաստում էին երկու օրվան համար:

Խարայէլացիները առաջ զնարով հասան ուրիշ անապատ տեղ, ուր բոլորովին ջուր չկար: Ծարաւը նրանց նեղացնում էր և նոքա աղօթքով դէպի Աստուծութ գառ-

նալու. տեղ սկսան էլք արանջել Մովսէսի վերայ. «Ճոր  
մեզ ջոր», կանչում էին նորա, «մենք, որդիքս, և ամեն  
մեր անառուները մեռնում ենք ծարաւից. ինչու հա-  
նեցիր զու մեզ Նգիպսոսից»:

«Դուք էլք մեղանչում եք Աստուծոյ զեմ, սսում եք  
նրանց Մովսէս: Բայց ծարաւից նեղացած ժողովուրդը  
չէր լուսմ նորա խօսքերը և շարունակում եք գոռալ և  
սպառամիլ: Աստուծոյ երկայնամասութիւնը դեռ չկարսին-  
ցաւ, նա մեղքացաւ. նեղացած ժողովուրդին և ասաց Մով-  
սէսին, «ո՞ւ գաւաղանդ և գնա, կանգներ Խրայէլացինե-  
րի առջեւը. Դու կ'ունես վէմ», խիճը նրան գաւաղա-  
նովդ և ջուրը կ'բղխէ քարից, նա կ'ջրէ բոլոր ժողովու-  
դեան»:

Մովսէս մօտեցաւ վէմին, և բոլոր ժողոված ազգի  
առաջին խիճը նր գաւաղանով քարին—և ահա առ առ  
քաջը աղբիւր ջրի սկան րղիւել քարից:

Արանից խմեցին բոլոր Խրայէլացիները և նոցա անա-  
սունները: Ամենքը ուրախացան և փառաւորում էին  
այսպիսի հրաշքը:

Գլուխ է.

### ՏԱՄՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻ:

«Խրայէլացիները հասան Աիսա լերսն մօտ: Մովսէս  
էլսւ սարի զըսկը և Աստուծ ասաց նրան, «ասա Խրա-  
յէլացիներին, Դուք տեսաք ինչպէս Ես ջնջեցի Նդիպ-  
տացիներուն և ձեղ կարծես արծուի թեւերի վերայ հա-  
նեցի Նգիպսոսից: Այժմ եթէ կ'լսէք իմ ձայնիս, և  
կ'պահէք իմ ուխտ, Դուք կ'լինիք իմ ընտրեալ ազգա:

Բոլոր աշխարհները Դմա է, բայց թէ դոք կ'լսէք իմ խօս-  
քերս և կ'պահէք իմ ուխտ, դուք կ'լինիք իմ սուրբ  
թագաւորութիւնս, իմ քահանացութիւնս, ընտրեալ և  
սուրբ ժողովուրդս: Ասա իմ խօսքերս Խրայէլացիներին»:  
Մովսէս կրկնեց ժողովրդի առաջնին Աստուծոյ խօսքերը  
և բոլոր Խրայէլացիները միաձայն աղաղակեցին, «մենք  
պատրաստենք կատարելու Աստուծոյ ամեն Հրամանները»:

**Աստուծ ասաց Մովսէսին.** «Գնա ժողովուրդին մօտ,  
սրբիր ամենուն, թող լուսնան իրենց շորերը և նրարու-  
թը պատրաստ լինին: Երբ փողի ձայնը կ'լավի, թող մօ-  
տենան սարին»: Ամենքը սրբվեցան, հաղան լուացած շո-  
րերը և պատրաստվեցան մեծ և սուրբ հանդէսին համար:

Երրորդ օրը, երբ լուացաւ, Խրայէլացիները աեսան  
փայլասակներ և լսեցին գոռոցքի ձայն. թանձր ամպերը  
ծածկեցին Աիսայի սարը, լսիցաւ փողի ձայնը. Ժողովու-  
րդին պաշարեց երկիւղ և ահ: Մովսէս ժողովուրդին բա-  
նակից հանեց Աստուծոյ առաջ: Նորա մօտեցան սարի  
ստորափն, բոլոր սարը ծխվում էր, վառվում էր շար-  
ժում: Փողի ձայնը առաւել և առաւել զօրանում էր:

Յետոյ ամեն բան հանդարտեցաւ. Աստուծոյ ձայնը  
յայնի լսում էր բոլոր ժողովուրդը:

«Ես եմ քո Տէր Աստուծութ. մի՛ ունենար քեզ ուրիշ  
աստուծներ բաց ինձանից»:

«Մի շնիր քեզ կուռքեր, և ոչ մի նմանութիւն,  
ոչ երկնքում և ոչ երկիխ վերայ, ոչ ջրերում և ոչ  
գեանի տակում. Մի երկրպաղիր և մի լիիր նրանց»:

Միտք պահիր շարած օրը, որ սուրբ պահէս նրան.  
վեց օր գործիր և ամեն քո բաներդ արա, եօթնելորդ  
օրը՝ շարածը նուիրիր քո Աստուծութ:

Պատուիր հօրդ և մօրդ և քեզ բարի կ'լինի ու երկարակեաց կ'լինիս երկրիս վերայ»:

«Մ' սպաներ»:

«Մ' շնար»:

«Մ' գողանար»:

«Քո ընկերիդ վերայ սուս վիայութիւն մի՛ տար»:

«Քո ընկերիդ կնոջ մի՛ ցանկանար. մի՛ ցանկանար նորա արտին, ոչ նորա ծառային, ոչ աղախնին, ոչ եղին, ոչ եշին և ոչ անասուններին և ամէն բանին, որ ինչ նրան պատկանում է»:

Բոյոր ժաղովուրդը լսում էր Աստուծոյ և փողի ձայնը, բոյոր ազգը տեսնում էր բոցը և սարը, որ ծխմում էր: Նա կանգնած դողում՝ էր և ասրում: «Մ' վախենաք», ասաց Մովսէս, «Աստուծ ձեզ զես ՚ի բարին է առաջ նորդում», հպատակեցէք Նրան և փախեք մեղքից: Աշ զը միաձայն խոստացաւ կատարել պատուիրանները: Այս անցքի յիշատակի համար Խարայէլացիները մինչեւ այժմ տօնում են Պէտականուէն, որովհետեւ այս պատահեցաւ Պատէքից յիսուն օր յետոյ:

ԳԼՈՒԽ ԽԱ.

ՈՍԿԻ ԱՐԹԻ:

Արանից յետ Մովսէս գնաց Ամնայի գլուխը, ուր Աստուծուծ տուեց շատ ուրիշ օրէնքներ էլ Խարայէլացիներին և նր տաճն պատուիրանները երկու քարե ասախտակների վերայ գծագրած: Մովսէս մնաց Ամնայի զըմին Աստուծոյ հետ խօսելով քառասուն օր և քառասուն զիշելու

Ժաղովուրդը նորա բացակայութեան ժամանակ վճռեց քանդել իր ուխտը Աստուծոյ հետ: Խարայէլացիները ուղում էին, Եղիպտացւոց օրինակով, ունենալ կուռքեր: «Մ'նք ուղում ենք գնալ առաջ, ասում էին նոքա Ահարոնին, շնինիր մեզ համար աստուածներ, որոնք մեզ առաջնորդեն, մենք կ'տանենք նրանց մեր ամբոխի առաջեր. մենք չպիտենք, ի՞նչ եղաւ Մովսէսի հետ, որ մեզ Եղիպտոսից հանեց: Ահարոնը վախեցաւ ժողովրդին ընդդեմ խօսելու և ասաց. «Քերէք ինձ ձեր կանանց և աղջենիների ոսկի զինդերը և մասանիները»: Խարայէլացիները շուտ հաւաքեցին իրենց կանանց և աղջենիների ողերը և մասանիները և բերին Ահարոնին մօտ, որ բերած ուկից ձուլց որթ (Հորթ): Երբ սրան տեսաւ, բոյոր ազգը աղաղակեց. «ահա այն Աստուծը, որ մեզ հանեց Եղիպտոսից», նորա ստիպեցին Ահարոնին կանգնել սեղան և զըհել ոսկի որթին. ուրախանում էին և պար էին պարիս նորա չորմում:

Մովսէս չէր իմանում, ինչոր Ամնայի ստորառումն լինում էր. բայց Աստուծ ասաց նրան, «իջնիր սարից, ժողովուրդը, որին զու հանեցիր Եղիպտոսից, մեղմանչեց, նա շուտ դարձաւ իմ ցոյց տուած ճանապարհից: Ես կ'ջնջեմ նրան և զու կ'լինես նախահացը ուրիշ մեծ աղջի»: Բայց Մովսէս ընկաւ Աստուծոյ առաջ և խնդրեց նրան, որ խնայէ իր ժողովրդին: Աստուծ լսեց Մովսէսի աղօթքը և խնայեց Խարայէլացիներուն:

Մովսէս իջնում էր սարից, ձեռին օրինաց տախտակները բռնած. բայց երբ մօտեցաւ բանակին, տեսաւ ոսկի որթին և աղջին, որ երկրախտիթիւն էր տալիս նրան.

բարկութիւնից դյեց տախտակները և կոտրտեց: Յետոյ հրամացեց որթին այրել, փոշի շնուց նրան ու ջրի մէջ խառներով, հրամացեց Խորսյէլացիներին խմել: «Ի՞նչ արին քեզ այս մարգիկ, ասաց Մովսէս Ահարոնին, որ դու նրանց այսպիսի մեղք անել տուիր»: «Ան բարկանար», պատասխանեց Ահարոնը, «դու ինքդ էլ լաւ գիտես նոցա յանդգնութիւնը նորա, որոնք ցաւում էին որթի վերայ, սպանվեցան Ղետացիների սրով: Շատ հազարներ փչացան: Այն ժամանակ Մովսէս ասաց «դուք խիստ մեղանչեցիք. Ես կ'բարձրանամ էլի սարի գլուխը, որ կակացնեմ Աստծուն, որ զայրացած է ձեր յանցանքի վերայ»: Նա ելաւ սարի գլուխը և գոչեց Աստծուն աւելով: «Տէր, Քո ազգդ մեղանչեց Քեզ, բայց Քո ողորմածութեամբ ների նորա յանցանքը, կամ ջնջեր իմ անունս կենաց զբքից»: «Կ'ջնջեմ կենաց զբքից նորա անունը, որ մեղանչեց Խնձ». ասաց Աստծուած: «Կ'գայ օրը, երբ կիշնի Դմ պատիմա մարզոց վերայ իրանց մեղքերի համար»: Մավսէսը այս անգամ էլ մնաց Աինա սարին վերայ քառասուն օր և քառասուն դիշեր խօսելով Աստուծոյ Հետ երես առ երես: Աստուծած տուեց նրան ուրիշ տախտակներ, վրան պատուիրանները գծաղրած և երբ Մովսէս իջաւ սարից, նորա երեսը այնպէս փայլում էր, որ նա պէտք է ծածկէր իր երեսը քօղով, որ ժողովուրդը կարողանար նայել նորա վերայ:

Աստուծոյ հրամանով Մովսէս շնուց տաղանակ անփուտ փայտից, պատեց նրան ոսկի թերթով և զրաւ նորա մէջ պատուիրանների տախտակները: Առանձին, դոյն զգոյն շորերով և կաշներով ծածկած վրան շնուց

այս տապանակի համար: Սա զրած էր երկրորդ վարագոյրի ետեւ առաջին վարագոյրի ետեւ զրած էր սեղանիր խներով, ոսկի աշանակը եօթն ճրագարաններով և էլ մի սեղան տասներու հայերովը երեսաց: Այս տապանը, որի մէջ պահպատմ էին պատուիրանները, անուանվեցաւ Տապանակը Աւատի և վասնը, որի մէջ դրած էր Տապանակը կոչվում էր Խորսն վկայութեան: Նա պատած էր սրահով, ուր դրած էր զոհարանը և ուր ժողովուրդը աղօթում էր: Խորսնի առաջին մասը, որ բաժանած էր սրահից վարագոյրով, անուանվում էր Արրութիւն. իսկ երկրորդը, որ բաժանած էր առաջինիցը ուրիշ վարագոյրով, անուանվում էր Արրութիւն սրբոց: Երբ ամենը պատրաստ էր, ամազը ծածկեց խորսնը, որ Աստուծոյ փառքով Լքցուեցաւ: Ահարոնը քահանայակետի շորերով, Խորսնի սրահում, զրեց զոհը սուհարանին վերայ: Այն ժամանակ ամենից, որ հովանի էր Խորսնին, իջաւ զոհի վերայ կրակ: Ժողովուրդը այս հրաշքը տեսներով, ուրախութիւնից երեսով ըսկաւ դետնին, երկրագեց ամենազօր Աստծուն և շնորհակալ եղաւ նրան:

Գլ. Ա. Խ. Խ. Խ.

ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՐ ՃՐԱՇՔՆԵՐԸ ԱՆԱՊԱՏՈՒՄ:

Ըստով Խորսյէլացիների մէջ ծագեցան նոր պատամբութիւններ: Նոքա ձանձրացան այն հացերից, որ ընկնում էր երկնքից. նոքա կամենում էին ուրիշ կերակուր: Խրենց վրանների դռների մօտ նստած լսց էին լինում և դռնում էին փոքրիկ երեխանների ողէս. «Ով

կտայ մեղ միս, ասում էին նոքա, մենք չենք մոռանալ բնաւ Եղիպատոսի վարունգները, սեխը, տիլը և խատորը խկ այժմ մենք մանանայից աւելի բան չենք տեսնում:

**Սովհետը չափից գուրս տրտմեցաւ այսպիսի յիմարտւթեան վերայ, նա լայ էր լինում՝ Աստուծոյ առջեւ։ «Յայտնիր ժողովրդին», ասաց Աստուած, «նոցա լացը լեցի. Նո կղզինմ նրան միս, ոչ թէ մի կամ երկու օր այլ ամբողջ ամիս շարունակ, մինչև որ նրանից էլ զդուի: Խրայէլացիները այսուհետեւ թող չգտնատեն, որ թողին Եղիպատոսի երկիրը։**

**«Տէր Աստուած, ասում էր Մովսէս, նոքա վեց հարիւր հազար հասակը հասած մարդիկ են բայցի կանանց և երեխաններից, որտեղից առնենք այնքան միս, որ բոլոր ամիս կերակրվի ողջ ապդը։ «Մի՛թէ Աստուծոյ ձեռը քաւական չէ։ ասաց Աստուած, այժմ կ'աւենես իմ խօսքերիս կատարիլելը։»**

**Աստուծոյ հրամանով վեր կացաւ ասատիկ հողմ և բերաւ ծովից անթիւ բազմութեամբ լորամարդի։ Անապատը մի օրվան ճանապարհի չափ տեղ ծածկիցաւ նրանցնով, երկու կանգուն բարձրութեամբ զետնից։ Ժողովուրդը հաւաքեց բոլոր այն օր և զիշեր և միւս օրը այս լորամարդներից։**

**Բայց գեռ ողջը չկարողացան ուտել, գեռ միաը առանձների տակն էր, երբ զգացին Աստուծոյ պատիմը, նորս շատ ուտելից հիւանդանում էին և բազմութեամբ մեռնում։ Այստեղ, ուր էր այն ժամանակ Երրայցիների բանակը, կոչվեցաւ գերեզմանն ցանկութեան։**

**Եյս միջոցներումն պատահեցաւ յետաղայ անցքն էլ։**

Դետացին Կորիսը և երեք հողիք Ոռոբէնի ցեղեց ուրիշ անուանի մարդոց հետ յարուցին մեծ խոռովութիւն, Նոքա վեճում էին Մովսէսի և Ահարոնի հետ նոցա իշխանութեան և քահանայութեան վերայ։ Կորիսին, Դաթանին և Արիրոնին, այս վերջին երկուսին իրենց ընտանիքով, կուլ տուեց երկիրը. խկ միւս երկու հարիւր յիստն հողիները կոտորվեցան հրաշալի կրակով, երբ բուրուսութենուերին կանկնած էին վկայութեան Խորանի առջեւ, կամենալով Ահարոնից քահանայութիւնը խլել։ Միւս օրը, երբ գեռ շարունակվում էր խոռովութիւնը, կոսորվեցաւ ժողովրդից 14,700 հողի։ Այս Քահանայութեան իրաւունքի վեճերին յախեան վերջ զներու համար, հրամայեց Աստուած Մովսէսին, առնել ամէն տաններկու ցեղերի ծերերի գաւազանները և զնել Խորանում։ Մէկ զիշերում Ահարոնի գաւազանից բուսաւ Ճիւղ ծաղկով և պողով։

Գլ. Անկա Պա.

ԽՈՍՍԱՅԵԱԼ ԵՐԿՐԻ ՎԵՐԱՅ ՀԱՄԲԱԿԻ։

**Խրայէլացւոց ազգը արդէն մօտենում էր գանանացւոց երկրի սահմաններին։ Մովսէս ընտրեց Յեսուին՝ Նաւեայ որդուն, Քաղէրին և տան ուրիշ անուանի մարդոց Խրայէլացիներից և զրկեց նրանց, որ լսեսեն խոստացած երկիրը։ Նոքա յետ գարձան քառասուն օրից։ Մովսէսի և Ահարոնի առջեր զնացին Յեսու Նաւեայն և Քաղէրը ու բոլոր ժողովրդի առաջին պատմում էին յետագայն։ Այնոք էինք այն երկրում, ուր դուք մեզ զրկեցիք։ Ճշմարտիւ այս երկրում բղխում է մեզ և կաթ։ Ա-**

Հապտուղները, որ մենք բերինք այնաեղեց»։ Նոքա ցոյց  
էին տախիս թուզ, նուռն և մեծ ողկոյզ խաղողի։ Բայց  
միւս տասն լրտեսները ընդդէմ խօսեցան Յեսուին և  
Քաղէքին և տարածում էին ժողովրդի մեջ վատ համ-  
րաւ երկրին վերայ. «Երկիրը, ուր մենք էինք, ասում էին  
նոքա, մարդածախ է իր բնակչացը համար»։ Այն տեղ  
քաղաքները մեծ են, արատած ամուր պատերով։ Այն-  
տեղ բնակում են հականեր, որոնց առջե մենք այնպէս  
փոքր ենք, ինչպէս մարախ»։ — Երբ այս լսեցին Խարայէ-  
լացիները, սկսան լու և գանգատել։ Նոցա լացը շարու-  
նակվեցաւ բոլոր գիշերը։ Վերջապէս Խարայէլացիները  
ապատամբեցան Մովսէսի և Ահարոնի դէմ։ Նոքա ասում  
էին, «Բնչու չմնացինք Եղիպատումն»։ Աստուած արդեօք  
մեղ այս տեղ նորա համար չըերաւ, որ մեղ, մեր որդո-  
ոց և մեր կանանց մասնէ թշնամիներիս ձեռքը։ Աւելի  
լաւ է մեղ համար, որ դատնանք ելի Եղիպատու։ Ընտ-  
րենք մեր մեջեց զօրավար և դատնանք Եղիպատու»։

Մովսէս և Ահարոն ընկան երեսի վերայ ժողովրդի  
առջե, որ վախիայնին նորա սիրար։ «Բայց մի՞ վախե-  
նաք ոչնչոց», ասում էր Մովսէս, «Աստուած կ'պաշտ-  
պանէ ձեղ այս մարդոց դէմ էլ, ինչպէս նու պաշտպա-  
նեց Եղիպատոյների դէմ։ Մի՛թէ մոռացաք ինչպէս Նա  
առաջնորդեց ձեղ անսպատում, ինչպէս հօր պէս հո-  
գաց ձեր վրայ։ Յեսու Նաւեայն և Քաղէքը արամութիւ-  
նից պատառեցին իրենց շորեր։ «Ենք տեսանք բոլոր եր-  
կիրը, ասում էին նոքա, մաս շատ դեղեցիկ է։ Աստուած»

(Թիւ. Գլ. Ժ. 33.)

օդնութեամբ մենք կ'մանենք այն անկ, Աստուած կ'բնա-  
կեցնէ մեզ այն երկրում, ուր մեզը և կաթ են բղխում։  
Աստուածմէ մի՞ ապատամբէք։ Այս երկրի ազգերից մի'  
վախենաք, մենք կ'ջնջենք նրանց։ Աստուած կ'լինի մեզ  
նիգակակից»։ Բայց 'ի զուր էին այս ամէն խօսքերը։ Ժո-  
ղովուրդը կատաղած զուռում էր և կամենում էր քար-  
կոծել Մովսէսին, Ահարոնին, Յեսու Նաւեային և Քա-  
ղէքին։

Այս միջոցին երևեցաւ Աստուածոյ վասոքը ժողովրդի  
առջե ամսի մեջ Խորանին վերայ։ Աստուած ասաց Մով-  
սէսին. «Ամինչե երբ այս ժողովուրդը ինձ կ'բարկացնէ։  
մինչե երբ նա չի հաւատալ իմ հրաշքներիս, և ի'կո-  
տորեմ նրան և կ'ջնջեմ երկրիս երեսից իսկ քեզ կ'չե-  
նեմ նախահայր աւելի զօրեղ և հզօր ազգին։ — Բայց  
Մովսէս, որին Խարայէլացիները կամենում էին քար-  
կոծել, ասաց. «Աստուած, մի՞ ջնջը այս մարդոց։ Երբ նո-  
քա կ'ջնջին երկրիս երեսից, Եղիպատոյները և որիշ  
ազգերը կ'ասեն։ Աստուած չկարողացաւ Խարայէլացիներուն  
մայցնել խոստման երկիրը, նոքա կորան անապատումն.  
ողորմած եղիր նրանց և ցոյց տուր Քո զօրութիւնը։ Տէր  
Աստուած, Դու երկայնամիտ ես և բազմութորում։ Ազաշում  
եմ քեզ, որ Քո ողորմածութեամբ ներիս այս անդամ  
էլ Քո ազգից իր յանցանքը»։

Աստուած ասաց. «Եերում եմ քո խօսքովդ. Խարայէ-  
լացիները յանկարծակի այժմ չեն մասնիւ, բայց նոցա  
ուկիները կ'փակն անապատումն. ոչոք նրանցից, որոնք  
արտնջացին իմ վերայ, չի մանել խոստման երկիրը։ Նրան  
կ'աւեսնին միայն Յեսու Նաւեամն, և Քաղէքը, որոնք Վնձ

Հաւատարիմ՝ մնացին։ Ախայն որորոց, որոնք սպասամբութեանը մասնակից չեն, կմացնեմ խոստման երկիր և նոքա կտիրեն նրան։ Բայց նոքա էլ կմնան քառասուն տարի անապատումն, մինչեւ որ փառեն նոցա հայրերի ուկրաները։

Տան հողիք, որ Յէսուի և Քաղերի հետ միասին լրաւելցին քանանու երկիրը և յարուցին Խրայէլացւոց մէջ խոռվութիւն, մեռան յանկարծակի, խակ միւսերը, որ Հասակով դուրս եկան Եղիպատոսից մեռան անապատում կամաց կամաց։

Եղիպատոսից դուրս գալից յետ, քառասուներորդ տարին Երրայեցիները կրին մօտեցման խոստայած երկիր սահմաններին։ Այս աեղ նոքա էլի մկան տրանջալ Մովսէսի և Ահարոնի վերայ ջրի սրակառութեան պատճառով։ Արր սոսացան հրաման Ահարոնի հրաշալի գաւառ գանով քարից ջուր հանելու, Երրայեցւոց առաջնորդները ցոյց տուին այս անգամ իրենց հաւատի թուլութիւնը կամ երկրայութիւնը Աստուծոյ ողորմածութեան մասին անարժան ազգին վերայ։ Արդեօք այս քարից ջուր է հանենք մենք ձեղ համար ասաց Մովսէսը Երրայեցիներին և խիեց գաւառանով քարին երկու անգամ։ Յաշքը գործմեցաւ բայց Մովսէս և Ահարոն, խոստման երկիրը տեսնելու ուրախութիւնից զրկվեցան։ Շուտ այս բանից յետոյ Ահարոնը վախճանեցաւ։

Երրայեցւոց նոր արանջանքի համար, Աստուծոյ զրկեց նոցա վերայ թունաւոր օձեր, արանջողներից շատերը մեռան։ Երր Երրայեցիները զղջացին իրենց մեղքը, Աստուծոյ հրամայեց Մովսէսին դնել դրօշակի վերայ պղնձի

սպասկերը օձին. և ով որ նայում էր այս սպատկերի վերայ, ստանում էր առաղջութիւն օձի թոյնից։ Նոյնպէս էլ այժմ մեզ համար խաչված Յիսուսի Քրիստոսի հաւատացողները ազատվում են մեղքից և ստունայի իշխանութիւնից։

Ա. Ա. Խ. Խ.

### ՄՈՎՍԵՍԻ ՄԱՀԾԸ

Մովսէսը, Խրայէլացիների խոստման երկիրը մանելից առաջ արգեն, էր հարիսը քասն տարեկան ծերունի։ Իր մահից առաջ նու ժողովից բոլոր Խրայէլացիներուն և հրամայեց, որ բերան անեն իր շարադրած մարդուրեկան երգը, որ սկսվում է յետապայ խօսքերով։ Նոյնեցիք երկիր, ես կիսում եմ թողլ լի երկիր իմ բերանիս պատագամները։ Այս երգը, որ լիք է յորդորանքներով և սպառնալիքներով, թողեց Մովսէս ապագայ սերունդների համար իրեւ միշտակի։

Ա. Երջին անգամ նա ասում էր աղջին իրեւ հայր իր որդոց, «Ես ալէաք է մեռնիմ անապատում։ Բայց դուք կ'անցնեք Յորդանանը և կ'մանեք գեղեցիկ երկիրը, որ Աստուծուծ ձեղ խոստացել է։ Մովսէք հաւատարիմ Աստուծուն։ Վկայ կանչելով երկնքը և երկիրը, ես թողնում եմ ձեզ իմ օրհնութիւնս էլ, անէծքս էլ։ օրհնութիւնս—եթէ դուք կ'մնաք հաւատարիմ Աստուծու անէծքս—եթէ կ'ապատամբէք Նրանից։ Ժամանակով Աստուծուծ ձեր մէջից, ձեր եղայրների մէջից, կ'վերկացնէ ինձ նման ուրիշ մարդարէ, Նրան լսէցէք։ Այս Մովսէսի նման Մարդարէն է մեր Տէրը Յիսուս Քրիստոս։ Յետոյ Մովսէս

գնայ սարի զլուխը, որտեղից նա կարողանում էր նայել հեռուից այն երկրին վերայ, որ խոստացած էր Խորայէլացիներին, այն երկրին վերայ, ուր բնակում էին Նորա սուրբ Նախահայրերը Աքրահամ, Խասհակ և Յակոբ, Նա տեսաւ Նրան բոլը իր ստղաբեր դաշտերով, գետերով և բարձր լեռներով: Այսուղ Նարաւ լեռն դիսին Մովացւոց երկրում վախճանեցաւ Մովիչս: Տեղը, ուր հանգչում է Նորա մարմննը, մնաց անյայս:

ԳԼՈՒԽ ԽԵ.

### ՅԵՍՈՒ ՆԱԽԵԱՑԻ ԽՈՍՏԱՑԱԾ ԵՐԿԻՐ ՄՏՆԵԼԸ:

ՈՎԼ կմոցնէ ուրեմն Խարայէլացիներուն Ուետեաց երկիրը Մովսէս չկայ, ազգը որբացաւ բայց կենդանի է ամենազօր Աստուածը: Նա լքցրեց իր Հոգւով Յետահաւեային և հրամացեց Նրան վերջացնել Մովսէսի սկսած գործը:

Խարայէլացիները երեսուն օր սուդ արին Մովսէսի վերայ, յետոյ դուրս եկան բանակից և հրաշալի կերպով անցան Յորդանանը: Նրը քահանաները, որոնք սամնում էին Ռւխտի Տապանակը, մոտան գետի մեջ տեղ, Յորդանանի ջուրը բաժանվեցաւ և Երայէցիները առանց ոտերը թրջելու անցան Յորդանան և հասան վերջապէս այն նոպատակին, որի համար քառասուն տարի թափառում էին: Ուրախութեամբ բարձեցին այն երկիրը, ուր բնակում էին նոցա Նախնիք, որնց հետ Աստուած ինքը խօսակցում էր և ուր հանգստամում էին նոցա ուկրաները: Այս պատահեցաւ պասէքից առաջ:

Այժմ դադարեցաւ մանանան իջնելու երկնքից, եր-

Խարայէլացիները առաջին անգամ կերան երկրի պառուղ ներից տօնելով պասէքը: Բայց Աւետեաց երկրի բնակիչները կուազաշներ էին. զեզին և խիստ մարդիկ, որ իրենց հարազատ որդոց զոհ էին բերում կոքերին: Նոքա չէն ուզում թողնել Աքրահամի զաւակներուն իրանց Նախնեաց երկիրը մանելու: այս պատճառով ծաղեցաւ երկարատե պատերազմ, միայն Աստուծոյ օգնութեամբ Խարայէլացիները ամէն տեղ յաղթում էին:

Առաջին քաղաքը, որին աիրեցին Խարայէլացիները, էր Երկրով: Սա պատած էր ամնուր և բարձր պատերով, որոնք անառիկ էին թվում: Բոլը Խարայէլացի ժողովուր զը մօտեցաւ քաղաքին: Նոցա մէջտեղումն գնում էին քահանաներ, տանելով Ռւխտի Տապանակը և փողեր փշելով: Աստուծոյ հրամանով վեց օր այսպէս պատեցին ամէն կողմից Երկրովի պատերը փողեր հարկանելով: Խօթներորդ օրը նոյն կերպի առաւօտ վաղ եօթն անգամ պատեցին: Երկրովի պատերի չորս կողմնում և երբ քահանաները եօթներորդ անգամն փողերը փշեցին, Յետուի տուած նշանով ժողովուրդը հանեց պատերազմական ձայներ: Երկրովի պատերը հրաշքով քանդիցիցան և Խարայէլացիները մասն քաղաք և աիրեցին նրան: Քաղաքի բոլը բնակիչներուն կոտրեցին բացի մի կողջեց, որի անունը Ռահար էր, իր ընտանիքով, որովհետեւ սա զեսպանից առաջ իր տուն ընդունել էր լրտեսներուն, որոնց Յետու Նաւեան զրկել էր լրտեսելու համար:

Այսպէս Խարայէլացիները, Աստուածուն իրենց Նիզակակից տնենալով, շարունակեցին իրենց աշխարհակալութիւնը: Այս սասափի պատերազմի ժամանակ գաբաւոն քաղաքի

մօտ, արեգակը մօտենում էր արդէն մայրը մանելու, Յէսու Նաւեան տեսնելով, որ չէ կարող վերջացնել պատերազմը մինչև արեւի մանելը, ասաց, «ով արեգակ, կաց Գարաւոնի հանդեպը և դու լուսին կանդնիր Աղմի ձոքին վերայ»: Ամէնը կատարվեցաւ Յէսուի խօսքով: արեգակը և լուսինը իրանց ընթացքը դադարեցրին և այս օրը ուրիշներից երկար եղաւ:

Խորայէլացիները տիրեցին գրեթէ Քանանացւոց բողոք երկին և ջնջեցին բնակչաց մեծ մասը: Ս.յն ժամանակ Յէսու Նաւեան սկսաւ բաժանել երկիրը Խորայէլացւոց տասներիու տոհմէմբին, այսինքն Առուբէնի, Յմաւոնի, Յուղայի, Զարութմնի, Խափարի, Դամնի, Գալի, Ասերի, Նեփթաղիմի, Յենիսամնի, Ավրէմի և Մանասէի ցեղերի մէջ. Նրկու վերջնները էին Յովսէփի որդիքը, որոնց Յակովը որդեղըց: Առուբէնի, Գաղի ցեղերը և Մանասէի կէս տոհմը ստացած էին իրենց բաժինը արդէն Յովսէփի ժամանակ Յորդանանի միւս կողմում: Վեխի տոհմը չուներ առանձին մասն, որպէս ետև Ղետացիք կերակրում էին ցոհերից, որ բերում էին Սատծուն և բնակում էին քաղաքներում, որոնք նրանց մասն հանած էին Խորայէլացւոց ամէն ցեղերից Յորդանանի երկու կողմումն էլ, ծովի և անսպատի միջոցումն:

Ըմէն բան այսպէս կարգադրելց յետոյ Յէսու Նաւեան Հաւաքեց բոլոր Խորայէլացիներուն Սելով, որ Հրաժարական ողջոյն տայ նրանց իր մահից առաջ: Նա միտերը բերաւ նրանց Աստուծոյ ամէն բարերարութիւնները և խնդրեց, որ նրան Հաւատարիմ մնան: Երբ ազդը խոստացաւ, որ չի անցնել Աստուծոյ օրէկներից, Յէսու Նաւեան վախճանեցաւ Հարիւր տասն տարեկան:

ԴԱՏԱԲՈՐՆԵՐԸ: ԴԵԲՈՎԱՐԱ ԿԻՆ ՄԱՐԳԱՐԵ.

Յէսու Նաւեայի մահից յետ Խորայէլացիները չունեին ընդհամուր զօրավար, որ հոգար Աստուծոյ օրէկների կատարելուն վերայ և պաշտպանէր ազդը բավարարեց: Հզօր թշնամիներից: Մինչև նոքա Հաւատարման թեամբ ծառայում էին Աստուծոյ, Աստուծոծ նոքը պահում էր նրանց: Խակ երբ Հեռացան Ճշմարիտ Աստուծոյ պաշտօնից: Քանանացիք, Մովարայիք, Փղշտացիք, Մաղիսամացիք և Ամմանացիք սկսան նեղել նրանց: Բայց այս ծանր միջումն էլ Աստուծոծ չէր մնուանում նրանց, եթէ նոքա խոնարհութեամբ դառնում էին. Նա զրկում էր նրանց վրկիններ, որոնք կոչվում էին դատաւորներ: Երբ նեղացրնում էր նրանց Քանանացւոց Յարին թագաւորը, կենում էր մի կին Գերովա անունով: աս դատում էր Խորայէլացիներուն և էր մարգարէ: Ամէն երեւելի բաներումն նրանից խորհուրդ էին հարցում և նրանից իմանում էին Աստուծոյ կամքը: Նա բնակում էր մի արմաւենիի տակ Եւաներում, Նփրէմի ցեղի բամնի մէջ: Աստուծուած յայտնեց նրան, որ կամենում է տասներկու տարի Յարինից նեղացած Խորայէլացիներուն ազտուէ և Հրամացեց նրան, որ մի անուանի մարդուն Նեփթաղիմի ցեղիցն, Բարակ անունով, զրկէ տասն Հազարով Յարնի զօրավարի Սիսարային գէմ: Գերովան կանչեց Բարակին և յայտնեց նրան Աստուծոյ կամքը: Բայց Բարակ առանց նորա յանձնն չէր առնում պատերազմ երթալ: Ս.յն ժամանակ մարգարէու հին խոստացաւ գնալ նորա Հետ միան:

այս էլ ասաց. «Ես կերթամ». միայն յաղթութեան փառքը կ'ընկնի կնոջ և ոչ քեզ: Բարակ ժողովնց տասն հազար զօրք: Թշնամեաց զօրքը շատ բազմաթիւ էր նրանցից. բայց այս բամին չնայելով նոքա յաղթուեցան: Սիսարայի զօրքը կոտորվեցաւ. իսկ ինքը փախաւ: Սա երբ տեսաւ, որ Բարակ իր ետևից գալիս է, թուաւ կառքից ցած և փախչում էր ոտով: Ճանապարհին կար մի Կինեցիի վրան: Սիսարան թաղնվեցաւ այս տեղ և սպանվեցաւ վրանի տանտիկնից, որի անունը Յայէլ էր: Այս պէս կատարվեցաւ մարդարէուհիի խօսքը, որ ասում էր, թէ յաղթութեան կատարեալ փառքը կ'ընկնի կնոջ: Դեբոլան և Բարակ այս յաղթութիւնից յետոյ երդեցին Աստծուն հանդիսաւոր և շնորհակալութեան օրհնութիւն:

Գ. Ա. Խ. Խ.

Գ. Ե. Դ. Շ. Ո. Ն.

Խարայէլացիները էլի ընկան առաջվան անօրէնութեան մէջ: Նոքա մոռացան Ճշմարիտ Աստծուն և սկսան երկրպագութիւն տալ կոքերին: Այն ժամանակ Աստուած էլ հեռացաւ նրանցից և մասնեց նրանց Մադիսամացւոց ձեռքը, որոնք եօթն տարի շարունակ գալիս էին հունձքի ժամանակ անմժիւ ուղտերով, փչացնում էին և յափշտակում ամէն բան, ինչոր գանում էին: Ոչ թէ չմնաց ոչինչ պաշար, այլ և Խարայէլացիները հազիւ կարողանում էին աղասիւ իրենց կեանքը թաղնվելով այրերում և լեռների մէջ: Երբ վերջն թեր հասան նոքա, դարձան դէպի Աստուած և խնդրեցին նրանից օգնութիւն: Աստուած լսեց նրանց:

Մի նրաւ անունով անցայտ քաղաքում բնակում էր մի մարդ Գեղէնի անունով Մանասէի ցեղցը. արան ընսրեց Աստուած, որ փրկի իր ազդին:

Այս Աստուածոյ ընտրապը երեք հարիւր ընտիր մարդիկներով ցրուեց թշնամիների բազմաթիւ զօրքը: Գեղէնի երեք հարիւր զնուորները դիշերով մօսեցան թշնամեաց զօրքին, փչեցին երեք հարիւր փողեր և աղաղակեցին: «Աստուած և Գեղէնի սուրբ», թշնամիները սարսափած փախան մէկ մէկու սպանելով և խրայէլացիներին թողին հարուստ առար:

Խարայէլացիները, երբ տեսան, որ Գեղէնի ձեռքով աղասիւցան, ասացին Նրան, «Թագաւորի մեր վերաց դուե քո ազգը»: բայց Գեղէնի, որին Աստուած ընտրել էր Խարայէլացիներուն փրկելու համար և ոչ թագաւորութեան, պատասխանեց Նրանց, «Ես չեմ կանոնամ ձեր թագաւորը լինել: Աստուած թող թագաւորէ ձեր վերայ:

Գեղէնին անուաննեցին Յերբուաղ էլ, որովհետեւ նա քանդեց բահազ կուռքի բաղինը: Նա մեռաւ խորին ծերութեան մէջ:

Գ. Ա. Խ. Խ.

Ա. Բ. Ի. Մ. Ե. Պ. Լ. Յ. Ր.

Գեղէնիը ուներ եօթանասուն որդի և մի որդի էլ սիկիմացի կնոջնից, Արխմեղէք անունով: Գեղէնի որդոց ոչ մինը չեր վնասում իշխանութիւն Խարայէլացիների վերայ բացի Արխմեղէքից: Սա էր հպարտ, փառակեր, և խստասիրտ մարդ: Գեղէնի մահից յետ շուտով զնաց նա Միկիմ իր մօր աղգականների մօտ, զինաւորեց նրանց

Գեղենի միւս որդոց դէմ և անմարդարար սպանեց բոլոր  
իր եղայլներուն, բայցի ամէնից փոքրին, որի անունն էր  
Յովաթմամ: Զարագործութիւնը առանց պատժի շնաց:  
Սիկիմի բնակիչները, որոնք բնարեցին Արիմելքին թա-  
գաւոր, առաջնոր ապահովեցան նորա դէմ: Արիմելք  
գնաց նոյս վերայ պատերազմ, պաշարեց նոյս քաղաքը,  
առաւ այն և այրեց: Սիկիմի բնակիչները հաւաքվեցան  
մի ամուր աշտարակի մէջ և կամենում էին մինչեւ վեր-  
ջին զօրսթիւնը պաշտպանել իրենց: Արիմելք պատեց  
աշտարակը և հրամացեց նորա չորս կողմում շարել փայտ,  
որ այրէ: Ծի կին տեսնելով նրան աշտարակին մօտ, ուր  
նկքը փակված էր, զցեց նորա վերայ վերելից երկնի  
կոտր և Զարդեց եղայլքապանի գլուխը: Արիմելք կան-  
չեց իր կապարձակիրին և հրամացեց նրան, որ սպանէ  
իրեն, չկամենալով կողջ ձեռքով մեռնել: Կապարձա-  
կիրն կատարեց նորա վերջին հրամանը:

Ա. Թիֆ Խթ.

ՅԵՓԹԱՅԻ.

Մի քանի ժամանակից Ամենացիները յարձակվեցան  
Խարայէլացիների վերայ գաղապի մէջ, Յորդանանի միւս  
կողմում: Խարայէլացիները հաւաքեցին զօրք, բայց զօրս-  
վար չուեին: Նոքա որոնում էին զօրսավար, միայն ոչքը  
չէր ուզում կամ ոչքը չէր կարողանում առաջնորդել  
նրանց: Նոքա միտերը բերին այն ժամանակ ՅԵՓԹԱՅԻ  
անունով մէկին, որին եղայլները մի քանի ժամանակ  
առաջ դուրս էին զցել հայրենի տնից, և զրկի նրան  
ժառանգութիւնից: ՅԵՓԹԱՅԻն ստիպվեցաւ չեւանալ

Հայրենիքից և բնակվեցաւ օտար երկրում, ուր նա ա-  
նուանի եղաւ իր քաջութեամբ: Եւ այս պատճառով էլ  
Խարայէլացիները ասում էին. «Եթէ ՅԵՓԹԱՅԻն մեր մէջ  
լինէր, յայտնի բան է, նա մեզ կաղատէր»: Եւ նոքա  
մասդիկ զրկեցին և կանչեցին նրան, որ իրենց զօրավար  
լինի:

ՅԵՓԹԱՅԻն էր քաջ և մեծահոդի, միայն չկարողա-  
ցաւ նա զսպել իր օրինաւոր բարկութիւնը և ասաց իր  
մօտ եկած պատճամաւորներին, ինչպէս չարացած մարդ.  
Պուք չէր, որ ինձ սքսորեցիք հայրենի սնիցս և ստի-  
պեցիք ինձ օտար երկրում թափառել. ինչու այժմ ձեր  
նեղութեան ժամանակն եկաք ինձ մօտ»:

«Այց երբ լսեց ամէն թշուառութիւնները, որ քաշում՝  
էին իր քաղաքակիցները, մոռացաւ իր սեպհական նե-  
ղութիւնները և զրկանքը ու շտապով գնաց օգնելու խո-  
րայէլացիներին: ՅԵՓԹԱՅԻ նման մեծահոդի և կարեկից  
մարդը շուտ յանձն չի առնել արիւնահեղութիւն: Նա  
աշխատում էր ամէն կերպի պատերազմը վերջացնել և  
երկու անդամ զրկեց Ամենացւոց թագաւորին մօտ պատ-  
ճամաւորներ, յորդորելով նրան, որ յետ կենայ իր ան-  
օրէն պահանջմանքներից և խաղաղութիւն անէ: Բայց  
Ամենացւոց թագաւորը չմնունեց ոչ մի առաջարկու-  
թիւն, ուստի և ՅԵՓԹԱՅԻն վճռեց պատերազմ տալ:

Պատերազմի դաշտը դուրս գալիս ՅԵՓԹԱՅԻն առանց  
մասածելու խոսումն արաւ, որ եթէ յաղթող կ'նաց,  
ողջակեզ կ'բերէ առաջնոր բանը, ինչոր իր անից իրեն  
առաջ դուրս կ'գայ: Նա Զարդեց թշնամիին, քշեց նրան  
իր երկրի սահմաններիցը և աղատեց իր նեղացած հայրե-

Նիքը: Յաղթութեամբ տուն յետ դառնալիս, պատահեցաւ նրան քաղաքի դրան մօտ իր միամօր աղջիկը. Առ Գաղագաղի կանանց և աղջիկների հետ իր ծնողի առաջ դուրս էր եկել, որ շնորհաւորէ նրան, Յեփթայէն, երբ նրան տեսաւ, սարսափած պատառեց իր շորերը: «Աղջիկս իմ», աղաղակեց նա, «Ես սարսափելի խոստումն արի»: Հեղ աղջիկը հասկացաւ նորա միտքը ու ասաց խոնարհութեամբ, «Ով հայր, կատարիր քո խոստումնդ, երբ Աստուած պարգ և եց քեզ յաղթութիւն: Միայն, տուր ինձ հրաման, որ երկու ամիս իմ ընկերակիցներովս զնամ սարը և լամ իմ կուսութիւնա: Այս ժամանակի անցնելց յետ Յեփթայէն կատարեց իր խոստումն:»

ԳԼՈՒԽ Ֆ.

### ՍՈՍՈՒՆ.

Յեփթայէի մահից յետ Խարսայէլացիները իրենց անօրէնութեան համար ընկան Փղտասացիների իշխանութեան տակ: Երկար ժամանակ ամանջվեցան նոքա սյս ծառայութեան մէջ. վերջապէս Աստուած տուեց նրանց մի արտաքօյ կարգի մարդ, Սամիսն անունով, որ սարսափեցրէց փղտասացիներուն. Հրեշտակը յայսնեց նորա ծնողներին, թէ նրանց կ'ծնի որդի գերբնական զօրութեամբ: Երբ նա հասակ առաւ, կամեցաւ ամուսնանալ մի փղտասացի աղջիկն հետ: Ծնողները յայսնեցին նրան, որ Աստուածային օրէնքը արգելում է Խարսայէլացիներին օտարազգիների հետ կապակցութիւն ունենալ: Բայց Սամիսն չափ նրանց և անպատճառ կամենում էր կատարել իր կամքը: Աստուած բանը այնպէս կարդեց, որ

Սամիսնի ամուսնութիւնը ինքը միջոց եղաւ փղտասացիներից վրէժ հանելու նոցա Խարսայէլացիներուն նեղացնելու համար:

Միանգամ Սամիսն, երբ դնում էր իր հարսի մօտ, դաշտումը տեսաւ մի առիւծ, որ նորա վերայ յարձակեցաւ: Սամիսնը բռնեց և պատառեց նրան: Մի քանի ժամանակից, երբ յետ էր դառնում մի և նոյն ձանապարհով, հանդիպելով իր պատառած առիւծին, կամեցաւ տեսնել նրան և գտաւ ամբողջ մեղուների գունդ, որոնք մեղք էին շնել նորա բերնում: Նա առաւ մեղքից, համը տեսաւ և բերաւ իր հօն ու մօրն էլ, որոնք նոյնակէս կերան նրանից, միսցն չափ որսեղից էր առել ոյն: Եր հարսանիքի օրը նա, այն ժամանակվան սովորութեամբ, առաջարկեց փղտասացիներին մի առապել այն պայմանով, որ եթէ նորա կիմանան եօթն օրվան մէջ, Սամիսն, պէտք է, ամէն հիւրերին մի մի ձեռք շոր ընծացէր (հիւրերը երեսուն հոգի էին). իսկ եթէ առապելը չկարողանան լուծանել փղտասացիները, պէտք է, իրենք նրան տային երեսուն ձեռք շոր:

Ահա նորա առապելը, «Բւտեղից զուրս եկաւ տառելիք և հզօրից քաղցր»:

Այսպիսի առապելը անկարելի էր իմանալ, որովհետեւ Սամիսնի սիրագործութիւնը առիւծին դէմ ոչոք չէր իմանում, բայց Սամիսն յայսնեց խորհուրդը իր հարսին, որ պատմեց այն փղտասացիներին: Հիւրերը ձեւանալով, իրեւ թէ իրենք իմացան առապելը, առացին, ի՞նչ է մեղքից քաղցր և ի՞նչ առիւծից զօրեղ: Սամիսն հասկացաւ, որ իր խորհուրդը հարսի դաւա-

ձանութեամբը յայտնված է, բայց պայմանին նայելով շրերը պէտք է տար: Նա երկար չմասնեց, թէ որտեղ առնէ շրերը: Գնաց Ասկաղն քաղաքը, ապանեց այնուեղ երեսուն փառացիներ և բերաւ նոյս շրերը հիւրերին, որոնք հաւիրած էին հարամիքումն և բարկացած գնաց իր հօր տուն: Նորա կնոջ հայրը կարծելով, որ Սամիխոն բոլըրովին թողեց իր կնոջ տուեց նրան կին մի ուրիշներ Սի քանի ժամանակից Սամիխոն եկաւ իր կնոջ մօտ և երբ իմացաւ, որ նրան ուրիշն կին են տուել, առանութեամբ չկարողացաւ համերել ոյս անապատութեան և վճռեց այս բանի համար վեհծ հանել բոլը փղտացիներից: Նմի ժամանակը նա բռնեց երեք հարիւր արուեստ, երկու երկու կառեց նրանց պոչերից և պոչերի մէջ վառած ջահ դների բաց թողեց ցորենի զաշտերի մէջ, որոնք փղտացիներին էին պատկանում: Այսպէս այլինցան նոյս ոչ միայն արտերը, այլ և խառնողի ծառերը ու ձիթենիներն էլ բոլըրովին ջնջեցան:

Փղտացիք պահանջում էին, որ Խարայէլացիները Սամիխոնին կապած իրենց ձեռքը մասնեն, ապա թէ չէ, սպասանում էին, որ կրտկի և սրբ զոհ կանեն բոլըր բնակիչներուն: Սամիխոնը անձնասուր եղաւ Խարայէլացիներին և թողեց իր ձեռքերը կապել չուաներով, բաց երբ փղտացիները, նրան առած, կամենում էին առնել իրենց հետ, Սամիխոն կարեց չուանները ինչպէս խծուծ, սպակած էշի ծնօտը վեր առ առ և այսպիսի նշնին զէնքով սպանեց հաղար փղտացի:

Մի անգամ էլ սպասահեցաւ նա մի քաղաքում, որ պատկանում էր փղտացիներին: Կառավարութիւնը

պահապան դրաւ այն տան մօտ, որ նա կենում էր և նրի զիշեր եղաւ, քաղաքի դոները փակվեցան, ամենքը կարծում էին, թէ Սամիխոնին անկարելի է փախչել, բայց Սամիխոն բարձրացրեց քաղաքի դոները իր սեմով և նիգով ու իր ուսին զրած տարաւ քաղաքի մօտ եղած սարի զըռիսը և հանգիստ էլի դարձաւ տուն:

Ութէ Սամիխոնի բարեխառնութիւնը համեմատ լիներ նորա զօրութեանը, նա երբէք չը ընկնիլ Փղտացիների ձեռքը: Ապարազդարար նա ծանօթացաւ մի Դալբա անունով Փղտացի կնոջ հետ: Փղտացիները փողով և ընծաներով խարեցին ոյս կնոջ, որ իմանայ Սամիխոնից, թէ ընչյու է նորա այն անսովոր զօրութիւնը: Նա ի դործ դրաւ ամեն կերպի հնապիներ: Որ իմանայ նորա գաղտնիքը: Վերջապէս Սամիխոն, չղիմանալով նորա խնդրեցուն և հաւատանով նրան, յայտնեց, որ ծնողները իր ծննդից նուիրել են նրան Աստուծոյ, որ նորա մազերը երերէք գերծած չեն եղել և որ իր բոլըր զօրութիւնը կախված է մազերից և եթէ սրանց կարեն, նա ուրիշ մարդիկներից աւելի զօրեղ չլինիլ: Գալիքան քնայքրեց նրան և մինչև որ նա անհօգութեամբ հանգստանում էր, կանչեց վարապետացին, հրամայեց զերծել նորա պլուսը, ու յետոյ կանչեց նորա թշնամիներուն: Սամիխոն, երբ զարթեցաւ, զգաց իր ակարութիւնը և ստիպթեցաւ մատնել իր անձը Փղտացիների ձեռքը, որոնք հանեցին նորա աչքերը, կապեցին շղթաներով և չնչին սորուի ոլէս հրամայեցին աղալ բանտում:

Ես սարսափելի անբախտութիւնից յետ, Սամիխոնը պղտացաւ և հանեց վեհծը իր թշնամիներից: Կնքը մե-

ուաւ, միայն իր հետ միասին սպանեց շատ Փղշտացիներ էլ: Երբ նորա զլիսի մագերը մեծացան, նոցա հետ միասին յետ դարձաւ նորա առաջվան գօրութիւնն էլ:

Մի անգամ՝ Փղշտացիները կաղեցին մեծ հանդէս իրենց Դագոն Աստուծոյ պատուի համար և բազմութեամբ հաւաքված նորա տաճարում նոր հակալութեան գոհէր էին բերում նրան, որ ապատեց իրենց ահավիթ շնամից՝ Սամիստնից: Այս միջոցին գուրս բերին Սամիստնին էլ, որ ծաղը անեն նրան, որ ամենին ցցց տան նորա այժմեան անզօրութիւնը և սկսան ծիծաղել վրան: Փղշտացիները ամենելին չեն կարծում, որ էլ նորա գօրութիւնը յետ կ'գառնար: Ծերերը, երիտասարդները, կանայք, երեխաները, ամենքը ծիծաղում էին Սամիստնի վերաց և տանջում էին նրան: Թշուառ կոյրը խնդրեց իրեն ման ածողին, որ մօտեցնէ նրան տան սիւներին, ուր խրախանում էին նրան ծաղը անողները: Շինուածը հաստատած էր սիւների վերայ: Ցափարակ տանիքի վերայ կային այն ժամանակ մինչև 3000 հոդի: Ծառան մօտեցրեց նրան սիւներին: Սամիստն աղօթք արաւ Աստուծոյ և խնդրեց նորա օգնութիւնը. յետոյ երկու ձեռքով շարժեց տեղից երկու միջին սիւները, որով քանդվեցաւ բոլոր շնուռածն և սպանեց թէ նրան և թէ բոլոր այն տեղ եղաղ Փղշտացիներուն: Այս մի անգամն նա սպանեց աւելի Փղշտացի, քան թէ բոլոր իր կեանքումն մինչև այն օրը:

ՆԼՈՒԹ ՆԱ.

ՀՈՒԹՅ.

Այն ժամանակ, երբ գատաւորները կառավարում էին Խրայէլացւոց ազգին, նոցա երկրում միանդամ սովորնեկաւ: Յուդայի Բեթղեհէմ քաղաքի ընակիցներից մինը, Նղեմէլք անունով, իր նոումին ինկով և երկու որդիներով տեղափոխեցաւ Մովաբացւոց երկիրը: Նղեմէլք մեռաւ և Նոումինը իր երկու որդոց հետ, որոնք Մովաբացիների երկրում: Նորա հարսերից մէկի անունը էր Որիա և միւսինը Հումի: Պոքր ժամանակից մեռան նոումինի որդէնը էլ. բայց հարսերը կենում էին նորա մօտ: Իր տեղափոխութիւնից տան տարի յետոյ Նոումին իմացաւ, որ Խրայէլացւոց երկրում սովոր վերջացել, և միաը զրաւ գտանալ իր հայրենիք. հարսերն էլ գնացին հետը:

Ճանապարհին մօտածում էր իր աղքատութեան վերաց և նորա վերայ, թէ ինքը չէ կարող կերակրել իր հարսերուն: «Իմ աղջիկներս ասաց նա նրանց» գարձէք ձեր ծնողների մօտ: Աստուած օրհնէ ձեզ, որ գուք էիք բարի կանայք իմ հանգուցեալ որդոցս և յարդութեամբ վարիում էիք ինձ հետ: Ես շատ ցաւում եմ, որ չեմ կարող ձեր համար մի բան անել, միայն գուք երենքդ տեսնում էք, ինչպէս ես խեղճ եմ: Հարսերը լայց եղան և ըրփան զրկելով իր սկեսրին համբուրեց, հրաժարական ողջոյն տուեց և դարձաւ տուն: Նոումին ասաց Հուութին: «Որու տեսնում ես, Որիան դարձաւ իր ազգի, ազգականների և Աստուածների մօտ, հետեւ

գու էլ նորա օրինակին»: Հռութ պատասխանեց. «Չէ. ես  
քեզ չեմ թողնել, ուր որ դու կ'երթաս, ես էլ կ'գամ  
հետդ, քո աղջի կ'լինի ինձ աղջ և քո Աստուածդ ինձ  
Աստուած: Ուր դու կ'մեռնիս, այնուղ էլ ես պէտք է,  
մեռնիմ: Միայն մահը կ'բաժանէ ինձ քեղնից»: Եւ  
Հռութ դնաց Նոոմինի հետ:

Հռութ Նոոմինի դարձը յայտնի եղաւ բոլոր բեթ-  
զէհէմի մէջ: Բոլոր բնակիչները պատեցին նրան ասելով,  
«Դու ես Նոոմին»: — «Ինձ էլ մի՛ անուանէք Նոոմին, այս-  
ինքն, գեղեցկաղոյն, այլ կանչեցէք ինձ դառնացած»:  
պատասխանեց թշուառ կիփիր: «Դառնութիւններով լեքն  
է իմ կեանքս. հարուստ հեռացայ ձեզանից և այժմ  
աղքատ յետ դարձրեց ինձ Աստուած»:

«Նոոմին հասաւ բեթզէհէմ գարիի հնձի ժամանակ:  
Օրվան հացի կարօս լինելով, Հռութը գնաց արտ, մնա-  
ցած հասկերը հաւաքելու: Խեղճ օտարականը չէր իմա-  
նում, որ երթայ. բայց Աստուած բերեց նրան մի՛ հա-  
րուստ մարդու արտը, որ իր մարդու աղջականն էր և ա-  
նունը Բոսս էր: Սա եկաւ քաղաքից, որ նայէ ինչպէս  
քաղել են գարին, կանչեց հնձողների վերակացուին և  
հարցրեց. «այս ի՞նչ կին է»: Վերակացուն պատասխանեց.  
«Սա Մովաքայի աղջին է, որ Նոոմինի հետ եկաւ, նա  
հրաման ուղեց, որ հաւաքէ մնացած հասկերը Նա այն-  
տեղ արտում առաւօտից մինչև այժմ աշխատում է  
և ոչ մի բոպէ չէ հեռացել»:

Բոսս մօտենալով Հռութին ասաց. «աղջիկս, մի՛ եր-  
թար ուրիշի արար. Մնա՞ իմ աղախիներիս մօտ և զնա  
նոցա եաւից, ուր նորա կ'հնձեն: Ես կ'հրամայիմ իմ

բոլոր ծառաներիս, որ նորա քեզ հետ քաղցրութեամբ  
վարփին: Երբ խմել կ'ուզենաս, խմիլ այն տեղից, ուր  
խմում են իմ ծառաներս: Հռութը երկրպագեց նրան  
մինչև գետին և աղաղակեց. «Ի՞նչով արժանացայ ես  
ոյլքան ողորմութեան, ես այստեղ մի օտարական կին  
եմ: Բոսս պատասխանեց նրան. «Ես զիտեմ դու ինչպէս  
յարգութեամբ վարլիցար քո սկեսրիդ հետ, մարդուդ  
մահից յետոյ: Աստուած կ'վարձատրէ քեզ, քո որդիւ-  
ական սիրոյդ համար: Խրայէլի Ցէր Աստուածը, որին  
դու հաւատացիր, կ'հասուցանէ քեզը: «Ես արգէն բա-  
ւական վարձատրված եմ նրանով էլ, որ դու այդպէս  
ողորմած ես ինձ»: պատասխանեց Հռութ: Դու ինձ միհի-  
թարեցիր քո քաղցր խօսակցութեամբ, ինձ, որ աւելի  
փոքր եմ, քան թէ քո վերջին աղախինդ»: — Ո՛հ թէ  
իմանացին բաղդատուները, թէ ինչպիսի բարերարութիւն  
է թվում նոցա մի քաղցր խօսքն էլ նեղացած սրախ  
համար»:

Երբ Ճաշի ժամանակ եկաւ Բոսսը կանչեց Հռութին,  
որ իր ծառաների հետ ուտէ. ինքը ածում էր նորա  
համար կերակուր: Հռութը կշուացաւ և պահեց փոքր  
ինչ իր սկեսրի համար էլ: Ճաշեց յետ այն բովին նա  
էլ աշխատանքը սկսաւ: Բոսսը հրամայեց հնձողներին  
արտումն աւելի հասկեր թողնել, որ նա հետութեամբ  
կարողանայ հաւաքել: Հռութ հաւաքեց մինչև երե  
կոյ. յետոյ չորացրեց հաւաքած հասկերը ծեծեց նը-  
րանց և եղաւ ամողջ արդու գարի:

Երեկոյեան Հռութը տարու իր սկեսրին գարին և իր  
պահած կերակուրը: «Աղջիկս, ով ողորմեց քեզ, աղա-

զակեց Նոոմին, Աստուած օրհնէ այն կարեկից մարդուն։  
Ես հաւաքում էի հասկեր բոսսի արտում, պատասխանեց  
Հռութիւն։ «Նա մեզ ազգական է» ասաց Նոոմինը. «Նա  
միշտ սիրում էր մեր հանգուցեաներուն, նոցա կենդա-  
նութեան ժամանակ, այժմ նոցա մահից յետոյ էլ մի-  
տումն ունի հին բարեկամութիւնը և այն պատճառով  
անում է ողորմութիւն մեռած բարեկամների այրի-  
ներին։ Աստուած օրհնէ նրան։ Խակ դու սիրելի աղջիկա,  
ուրիշ արտ մի՛ գնար հասկ հաւաքելու, օտար մարդիկ  
խառութեամբ և անպատշաճ կերպով կ'վարվին հետք։  
Նոոմինը տալիս էր իր հարաբին շատ ուրիշ օգտաւէտ  
խրասներ էլ և Հռութը միշտ պատրաստ էր նորա հրա-  
մանները կատարելու։

Պարիի և ցորէնի հնձի ժամանակ Հռութ հաւաքում  
էր հասկեր բոսսի արտում։ Երբ հունձը վերջացաւ, բոս  
ասաց նրան. «աղջիկա, Աստուածոյ օրհնութիւնը քեզ վե-  
րայ լինի։ Գո ամէն վարմունքդ յայտնում է սէրդ դէպի  
քո սկեսուրդ։ Դու ամենենեին երիտասարդների սիրոյն ետ-  
եկց ընկար։ բոլոր քաղաքը համարում է քեզ առա-  
քինի կնիկ։ Եթէ դու համաձայն ես և ոչոք չի ընդդի-  
մանալ իմ նապատակիս, ես կ'ամուսնանամ քեզ հետ։  
Բոսս յայտնեց իր միտքը ծերերին և ամէնքը հաւանե-  
ցան, բաղդաւորութիւնն ցանկանալով նրան։ «Աստուած  
օրհնէ կնոջդ, ինչպէս նա օրհնեց մի ժամանակ Հռութե-  
լին և Կիսյին, Խրայէլացւոց ազգի մայրերուն», ասում  
էին նրան ծերերը և բոլոր ժողովուրդը, «Աստուած պար-  
գևէ քեզ որդի նրանից, փառաւորվի անունդ բէթդէ-  
հէմի մէջ»։

Բոսս ամուսնացաւ Հռութի հետ. Աստուած տռւեց  
նրանց որդի, որին անուանեցին Ովեէդ։ Սա էր Յէսսէի  
հայրը. իսկ Յեսսէն էր դաւթի հայրը, որի վերայ ժե-  
տոյ կ'խօսենք։ Երբ Ռվեէզը ծնաւ, Բեթզէհէմի կանաքը  
շնորհաւորում էին Նոոմինին ասելով. «Օրհնեալ է Աստ-  
ուածը, որ չժողովց քեզ անպաւակի։ Ահա քո հարսիդ  
Հռութի որդին, Հռութի, որ քեզ այնպէս սիրում է  
և որ քեզ աւելի ուրախութիւնն է պատճառում քան  
թէ եօթն որդիք։ Աստուած այս երեխային խրկեց քեզ  
ուրախութիւնն և կերակրիչ ծերութեանդ ժամանակը։  
Նոոմինը առաւ երեխային իր գիրկը, եղաւ նորա գոյ-  
եակը և մեծ սիրով կրթում էր նրան։

Գլ. 0111 ԾԲ.

ՀԵՂԻ ԴԱՏԱԽՈՐԸ ԵՒ ՔԱՀԱՆԱՑԱՊՏԸ

Պատերազմսակը զօրավարներից յետոյ, Հեղի քահա-  
նայապետը գառաւ գասաւոր Խրայէլացւոց ազգին քա-  
ռասուն տարի շարունակ։ Նա բնակում էր այն ժամա-  
նակ Սելով քաղաքում, ուր էր վկայութեան խորանը։  
Այս տեղ բերում էին ընտանեաց մեծերը իրենց խաշ-  
ների նախածիններուն, պատովների երեխայրիքը և տա-  
սանորդը ամէն իրենց եկամուխց այս տեղ հաւաքում  
էին բոլոր Խրայէլացինները Ուխտի տապանակի առջել  
Աստուածոյ մասաղ բերելու համար։

Հեղին երկու որդի ուներ, մէկի անունն էր Ովնի և  
միւսինը Փենեհէս, որոնք երկուսն էլ ամենեին Աստու-  
ածոյ երկիւղ չունեին և ոչ էլ յարգում էին Խորանի  
սրբութիւնը և Աստուածապաշտութիւնը։ Հեղին արդէն

շատ ծեր էր, նա զիտէր իր որդոց անկարգ վարքը, յա-  
ձախ նրանց յանդիմանում էր, միայն այնպէս թոյլ,  
որ նոքա բանի տեղ չէին դցում:

«Եսին ժամանակումն կենում էր էլի մի բարեպաշտ մարդ  
նղկանա անունով, որ երկու կին ուներ՝ Աննա և Փեն-  
նանա անունով: Վերջնոր ունէր որդիք, իսկ Աննան, թէ-  
պէտ և աւելի սիրելի էր մարդուն, միայն ամուլ էր և  
այս շատ տրամեցնում էր նրան: Աննան ամէն տարի գը-  
նում էր Սելով աղօթելու և զոհ անելու ճշմարիտ Առ-  
տծուն. Միանդամ տօնի ժամանակ, Աննան մէնակ գնաց  
խորանին մօտ, որ տեղ էր և Հեղի քահանայապետը:  
Աննան Ներմեռանդութեամբ աղօթք էր անում Աստու-  
ծոյ, որ պարզեւէ իրեն մի որդի և խոստացաւ նրան  
Աստուծոյ ծառայութեանը նուիրել խորանումը: Հեղին  
երկար ժամանակ նայում էր նրան և տեսնելով, ինչպէս  
նորա երեսը վառվում էր, շրմոնքները շարժում էին  
առանց մի բառ արտաստնելու, կարծեց, թէ նա հար-  
բած է և ասաց նրան. «ամօթ չէ քեզ, որ հարբած  
Աստուծոյ տուն ես եկել, գնա և արբեցութիւնդ անց-  
կացրու»:—«Ոհ, պատասխանեց Աննան, «ես հարբած չեմ,  
այլ ես թափում եմ Աստուծոյ առաջ իմ պատի ցա-  
լը և խնդրում եմ նորա օգնութիւնը»: Խորայէլացիների  
մէջ կնկայ համար ոչ միայն անբախտութիւն, այլ ա-  
մօթ էլ էր համարվում որդի չունենալը: «Գնա խաղա-  
ղութեամբ» ասաց Հեղին: Մի քանի ժամանակից Ան-  
նան ծնաւ որդի և անուանեց նրան Սամուէլ:

Աննան, երբ երեխային ծծից կարեց, իր մարդու և փոք-  
րիկ Սամուէլի հետ միասին գնաց Սելով: Գնաց քահա-

նայապետին մօտ և ասաց, ես այն կնիկն եմ, որ քո  
առաջնորդ աղօթք էի անում Աստուծուն և խնդրում էի,  
որ ինձ որդի պարզեւէ: Աստուծուծ լեց խնդիրքս և ահա  
ես նրան նուիրում եմ իր պարզեւը: Ահա իմ որդիս,  
թող մնայ սա այս տեղ խորանում և ծառայէ Աստու-  
ծոյ բոլը իր կեանքում: Շնորհակալութիւն անելց յետ  
սրտաշարժ և խորիմաստ երգով, Աննան թողեց Սամու-  
էլին Աստուծոյ տանը, քահանայապետի հովանաւորու-  
թեան տակ. որ կրթում էր նրան և սովորնում էր  
նրան Աստուծոյ օրէնքները: Աննան ամէն տարի տօնին  
գաղիս էր Սելով և բերում էր իր որդու համար նոր  
շոր: Սա միխթարվում էր, երբ լսում էր ամէնից, որ  
իր որդին խիստ ժրածան է, խոնարհ և երկիւղած և  
տեսնում էր, որ իր որդին զօրանում է մարմնով և  
հոգւով: Աննան այնուհեաև ունեցաւ էլի ուրիշ երեք  
որդի և երկու աղջիկ.

ԳԼՈՒԽ ԾԳ.

#### ՍԱՄՈՒԷԼ:

Սամուէլը, գեռ երեխաց ժամանակը, քնում էր միշտ  
վկայութեան խորանում: Հեղի քահանայապետը քնում  
էր փոքր ինչ հեռու այնտեղից առանձին սենեակում: Միանդամ  
գիշերով Սամուէլը լսեց ձայն, որ կանչում  
էր. «Սամուէլ, Սամուէլ»:—Սամուէլը կարծելով, թէ  
քահանայապետը կանչում է իրեն. վաղեց նորա մօտ և  
ասաց. «ես այս տեղ եմ, դո՞ւ էլիր կանչում ինձ». բայց  
Հեղին պատասխանեց. «ես քեզ չեմ կանչել, գնա քսիր»:  
Զայնը էլի մի անգամ կանչեց. «Սամուէլ, Սամուէլ»: Ե-

թեխան վեր կացաւ և վաղեց քահանայապետի մօտ ասելով։ «Դու. ինձ կանչեցիր, ես այս տեղ եմ։ — ԶԵ, որդեակ. ես քեզ չեմ կանչել, պատասխանեց Հեղին, «Պնա՛ քնիր»։ և Սամուլը քնեցաւ. բայց էլի զարթեցրեց նրան այն ձայնը, որ կանչում էր, «Սամուէլ, Սամուէլ» նա էլի գնաց քահանայապետի մօտ. և ասայ։ «Դու ինձ կանչեցիր և ես աշա՞ եկաց։ Այն ժամանակ Հեղին հասկացաւ, որ Սասուած ինքը կանչում է երեխային, և ասաց նրան. «Պնա՛ որդեակ և քնիր. միայն եթէ էլի կ'լսես ձայն, պատասխան տուր. «Սաս, Տէր, քո ծառադ լսում է քեզ։ Սամուէլ քնեցաւ և չորրորդ անգամն էլ լսեց էլի ձայն. որ կանչում էր. «Սամուէլ, Սամուէլ»։ Այն ժամանակ Սամուէլը ասաց. «Խօսիր, Տէր, ծառադ լսում է քեզ։ Սասուած ասաց նրան, կ'գայ օրը, երբ Ես կ'պատժեմ Հեղին և նորա որդոցը Հեղին գիտէ իր որդոց յանցանք ները և չէ պատժում նրանց։

Ըստառը, երբ Սամուէլ վեր կացաւ, դուրս գնաց խորանից, նա չէր սիրտ անում պատմել քահանայապետին Աստուծոյ խօսքերը. բայց Հեղին կանչեց նրան իր մօտ ասելով. «Սամուէլ որդեակ. «Այս տեղ եմ ես», ուստասխանեց Սամուէլ։ «Խնդրում եմ քեզ, ասաց Հեղին, «մի՛ ծածկիր ինձնից, ինչ որ Աստուած քեզ յայտնեց։ Այն ժամանակ Սամուէլ պատմեց քահանայապետին սմբէր, ինչոր Աստուած իրեն յայտնեց և ոչ ինչ ծածկեց. Հեղին, հապատակելով Աստուծոյ կամքին, ասաց, «Նա է Տէրը, թող լնի նորա կամքը»։

Միայն Հեղին որդիք չին Աստուծոյ անհապանդ, այլ և բոլոր Խորայէլացւոց ազգն էլ, ուստի և պատճ-

վեցան պատերազմելս Փղացացոց հետ։ Խորայէլացիները յաղթվեցան և վախան կովի դաշտից։

Այն ժամանակ ծերերից մի քանիվ ասացին. «Եթէ ուստի Տապանակը Հետերս տանենք, յայտնի բան է, յաղթութիւնը մեր կողմաւմ կ'մնայ և մենք կ'արդենք Փղացացիներուն։ Խորկեցին Սելով Ուստի Տապանակի եւ առելից, որ բերեն նրան։ Հեղին որդիք Ովնին և Փենեհէկը, պէտք է, բերեին Տապանակը։ Միայն Խորայէլացիները այս կովումն էլ ջարդվեցան։ Նոքա կողքը իրեւուն հապար հողի կովում, իսկ մնացած զօրքը աղատվեցաւ փախչելով։ Ուստի Տապանակը ընկառ թշնամիների ձեռքը և Հեղին որդիք Ովնին ու Փենեհէկը ապանիցան։ Մի զինուոր, որ աղատվեցաւ այս կոտորածից, Սելով քաղաքը վագելով, յայտնեց այս բանը քահանայապետին, որ իստ անի զրան մօտ նստած անհամբերութեամբ սպասում էր կոռուի համբաւն։ Հեղին, սարասիանքով և արտմութեամբ պաշարած, ընկառ կոնսակի վրայ աթոռից, որի վրայ նստած էր, կոտրեց իր ողնը (մէջքի ոսկորը) և մեռաւ։ Նա իննառուն ութը տարեկան էր։

Գ. Ա. Խ. Ֆ.

ՍԱՄՈՒԷԼԻ ԶՈՀԲ ԵՒ ՑԱՂԹՈՒԹԻՒՆԻ ՓՂԵՏԱՑԻՈՅ ԳԵՍ.

Փղացիք Խորայէլացւոց երկրում ամէն բան թրի և կրակի կերակուր արին։ Ոչոք չէր համարձակում նրանց դէմ կենալ. սարասիր պաշարեց բոլոր խեղճ ազգին ամէն տեղ։ Նոյն իսկ Տապանակը, Խորայէլացւոց սրբութիւնը, ընկառ թշնամիների ձեռք, նոքա, պէտք է, հասկանային. որ այս ամէն թշնամութիւնները ծագեցան

իրենց մեղքից, և որ մինչեւ նոցա յոյսը Տապանակին վերայ գնեն էլ Աստուծոյ ընդունելի չեղաւ. Նոքա ու կով պատեցին Տապանակը, ուր զրին Աստուծոյ տուած պատուիրանները, միայն իրենց սրտերը չկրթեցին և չսովորեցին այն պատուիրանները կատարելու:

**Սամօ:** Էլ դառաւ Խրայէլացւոց ազգի ապատիչը: Նա հաւաքից ցրուած Խրայէլացւոց և նրանց իրենց մոլորութիւններից, որոնց մէջ ընկել էին, դարձնելով ասաց. «Միայն մի բան կարող է ձեզ փրկել. դարձէք բոլոր սրտով գէպի Աստուծած և կատարեցէք նորա ամէն հրամանները. այն ժամանակ նա ձեզ կ'ազատէ»:

**Ժողովուգը** ախտոր և զղջարով բոլոր օրը անցկացրեց պահով և ազօթքով ու բարձր ձայնով աղաղակում էր. «Մենք մեղանչեցինք Աստուծոյ դէմօ: Սամուէլ ողջակէզ բերաւ գառը և ազօթք արաւ Աստծուն: Աստուծած լսեց նրան, էն ժամանակ երբ գեռ ողջակէզի ծովուր բարձրամում էր, Խրայէլացիների վերայ յարձակեցան Փղշտացիները և կոխւր սկսաւ, յանկարծ սարսափելի գոռոցք եղաւ. Փղշտացիները սարսափած ջարդվեցան ու փախան: Խրայէլացիները քշեցին նրանց իրենց սահմաններից և Աստուծած խրկեց Փղշտացիների վրայ զանազան թշուառութիւններ, մինչեւ որ նոքա յետ գարձրին Ռւխտի տապանակը: Առաջ զրին նոքա նրան դագոն կուռքի բազնում, միայն միւս օրը գտան դագոն կուռքը ընկած գեանի վերայ Տապանակի սուջելը: Երբ նոքա կուռքը իր տեղը զրին, միւս օրը գտան նրան ոչ միայն ընկած գեանի վերայ, այլ և առանց գլխի և ձեռների: Սրանից յետոց Աստուծած խրկեց Փղշտացւոց

վերայ անթիւ միներ և մահ: Այն ժամանակ Փղշտացիները, ընդհանուր խորհրդով, վճռեցին. որ Ռւխտի Տապանակը գնեն կառքի վերայ, որին Ծեցին երկու դեռ չլծված երինջներ և բայ թողին: Անասունները, առանց կառավարի, տարան Տապանակը Խրայէլացւոց երկիր: Այսպէս Աստուծած ցոյց տուեց Խրայէլացիներին. որ միայն արտաքին Աստուծապաշտութիւնը չէ բաւական մարդուս, այլ պէտք է ուղղել իր զգացմունքներն էլ, կատարելով Աստուծոյ սուրբ պատուիրանները.

**Սամուէլ** այն տեղում, մինչեւ ուր Խրայէլացիները Փղշտացիներուն քշեցին, զրեց քար և անուանեց նրան վէմ օգնականի:

ԳԼՈՒԽ ՄԵ.

ՍԱԿՈՒԴԻ ԹԱՐԱԽՈՐ ԲՆՏԲՎԵԼԻ

**Շոաքինի** Սամուէլը էր դատաւոր Խրայէլացւոց աղջին, բայց երբ ծերացաւ, իր իշխանութիւնը յանձնեց իր երկու որդոց, որոնք ամեննեխն նորա արդարասիրութեանը և նորա առաքինութիւններին մամնակից չէին: Ազգը անրաւական էր նրանցից և Սամուէլից թագաւոր էր պահանջում: Սամուէլ այս մասին հարցրեց Աստծուն և Աստուծած հրամանեց նրան, որ թագաւոր լնաւրէ և ինքը ցոյց տուեց ընտրվելու մարդուն: Բենիամինի տոհմի բաժնումը բնակում էր մի հարուստ մարդ կիս անունով: Սա ունէր որդի, որ երեւելի էր ամենից իր մեծ հասակով, գեղեցկութեամբ և զօրութեամբ: Նրան նըմանը չկար բոլոր Խրայէլացւոց մէջ: Ոի անզամ կիսի էշերը կորան: Նա խրկեց իր որդուն Սաւուղին, մի ծա-

ռայի հետ կորած անասուններուն փնտուելու համար: Սաւուղ իր ծառայով գնաց Եփրեմի տոհմի լեռները, միայն չդժուաւ, ինչ որ փնտուում էր: Սաւուղ երեք օր՝ զուր թափառեցաւ և արդէն միտը դրել էր դառնալ. միայն նորա հետ եղած ծառան առաջարկեց նրան մըտնել մերձակայ քաղաքը: «Այն տեղ է այժմ սուրբ մարդը, Սամուել մարդարէն, ասում էր ծառան, նա կ'ասէ դը, Սամուել մարդարէն, ասում էր ծառան, նա կ'ասէ մեզ, ուր պէտք է փնտուենք կորած էշերուն»:

Սաւուղ գնաց մարդարէի մօտ: Սամուելին, դեռ մի օր առաջ յայտնել էր Աստուած, որ Սաւուղը ընտրած է իրանից խրայելացւոց թագաւոր: Սամուել տարաւ թաւուղին իր հետ բամա քաղաքը, ուր պէտք է ժողովէր ժողովուրդը և լինէր ազգային խրախութիւն: Այս տեղ Սաւուղին հիւրերի մէջ առաջին տեղը նշանակվեցաւ և ուրիշ կերակուրների հետ միասին ըերին իրեն մարդարէի հրամանով առաջիւնից նորա համար պատրաստած աղբըրը: Միւս օրը, երբ Սաւուղը տուն էր դառնում, Սամուել նրան ճանապարհ գցեց քաղաքից դուրս և հետք առած ամանով իւղը ածեց Սաւուղի գլխին: Այս կերպով նա օծեց նրան թագաւոր: Սաւուղ եկաւ տուն: Ազգականները հարցուին նրան, թէ ի՞նչ ասաց նրան մարդարէն: «Նա ասաց ի՞նձ», պատասխանեց Սաւուղ, «որ մեր էշերը շուտ կ'գտնվին», որ ճշմարտիւ էլ կատարվեցաւ: բայց ծածկեց այն գաղանիքը, որ իրեն յայտնվեցաւ, այսինքն, որ ինքը օծվեցաւ խրայելացւոց թագաւոր:

ԳԼՈՒԽ ԽԲ.

ՍԱԿՈՒՊ, ԽՄՐԱՑԵԼԱՑԻՈՑ ԹԱԴԱԿՈՐ:

Սամուել հաւաքեց խրայելացւոց բոլոր ցեղերը Մասեփաթ քաղաքում, որ ընտրեն թագաւոր: Վիճակ գրցեցին տոհմերի մէջ և վիճակը դուրս եկաւ Բննիամինի տոհմին: յետպ էլ գցեցին վիճակ Բննիամինի տոհմի ընտանեաց մէջ և վիճակը դուրս եկաւ Ամատարէսի ցեղին: Էլ գցեցին վիճակ Ամատարէսի ցեղի մարդոց մէջ և ելաւ վիճակը Կիաի որդուն Սաւուղին: Բայց Սաւուղ պահվեցաւ: Սամուել գտաւ նրան և հանեց հաւաքված ժողովուրդի առջև: Սաւուղ գեղեցիկ էր աեսքով և ուառվ չափ բարձր էր ամէն իր առջև կանգնածներից: «Ահա թագաւորը, ասաց Սամուել, «որին Աստուած ձեզ տուեց, սրան նմանը չկայ բոլոր խրայէլի մէջ: Ժողովուրդը տեսնելով գեղեցիկ և երիտասարդ մարդուն որախութեամբ աղաղակեց: «Կեցցէ մեր թագաւորը»: Միայն մի քանիսը անբաւական մնացին այս ընտրութեամբ: Նոքա անարգում էին Սաւուղին և ասում էին, «Ի՞նչ կարող է նա մեր համար անել»: Սաւուղ իբրև թէ չլեց այս խօսքերը և գարձաւ իր հօր տուն և մի քանի ժամանակ կեցաւ այնտեղ անցայտութեան մէջ: Սաւուղ օծված սուրբ իւղով ստացաւ մարդարէութեան շնորհք: Ամմանացիք պաշարեցին Յարիս քաղաքը և սպառնում էին, թէ քաղաքի բնակիչների աջ աչքերը պէտք է հանեն: Նոքա պաշարվածներին եօթն օր ժամանակ տուին մուածելու համար: Յարիսի բնակիչները սարսափած խրկեցին մարդիկ Բննիամինի տոհմից օգնութիւն:

խնդրելու։ Սաւուղ, երբ լսեց Յարիսի քնակիչների ողորմելի դրութիւնը, շատ տիրեցաւ։ Աստուծոյ հոգին իջաւ նորա վերայ։ Նա առաւ երկու եղներ, կտոր կտոր արաւ նրանց, և խրկեց Խարայէլացոց ամէն ցեղերին, հրամայելով յայտնել, թէ ով որ չե զինաւորսիլ իր հետ միասին Ամմնացոց գէմ, նորա եղներն էլ այսպէս կ'կտրտվն։ Խարայէլայիք ամէնքը զէնք առան, ժողովեցան վեց հարիսր եօթանասուն հազար հոգիք։ Այս զօրքով Սաւուղը յարձակեցաւ Ամմնացոց վերայ, բոլորվնն ջարդեց նրանց և տղատեց Յարիս քաղաքը։ Այն ժամանակ Խարայէլացոց ազգը ուրախացած, օրհնել սկսաւ Սաւուղին և գոչում էր. «մատնիր մեր ձեռք նրանց, որոնք չեն կամենում քեզ թագաւոր ընտրել իրենց. մենք նրանց կ'սպանենք»։ բայց մեծահոգի թագաւորը պատասխանեց. «այս օր, երբ Աստուած փրկութիւն խրկեց Խարայէլացոց ազգին, ոչ ոք չպէտք է կորչե»։ Այս յաղթութեամբ և մանաւանդ իր մեծահոգութեամբ, Սաւուղ ամէնի սիրաը գրաւեց։ Ապա Սամուէլ յայտնի օճեց նրան Խարայէլացոց թագաւոր։

Կատախարութիւնը ընտրած թագաւորին յանձնելով Սամուէլ ժողովեց ազգը և ասաց. «Ես աշխատում էի հասարակաց բարութեան համար իմ մանկութիւնից մինչև այսօր։ Այսուհետեւ ժողովրդին կ'կառավարէ թագաւորը։ Ես կանգնած եմ ձեր առջեր, ով Խարայէլացիք, պատասխանեցէք իմ մասին իրեն Աստուծոյ և նորա օծեալի առաջնին, արդեօք զբկեցի ես մէկին իր սեփականութիւնից, նեղեցի ես արդեօք մէկին, կարեցի արդեօք մէկի դատաստանը անարդար կամ երեսպաշտու-

թեամբ և առի՞ արդեօք մէկիցը լնծոյց Թող, պատրաստ եմ ամէն բան ուղղելու, ամէն բան յետ դարձնելու։ Բայց լոլոր ժողովուրդը միաձայն աղաղակեց. «Դու Էլր մեր հայրը, դու երեկք անարդարութիւն չես արել, մենք օրհնում ենք քեզ»։

Սաւուղ, իր քաջ որդուն Յովնաթանի օգնութեամբ մեծ գործքեր կատարեց, շատ երեւելի յաղթութիւններ էր անում և միշտ աղաստում էր Խարայէլացիներուն իւրենց թշնամիներից։

Միայն յաջողութիւնները, իշխանութիւնը և վառքը մնորեցուցին Սաւուղին։ Ինչքան որ մեծանում էր նորա գորութիւնը, նորա սիրաը լքցում էր զեղսութեամբ։ Սամուէլ յաճախ զդուշացնում էր նրան, բայց սա չէր լսում նրան։ Միանդամ, երբ յաղթեց Ամադէկին, Աստուծոյ կամքը կատարելու տեղ, իր շահի եւելից ընկնելով, Ամազեկացոց ընակիր խաչները իրեն աւար առաւ, որ Աստուած հրամայել էր բոլորը ջնջել, բայց սրանից համարձակվեցաւ նկքը Աստծու զոհ էլ բերել։

Սամուէլ ասաց Սաւուղին. «Ես պէտք է յայտնեմ քեզ Աստուծոյ կամքը, որ նա ինձ այս գիշեր ասաց։ Երբ դու նկքդ քեզ ոչնչէ էիր համարում, ընարեց քեզ Աստուած Խարայէլացոց թագաւոր, բայց այժմ դու հրամարուացար, ընչամէր եղար և մոռացար Աստծուն, որ քեզ այնքան բարութիւններ արաւ։ Աստուած արհամարհում է քեզ և քո թագաւորութիւնը կ'տայ ուրիշնես։

Այս ասաց և երեսը դարձրեց, որ հեռանեայ նրանից, միայն Սաւուղ զդալով բանեց նորա փեշից և ողասուեց։

Աստուած ողորմում է հնագանդներին և հակառակ է հպարտներին:

Եյս ժամանակից յետոյ Սամուել էլ խկի չգնաց Սաւուղի մօտ և էլ չտեսաւ նրան մինչև նորա մահը, թէև էլի միշտ աղօթք էր անում նորա համար և լաց էր լինում նորա վերայ: Սաւուղ ընկաւ մասածմունքի մէջ, յաճախ տիրում էր նրան ախրութիւն և անտանելի անհանդստութիւն: միայն նա չէր փնտում միշտարութիւն Աստուծոյ մէջ և չէր աշխատում իրեն ուղղել:

Գևորգ Եկ.

ԴԱԿԻԹ:

Սամուելը ախրում էր միշտ էլի, որ Սաւուղ բարկացրեց Աստծուն: Աստուած ասաց Սամուելին, «մինչև էլր գուլաց կ'լինես Սաւուղի վերայ: Նա էլ թագաւոր չիլինիլ իսրայէլցաւոց վերայ: Գնա բեթղեհէմ, նվեշդի որդու Յեսսէի տունը. ես ընտրեցի նորա որդոց մէկին թագաւոր»:

Սամուելը գնաց բեթղեհէմ, բերեց Աստծուն զոհ և հրաւիրեց Յեսսէին իր որդոց հետ զոհ ուտելու: Նրա նորա եկան, Սամուելը տեսնելով Յեսսէի մեծ որդուն Եղիարին, որ քաջ, բարձրահասակ և գեղեցիկ տեսքով մարդ էր, կարծեց իր մաքում, թէ, յայտնի բան է, սա կ'լինի օծեալը: Բայց Աստուած պատասխանեց նրան ամի՞նայիր ոչ հասակին և ոչ գեղեցիութեանը. սա չէ իմ ընտրածու: Աստուած, մարդոց պէս, արտաքին տեսքով չէ դատում: Մարդս աեմսում է միայն, ինչոր նորա աչքի առջևն է, բայց Աստուած տեսնում է սիրտն էլ:

Յեսսէին Սամուելի առաջ հանեց իր երկրորդ որդուն Ամինազարին: Սամուել ասաց. «Չէ, Աստուած դրան չէ ընտրել»: Նրանից յետ հայրը Սամուելի առջև հանեց իր երրորդ որդուն: «Ու էլ չէ ընտրած Աստուծուն»: ասաց Սամուել: Յեսսէին հանեց մարդարկի առաջ իր եօթն որդոց էլ մէկին միւսի ետևից: «Որանցից ոչ մէկին Աստուծուն չէ ընտրել»: ասաց Սամուել:

Ոչոք չէր հասկանում, ի՞նչ են նշանակում այս խօսքերը: «Ուրիշ որդի էլ չունեմ գու արդեօք»: Հարյուր Սամուել: «Ունիմ էլի որդի: պատասխանեց Յեսսէին ամէնից փոքրն է նա, Դաւիթը, նա արածում է իմ ոչխարներա»: — «Շուտ մարդ իրկիր նորա ետևից, ասաց Սամուել: Թող գայ նա, մեր սեղան նատելից առաջ»:

Հայրը իրկից մարդ, կանչեց Դաւիթին և հանեց Սամուելի առջև երեխային, որ գեղեցիկ էր երեսով և քաղցր տեսքով: Այն ժամանակ Աստուած ասաց Սամուելին: «Ո՛հա իմ ընտրածս, օծեիր սրան թագաւոր»:

Սամուել առաւ շիշը իւղով և օծեց Դաւիթին, իր բոլոր եղայրների ներկայութեամբ: Աստուծոյ Հողին իջաւ օծեալի վերայ և այնուհետև մնաց միշտ նորա հետ:

Գևորգ Եկ.

ԵՐԻՑԱՍԱՐԴ ԴԱԿԻԹԸ ԱՐՔՈՒՆԻ ՊԱԼԱՏՈՒՄ:

Աստուծոյ Հողին բորբովին թողեց Սաւուղին, որ սրբառով գեղացացէլ էր: Սաւուղ ընկաւ արտմութեան մէջ, և տանջվում էր չար գեից: Ավ որ իրեն Աստուծոյ ողորմութեանը անարժան է զգում, չէ զգում իր վատ գործոց վերայ և չէ աշխատում նրանց լսացնել, նա

չ կարող ամենեին հանդիսաւ լինել, ինչպիսի մեծ  
փառքով և մեծութեամբ էլ պատաժ լինի:

Պալատականները ասացին Սաւուղին. «Թագաւոր, եւ  
թէ կհրամայես, մենք կ'ըերենք քեզ մօտ մի մարդ, որ  
լաւ ածում է քնար, գուցէ երաժշտութիւնը մեղմացնէ  
քո արամութիւնոց»: — «Բարի է, պատասխանեց Սաւուղ.  
«Ճանաչում էք մի այնպիսի մարդ»: Այն ժամանակ  
սպալատակներից մէկը ասաց. «Երբ ես Յեթզեհէմուն  
էի, Յուգայի բաժնում, լսեցի միանդամ, ինչպէս Յեսսէի  
որդին քնար էր ածում: Նա գեղեցիկ ածում է, բացի  
սրանից նա շատ խելօք է, բարեկաշու և Աստուածաւ  
հաճոյ»: Սաւուղ այն բոտէին խրկեց Յեսսէի մօտ Յեթզ  
զեհէմ մարդ, հրամայելով նրան, շուտ խրկել իր որւ-  
դուն Դաւթին, որ արածում է նորա ոչխարիները: Յեսսէն  
առաւ մի քանի հաց, մի տիկ զինի, ուլը և խրկեց  
Դաւթին այս զիւղական ընծաններով թագաւորի մօտ:  
Այն ժամանակ Խորայէլացւոց երկրում սովորութիւն էր  
թագաւորի մօտ ընծաններով երթալը:

Դաւիթ յայտնվեցաւ Սաւուղին և շատ սիրելի եղաւ  
նրան: Թագաւորը նրան իրեն կապարձակիր շնեց և հրա-  
մայեց Յեսսէին ասել, որ ինքը պահում է նորա որդուն  
իր մօտ, որովհետև արժանացաւ իր ողբրմութեամբ: Ա-  
մէն անդամ, երբ տրամութիւնը տիրում էր Սաւուղին,  
Դաւիթ ածում էր քնար—և այս ցրում էր Սաւուղի  
տիրութիւնը ու չար ողին, որ տանջում էր նրան, չեւ-  
ռանում էր նրանից:

Գլուխ ծթ.

ԳՈՂԻԱԴ:

Փղշտայինները նորից գինաւորվեցան Խորայէլացւոց դէմ:  
Սաւուղ գուրս եկաւ նոցա գէմ իր զօրքով: Փղշտաց-  
ւոց զօրքը վեր եկաւ սարի զլսին. Խորայէլացիններն նմա-  
նապէս վեր եկան նոցա դէմնւդէմ միւս սարի զլսին:  
Հովհանը բաժանում էր երկու զօրքերուն մէկ մէկից:

Փղշտացւոց բանակից առաջ գուրս եկաւ մի հսկայ,  
Գողիադ անունով: Նորա հասակն էր կարգից գուրս  
բարձր, զլուխը ծածկած էր երկաթէ սաղաւարտով, և  
ինքը հագած ունէր պղնձի զրահ: Զեռին ունէր տեղ  
ահազին մեծութեամբ: Նորա բոլոր զէնքը էր խիստ ծանր  
և ցցց էր տալիս նորա արտաքոյ կարգի զօրտութիւնը:  
Նորա առջեկից գնում էր նորա զինակիրը, որ տանում  
էր նորա սուրբ:

♦ովովի մէջ ցած իջնելով Գողիադ կանչեց Խորայէլացի-  
ներին. «ինչո՞ւ գուք ամէնքդ պատրաստվում էք կրովի:  
Նս Փղշտացի եմ և գուք Սաւուղի ծառաններն էք: Ըստ-  
րեցէք ձեր մէջեց մէկին, որ կարողանայ իմ հետ մենա-  
մարակիլ: Աթէ նա ինձ կ'սպանէ, մենք կ'լինենք ձեր ծա-  
ռանները, իսկ եթէ ես նրան կ'սպանեմ, գուք եղէք մեր  
ծառանները:

Կայսիրի առաջարկութիւն որ լսեցին, Սաւուղ և բո-  
լոր Խորայէլացիններն խուովեցան շատ և սարսափեցան:  
նակ Գողիադ ծաղը էր անում նրանց, աեւնելով, որ ոչոք  
չէ համարձակվում գուրս զալ իրեն գէմ և պարծե-  
նում էր իր զօրտութեամբ:

Դաւիթ, որին Սաւող չէր կամենում իր հետ առնել պատերազմ՝ նորա մանկութեան պատճառով, յետ դարձաւ էլի իր հօր ոչխարները արածելու, բայց նորա երեք մեծ եղբայրները էին արքունի զօրքունն: Յեսսէն ասաց Դաւիթին. «առ հաց և տար զօրաց բանակը եղբայրներիդ համար: Ահա էլի տան կտոր նոր պանիրներ, որ կտա դու նոցա հազարասկետին: տեղիկացիր, արդեօք եղբայրներդ առողջ են և ինչպէս են գնում զործերը»: Դաւիթ, որ ամէն բանումն հնազանդ էր հօրը և որտանց սիրում էր եղբայրներուն, որախութեամբ զնաց բանակը, տանելով իր հօր տուտծ պաշարը:

Երկու կողմն էլ արդէն պատրաստ էր պատերազմելու, երբ Դաւիթ եկաւ այստեղ: Ինչոր հետը բերել էր, տուեց վանապանին: Խսկ ինքը գնաց իր եղբայրներուն տեսնելու: Այն ժամանակ Գողիսադ հսկայն առաջ դուրս եկաւ թշնամեաց զօրքի մէջից, պարծենում էր իր զօրքութեամբ ու նախատում էր Կարայէլացիներուն: Մրան տեսնելիս Խարայէլացիները վախեցրսծ վախան: Բայց Դաւիթ ասաց. «ո՞վ է այս յանդուզն մարդը, որ համարձակում է նախատել Աստուծոյ ազգի զօրքին: Ի՞նչ վարձատրութիւն է նշանակած նրան, ով որ կապանէ այս հպարտ Փղստացին և կազմակ Խարայէլացիներուն ամօթից»:

Դաւիթի մեծ եղբայրը Եղեաբ լսեց նորա խօսքերը և չարացաւ: «Ինչու եկար դու այս տեղ», ասաց նա: «Այս տեղդ չէ: Գնա՛, արածիր ոչխարներուդ, ինչու թողիր նրանց անապատում: Ես քո հպարտութիւնդ և սրտիդ չարութիւնը զիտեմ, դու հետաքրքութիւնիցք

եկել ես պատերազմ տեսնելու: Դաւիթի եղբայրները էին հպարտ և կոպիտ և այս պատճառով էլ Աստուած չընտրեց նրանց: Բայց Դաւիթ հեղութեամբ և խոնարհութեամբ համբերում էր նոցա կոպտութեան և Աստուած ընտրեց նրան: Աստուած ցածացնում է հպարաներուն և բարձրացնում է խոնարհներուն:

Օտար մարդիկ, որ կանգնած էին Դաւիթի մօտ, աւելի քաղցրութեամբ վարփեցան: Նոքա պատասխանեցին նրան. «ով որ կ'յաղթէ այս հսկային, նրան թագաւորը ինքը կ'վարձատրէ, նա իր աղջկան նրան կին կ'ասյ և նորս հօր տունը հարկից ապատ կ'լինի»: Դաւիթ, որ բոլոր սիրում էր հայրենիքը, յայսնեց, որ ինքը խիստ ցանկանում է կովել հսկայի հետ: Այս բանը հսկային Սաւողի ականջը և նա հրամայեց Դաւիթին իրեն մօտ բերել:

Դաւիթ թագաւորի առջեւ գալով ասաց նրան. «թագաւոր, ոչընչից մի վախենապ, հրաման տուր ինձ, որ երթամ մարտնչեմ այս Փղստացիի հետ»: Սաւող պատասխանեց. «Ի՞նչպէս կարող ես դու յաղթել սյն հսկային: Դու գեռ մանուկ ես. խսկ նա հասակ առած մարդ է և մանկութիւնիցը ապօր է պատերազմի»:

Դաւիթ պատասխանեց. «Երբ ես արածում էի իմ հօրս ոչխարները, երբեմն զալիս եր զայլ և յափշտակում էր ոչխարներից մէկին, ես ընկնում էի ետևից ու խորա բերնից աւարը, բայց եթէ ընդիմանում էր ինձ. բռնում էի նորա փողից և ապանում էի նրան: Առիւծ և արջ էլ սպանել է քո ծառադ: Նոյն կերպով կ'վարփեմ ես այն Փղստացիի հետ էլ: Ի՞նչպէս

Համարձակվեցաւ նա նոխատել ճշմարիս Աստուծոյ զօրքին: Աստուածը, որ ինձ աղատեց առիւծի և արջեթերանից, կ'ազատէ Փղտացիի ձեռիցն էլ»:

«Գնաւ Աստուած քեզ հետ լինի», ասաց թագաւորը: Սաւուղ հրամացեց հաղցնել Գաւթին պղնձի սաղաւարտ, զուաչ և կազել մէջքին իր սեպհական սուրբ: Գաւթիթ այսպէս զինաւորված ման եկաւ յետ ու առաջ և տեսաւ, որ շատ ծանր է, նա չէր սովոր այսպիսի զենուորական զրահին: «Ես չեմ կարող ման գալ այսպէս զինաւորված», ասաց նա, ու հանեց սաղաւարտը, զրահը և թուրը. վեր առաւ իր հովուական ցուպը, ընուրեց գետի ափից հինգ ողորկ քարեր, ձեռը առաւ իր պարար և այս զէնքով միայն դուրս եկաւ հսկայի դէմ:

Գողեադ դուրս եկաւ պատերազմի տեղը կատարելաւ պէս զինաւորված և առջեց գնում էր նորա զինակիրը: Նա, երբ տեսաւ Գաւթին, արհամարհեց նրան: Գաւթի քննուշ մանկութիւնը և հեղ դէմքը ամենեին չէն ցոյց տալիս նորա քաջ և զօրեղ զինուոր լինելը:

«Միմէ շնէն եմ ես, որ իմ գէմ քարերով ես գալիս. ասաց հսկայի: Շուտավ ես քո մարմինդ կերակուր կ'տամ երկնային թռչուններին և երկնային դաղաններին:

«Գաւթ պատասխանեց. «Դու դուրս ես գալիս իմ գէմ վահանով, սուրով և տէզով. իսկ ես գալիս եմ քո գէմ Զօրութեանց և Խարայէլ Աստուծոյ անունովը, որին դու անարդում ես: Այժմ՝ Աստուած կ'մատնէ քեզ իմ ձեռս և բոլոր երկիրը կ'իմանայ, որ նա է միայն ճշմարիս Աստուած: Ամէն այս ներկայ ժողովուրդը կ'լինի վկայ. որ Աստուծոյ օդութիւնը աւելի զօրեղ է քան թէ սուրը և տէզը՝ ձեղ Աստուած կ'մատնէ մեր ձեռքը»:

«Ակայն դնաց Գաւթի վերայ. երիտասարդ Գաւթիթը աներկիւղ դուրս եկաւ նորա առաջ և իր պարար առնելով զցեց նրանու մի քար Փղտացիի վերայ. քարը պատուեց նորա ձակատը: Կողիաթը երեսով ընկաւ գետի վերայ. իսկ Գաւթիթ առնելով նորա ահադին սուրբը կարեց զլուբութ Փղտացիները, իրենցից ամենից զօրեղին արանած տեսնելով, վախեցան և վախան: Խարայէլային ները, պատերազմական ձայներ հանելով, ընկան ետեւներից, կոտորեցին նրանց, զրուեցին և ունակուի արևն նոյա գունդերը: Ոչնամեաց բոլոր բանակը ընկաւ յաղթողների ձեռքը:

ԳԱՎԱԾ

### ՅՈՎԱՆԱԹԱՆ

«Կողիադին յաղթելից յետոյ Գաւթին տարան թագաւորի առջեւ: Սաւուղ ընզունեց նրան քաղցլութեամբ. իսկ նորա որդի Յովանաթմանը սիրեց Գաւթին բոլոր սըրատով: Նա դառաւ Գաւթի բարեկամը և առնելով նորա սուպինութիւնները սիրում էր նրան ինչպէս իր վեանքը Բարեկամնեթեան նշանի համար Յովանաթման ընծայեց Գաւթին իր շորը, թուրը, աղեզը և նետերը: Սաւուղ յետ գառնալիս վեր առաւ հետոյ Գաւթին: Այն քարաքներում, որոնց մօտից անց էին կենում, աղեջինները նոցա առաջ էին դուրս գալիս երգերով և ծընծաներով: Իրենց հանդիսաւոր զավասանական երգերում երգում էին նորա. «Սաւուղը յաղթեց հազարին, իսկ Գաւթիթ բիւրերին»: Ուրախութիւնը, որով ամեն տեղ ընդունում էին Գաւթին և զավասանութիւնները, որ

նրան տալիս էին, տրտմեցին Սաւուղին, որ բարկացած ասաց. «Դաւթին իձնից գերազանց են համարում», ուրիշն ի՞նչ է նրան պակաս. միայն թագաւորութիւն»: Այս ժամանակից Սաւուղ սկսաւ կասկածել դաւթի վերայ և նորա առաջվան սյասհարութիւնը էլի նորող վեցաւ: Միանգամ դաւթիթ ածում էր քնար թագաւորի մօտ, Սաւուղ վեր առաւ տեղը և զցեց նորա վերայ. բայց դաւթիթը ծռվելով ազատվեցաւ այս հարուածից: Այս երկու անդամ պատահեցաւ:

Դաւթիթ էլի միանգամ յաղթեց ֆղասացիներին և Սաւուղ այս պատճառով աւելի ատեց նրան: Նա իր որդու Յովնաթանի առջև հրամայեց թիկնապահներին սպանել դաւթին, բայց Յովնաթան ասաց. «Թագաւոր, մի մեղանչիր քո ծառայ դաւթին. նա անմեղ է: Ինչ որ դաւթիթը արաւ, բոլորը քո օգտիտ համար էր: Քեզ համար չինայեց իր կեանկը, նա չէր որ ապանեց Գողեադին: Նա չէր, որ ազատեց Խարյութացիներուն: Գու ինքդ վկայ էր նորա քաջութիւններին, գու ինքդ դովեցիր նրանց, ինչու համար ես կամենում թափել անմեղ արիւն, ինչու ես կամենում սպանել նրան, որ քեզ ոչինչ չէ արելու: Այս խօսքերը կակդացրին Սաւուղի սիրալ և ասաց. «չէ. թող Աստուած ինքը վկայ լինի, ես չեմ սպանում դաւթին»: Այն ժամանակ Յովնաթան բերաւ Սաւուղի մօտ իր բարեկամին: Սաւուղ իր ՄԵՂ աղջիկը տուեց նրան կին:

Ըստ պահնից յետոյ դաւթիթ կրկին յաղթեց այլ աղջիներին. այս էլի նորողեց Սաւուղի պրտի մէջ նախանձը: Նորա առաջվան սյասհարութիւնը նորող վեցաւ

առաւել զօրութեամբ: Նա նստած էր տանը դեղարդը ձեռին և դաւթիթը ածում էր քնար և երգում: Սաւուղ զցեց նորա վերայ գեղարդը. բայց դաւթիթ մի կողմ քաշվեցաւ և գեղարդը ցցվեցաւ պատի մէջ: Նոյն զիւշը դաւթիթը դնաց և պահվեցաւ լեռներում:

Մի քանի ժամանակից յետոյ թագաւորը, երբ նրատած էր սեղանի առջև, հարցրեց. «ինչու Յեսաէի որդին չէ դալի իմ սեղանիս մօտ, նա երեկ էլ չկար, այսօր էլ չէ երեւում: Յովնաթան սկսաւ արդարացնել դաւթին. և այս մասին Սաւուղ շատ չարացաւ: «Դու անհնազմնդ որդին» գոչեց նա. «Ես զիսեմ, դու ինձ և մօրդ ամաչցներու համար ընտրել ես քեզ բարեկամ Յեսաէի որդուն: Այս բարեկ հրամայիր բերել նրան այս տեղ. նա, պէտք է, մեռնիու: Յովնաթանը հեղութեամբ պատասխանեց. «Ինչու պէտք է զրկես նրան կեանկից, նա ի՞նչ է արելը: Սաւուղ բարկացած վեր առաւ գեղարդը և կամենում էր սպանել իր որդուն: Յովնաթան, վեր թռաւ սեղանից, դուրս գնաց և ախրութիւնից բուռը օրը ոչինչ չկերաւ: Այն միտքը, որ իր հայրը վրձնել է դաւթին սպանել, շատ տիրեցնում էր նրան:»

Միւս օր առաւօտը վաղ Յովնաթան գնաց սարը այն տեղ, ուր պահված էր դաւթիթ, միայն նրան էր յայտնի սորա թագնված տեղը: Դաւթիթ նորա առաջ դուրս եկաւ: Յովնաթան խորհուրդ տուեց նրան, որ ոչ ոքին չյացանվի և իրարից հրաժարվելիս դրկեցին մէկ մէկու և լաց էին լինում երկուսն էլ. վերջապէս Յովնաթանը ասաց. «Ճնա խաղաղութեամբ, բարեկամութիւնը, որով մենք Աստուծոյ իրեն առաջը երդում տուինք, կմնայ

անքակտելի, Աստուած թող վկայ լինի իմ և քո մէջ, իմ որդոցս և քո որդոցդ մէջ։ Արանից յետոյ նորա հեռացան մէկ մէկից։ Յովնաթանը դարձաւ տուն. իսկ Դաւիթ հեռացաւ խորը անապտափի մէջ։

Սաւուղ շարունակեց հալածել Դաւիթին անապատումն էլ։ Նա լրիկեց իր բոլոր զօրքը զանազան կողմեր Դաւիթի ետևից։ «Եթէ գետնի տակն էլ պահված լինի, այնտեղից էլ պէտք է գտնվի նա», ասում էր Սաւուղ։ Բայց Դաւիթը հեռացաւ շատ հեռու և անապատ տեղեր։ Յովնաթան այն տեղ էլ դտաւ նրան և աշխատում էր միսիթարել նրան ու զօրացնել նորամէջ այն յցար, որ նա ունէր Աստուծոյ վերայ։ «Ոչքնչց մի վախենար, ասում էր նա, «իմ հօրս ձեռը չէ կարող քեզ հանել, դու կլինիս ժամանակով խրայէլ թագաւոր, իսկ ես կամենում եմ երկրորդը լինել քեզնից յետ»։

Յովնաթանը յախտեան կմնայ հաստատ բարեկամութեան բարի օրինակ։

ԳԼՈՒԽ ԿԱ.

ՆԱԲԱԴ. ԵՒ ԱԲԻԳԻԱ.

Դաւիթի պաշտապանը Սամուէլ վախճանեցաւ։ Նորա վերայ լաց եղաւ խրայէլացւոց բոլոր ազգը և թաղեցն նրան Արիմաթեմում։

Դաւիթը շատ խղճալի դրութեան մէջ էր. ստիպված մի տեղից միւս տեղ թափառելու, նա ոչ մի տեղ չէր գտնում հաստատ ապաստանի տեղ։ Նորա կեանքը միշտ վտանգի մէջ էր, իբրև աքսպիած հեռու մարդկանց ընկերակցութիւնից, նա պէտք է ծածկիլու կամ

թանձր անանցանելի անտառներում կամ խորր այրելու մ։ Բայց այն տեղ էլ ապահովութեան մէջ չէր, այն տեղ սպառնում էր նրան մարդասպանի նեար, ոյս տեղ սպառնում էին նրան Սաւուղի գիմնուրները։ Թէ ուրիշը լիներ նորա տեղ, կ'յուսահառվէր։ Բայց Դաւիթը չկորցրեց իր արիբութիւնը, նա բոլոր սրտով յոյսը գնում էր Աստուծոյ վերայ և իր ախուր աքսորանքի ժամանակը դրեց Աստուծոյ հոգւով նշան սազմնուրը, որոնց մէջ նա իր բոլոր սիրար բաց էր անում Աստուծոյ առջն։ Այսպէս կինում էր նա անապատումն, բայց մի քանի ժամանակից յետոյ Սաւուղից ամեն անբաւական և զըրիւալ մարդիկը փախան և մտան Դաւիթի պաշտապանութեան տակը և Դաւիթ գառաւ իշխող չորս հարիւրից աւելի մարդոց։

Մի փոքրիկ ցան անունով քաղաքում, որ անապատի մօտն էր, բնակում էր մի հարուստ մարդ Նաբադ անունով։ Նա ունէր երեք հազար ոչխար և հազար այծ, որնք արածում էին անապատում և որոնց Դաւիթ պահպանում էր։ Նաբադը, չնայելով իր հարստութեան, էր շահասեր և խասակիտ մարդ։ Միանգամ Նաբադը ժողովոց բոլոր իր մշակներուն և հովենուներուն, որ կորեն հօտերը։ Այս բանի համար, այն ժամանակվան սովորութեամբ, նա կամենում էր մեծ խնձոր կազմել։ Դաւիթ, զրեթէ պաշարից զրկած լինելով, խրիկ նորա մօտ տասն երիտասարդներ, որնք նորա մօտ էին և մտանակից էին լինում ամեն նորա կարօտութիւններին։ Նա հրամայեց նրանցը հարցնել Նաբադի և ընտանեաց առողջութիւնը ու ասել նրան. «Դաւիթը բարեկամաբար

ողջունում է քեզ: Յանկանում է քեզ և քո բոլոր ընտանեացդ ողջութիւն և ինչ որ գու ունես: Մենք խմացանք, որ այժմ քո հովիւներդ պէտք է խուզեն քո ոչ խարներուդ, որոնք մեղ մօտ անապատում արածում էին: Մենք ոչ միայն չենք արգելում քո մարդոցդ արածելու խաներդ մեր մօտ, և ոչ թէ միայն ոչինչ մնաս չենք տալիս, այլ և պահպանում էնք նրանց գողերից և վայրենի դապաններից: Հարցրու այս մասին քո հովիւներուդ, նոքա, յայտնի բան է, կ'հաստատեն մեր խօսքերը: Այս պատճառով մենք յաց ունինք արժանանալ շնորհք գտնելու քո սուջեղ: Մենք քեզ մօտ գալով այօր, որ քո կազմած հանդէսիդ օրն է, յայս ունինք, որ գու կ'իրկես մի բան դաւթին էլ, ինչպէս հայրը իր որդուն նոյնպէս էլ մեղ՝ քո ծառաներիդ մի ողորմութիւն կտաս:

Դաւ իթ յայտնի էր Խարայէլացւոց բոլոր ազգին, ամենքը սիրում էին նրան, ամենը գովասանութեամբ խօսում էին նորա վերայ, բայց Նաբաղ ձեւացրեց, իրեւ թէ չէ ճանաչում նրան: Նա բարկութիւնից տեղից վեր թըռաւ և գոռաց: «Այդ մի է Ցեսաէի որդի Դաւիթը: Այժմ շատացել են փախստականները և իրենց տէրերից փախած ծառաները, ես իմ հաց և միս, որ պատրաստել եմ իմ ծառաներիս համար, նոցա չեմ բաժանիլ. ես Դաւթին չեմ ճանաչում: Դաւթի մարդիկը ամօթով յետ դարձան:

«Նաբաղի կող անունը էր Արիդիա: Սա էր ինչը, բարի և գեղեցիկ կոնիկ: Հովիւներից մէկը զնաց և յայտնեց Արիդիային այս անցքը: «Դաւիթը, ասաց նա, մենք ՚ի վոր պահպանում էնք Նաբաղի խաշները, նա մեզ բարին չարով է հասուցանում: Աստուած էլ թող այնպէս հատուցանէ մեր թշնամիներին, եղուց առաջուր նորա բոլոր ունեցածից մի շուն էլ չի մնալ. եկէք ետեիցա:

իր մարդոց, որ շնորհաւորեն այս ուրախութեան օրը քո մարդուդ, բայց Նաբաղ յետ խրկեց նրանց մեծ կոռատութեամբ: Խակ դաւիթը և նորա մարդիկը մեղ շատ օգտաւէտ էին: Ինչքան որ մենք անապատումն էնք, բերդի պէս պահպանում էին մեղ յերեկը և գիշերը պաշտպանում էին աւաղախներից և վայրենի գագաններից: Կաւ մսածիր, որ Նաբաղի յիմարութիւնը ուզգեց լու հնարք դտնես: Աս փախենում եմ, չենի, թէ մի թշուառութիւն պատահի քո մարդուդ և բոլոր նորատանը:

Արիդիան այն բոպէին վեր առաւ երկու հարիւր նը կամակ, երկու աման դիսի, հինգ խաշած ոչխարներ, մի կողով չամիչ և երկու հարիւր շարուկ չոր թուղը, այս ամէնը խրկեց իր ծառաների հետ Դաւթի համար, աւելով: «Գնացէք դուք այս ընծայներով առաջ շուտով ևս ինքս էլ կ'գամ ձեր ետեից»: Նա նստաւ իշխ վերայ և զնաց ծառաների ետեից, բայց զիտենալով իր մարդու կողին բնութիւնը ոչինչ չայցնեց նրան:

Բայց այն տասն երիտասարդները արդէն յետ դարձած յայտնել էին Դաւթին Նաբաղի պատասխանը: Դաւ իթ, շարացած այսպիսի խստութեան վերայ, կատեց իր սուրը և իր մարդոցն էլ հրամացեց զմասուրիկը: Շնուրնն, ասաց նա, մենք ՚ի վոր պահպանում էնք Նաբաղի խաշները, նա մեզ բարին չարով է հասուցանում: Աստուած էլ թող այնպէս հատուցանէ մեր թշնամիներին, եղուց առաջուր նորա բոլոր ունեցածից մի շուն էլ չի մնալ. եկէք ետեիցա:

«Դաւիթը արդէն ճանապարհումն էր, նա պատրաստ

Եր մ.ծ յանցանք գործելու. բայց Արիդիան, Նարաղե իմաստուն կինը, ցածացրեց նորա բարկութիւնը: Ելո՞ Գաւթին հանդիպեցաւ, նա շուտ իւց իջաւ և նորա առաջին ընկնելով երկրպագութիւն տուեց նրան մինչև դետին: «Տէր իմ: աղաղակեց նա, թող իմ մարդուս յանցանքի պատիմը միայն իմ վաս ընկնի: Հրաման տուր ինձ, քո աղակնիդ, բերել քեզ օրհնութիւն և ակնջ գիր իմ խօսքերիս: Խո բերի քեզ ընծաներ, բաժանիր այն քո զինուորներիդ: Բանի տեղ մի՛ դնիր Նարաղի յիմարտութիւնը: Դու կլինիս Աստուծոյ ազգի առաջնորդը, անմեղ արին թափել թող ընի արատ քո փառքիդ: Ինձ միտդ բեր այն ժամանակի:

Դաւիթ, փափկացած այս հեղ խօսքերով, ասաց Արիդիային: «Օրհնեալ է Աստուած, որ խրից քեզ: օրհնեալ լինիս դու էլ. որ պահեցիր իմ ձեռքս արինհ հեռ զութիւնից: Դարձիր խաղաղութեամբ քո տունի: Ես կատարեմ խնդիրդ»:

Խոկ Նարաղ այս միջոցին խմում էր, ուտում էր և ուրախանում ոչինչ չկասկածելով: Միւս օր ասաւուր, երբ սժափեցաւ գինիից, կինը յայտնեց նրան, թէ ինչպիսի վտանգի մէջ էր նորա կեանքը: Նարաղը, երբ այս լսեց, քար կտրեցաւ վախից և տան օրից յետոյ մեռաւ: Դաւիթ, որ լսեց նորա մահը, ամուսնացաւ Արիդիայի հետ:

Գլուխ ԿՅ.

ԴԱՎԻԹԻ ՎԵՐՉԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՈՒՂԻ ՀԵՏ

Ասւուղի ամէն աշխատանքը Դաւթին բռնելու համար՝ ի զուր եղան, Աստուած պահում էր այս հեղ,

և առաքինի մարդուն: Զնայելով Սաւուղի բոլոր ատելութեանը և հալածելուն, Դաւիթ էլի միշտ յարգում էր նրան, իրեւ Աստուծոյ օծեալին և իր թագաւորին:

Միանգամ Սաւուղ երեք հազար ընտիր զինուորներով գնաց Գաւթին մինտերու: Նա վեր եկաւ մի սարի դիմին: Դաւիթը իմացաւ այս և զիշերով թագուն գնաց իր ամէնից հաւատարիմ զինուորին Արեսսայի հետ միասին Սաւուղի բանակը: Արեններ, Սաւուղի զօրալարը և նորա բոլոր զինուորները խորը քուն էին մուել: Դաւիթ Արեսսային հետ առանց արգելքի գնացին մինչև թագաւորի վրանը: Սաւուղի թիկնագահները քնած էին և ինքը թագաւորին էլ խորին քնի մէջ էր ընկղմել: Նորա գեղարդը ցցած էր գետնին, զլիսի մօտ, այն տեղ մօտիկ էլ դրած էր ջօի կուժը:

«Աստուած մատնում է մեր ձեռը մեր թշնամիին, ասաց Արեսսան: Ես կապանեմ զրան իր գեղարդով»: Զէ»: Խօսքը կտրեց Դաւիթը: «Համարձակես ձեռդ բարձրայնել Աստուծոյ Օծեալի վերայ: Առ նորա գեղարդը և կուժը ու գնանք այստեղց»: Նորա վեր առան գեղարդը և կուժը ու հեռացան բանակից, և ոչ ոք չնկատեց նրանց:

Դաւիթ, վեր ելաւ դէմուղէմ եղած ժայռի վերայ և բարձր ձայնով գոռաց: «Արեններ, պատասխան տուր ինձ: — Արենները ձայն տուեց հարցնելով: «Ով ես դու: — Դաւիթը ասաց, «Դու ես այն հաւատարիմ և քաջ զինուորը, որին նմանը չկայ բոլոր խրայէլի մէջ: Այսպէս ես պահում դու քո թագաւորիդ: Տես, ահա նորա կուժը և գեղարդը, որոնք նորա զլիսի մօտն էին

զրած»: Այն ժամանակ Սաւուղ դոչեց. «Դաւիթ, իմ որդեակս, քո ձայնդ է այս»: — Այն, թագաւոր, ես եմ՝ ծառադր»: պատասխանեց Դաւիթ. «Նշու համար հաւածում ես դու ինձ. արքայ, ես ի՞նչ եմ արել, թողել եմ արդեօք երբեք քո հրամաններդ առաջ կատարերս. ինչու ես կամենում Աստուծոյ առջեր թափել անմեղ արին»: Սաւուղ ասաց: «Ես մեղանչեցի: Դարձիր մօտա, որդեակ: Որովհետեւ դու ինայեցիր իմ կեանքս, երբ ես քո ձեռումդ էի, ես քեզ ոչինչ չարտեմին չեմ անիլ»:

Դաւիթը ասաց. «Ճես, ահա քո գեղարդը և կուժդ: Հրամանչիր ծառաններիցդ մեկն, որ դայ և առնէ: Աստուծ ամենին կհատուցանէ իրենց գործոց համեմատ: Ինչպէս այսօր մեծացաւ քո անձդ իմ առաջիս, այսպէս էլ կմեծանայ իմ անձս Աստուծոյ առաջն: Կա կ'փրէ ինձ ամեն չարից»: Սաւուղը օրհնեց Դաւիթն և հեռացան մէկ մեկից խաղաղութեամբ: Դաւիթի այս տեսնիլը Սաւուղի հետ եղաւ վերջնը:

Սաւուղ իր բոլոր զօրքովը շփարողացաւ յաղթել Դաւիթն, բայց Դաւիթ միայն մեծահոգութեամբ յաղթեց Սաւուղն:

Սաւուղ, որի առաքինութեան մէքը միայն բոպէական էր և մերս չէր, շուտ սրանից յետոյ յաղթվեցաւ քրդատացիներից: Նորսա զօրքը բոլորովին ջարդվեցաւ. նորս երեք որդիք մեռան, որոնց մէջ իր և առարինի Յովանաթմանը, Դաւիթի բարեկամի: Սաւուղ ինքը վերսառվեցաւ. Փղասացիները ամեն կողմից յարձակեցան նորսա վերայ և կամենում էին դերի առնել նրան: Սաւուղ վախենալով,

որ թշնամեաց ձեռը չընկնի, ընկառ իր սրի վերայ և կոխեց նրան իր սիրալ ու մեռաւ:

«Դաւիթ թէպէտ և աղաւմիցաւ իր հզօր և ահապի թշնամից, բայց էլի չէր ուրախանում Սաւուղի մահուան վերայ: Նա և բոլոր նորսա զինուորները ողբում էին Սաւուղի և Յովանաթմանի վերայ, որոնք մեռան պատերազմում: Նըքա լացով և առանց ուտելու անց կացրին բոլոր օրը:

Գլուխ դէ.

#### ԴԱՒԻԹ ԻՍՐԱՅԵԼՈՅՑԻ ԹԱԴԱԿՈՐ

Սաւուղի մահի ժամանակը, Դաւիթ բոլոր իր զինուորներով կենում էր Գեթայ Անքուս թագաւորի մօտ, Սիկելակ քաղաքում: Յանկարծ եկաւ նորսա առաջ Սաւուղի զինուորներից մէկը որ վախել էր պատերազմի դաշտից. նա բերաւ Դաւիթին Սաւուղի թագաւորական թաղը և աղարաննաները, յուսալով այս կերպով ողբումութիւն գտնել նրանից: Այս մարդը պատմեց. թէ երբ Սաւուղ ընկառ սրի վերայ, մինչև ՚ի մահ չվերաւրվեցաւ և դեռ կենդանի էր. ուահի և իրեն կանչեց և ասաց. «Ապանիր ինձ. ես խիստ տանջվում եմ և դեռ շոնչս մէջս էօ: Յետոյ շարունակից եկած մարդը, «ես աւեննելով», որ Սաւուղ այնպէս վերաւորված է, որ չէ կարող երկար ժամանակ ապրել, սպանեցի նրան, առի նորսա զինից թաղը և ձեռներից ապարանջանները և եկայ քեզ մօտ»: Դաւիթ և բոլոր զինուորները որտմութիւնից պատառեցին իրենց շորերը: Դաւիթը ողբաց շատ Սաւուղի և իր բարեկամի Յովանաթմանի վերայ:

« Խնչալէս կարողացար գու բարձրացնել ձեռդ Ասուուծոյ օծեալին վերայ», ասաց Դաւիթ Սաւուղին սպանող մարդուն, « Բնչալէս համարձակեցար գու քո թագաւորիդ կեանքից զրկել: Թագաւորի կեանքը Աստուծոյ ձեռին է, նորա արինը քո վկիրիդ կլինի, որովհետեւ և գու ինքու վկայեցիր քո դէմ: Դաւիթ հրամայեց սպանել այս հստեալ բերողին:

Դաւիթ գուրս եկաւ Միկելսկից իր ընտանիքով և վեցհարիւր գլխուղիներով դարձաւ իր հայրենիքը և Քերրոնումն յայսնի ընտրվեցաւ թագաւոր:

Դաւիթ Յեսաէի որդին էր, իսկ Յէսաէն Ովեէմի որդին էր և Ովեէլը Հռութի և Բոսի որդին: Այսպէս աղքատ, բայց առաքինի Հռութի ցեղը նատաւ Խորսէրացւոց գահը: Յետոյ էլի նորա զաւակներից ծնաւ Աստուծոյ խոստացած Մեսսիան, նա, որով Աստուած օրհնեց երկրիս բոլոր ազգերուն:

Գլուխ Կու

ԳԱ.Ի.ԹԻ ԹԱ.ԳԱ.Ի.ՈՐԱԿԱՆ ԳՈՒԾՔԵՐԸ

Փղտացիները, պատերազմի դաշտում գտնելով Սաւուղին և նորա որդւոց մարմինները, վեր առան նրանց ու ուրիշ մեռելներուն և նոյա ազգը նախատելու համար կախեցին դիերը իրենց բերդի պատոին վերայ: Յարիսի բնակիչները յիշեցին, ինչպէս մի ժամանակ քաջ թագաւորը ազտառեց իրենց քաղաքը կորուսից դիշերով ժողովեցան և իրենց կեանքը վասնզի մէջ զնելով վեր առան թշնամեաց պատերից իրենց թագաւորի և նորա որդոց մարմինները, որոնք յարգելի էին նոյա հա-

մար, այրեցին և թաղեցին նրանց Յարիսում ու եօլին օր պահեցին:

Դաւիթ, երբ լսեց Յարիսի բնակիչների այս գործը, օրհնեց նրանց և ասաց. «Աստուած թող վարձասորէ ձեզ ձեռ հաւասարմութեան համար գէպի ձեր թագաւորը և ևս էլ իմ կողմից կվարձասորիմ ձեզ»:

Արանից յետ Դաւիթ սկսաւ պատերազմել այն օտար ազգերի հետ, որոնք Յեսու Նաւեայի ժամանակից մնացել էին Խարայէլացիների մէջ և անդադար նոյա հետ կուր էին անում: Կա յաղթեց նրանց և սրբեց Խարայէլի բոլոր երկիրը: Դաւիթ պաշարեց Արտադէմ քաղաքը և առաւ: Կրուսաղէմը ընտրեց իրեն ընտկութեան տեղ: Կարծում են որ այս քաղաքը, որ թագաւորանիստ դառաւ, նոյն Սաղիմ քաղաքն է, ուր Մելքիսեդէկը Աբրահամին պատահեցաւ: Այսպէս Աբրահամի զաւակը թագաւոր դառաւ այն գեղեցիկ երկրին, որ Աստուած խոստացաւ տալ նորա ազգին:

Դաւիթ բարի և բարեկաշտ թագաւոր էր: Կա սրբուով կամենում էր, որ իր ազգը լինի առաքինի և երածանիկ: Խնքը ունէր սիրա սիրով լիքը, երախտազէա էր Աստուծոյ և յօյսը հաստատ նորա վերայ և բոլորովին հպատակ նորա առւլը կամքին: Այս զգացմաններները էին նորա բոլոր երջանկութիւնը երկրիս երեսին և այն պատճառով կամենում էր արմանացնել նրանց իր հպատակների պատերումն էլ:

Դաւիթ սկսաւ իր թագաւորութիւնը, տարածելով ազգի մէջ աստուածպաշտութեան սէրը: Կրուսաղէմ քաղաքի մօտ էր Սիսն լեռարը, որ ունէր բերդ էլ: Այս

առել իրեն համար աղքունիք շնչելից յետոյ, կանոնեց Դաւիթ հոյակասպ խորան, Ուխտի տասպանակը մէջը տեղատորելու համար, որ մինչև այն ժամանակ Կարիաթարիմ քաղաքումն էր: Ար ամէն բան պատրաստ էր, հանդէսով տեղափոխման Ուխտի տասպանակը նորա համար պատրաստված տեղը, և զրեթէ խրացէլացւոց բոլոր ազգը ուղեկից էր նրան փողերով և ուրախութեան երգերով: Բայց իր սրտումն Դաւիթ շնչեց Աստուծոյ համար աւելի գեղեցիկ առաջն նա Աստուծոյ հոգւով լրցված զրեց այն սրտաշարժ և խրատական սաղմաները, որոնք կարդացողի հոգին ազնուացնում են և միսիթարում:

Սոր Սիմեոնի վրայ շնաած սրբութիւնումն Դաւիթ զոհ բերաւ Աստուծոյ, օրհնեց իր աղջին, ամէնին բաժանեց հաց, զոհի միտ և զինի: Այս զոհի սեղանին ամէնքը մասնակից եղան, այս ուրախութեան օրը վերջին աղքատն էլ Դաւիթի հպատակներից լիացաւ կերակրով:

Դաւիթ հարցրեց: «Աւուղի ցեղեց արդեօք չմեաց մի հոգի կենդանի, ես իմ բարեկամիս Յովանթանի սիրոյ համար կամենում եմ նրան ըստոթիւն անել»: Մնացել էր միայն Յովանթանի մի որդին Վեմիիրութէն, որ երկու սորով էլ կադ էր: Առ բնակում էր Յովանթանը: Դաւիթը խրկեց նորա ետելից, բնակեցրեց իւր տան մէջ և տուեց նրան Սաւուղի բոլոր կալուածները և փարխում էր նորա հետ իր որդու սիէս: Մեմիիրութէն միշտ ուսումն էր թագաւորի սեղանից, Դաւիթի որդոց հետ միսանի:

ԴԱՒԹԻ ՄԵԴԱՆՉԵԼԸ ԵՒ ԶՂՋՈՒՄՆ

Ամէն թշնամիներուն յաղթելից յետոյ, Դաւիթ և իր թագաւորութիւնը վայերում էին խաղաղութիւն և սուատութիւն: Բայց շատ անգամ բաղտաւորութիւնը լինում է մեզ վնասակար: Թշուատութեան ժամանակ Դաւիթ էր առաքինի: Բայց լիութեան, հանգստութեան և զօրութեան ժամանակը նա ընկաւ փորձութեան մէջ և գործեց սարսափելի յանցանք:

Ակաւ պատերազմ՝ Ամենացւոց դէմ: Առ հասարակ թագաւորները իրենք առաջնորդում էին զօրքին. Բայց Դաւիթ կամեցաւ վայելել հանգստութիւն: Նա ինքը չգնաց կախ և յանձնեց զօրքը իր զօրավար Յովանին, իսկ ինքը մնաց Նրուսաղէմում:

Պիանգամ, երեկոյեան մօտ, գուրս եկաւ նա յստակ օդ շնչելու իր պալատի տանիքը, որաեղից երեսում էր բոլոր քաղաքը և աղաստ, անզործ մարդու պէս նայում էր ամէն կողմ հետաքրքրութեամբ: Անգործութիւնից ծնում են միշտ վաս մաքեր: Նա տեսաւ մի կին և զայթակզիւցաւ նորա գերբնական գեղեցկութեամբը: Այս կոնջ անունն էր Բէրսարէ: Այս էր Ուրիայի կինը, որ Դաւիթի զօրավարներից մէնին էր և արժանաւոր մարդ էր: Դաւիթը խրկեց Ուրիային իր զօրավար Յովանին մօտ նամակով, որի մէջ հրամացում էր սրան, որ Ուրիային խրկէ ամէնից եկիւզալի տեղը և երբ պատերազմը սաստկանայ, նրանից բոլոր զօրքին յետ կանչէ, որ թշնամին կարողանայ անագուել սպանել նրան: Ամէն բան կատար-

վեցաւ Գաւթի հրամանին համեմատ Ուրիշն սպանովեցաւ, իսկ նորա կինը բերաբէն, սուզի օրերի անցնելոց յիտ, ամռանացաւ Գաւթի հետ:

Վարդկերանցից ամէնից ըստն էլ կարող է ընկնիւ յանցանքի մէջ, բայց առաքինի մարդը չէ ընդունակ յամառելու իր յանցանքի մէջ և երկար ժամանակ հեռանալու բարի զգացմնեկներից, որոնք ուներ նա իր բոլոր անցեալ կեանքի մէջ և որոնք էին նորա երջանիւ կութիւնը: Աստուած ինքը խրկում է նրան իր օգնութիւնը: Նա խրկեց Գաւթի մօտ Նաթան մարդարէն: Մարդարէն սասց նրան: «Ի՞ քաղաքում բնակում էին երկու մարդիկ: Կրանցից մէկը հարուստ էր և միւսը աղքատ հարուստ ունէր ոչխարների և կոմիչի ամրող խաչներ, իսկ աղքատը ունէր միայն մի գառը, որին նու գեռ շատ փոքրիկ գնել էր նա կերակրեց նրան և այն էր նորա բոլոր հարասութիւնը: Սա մասն էր հանում նրան իր աղքատ կերակրերից, մի ամանից նորա հետ խմում էր, և քնեցնում էր նրան իրա ծոցումք: Բայց հարստի մօտ եկաւ հիւր, նա չկամեցաւ նորա համար իր ոչխարներից մէկին մորթել, խեց աղքատից նորա սիրելի զառին և պատրաստեց նրանից կերակուր իր հիւրի համար»:

Ակըումը Գաւթի չհամայաւ այս առածը, որի մէջ նկտաղրվում էր իր յանցանքը: Նա բարկացաւ շատ և գոռաց, չարագործը, որ խեց աղքատից գառը, արժանի է մահուան»: «Դու ինքդ վճռեցիր քո պատիժդ, սասց Նաթան»: Այս խօսքերը շատ ներդործեցին Գաւթի վերայ: Նա ճանաչեց իր յանցանքի բոլոր վաստութիւնը:

«Սաթան շարունակեց. «Աստուած ասում է քեզ, «Ես օծեցի քեզ Խրայէլի թագաւոր, Ես ապատեցի քեզ Սաւուղի ձեռքից, Ես հպատակեցուցի քեզ ոչ միայն Յուղայի տոհմը, այլ Խրայէլացւոց բոլոր տասներկու տոհմերը: Եթէ այս փաքր է, կ'անեմ քեզ համար աւելի: Կնքն դու անարդեցիր քո Աստուծոյ պատուիրանները և զործեցիր նորա առաջ այսպիսի անօրէնութիւն: Դու սպանեցիր Ուրիային թշնամիի ձեռքով, դու առար նորա կոտջ քեզ կին: Այս պատճառով առկր չի հեռանալ քո անիցդ: Քո ընտանիքիցդ կ'ծագէ քեզ վնասա:»

«Գաւթիթ սպասափեղով և գողալով ասաց. «Ես մեղանչեցի Աստուծոյ առջելու:—Եւ Աստուած ներում է քեզ մեղքդ», ասաց Նաթան. Դու չես մեռնիլ այժմ։ Բայց քո առաջն որդիդ բերաբէից կենդանի չի մնալ»:

Սաւուղն էլ քանիցս անդամ խոստովանեց, որ մեղանչեց Աստուծոյ առաջը, բայց Աստուած չէր ներում նրան. Աստուած կարդում է մեր սրտում եղածը: Նա տեսնում էր, որ Սաւուղի զղջումն միայն խօսքերով էր: Բայց Գաւթիթ զղջում էր բոլոր սրտիցը: Այսպիսի զղջման հետևանքը է միշտ ուղղվելլ:

«Գաւթիթ այս միջացին զրեց այն գեղեցիկ սաղմուր, որի մէջ կենդանի նկարագրում է իր բեկեալ սրտի բաց գացմունքները: Այս սաղմուր սկավում է այս խօսքերով. «Ողորմեա ինձ Աստուած ըստ մէծի ողորմութեան քում, ըստ բազում զիժութեան քում քաւեա զմնօրէնութիւնս իմ»: (Ողորմիլ ինձ, Աստուած, քո մէծ ողորմութեամբդ և քո շատ զիժութեամբդ քաւիր իմ անօրէնութիւններս):

ԳԼՈՒԽ Ա.2.

ԱԲԻՍՈՂՈՄԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Դաւթի որդիներից ամէնից արժանայիշատակներն են՝ Արիսողոմ և Սողոմն։ Արիսողոմ ամէնից գեղեցիկ մարդն էր բոլոր խայէլի մէջ։ Արտաքուստ ոչինչ պակասութիւն չունէր նա, մանաւանդ գեղեցիկ էին նորա մաղերը, բայց նորա սիրու փառասիրութեամբ լիք էր։ Նա մրտաքում զբէց չար խորհուրդ իր հօրը գահից վեր զբցելու, որ ինքը թագաւորէ նորա տեղ։ Այս նպատակին աւելի հեշտութեամբ հանելու համար, նա ամէն կերպով աշխատում էր ազդի սէրը ստանալու քաղաքի զբան մօտ կամսգնած, հարցնում էր անցկացողներուն։ «ԲՇնչ ինդրելու են գնում թագաւորից»։ Իւ երը մէկը պատմում էր իր գործը, Արիսողոմ ասում էր. «Քո գործքը ճշմարիտ է, բայց թագաւորի մօտ չկայ մարդ, որ քո կողմէ բռնէ։ Ո՛չ, թէ ես լինէի ազդի դաստաւորը, ես ինքս կ'լսէի ամէնուն և ինքս կ'զատէի արդարութեամբ»։ Ով որ կամենում էր նրան պատիւ տալ, որ պիսի արժան է թագաւորի որդուն, Արիսողոմ զրկում էր նրան։ Այսպէսով նա ազդին շատ սիրելի եղաւ, և ամէնքը կամենում էին նրան թագաւոր ունենալ։ Նոյնպէս իր կողմէ գցեց Արիսողի լին՝ թագաւորի խորհրդականին էլ, որ մեծ պատիւ ունէր խրայէլացուց մէջ։

Արիսողոմ չէր կասկածում իր չար խորհրդի յաջողութեան մասին։ Նա գնաց թագաւորի մօտ և հրաման ինդրեց նրանից Քերըն քաղաքը երթալու, որ զոհ բերէ Աստուծոյ ինչպէս խոստացել էր։ Դաւթիթ ասաց,

«Դնա Տէրըքեղ հետ լինի, որդեական, Արիսողոմ, Քերըն հանելից յետոյ, զոհ բերաւ և միւնցն ժամանակ կազմեց դաւակիցութիւն էլ հօր դէմ։ Նա առաւ թագաւորից հրաման միայն նորա համար, որ կասկածանքից աղստ լինի. Երեսպաշտը բարեկաշտութեան դէմքի տակ ծածկում էր իր աւելի ժողովուրդ հաւաքելու միտքը։ Գեռքերըն գնալից առաջ, խրկեց նա հրեշտակներ խրայէլացուց ամէն ցեղերուն, հրամայելով յայտնել նրանց. «Երբ կ'լսի փաղի ձայնը, Արիսողոմ Քերընում թագաւոր կ'ընտրվի»։ Ճողովուրդը ամէն կողմից հաւաքվում էր նորա մօտ և լրարեց նրան թագաւոր։

Դաւթիթ, երբ իմացաւ այս ապատամութիւնը, հարկաւոր համարեց հեռանալ փոքրաթիւ զօրքով, որ իր մօտ մնացել էր։ Այս փախուստի ակզրումն արդէն Վասուած խրկեց դաւթիւն միսիթարութիւն։ Նա ոստիվ փախաւ քաղաքից բոլոր իր ընտանիքով և շատ ժողովուրդ հետեւեց նրան։

Դաւթիթ կամսգնեցաւ նրուսաղէմի մօտ։ Այն ժամանակ եւկան նորա մօտ Յովաքը, Արիսան, Եթիթի և բոլոր վեցհարիւր հոգիքը, որոնք նորա թիկնապահներն էին Դաւթիթ, երբ անաստ այլազգի Եթիթին, որին նոր առել էր ծառայութեան մէջ, ասաց. «Դնա նոր թագաւորի մօտ, զոհ այլազգի ես, ես քեզ երէկ միայն ընդունեցի ծառայութեանս մէջ և այսօր զու կամենում ես ինձ ընկեր լինիլ թշուառութեանս մէջ։ Ես ինքս գեռ չգիտեմ, ինձ ինչ կ'լինի»։ «Որ տեղ էլ լինես, թագաւոր, ասաց Եթիթին, ես քեզ կ'ծառայեմ, ես դալիս եմ քեզ հետ կ'ենդանի մնալու կամ մեռնելու»։ «Գնանք,

եկ ուրեմն ինձ հետ», ասաց Դաւիթ, շարժած այսպիսի հաւասարմութիւնից: Ամէն ներկայ գանվայները լաց եղան և հետեւցին Եթեթի օրինակին: Ամէնքը գնացին իրենց թագաւորի եակեց:

Դաւիթ անցաւ կեղբանի հեղեղառը բոլոր իր մարդոց հետ: Այն ժամանակ եկան նորա մօտ Սարովի քառ հանայափետը և ամէն քահանաները բերելով Ռւխովի Տապանակը: Բայց Դաւիթ ասաց, «Քարձիր քաղաք Սուրբ Տապանակով», եթէ Աստուծոյ հաճոյ կլինի, կ'գտնամ Երուսաղէմ և Երկրագութիւն կ'տամ՝ Սուրբ Տապանակին Խորանում: Իսկ եթէ Աստուծ կ'թողնէ ինձ. ևս այն ժամանակ կատարեալ հպատակութեամբ կ'ամեց: Թող Քո կամքդ լինի, իսկ դուք դարձէք քաղաք»:

Դաւիթ գնաց բոկոն ձիթենեաց սարի զլուիր, զլիին մոխիր ածած և լաց լինելով: Մեծ թշուառութիւնը նորա համար իր գահեց զրկվելը չէր. այլ իր սիրելի որդուն ապատամութիւնը:

Սեմի, որ Սաւուղի թոռներից մէն էր, զուրս եկաւ Դաւիթի առաջը: Նա քարեր էր զցում Դաւիթի և նորա ուղեկիցներին վրաց, անիծում էր և գոչում. ամախիր, փախիր մեր Երկրից, զու անօրէն մարդ: Այժմ Աստուծ վրէմինդիր է լինում, Սաւուղի և նորա որդոց թափաված արիւնի համար, այժմ Աստուծ տալս է քո թագաւորութիւնդ քո որդուդ:

Արքան, Դաւիթին սիրող քաջ, հաւատարիմ և աւրի վիճուրը, զայրացաւ շատ, լելով այսպիսի նախատանքներ ու զբարառութիւններ և ասաց Դաւիթն, «Ի՞նչ պէս համարձակում է այս ատելին անիծել իմ թա-

գաւորիա Նա չեմ կարող համբերել այս բանին և կը կարեմ այն լրի զլուխը»:

Դաւիթ հեղութեամբ ասաց. «Միթէ զու մոռացար, որ իմ հարազատ որդիս զէնք է բարձրացրել: Ուրեմն էլ Բ'նչ յարգանք կարող ես ոլահանջել օտար մարդից: Թող նրան, թող անիծէ ինձ: Գուցէ Աստուծ կ'ողաբամի ինձ և նորա անէծքները կ'գտնան ինձ օրհնութիւններ»: Թագաւորը շարունակեց իր Ճանապարհը, իսկ Եսունին Երկար ժամանակ հետեւում էր նրան իր անէծքներով, սարից նորա վերայ քարեր զցելով և հող ցանելով:

Դաւիթ իր բոլոր ուղեկիցներով անցաւ Յորդանանը և հեռացաւ անապատը: Այս տեղ կարօտութիւն քաշում էին նորա ամէն սլաշարների համար: Մի առաքինի Տերունի, Յերզելի անունով և որիշ էլ Ելի Երկու ծմարիստ մարդիկ Երեխն թագաւորի և նորա ընկերակիցների համար անկողիններ, զանազան ամաններ և ամէն տեսակ ուտելու պաշարներ:

Ինչպիսի զանազանութիւն է անարժան Սեմիի վարմանքի և առաքինի Յերզելի աղնուութեան մէջ: Մէկը բամբառում է իր թագաւորին, տեսնելով նրան թշուառութեան մէջ, կարծելով թէ նա զուրկ է իրեն վնասելու միջոցներից, իսկ միւսը աշխատում է նրան օդնութիւն տալ. չյուսալով նրանից ոչինչ վարձատրութիւն:

ԳԼՈՒԽ ԿԵ.

Ա.ԲԻՍՈՂ.ՈՄԻ ՄԱՀ.

Դաւիթը մնաց անապատի մօտ եղած Մանայիմ (բանակ) քաղաքում և կարդի զրեց իր զօրքը: Նա բա-

Ժանեց նրան երեք մասը, մի մասին վերայ զօրավար զրեց Յովարին, միւսին վերայ Արիսային և երրորդի վերայ Նթթին: Զօրքը անյնում էր նորա մօտով և նա իր երեք զօրավարներին ասում էր. «մնայեցէք իմ որդուս Արիսողոմին»:

Արիսողոմն էլ նմանապէս հաւաքեց բազմաթիւ զօրք և հանդիպեցաւ Դաւթի զօրքին Եվլէմի անտառում: Արիսողոմի զօրքը ջարդվեցաւ և ինքը շտապեց ազատավել փախչելով: Նա գնում էր ջորիի վերայ նատած թանձը անտառի միջով: Արիսողոմի երկար գանդուր մազերը փաթաթվեցան ծառի ճիւղերին և ինքը կախվեցաւ, ջորին տակից դուրս եկաւ և գնաց: Դաւթի զինուորներից մէկը տեսաւ այս և յայտնեց Յովարին: Ինչու չափանիցիր դու նրան, ասաց Յովար: Ես քեզ կ'տայի դարս համար Ջիսուս սիկլ արծաթի»: Խոկ արդար զինուորը սպառափանեց: «Ես չէի առնել քեզից հազար դաշեկան էլ նորա համար, որ թաթաւէի ձեռս իմ թագաւորիս որդու արիսում: Ես լսեցի, ինչպէս թագաւորը հրամայում էր քեզ, Արիսային և Նթթին ասերով. «մնայեցէք իմ որդուս Արիսողոմին»:

Յովար զայրացած լինելով՝ ապերախաւ և անհնապանդ որդուն դէմ, առաւ երեք նետ, գնաց այն կողմը, ուր Արիսողոմն էր և խիեց նետը նորա պատին. բայց որովհետեւ Արիսողոմ գես կենդանի էր, ասան երիտասարդներ Յովարի ուղեկիցներից, որոնք հասան նորա մօտ, զըկեցին նրան կեանքից: Այն ժամանակ Յովար հրամայեց փողեր ածել, որ պատերազմը վերջացնեն, որովհետեւ խնայում էր նա իր հայրենակիցների արիսնը: Արիսո-

ղոմի մնարմինը զյեցին անտառում վիստի մէջ և ծածկեցին քարի շեղջով:

Յայտնի բան է, ամէն այստեղից անցկացողը տեմնելով այս միշտակարանը կ'սարափէր և միուր կ'բերէր Աստուծոյ պատուիրանը. «Պատուիր քո հօրդ և մօրդ, քեզ բարի կ'լնի և երկար կեանք կ'ունենաս երկիրս մերայց»:

Դաւթիթը քազաքի դրան մօտ նոտած սպասում էր պատերազմի յաջողութեան աւետիքին: Հուր բերողը, որ պատերազմի տեղից եկաւ, բերեց նրան Արիսողոմի մահուան համբաւը: Դաւթիթ շատ աիրեցաւ, մոտաւ մենահակ և դառնապէս լսց էր լինում, աղաղակելով. «Որդեակ իմ Արիսողոմ, որդեակ իմ, Արիսողոմ որդեակ իմ, ո՛չ. ո՞վ կ'տայ ինձ մահք քո տեղ»: Արիսողոմ որդեակ իմ, որդեակ իմ Արիսողոմ: Այսպէս էր ողբում Դաւթիթի իր տափերախաւ որդու մահքը, որ կամենում էր նրան դահից դրկել:

Գլուխ էր.

ԴԱՎԻԹԻ ԷՐ ԹԱԳԱՒԻՈՐՈՒԹԻՒՆ ԴԱՐԱՍԱԼԻ

Բողոք ժողովուրդը ուրախութեամբ Դաւթի առաջը դուրս եկաւ նրան ընդունելու: Սուրհանդակներ խրզկմեցան թաղաւորի մօտ խնդրելու նրան, որ շուած դառնաց իր մայրաքաղաքը: Դաւթիթ էլի մոտաւ նրաւսաղէմ:

Երբ Յորդանանին մօտեցաւ, հանդիպեցաւ Սեմիին, այն Սեմիին, որ այնպիսի ցածութեամբ նախասում էր նրան, զրապարտում և անիծում նրան անբաղդութեան ժամանակ: Սեմիին ընկամ թաղաւորի ոտնելը, ասելով.

«թաղաւոր, մառացիր այն զբկանքները, որ ևս քեզ  
տուի, քո Ելուսաղէմից վախչելու օրդ, ես յանցաւոր էի  
քո գէմ, բայց այժմ ես առաջնոր չեմ արգեօք, որ քո  
առաջդ դուրս եկայք Արիսան գոչեց, «և գեռ համար-  
ձակվում է պարծենալ, մի՛թէ Սեմին կենդանի կ'մնայ,  
նա, որ ամի՞ծում էր Աստուծոյ Յծեալին». Բայց աղնիւ  
սիրու միշտ պատրաստ է ներելու: Դաւիթ ասաց Արի-  
սային: «Ինչո՞ւ դու աշխատում ես ինձ վաս դործի մէջ  
դշել: Այսօր չպէտք է կորչի ոչ մի Խարայէլայի: Ո՞չ  
արդեօք այսօր դառայ էլի Խարայէլայւոց թագաւոր»:  
Յետոյ դառնալով Սեմին, ասաց նրան քաղցրութեամբ.  
«Սեմին, դու չես մեռնիլ իմ ձեռքիցա:

«Երպելին, ուժուն տարեկան ծերունին, նմանապէս  
դուրս եկաւ Դաւիթի առաջ ուրախ սրտով: Թագաւորը  
չորրհակալ եղաւ նրան և ասաց, «Եկ ինձ չետ, զնանք  
Երուսաղէմ: այն աեղ կ'կենսա ինձ մօն Հանգառութեան  
և լիութեան մէջ: Բերպելին պատասխանեց. «Թագաւոր,  
ես արդէն ուժուն տարեկան եմ, ինձ էլ երկար ժա-  
մանակ չէ մնում ապրել երկրիս երեսին: Ես էլ Հայմ  
չեմ տեսնում ոչ ուտերում և ոչ խմելում, երգեցողնե-  
րի երգերը ինձ էլ չեն տրախացնում, ես միայն ծան-  
րութիւն կ'լինեմ իմ թագաւորիս. իսկ վարձատրու-  
թիւն ինձ ամենեին Հարկաւոր չէ: Ես քեզ կամենում  
եմ էլի փաքք ինչ ուղեկից լինել և յետոյ Հրաման  
տուր ինձ տուն յետ դառնալ, այն աեղ կամենում եմ  
վերջացնել օրերս և թաղվել հօրս և մօրս զերեզմա-  
ների մօտ»:

Դաւիթ բոլոր ազգի ուղեկցութեամբ Յորդանանը

անցնելից յետոյ զրկեց Բերպելին և օրհնեց նրան. բայց  
էլ հօրը վարձատրելու համար, առաւ նորա որդուն իր  
աբքունիք և շատ ողորմած եղաւ նրան: Իսկ Բերպելին  
դարձաւ իր տուն:

ԳԼՈՒԽ ԿԹ.

ԴԱՎԻԹԻ ՄԱՀ

Դաւիթ հասաւ խորին ծերութեան և զգում էր  
արդէն իր մահուան մօտենալը: «Սա չէր բաւականանում  
նրանով, որ բոլոր կեանքը նուիրած էր Աստուծոյ անու-  
նը վառաւորելու և իր հպատակների բարօրութեանը,  
այլ կամենում էր գեռ իր մահից յետոյ էլ օգտաւէտ  
լինել: Այս այն զեղեցիկ բարեկարգութիւնները, որ նա  
արաւ իր մահից առաջ:

Դաւիթի սրտումն երկու ցանկութիւններ կային, որ  
կամենում էր կատարված տեսնել իր մահից առաջ:   
Առաջնոր՝ կանգնել Հցակալ տաճար Աստուծոյ և երկ-  
րորդը տալ թագաւորութիւնը իր որդուն Յողոմոնին:  
Այս առաջն ցանկութիւնը բայց արաւ Նամթան մար-  
գարէին, որ յայննեց նրան Աստուծոյ կանքը:

Իր մահից փաքք ժամանակ առաջ, Դաւիթ հաւա-  
քեց Երուսաղէմում ամեն իշխաններուն, մեծամածնե-  
րուն և բոլոր Խարայէլայւոց ազգին, որ ամենի առջե-  
բաց անէ Աստուծոյ կատքը, որ Նամթան մարգարէի միջ-  
նորդութեամբ յայննեցաւ իրեն: Բազմաթիւ ժողովի  
մէջ ասաց նա յետագայ խօսքերը.

«Եղայրներ, իմ ժողովուրդս, ես կամենում էի կանգ-  
նել տուն, որ դնիլ նորա մէջ Ուխտի Տապանակը. և

պատրաստեցի ամէն հարկաւոր նիսթերը նորա համար բայց Աստուած ասաց ինձ. «Դու չես կանգնել ինձ տուն, որի մէջ կ'փառաբանվի իմ անունա, զու զինուոր էիր և շատ արիւն թափեցիր» Քո որդիդ Սողոմոնը թող կանգնէ իմ տունա «Կա ինձ որդի կ'լինի և ես նորա հայր. ես կ'զօրացնեմ նորա թագաւորութիւնը, եթէ կ'պահէ իմ պատուիրաններս»:

«Աստուծոյ իրեն առջեւ և բոլոր ազգի ներկայութեամբ, պատուիրում եմ ձեզ, որ կատարէք Աստուծոյ պատուիրանները, այն ժամանակ հանգստութեամբ կարիքէք երկը բին որ Աստուած ձեզ տուեց և կ'տաք այն ձեր որդոցը ժառանգութիւն»:

Խոկ զու, որդեակ, Սողոմոն, պաշտիր քո նախնիքների Աստծուն, և ծառայիր նրան սուրբ պատով: Աստուած փորձում է մեր սրտերը և տեսնում է մեր խորհուրդները ֆնտուիր Աստծուն և կ'գանես նրան, բայց եթէ կ'հեռանաս նրանից, նա էլ կ'թողնէ քեզ յաւիտեան: Աստուած ընտրեց քեզ, որ կանգնես նրան տաճար, կատարիր Ամենաբարձրեալի կամքը»:

Դաւիթը տաճարի շինութեան համար թողեց Սողոմոնին շատ սոկի, արծաթ, պղինձ, երկաթ, քար և փայտ: «Չնայելով, որ ազքատ էի ես, ասաց նա Էլի կարողացայ Աստուծոյ տան շինութեան համար հաւաքել այսպան նիւթեր»:

Ամէնքը հետևեցին թագաւորի օրինակին, ամէն մարդ բերում էր շինութեան համար, որչափ իր կարողաթիւնը ներում էր, ոսկի, արծաթ, ժանագաղին քարեր, երկաթ, պղինձ և այլն: Ճողովարդը ուրախանում էր

տեսնելով տաճարի շինութեան համար սրոտանց բերած նուերների այնքան բազմութիւնը. բայց թագաւորը ինքը ամէնից աւելի ուրախանում էր: Կա բարձր ձայնով, բոլոր ազգացին ժողովի առջեւ, փառաբանում էր Աստուծուն:

Դաւիթ շնորհակալութեան գոհ բերաւ Աստուծոյ և տօնեց բոլոր ազգի հետ միասին այս օրը:

Սողոմոն դեռ իր հօր կենդանութեան ժամանակը օծվեցաւ Խարայելացւոց թագաւոր: Խշանները, մեծամեծները և ազգը ուրախանում էին այս ընարութեան վերայ: Ոյսպէս, արքունի զորքերը կարգադրելից յետոյ, Դաւիթ յանձնեց կառավարութիւնը իր որդուն:

Մահուան մահճումը պարկած, Դաւիթ ասաց Առզումնին, «Ես զնում եմ այստեղ, ուր ամէն մահկանացու պէտք է երթայ, խոկ զու մթիթարիլիր և եղիր կատարեալ մարդ: Պահիր Աստուծոյ ուխտը, զնա նորա ցոյց տուած ճանապահով և կատարիր Սովորի օրէնքներումը զրած պատուիրանները: Թող կատարիլի Աստուծոյ խօսքը, որ նա ինձ ասաց. «Եթէ քո որդիքդ հաւատարիմ կ'մնան իմ պատուիրաններիս, քո զաւակիդ թագաւորութիւնը Խարայէլի գահից երբէք չի դադարիլ»:

Գլխաւոր խոստումն, որ Աստուած տուեց Դաւիթին և որ մահիթարեց նրան մահուան բոսէնին, էր այն թէ Դաւիթի զաւակից կ'ծնի Փրկիչը:

Դաւիթ վախճանեցաւ խորին ծերութեան մէջ. թագաւորեց Սաւուղեց յետոյ քառասուն տարի և թաղեցին նրան Սիոնի սարի վերայ:

Գլուխ Հ.

ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱԽՈՐԸ

Աղղոմնը դեռ Երիտասարդ էր, երբ նստաւ Խարայէլի գաղը: Թէ ինչպիսի զգացմունքներով տգեւորած էր նա իր թագաւորութեան սկզբին, կարելի է Նկատել յետագայ ինդիքից: Ասուուած երազում ասաց նրան, «ինդրիք ինձանից, ինչը ուղում ես: Սողոմն պատասխանեց, «Ես դեռ Երիտասարդ եմ և անփորձ Դու, Տէր Աստուած, յանձնեցիր ինձ բազմաթիւ ազգի կառավարութիւնը: Խնդրում եմ քեզնից սուրբ սիրտ և հանձար, որ կարողանամ կառավարել ժողովրդեան և դատել նրան արդարութեամբ և առանց կողմնասպահութեան: Տուր ինձ միտք, որ կարողանամ բարին չարիցը զանազանել որովհետեւ ինչպէս կարելի է, առանց իմաստութեան կառավարել այսպիսի բազմաթիւ ազգին»:

Այս խօսքերը հաճոյ թուեցան Աստուծոյ, նա ասաց Սողոմնին, «որովհետեւ դու չինդրեցիր ինձանից ոչ երկար կեանք, ոչ քո թշանամիներիդ մահ, ոչ փառք և ոչ հարատութիւն, այլ ինդրեցիր իմաստութիւն, Ես տալիս եմ քեզ ոչ միայն, ինչ որ ինդրեցիր այլ և ինչ որ չինդրեցիր էլ՝ այն է հարատութիւն և փառք: Ես կ'տամ քեզ, միտք և իմաստութիւն, քեզ նմանը չէ եղել քեզնից առաջ և ոչ էլ կ'լինի քեզնից յետոյ: Միայն պահիր իմ ուխտա և մարմիք իմ պատուիրան ներիս յարմար, ինչպէս վարփում էր քո հայրդ»:

Աղղոմն զարթեցաւ ուրախութեամբ լիքը Արտով և Երտասաղէմում Ռւխտի Տաղանակի առաջն բերաւ Աստ-

առեծոյ շնորհակալութեան մատաղ: Շուտ սրանից յիշաց եկան նորա մօտ երկու կանայք: Սրանցից մէկը առում էր «թագաւոր» եւ քեզ մի խնդիրը ունիմ աւելու, եւ բնակում եմ այս կնոջ հետ միասին մի տանը, ուր մեր երկուսից ուրիշ ոչ չկայ: Երկուսս էլ ունենիք մի մի երեխայց: «Եա քնած տեղը, երբ ես էլ քնածմ էի, խեղգեց իր որդուն, իմ կենդանի երեխայիս վեր առաւ իր մօտ և իր մեռած երեխային զրեց ինձ մօտ: Առաւոտը, երբ զարթեցայ, տեսայ այս մեռած երեխային, բայց լաւ նայելով Ճանաչեցի որ երեխայն իմն չէ, այլ նորանն է»: Միւս կինը ասաց. «այդ սուտ է, իմ երեխայս կենդանի է, այլ քո երեխայդ մեռաւ»: «Զէ»: Կանչեց առաջնիւր պուտ սուտ ես ասում: «Այսպէս վիճում էին նորա թագաւորի առջև: «Տուե՞ք սուրբ»: առայց Սողոմն: Թուրը բերին և Սողոմն ասաց. «Կէս արէք կենդանի երեխային և տուե՞ք ամէն մի կնոջ մէկ կէսը»: Այս խօսքերը լսելիս հարազատ մօր սիրտը սարսացաւ: «Զէ, թագւառոր, աղաղակեց նա, մի հրամայիր երեխային սպանել. տուր նրան կենդանի այս կնոջ»: Իսկ միւսը ասաց. զլաւ է նրան կէս ամել, թողու ոչ զրան լինի և ոչ ինձ»: Այս խօսքերից թագաւորը այն բովէին ճանաչեց իսկական մօրը. մայրական սէրը յայտնեց նրան: Սողոմն ասաց. «առուե՞ք երեխան առաջն կնոջը. նա է նորա մայրը»: Այս դատաստանը յայտնի եղաւ Խարայէլի բոյը երկրում և թագաւորը հասարակաց յարդութեան նրժանացաւ: Ամէնքը տեսնում էին, որ Աստուած նրան իմաստութիւն տուել է: Այս իմաստութիւնը փառաւորեց նրան առաջ նրան ամէն տեղ: Նորա թագաւորութեան ժա-

մանակ Խսրայէլացիները վայելում՝ էին խաղաղութիւն և  
հանգստութիւն։ Ամէն դրացի թագաւորները Սողոմոնի  
հետ բարեկամութեան ուխտ դրին, և նորա ամէն մի  
հպատակը կարողանում էր առանց երկիւղի նատել իր  
այդում և իր թգենիի տակ։

ԳԼՈՒԽԸ

### ՏԱՅԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Սողոմոն կանգնեց Աստուծոյ հցակաս տաճար։ Երբ  
շնորածքը վերջացաւ, ժողովեցան ամէն ծերերը և Խսրայէլացոց բոլոր ազգը։ Քահանաները այս հանդիսա-  
ւոր ժողովի առջև աեզափախեցին նուխտ տապանակը  
տաճարի ամէնից ներքին մասը, որ կոչվում էր Արքու-  
թիւն պրոց։ Պատրաստած էին շատ գոհեր։

Սողոմոնը մօտեցաւ բոլոր ազգի առաջնորդ գոհարանին,  
ծունը իջաւ և իր աղօթքումն ասաց յետադայ խօսք-  
ըլն էլ։

«Տէր, Խսրայէլի Աստուծ, դու ես ամենուքի մի Աս-  
տուծը։ Քեզնից ուրիշ Աստուծ չկայ ոչ երկնքում  
և ոչ երկում։ Դու տայիս ես քո ողորմութիւնդ ա-  
մէնին, որոնք Ճշմարտութեամբ պաշտում են քեզ։ Թող  
կատարվին իմ հօրս Դաւթի տուած ամէն քո խօ-  
տումներդ։ Յիշաւի կ'ընակի՞ արդեօք Աստուծ մարդոց  
հետ երկրիս վերայ։ Եթէ երկնքը և երկնից երկնքը չեն  
բաւական քեզ պարունակելու, առաւել ես այս ասճարը՝  
որ ես շնեցի քո անուանդ համար։ Տէր և Աստուծ  
Խսրայէլի։ Այս աղօթքի տանը մէջ նացիր մեր, քո ծա-  
ռաներիդ, վերայ։ Թող բարձրանան այսուղեց մեր խոն-

դիրքներս քեզ մօտ, ցերեկը և դիշելը լին մեզ։ Եթէ  
մեր մեղաց համար կ'փակի երկնքի դաւոր, կ'գայ երաշ-  
տութիւն և քո ժողովուրդ զզջալով և բեկեալ պատով  
կ'գայ այս տաճարը աղօթելու։ Մին նորա խնդրքի ձայ-  
նը, ներիր նրան իր յանցանքը և ջօնիր երկիրս անձրեսով։

«Խնչպիսի թշուառութիւն էլ որ հասանի այս թա-  
գաւորութեանը՝ սով, ջրհեղեղ, երկրաշարժ, ցաւ, կրակ,  
այլազդիների յարձակումները և լին քո մարդոց, որոնք  
այս տաճարումն աղօթքը կ'անեն, և ողորմիր նրանց»։

«Եթէ կ'գայ մի այլազդի հեռու երկրից այս տաճա-  
րում քեզ աղօթք անելու, լին նրան էլ, Տէր Աստ-  
ուծած։ Կատարիր նորա խնդրքը, թող իմանան երկրին  
ամէն ազգերը քո անունդ և երկնչին քեզնից և գիտե-  
նան, որ քո անունդ դրած է այս տաճարիս վերայ, որ  
ես քեզ կանգնեցի»։

Երբ աղօթքը վերջացրեց, Սողոմոն վեր կացաւ, օրհ-  
նեց բոլոր ազգին և յորդորեց նրան պահել Աստուծոյ  
ամէն պատուիրանները և չանցնել Մովսէսին տուած  
օրէնքներից։ Այն ժամանակ երկնքից ընկաւ կրակ պա-  
տրաստած զոհերի վերայ և բոլոր ժողովուրդը ընկաւ  
դետինը, փառաւորելով Աստծուն։

ԳԼՈՒԽԸ

### ՍՈՂՈՄՈՆԻ ՄԱՀԸ

Վարունակ բաղդաւորութիւնը, Սողոմոնի սրբում  
աւելի սէր և չնորհակալութիւն զարթեցնելու տեղ դէ-  
պի Աստուծած, նրան փչացրեց։ Նա Ճշմարիտ Ճանապար-  
հից մարդովեցաւ և սկսաւ դէպի կռապաշտութիւն հա-

կիլ: Այսպէս մարդոց ամէնից իմաստունն էլ, եթէ իր կըքերին կ'յանձնէ իրեն, ընկնում է մողբութեան մէջ:

Սողոմնը շատ կանացք ունէր և օրէնքների ընզդէմ, որոնք արգելում էին ամռանութիւնը կուազաշների հետ, կային նորա կանանց մէջ մի քանի կուազաշներ էլ: Իր ծերութեան ժամանակ, նրանց միտոք գրաւելու համար, նա հրաման տուեց շնուր կոքերի բազիններ Երուսաղէմի մօտերումն: Այսպէսով ինքը օրէնսդու տուեց աղջին Աստուծայ օրէնքից անցնելու:

Աստուած յայտնեց Սողոմնին, որ նորա թագաւորութիւնը կ'բաժանվի և թէ այս թշուառութիւնը կ'ուշանայ փոքր ինչ նորա հօր Դաւթի առաքինութիւնների համար ինքը Սողոմնը չի տեսնիլ այն, այլ կ'լինի այն նորա պուտոց ժամանակը:

Սողոմնի ճշմարիտ Աստուծմէն հեռանալու ժամանակից սկսան խոռովութիւնները խանդարել նորա հանգառութիւնը, և նա ինքը, իր կեանքը զեղիսութեան մէջ անցկացնելով, վաղ ծերացաւ: Իր մահից փոքր ժամանակ առաջ Սողոմն զզջաց և այս ժամանակ զրեց իր գիրքը երկրացին ամէն բաների ունայնութեան միրայ: Այս զիրքը Աստուածաշնչումն կոչվում է ժողովող (Եղիեստիաստէս): Այս զիրքի զիլսաւոր միտքերը յեռագաներն են: «Աս մեծ զործքեր արի, շնուցի աներ, ունէի շատ ծառաներ և աղախիններ, ունէի մեծ խաչներ, հաւաքեցի անթիւ գանձեր, ինձ մօտ պահում էի երգիներ և երգեցող կանանց, ամէն կարելի ուրախութիւնները անսում էի, կատարում էի ամէն ցանկութիւններա—բայց ոչնչ չէր ուրախացնում սիրտ, և ս

տեսոյ, որ ամէնը ունայնութիւն էր և հոգւոյ չարչարանք: Արեգակի տակը ոչնչ հաստատ բան չկայ: Ամէն խմաստութեանց բովանդակութիւնն է յետագայն: «Վախեցիր Աստուածմէ և պահիր նորա պատուիրանները»:

Գլուխ ՀԳ.

ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՎԻԼԻ

Սողոմնի մահից յետոյ, նորա որդին Ռոբովամը նրատաւ Խարայէլի գահը: Նա չէր լսում իր հօր ծեր և փորձատու Խորհրդականներուն և վարվում էր ազգին հետ հապատութեամբ ու խստութեամբ, որ էլ եղաւ պատճառ նորա թագաւորութեան բաժանվելուն: Տան ցեղերը ապստամբեցան նրանից և ընտրեցին թագաւոր Յերոբովամին, Եփրեմի տոհմից: Միայն երկու ցեղերը մնացին հաւատարիմ Դաւթի տան, այն է, Յուդայի և Անիամինի ցեղերը: Տան ապստամբած ցեղերը Յերոբովամի առաջնորդութեամբ կազմեցին առանձին տէրութիւն, որ կոչվեցաւ Խարայէլ թագաւորութիւն: Մի քանի ժամանակից նորա մայրաքաղաքը դառաւ Ասմարիան: Ամէն այս տան ցեղերը յաճախ ընկնում էին կուազաշութեան մէջ:

Որովամը, որ թէև իր ձեռին ունէր մայրաքաղաքը՝ Նրուսաղէմ, միայն տիրում էր ազգի շատ փոքր մասին: Նորա տէրութիւնը կոչվում էր Յուդայի թագաւորութիւն: Այս ժամանակից բոլոր Խարայէլացւոց ազգը կոչվում է յաճախ Յուդայ: Բայց բայց 'ի սրանից, թէ Յուդայի թագաւորութեան և թէ Խարայէլի տէրութեան հպատակները կոչվում էին նմանապէս Աբրայէցիք, Եթերի

անունով, որ Սէմի դաւակն էր և Արքահամի նախահայրը:

Երկու թագաւորութեանց բաժանվելը շատ մնասակար չետևանիքներ ունեցան, երկու թագաւորութիւնները շատ մնամ պատերազմում էին միմեանց հետ: Յուղայի թագաւորները, բայց ՚ի մի քանիսից, մոռանում էին ճշմարիտ Աստծուն, ազգը ընկաւ տղիառութեան և մեղքի մէջ:

Թագաւորներուն և ազգին ուղղելու համար, Աստուած Խրկում էր երրէմն երբէմն սուրբ Մարգարէներուն: Սոքա նախադուշակում էին ապագայն և աշխատում էին մարդոց ուղղելու:

Յուղայի թագաւորների անունները, որոնք թագաւորեցին երկու ցեղերի վերայ, են՝ Ռորովամ, Սրիու, Ասա, Յովսափատ, Յովսամ, Ռքովիա, Յովսա, Ամասիա, Ազարիակամ, Ողիսա, Յովսիա, Յովսիմ, Սկրնիա, Սեղեկիա: Խարայէլ թագաւորների անունները, որոնք կառավարեցին տասն ցեղերուն, են՝ Յերորովամ Ա. Նաբատ, Բասասա, Էղա, Զամբրի, Ամրի, Սքասար, Ռքովիա, Յովսիամ, Յէու, Յալքարիա, Սելլում, Մանայիմ, Փակէէ և Ովսէէ:

Գլուխ ՀՊ.

ՅՈՒԴՈՅԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ՎԻՐԱՅ.—ՅՈՒԴՈՅԻ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԿՆԻԼԻ

Խարայէլ ցեղերի թշուառ բաժանմանքից յետոյ, ինչպէս ասացինք, Դաւթի զաւակները թագաւորեցին

միայն երկու ցեղերին վերայ այն է Յուղայի և Յէնիամինի, նոցա մայրաքաղաքն էր Երուսաղէմը, ուր էր Սուրբմանի հոյակապ տաճարը, բայց Յուղայի թագաւորների մեջ մասը Աստուծոյ օրէնքից չեռանում էր և ընկնում՝ կրտպաշտութեան մէջ: Յուղայի քանի թագաւորներից միայն ութն էին բարեպաշտ: Ահա նոցա աշնունները Ասա, սորա որդին Յովսափատը, Յովսա, Ամասիա, սորա որդին Ազարիան, սորա որդին Յովսաթամը, Եղեկիա և Յովսիա:

Միանգամ Դաւթի ցեղը հազեւ ազատվեցաւ Ճնջվելց: Աստուած Հրաշալի կերպավ ազատեց այս բարեպաշտ թագաւորի յետագամներից մէկին միայն, որովհետեւ նրան խաստացած էր, որ նորա զաւակից կ'ծնի Մեսիան:

Յովսամը, Յովսափաթի որդին, իրեն կին ունէր Խօսբայէլի չար թագաւորի՝ Աքաարի աղջկան Գողողիային: Յովսամի մահից յետոյ շուտ վախճանեցաւ նորա որդին Ռքովիան էլ: Ռքովիայի մայրը, Գողողիան, իշխանակը, արիւնահեղ կինը, կամենալով ինքը թագաւորել, վրձնեց արքունի ցեղը Ճնջել: Այս սարսափելի սպանութեան ժամանակ Ռքովիայի մի տարեկան որդուն Յովսամին թագցրին: Նրան, ծրծմօր հետ միասին ազատեց իր ազգականը, Յովիսա քահանացապետի կինը, Աստուծոյ տաճարում: Երեխան կրթվեցաւ քահանաների մէջ Աստուծոյ տանը և նորա հովանաւորութեան տակ վեց տարի: Գողողիան չէր իմանում նորա կինդանի լինելը:

Երբ Յովսաը եօթն ապեկան կառաւ, Յովիտա քահանացապետը ժողովեց բոլոր քահանաներուն և Ղետա-

շիներուն և պատեց տաճարը զինաւորած մարդերով . ո-  
րոնց հաւատարմութեանը հաւասարի էր: Ճողովուրդը մեծ  
հետաքրքրութեամբ ժողովեցաւ տաճարի մօտ, սպասելով  
մի արտաքրյ սովորութեան բանի: Այն ժամանակ քա-  
հանայալեալ զուրս համեց եօթն տարեկան երեխային և  
աղաղակեց: «Ցուղայիք, ահա ձեր թագաւորը Յովաս,  
Ոքողեայի որդին, որ ազատվեցաւ Գողողեայի ձեռքից»:

Ըոլոր ազգին առաջին Յովասը օծվեցաւ թագաւոր և  
բոլոր տաճարը լրցվեցաւ փողերի ձայնով և ուրախու-  
թեան աղաղամիներով: Ազգը ուրախութեամբ բնեղունեց  
մատաղ թագաւորին, որ Դաւթի ցեղի Ճիւղն էր:

Յովաս սկզբումն թագաւորում էր բարեսպաշտու-  
թեամբ, բայց Յովիդայի մահից յետ, մեծամեծները  
խնդրեցին և սուցան թագաւորից հրաման աղօթք ա-  
նելու տաճարում, ոչ թէ ճշմարիտ Աստծուն, այլ կուռ-  
քերին: Յովիդայի որդին Զաքարիա քահանան ընդ-  
դիմացաւ այս բանին, բայց թագաւորի հրամանով  
քարիրծվեցաւ տաճարի բակի մէջ: Զաքարիան ասաց:  
«Աստուած կ'լինի դատաւոր իմ և քո մէջ»: Յովասը  
բազմաթիւ զօրքով Զարդվեցաւ Ասորոց թագաւորից և  
յետոյ սպանվեցաւ իր սեպհական ծառաների ձեռքով:  
Յովասից յետոյ Յուդայում թագաւորեցին առհասարակ  
բարեպաշտ թագաւորներ՝ Ամախան, յետոյ նորա որդին  
Աղիան, որին յաջորդեց իր որդին Յովաթամը, բայց Յո-  
վաթամի որդին Աքազը չհետեւեց իր նախորդների բա-  
րեպաշտութեան, նա փակեց Սոլոմոնի կանդնած տա-  
ճարը և շինեց շատ սեպաններ կոքերի համար:

Աքազի բարեպաշտ որդին Եղեկիան, որի ժամանակ

Խորայէլի թագաւորութիւնը վերջացաւ, բայց արաւ Աս-  
տուծոյ տաճարը, զարդարեց նրան և քանդեց կոքերի  
ամէն սեղանները: Սորա ժամանակի Ասորեսատանի թագաւ-  
որը Սենեքերիմ, Սաղմանասարի որդին, պաշարեց Ե-  
րուսաղէմը, բայց մահուան հրեշտակը մի գիշերում  
ջնջեց Ասորեսատանցոյ զօրքը և Սենեքերիմ, թողնելով  
Նրուսաղէմի պաշարումն, գարձաւ Նինուէ:

Վանասէն պաշտպանում էր կուսպաշտութիւնը և  
անմեղաց արիւնով ջրեց բոլոր Երուսաղէմը, միայն Ա-  
սորեսատանցոց ձեռքը գիշերի ընկած, նա Աստուծոյ առա-  
ջին սրտանոյ զղջացաւ և սուցաւ թողութիւն: Ովսիա,  
Մանասէի թոռը, մինչև իր մահը էր առաքինի: Նա  
թագաւորեց ութիւր տարեկան և միշտ հաւատարիմ  
մնաց Ճշմարիտ Աստծուն:

Յուդայի թագաւորութիւնը Տաղկեցաւ էլի Հարիւր  
տարի, Խորայէլի թագաւորութեան ընթնելից յետոյ.  
վերջապէս նորա վերայ էլ հասաւ Աստուծոյ արդար  
դատասասանը: Ասոււած մատնեց նրան Բարեկընի Նաբու-  
գոզոնոսոր թագաւորի ձեռքը: Այս աշխարհակալը Յու-  
դայի Յովակիմը թագաւորին իրեն հարկաւու արաւ-  
նուա սրանից յետոյ Նաբուգոզոնոսորը նորա որդուն Յե-  
քոնային բոլոր Յուդայի մեծամեծներով միասին Բարեկըն  
գիշերի տարաւ: Տան տարիից յետոյ, Աեղեկիս թագաւո-  
րը կամեցաւ ազատվել յաղթողների ծառացութեան  
Ծիցը: Նաբուգոզոնոսոր հրամայեց Աեղեկիայի աչքերը  
համել, ինչպէս կուտարարի և նորա ներկայութեան  
ժամանակը սպանեցին նորա բոլոր որդոցը: Սոլոմոնի հոյ-  
ական տաճարը այրեցին և Նրուսաղէմ քաղաքը քարե-

րի շեղջ դարձրին: Յուղայի ազդը իր կյար թագաւորի հետ միասին գերի գնաց բարելոն: Այս պատահեցաւ 588 տարի Քրիստոսից առաջ: Այն ժամանակից երուսաղեմ մնաց ամայի և տաճարը քանդած, ընկած էր, մինչև որ Պարսից թագաւորը Կիւրոս, բարելոնին ափրելով, Յուղայի գերիներուն դարձրեց իրնաց հայրենիքը:

Գլուխ չե.

ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԴԱՒՈՐԱԴԻԹԻՒՆԻ,

ՍՈՒՐԲ ՄԱՐԴԱՐԷՆ ԵՂԻԱ.

Իսրայէլի թագաւորները, առանց բացառութեան, ամէքը հակամիտ էին դէպի կուսպաշտութիւն: Բայց ամէնից չարը և ամբարեպաշտը էին Աքաար և նորա կինը Յեղարել: Նորա ոչ միայն բահազի կոքին բաղին շննեցին: այլ և հալածում էին մարդարէներուն և ամէն Ճշմարիս աստուածապաշտներուն: Աքաար թագաւորի պալատականերից մէկը, Արդիու անունով, էր երկիւզած Աստուծոյ, սա պահեց այրերի մէջ Աքաարի և Յեղարէլի դաշտնութիւնից հարիւր մարդարէներու: այստեղ թագուն տանում էր նրանց կիրակուր և ամէն հարիւր բաները: Իսկ Եղիա մարդարէն փրկեց Աստուած Բնքը:

Սուրբ Եղիան, միանդամ յայտնիքը Աքաարի առջեւ, ասաց նրան: «քո մեղքերի և կուսպաշտութեանդ պատճառով: յայտնում եմ քեզ, որ այս օսից սկսած երկիրից ըննինիւ ոչ մի կաթիւ անձրեւ և ոչ ցող, մինչեւ որ ես նորա համար աղօթք չանեմ Աստծուն: Աքաարը չլախեցաւ այս պատճառիքից: այլ միտը դրեց թա-

դուն ապանել Եղիային: Աստուած ինքը փրկեց մարդարէին, առելով նրան: «Հեռացիր այս տեղից և թագնվիր Քուաթու հեղեղասի մօա, որ Յորդանանի մէջ է վաղում: Նա հրամայեցի իմ ազգաւներիս, որ քեզ կերակրէն:» Եղիան հպատակեցաւ և ուղափոխեցաւ Քուաթու հեղեղասի սփը, Յորդանանի մօա: Նա բնակում էր հեռու մարգոց հսապակութիւններից: հեղեղասրտայիս էր նրան խմելու ջուր, և առառօտ ու երեկոյեան աղուաները բերում էին նրան միա և հաց ուտելու:

Իսց երկար ժամանակ անձրեւ չգալից և սասարկ տապից Քուաթի հեղեղան էլ ցամաքեցաւ: Սուրբ Եղիան ջրի պակասութիւն զգում էր: Այն ժամանակ Աստուած ասաց նրան: «Պնա՛ Սիրոնացւոց Արևիթա քազաքը, այնտեղ ևս կհրամայեմ մի սյրի կնոջ, որ քեզ կերակրէ:» Մարդարէն հպատակեցաւ և երբ եկաւ քազաքի զրան մօա, տեսաւ մի սյրի կնոջ, որ վայս էր մաղովում: Սա էր այն կինը, որի մօա Աստուած նրան խրկեց:

Սուրբ Եղիան մօտեցաւ սյրի կնոջ և տասյ. «Ես շատ ծարաւ եմ, տուր ինձ ջուր:» Այրին շատ բարի կնիկ էր: Նա այն րոպէին գնաց ջրի եռելից: Եղիան նորա եռելից ձայն տուեց, որեր ինձ հաց էլ. ևս քաղցած եմ: — Աստուած ինքը վկայ է, ասաց սյրին, որ ևս ոչ մի կտոր հաց չունիմ: Ես ունեմ մի բուռը ալիւր միայն սափորիս մէջ և փոքր ինչ իւղ ամանում: Ես եկայ այստեղ, որ մի քանի կտոր փայտ գտնեմ և եփեմ: մնացած ալիւրից նկանակ: Այս վերջին կերակուրն էլ ուտելից յետ, իմ որդուս հետ միասին, մենք պէտք է

մեռնենք սովորյաց Եղիան ասաց նրան. «մի՛ վախենարէ եփիր նկանակդ. միայն այն այստեղ ինձ մօտ բեր և յետոյ կեփես քո և որդուդ համար էլ: Ասուած ասաց. որ «ալեւրդ և իւղդ չեն պակասիլ մինչև այն օրը, երբ կ'զայ անձրեւ երկրիս վերայց: Բարի այրին հաւատով լսեց Մարգարէի խօսքերն, կատարեց ամէնը, ինչոր ասաց նըրան Սուրբ Եղիան, կշտացաւ ինքը և իր որդին և այն ժամանակից սկսած չէր պակասում ոչ նորա ալեւրը և ոչ իւղը:

**Սուրբ Եղիան բնակեցաւ նորա տանը:**

**Մ'** քանի ժամանակից այրիի որդին հիւանդացաւ և մեռաւ: Սուրբ Եղիան, տեսնելով մօր անմիտթար արտասուքը, առաւ երեխայի մարմինը, զրաւ իր անկողինի վերայ. յեաց ջեռմեռանդ աղօթքով դարձաւ դէպի Աստուած, վչեց երեք անգամ՝ մեռածին և երեխան վեր կացաւ և յանձնվեցաւ իր մօրը:

Գլուխ ՀՀ

Եղիանի ԶԱՀՅ

**Սուրբ Եղիայի մարգարէութիւնը,** որ նա ասաց Աքաշ արին, կատարվեցաւ. երեք տարի և վեց տմիս անձրեւ և ցօղ չիջաւ, ամէն ջրի աղբիւրները ցամաքեցան, երկիրը չոտեց ոչ ցորէն և ոչ խոտ. Խրայէլ թագաւորութեան մէջ սարսափելի թշուառութիւն էր: Ծառերը կանդնած էին առանց տերեկի և գաշտերը ընկած առանց խոտի: Ամբողջ անտառներ չորացան, անասունները կոտորվում էին և մարդիկ մեռնում:

**Ա** երջապէս Խրայէլացիները զզացան, դարձան նըրան, որ միայն կարող է ջրել երկրիս պտղաբեր անձ-

մեռվ և զովացնել նրան երկնային ցօղով. նոքա սկսան աղօթք ամել ամենազօր Արարէն և Աստուած ասաց Եղիային. «գնա՛ յայտնվիր Աքաարի առջեւ, ես կ'տամ երկրիս անձրեւ»: Սուրբ Եղիան հպատակեցաւ:

**Ա**յս ժամանակ ինքը Աքաար թագաւորը բարեպաշտ Արդիութի հետ ճանապարհորդութիւն էր մեռնում, վնասուելով մի ձոր հեղեղատով, ուր կարելի լինէր արածել արքունի ձիերուն և ջորիներուն, աշխատելով գոնէ մի քանի անասուն կենդանի պահէլ Խրայէլի երկրում: Թագաւորը գնում էր մի ճանապարհով և Արդիուն միւսով: Յանկարծ Եղիան հանդիպեցաւ Արդիունի և ասաց նըրան. «յայտնիր թագաւորին խմ գալուստս»:

**Ե**րդիուն յայտնեց թագաւորին, որ Եղիան, որին ամէն տեղ վնասում էր, ինքը եկել է նորա մօտ: Թագաւորը ասաց մարգարէն, «այն դու ես, որ խոռոշում ես Խրայէլի ազգին». — «Ես չեմ այն», պատասխանեց Եղիան. «այլ դու ինքդ և քո հօրդ տունը: Դու մոլոցուցիր նըրան Աստուծոյ ճանապարհից և ստիպեցիր կոքերին երկրագործութիւն տալ: Խրկիր ամէն կրղմ հրեշտակներ, որ ժողովն քո աղդդ կարմելոս ընրան վերայ, թող գան այն տեղ նոյնպէս Բահաղի քուրմենն էլ:

**Ա**մէնը ժողովեցան Կարմելոս լեռան վերայ: Բահաղի քուրմերը չորս հարիւր յիսուն հոդի էին: Իսկ Եղիան էր միայն Ճշմարիտ Աստուծոյ մարգարէն: Նա առաջարկեց պատրաստել երկու զոհ, մէկը Բահաղի համար և միւսը Խրայէլի Աստուծոյ համար և ասաց ազգին, թէ Ճշմարիտ Աստուածը նա է, որ կ'խրկէ երկնքից կրակ զոհի վերայ: Բոլոր աղդը աղաղակերով համաձայնեցաւ այս առաջարկութեան:

Բահաղի քուրմերը առաջնոր սկսան բերել իրենց  
զոհը: Մորթեցին մի եղն, դրին նրան զոհարանի վերաց  
և քուրմերը սկսան աղաղակել: «Բահաղի, լի՞ր մեզ  
բահաղ, լսիր մեզ»: Նոքա ծունը իջան, պատում էին  
սեղանի չորս կողմուր, կանչում էին, բայց նա չէր կարո-  
ղանում լսել նրանց, նոքա ոչինչ պատասխան չստացան:  
«Բարձր ձայնով կամչեցէք», ասում էր Եղիան, «գուցէ  
քնած է ձեր Աստուածը կամ զբաղած է ուրիշ դոր-  
ծով, նրան պէտք է զարթեցներ». Բահաղի քուրմերը  
գուտում էին, ծեծում էին իրենց և ծակծկում իրենց,  
մինչեւ որ արիւն էր գուրս գալիս. բայց ամէնը՝ ի զուր  
էր, այսպէս գուտում էին նոքա առաւօտից մինչեւ երե-  
կոյ, միսյն ոչ ոք նրանց ոչ ձայն տուեց և ոչ լսեց: Այն  
ժամանակ Եղիան ասաց աղջին: «Ամստացէք ամէնքդ ինձ»:  
Ժողովուրդը մօտեցաւ: Եղիան կանոննց Աստուծոյ սե-  
ղան տամներկու քարերից, Խրայելացւոց ցեղերի թուով,  
սեղանի մօտ հրամացէց փորել խորը փոս, զբեց փայտ  
զոհարանի վերայ և մօրթեց զոհի համար նշանակված  
եղու: «Յերեք ջուր», ասաց նա, «և ածէք զոհի վերայ:  
Երեք անգամ բերին ջուր և թթացին նրանով բորը սե-  
ղանը և փոսը, որ փորած էր սեղանի չորս կողմում.  
մինչեւ բերանը լիվեցաւ: Այն ժամանակ Եղիան, մօտե-  
նալով սեղանին, ասաց, «Տէ՛ր Աստուած Արքահամի, ի-  
սահակի և Յակովի, ցոյց տուր այժմ Խրայելացւոց բո-  
րը աղջին, որ Կու ես միսյն Աստուած և թէ ես, Քո  
ծառայդ, անում եմ այս Քո հրամանովդ: Կոիր ինձ, Տէ՛ր,  
զարձրու այս մարդոց սրտերը դէմի Քեզ, որ մի միսյն  
և Ճշմարիս Աստուած»: Այս խօսքերը ասելիս, իջաւ

կրակ երկնքից, վառեց փայտը. այրեցաւ զոհը և կրակը  
պատեց բոլոր գետինը սեղանի չորս կողմում և յամա-  
քեցրեց ջուրը փոսի մէջ: Ժողովուրդը ընկաւ գետին,  
աղաղակելով: «Ճշմարիս Սա է Տէր Աստուածը»:

Սուրբ Եղիան հրամացէց Բահաղի քուրմերուն ապա-  
նել, որոնք աղջին մողութեան մէջ էին զցում, կոր-  
ծանել կուռքերը և քանդել նոյա բաղինները: Յետոյ  
Աքապարին դառնալով ասաց. «Գնա առւն. ես լսում եմ  
անձրեւի մօտենալը: Խակ ինքը ելաւ կարմելոսի գաղաթը  
և ծունը իջած աղօթում էր: Արդարի աղօթքը զօրեղ  
է Աստուծոյ սուած: Յանկարծ վեր կացաւ աստիկ Հո-  
գոմ, աև անձիք պատեցին երկնքը և նրանցից եկաւ  
մեծ անձրեւ և ուղղեց երկիրը:

Յեղաբէլ, երբ լեց Բահաղի քուրմերի մահը, եր-  
դում տուեց, որ Եղիան էլ նոյն վեճակին կհանի, բայց  
Աստուած պահպաննեց նրան Յեղաբէլի վրէժինդրու-  
թիւնից: Արդարը հեռացաւ Արքիա:

Գլուխ ՀԵ.

### Եղիան Աստուածին Քորեբ Լերսն ՄՕՏ

Սուրբ Եղիան բնակում էր մի քանի ժամանակ Ա-  
րքիատում, այրի մէջ, Գորէք լիբան մօտ: Այսաեղ նա  
շատ անդամ արտմաւթեամբ մատածում էր, թէ ինչպէս  
Խրայելացւոց տամն ցեղերը մուայան Ճշմարիս Աստ-  
ուծուն, քանդեցին նորա սեղանները և կոտորեցին նորա  
մարդարէներուն, որոնք, յայտնի բան է, ամէնքը կորւ-  
չէին, եթէ Արդիուն նրանցից մի քանիսին չաղատէր: Այս  
ախտը մարդերով Սուրբ Եղիան դուրս եկաւ այրից: Աստ-

ուած հրամայեց նրան յայտնիել իրեն լիռան գլուխն։  
Նա կանդնեցաւ սցըի դրան մօտ և յանկարծ վեր կա-  
ցաւ մեծ քամի, որ խորտակում էր լեռներ։ բայց սո-  
րա մէջը չկար Աստուած։ Եղիան հողմի ժամանակ չէր  
զգում նորա մօտ լինելը Յետոյ երկիրը շարժեցաւ, բայց  
Աստուած չկար սյս շարժի մէջն էլ։ Յետոյ անցաւ  
հուրը. Աստուած չէր նորա մէջն էլ։ Սրանցից յետոյ  
փչեց մեղմ քամի և այս մեղմ օդի մէջը մարգարեի  
տխուր սիրտը զգաց Աստուծոյ լինելը։ Նա ծածկեց իր  
զլուխը մաշկեակով և դուրս եկաւ այրից և խօսակցում  
էր Աստուծոյ հետ։ Աստուած հանդստացրեց նորա նա-  
խանձայցը ոգին, ասելով, թէ Խրայէլ թագաւորու-  
թեան մէջն էլ, ուր Եղիան չէր գտնում Շշմարիա  
աստուածապաշներ, կան էլի 7000 հոգիք, որոնք բա-  
հաղին երկրպագութիւն չեն տալիս։

Աստուած մօտ է ամէն մարդով և խօսում է մեղ-  
հետ բնութեան ամէն երեցիթներով՝ մրրիով, որոսու-  
մով, փայլակով, անձրեսով, արեգակի փայլելով և հողմի  
մեղմ փչելով։ Հպարտ և յանդուգն մարդուն զապելու-  
համար կան մրրիկ և որոսումն, հեղ և ախուր սրտի  
համար—հողմի մեղմ փչելը, արեգակի փայլելը։

Սրանից յետոյ Սուրբ Եղիան Աստուծոյ հրամանով  
դարձաւ Խրայէլ երկիրը։

Գլուխն ՀՅ.

Ա.ՔԱԱԲԻ ԵՒ ՅԵԶԱԲԵԼԻ ՅԱՆՑԱՆՔԸ ԵՒ  
ՆՈՅԱ ՊԱՏԻՃԸ

Ո՞ի Խրայէլացի Նարաւթ անունով, բնակում էր  
Յեղայէլի գեղեցիկ և պտղաբեր ձորի մէջ, Յեղայէլ  
քաղաքում։ այստեղ թագաւորն էլ ունէր պալատ Նա-  
բաւթի այգիի մօտ։ Ա.Քարը խնդրեց Նաբաւթին, որ այ-  
գին իրեն տայ, որովհետեւ այնտեղում նա կամենում  
էր պարտէղ տնիկել տալ։ Նա խոսացաւ փոխարէնը  
կամ ուրիշ այգի տալ և կամ փող վճարել նրան։  
Բայց Նաբաւթը ասաց. «Աստուած չանէ, որ ես երբէք  
համաձայնիմ ծախել ժառանգութիւնը, որ ստացել եմ  
ծնողներից»։ Այս ժամանակ ծնողաց թողած ժառան-  
գութիւնը սուրբ էր. Համարվում է նրան ծախելը մեղք։  
Ա.Քաաբ այս բացասացութեամբ այնպէս տրտմեցաւ, որ  
հիւանդ պարկեցաւ, դարձրեց երեսը դէպի պատը և չէր  
ուզում ոչ ոքին նայել և ոչ կերակուր ուտել։

«Սորա կինը Յեղաբեկ, նորա մօտ մնելով, հարցրեց.  
«քեզ ի՞նչ պատահեցաւ. ի՞նչո՞ւ դու ոչ ոքին չես ու-  
զում տեսնել և բան չես ուտում»։ Ա.Քաաբ պատմեց  
նրան իր խօսակցութիւնը Նաբաւթի հետ։ Ի՞նչպէս,  
պատասխանեց Յեղաբեկ, ուրեմն էլ դու որպիսի թաշ-  
գաւոր ես, որ քո հպատակիդ խոնարհում ես. կեր հաց  
և հանգիստ եղիք, ոչինչ բանի վերայ մի՛ մտածիր. ես  
կտամ քեզ Նաբաւթի այգին»։ Նա զրեց Ա.Քաաբի  
անունով նամակ Յեղայէլ քաղաքի ծերերին և մեծե-  
րին և կնքեց արքունի կնքով։ Այս նամակումը հրա-

մայած էր սուտ վկաներով ամբաստանել Նարաւթին,  
իրեւ թէնա հայհցել էր Աստծուն և չարաբանել թա-  
դաւորին: Այս պատճառով անմեղ Նարաւթը քար-  
կործվեցաւ:

Յեղաբէլ, երբ Նարաւթի մահը իմացաւ, ասաց Ա-  
քաարին, «այժմ կարող ես ձրի առնուլ այն այգին, որ  
Նարաւթը քեզ չէր սկսում փողով ծախել. Նարաւ-  
թը մեռաւ»: Աքաար այն բոսէին գնաց այնաեղ և  
մուտ այգին: Եղիա մարդարէն, Աստուծմէ Խրիած, եկաւ  
այնաեղ և ասաց Աքաարին. «դու մարդասպան, Աստու-  
ծոյ անունով յայտնում եմ քեզ, որ նոյն տեղում. ուր  
թափեցաւ անմեղ Նարաւթի արիւնը, կթափի քո  
արիւնդ էլ. իսկ Յեղաբէլն կպատառեն շնկը»:

Երեք տարի սրանից յետոյ Աքաարը ստացաւ պա-  
տերապմում մահաբեր վերք: Նրան բերին Սամարիա, իր  
մայրաքաղաքը, և թաղեցին: Նորա կառքը լքցմէլ էր  
արիւնով, որ վազում էր վերքից: Այս կառքը լրւացին  
խեկ այն տեղում, ուր թափվել էր Նարաւթի արիւ-  
նը: Իսկ Աստուծոյ դատասաանը Յեղաբէլն վերայ կա-  
տարվեցաւ. Յեղաբէլը այնաեղ, ուր էր Նարաւթի այ-  
գին, որին նա անօրէնութեամբ տիրել էր: Երբ Աքա-  
արի ցեղը ջնջող գորավարը՝ Յէուն հանդէսով մանում  
էր Յեղաբէլ քաղաքը, նա զարդարվեցաւ, զարդարեց զր-  
լուխը և մօտեցաւ պատուհանին, որ նայէ յաղթողի  
հանդիսաւոր ընթացքին, յաղթողին, որ տիրէց Խորայ-  
էլի թաղաւորութեան և եղաւ նորա որդու Յովամի  
մահի պատճառը: Թաղաւորը, երբ նրան աեսաւ, ասաց  
իր մօտ եղող ծառաներին. «դուրս զցեցէք դրան պա-

տուհանից»: Նրան դուրս զցեցին, պատերը սրսկեցան  
նորա արխւնով, ձիերը ունակոխ արին նորա մարմինը և  
երբ թաղաւորը հրամացից վեր տունուլ նորա զին, որ  
թաղին, գտան միայն նորա կառափը, ոտերը և ձեռնե-  
րը. Նորա բոլոր մարմինը պատառել էին շները:

Աքաարի որդին և յաջորդը Յովոամ՝ սպանվեցաւ  
նետով և նորա մարմինը զցվեցաւ. Նարաւթի այգում:  
Աքաարը բաց ՚ի նրանից ուներ էլի եօթանասուն որ-  
դիք, որոնք ամէնքը սպանվեցան: Այսպէս ջնջիցաւ.  
Աքաարի բոլոր տունը:

ԳԼՈՒԽ ՀԹ.

### ՍՈՒՐԲ ՄԱՐԴԱՐԵՆ ԵՂԻՍԿ

Աստուծոյ հրամանով Սուրբ Եղիան իրեն աշակերտ  
ընտրեց Եղիսէին, որ ամէն տեղ նրան ուղեկից էր լի-  
նում: Եղիան օծեց նրան մարդարէ և Աստուծ Խրիստո  
Սուրբ Հոգւոյ շնորհքը նորա վերար: Սուրբ Եղիան, Եղի-  
սէի աչքի առաջն, երկինք բարձրացաւ հրեղէն կառ-  
քով:

Սուրբ Եղիան իր տուրբ վարդապետի վերաբկուի հետ  
միասին ժառանգեց մարդարէութեան կրկնապատիկ  
շնորհքը և հրաշագործութեան գորութիւնը:

Մի աղքատ այրի եկաւ Եղիսէի մօտ և ասայ, զիմ  
մարդս մեռսւ, դու ինքդ գիտես, որ նա բարեպաշտ  
մարդ էր: Այժմ եկաւ պարտատերը, որ հօր պարտ-  
քի համար իմ որդոցս կամենում է իրեն ստրուկ  
անել. Ազատիր իմ որդոցս: — «ինչո՞վ կարող եմ քեզ  
ողնել, հարցըից Եղիսէին, «ըստնես արդեօք մի կալուածք:

— «Ես ոչինչ չունեմ, պատասխանեց այրին, բաց ՚ի մի աման իւղից»: — «Աւքեմն զնա տուն», ասաց Եղիսէն, «Փոխ ուղեր դրացիներիցդ, ինչքան կարելի է, շատ ամաններ, փակիր տանդ գուռը և քո՞րդոցդ օգնութեամբ ածիր իւղը քո ամանիցդ փոխ ուզած ամաններիդ մէջ, և բոլորն էլ կլքուին: Այրին կատարեց Եղիսէի հրամանը, փոխ առաւ իր ծանօթներից շատ ամաններ և ամէնը լքրեց իւղով, որ վազում էր նորա ամանից, մինչեւ որ կար դարձակ աման: Նա այնքան իւղ ծախեց, որ ոչ միայն կարողացաւ իր մարդու պարագը տալ, այլ նրան մնաց դեռ էլի բաւական փող, որ կերակրեր իւն և իր որդոց:

Միանդամ Խորայէլի թագաւորութեան մէջ սով ընկաւ: Մարդարէների որդիքը եկան Եղիսէի մօտ և նա հրամացեց իր ծառային նոցա համար կերակուր պատրաստել: Ծառանդներից մէկը զնաց բանջար հաւաքելու կերակրի համար և գանելով մի վայրի պատուղ, որ խաղողի նման էր, ժողովնի և զրեց եփած կերակրի մէջ, չիմանալով այս պատուղների վնասակար լինելը: Կրբ կերակուրը պատրաստ էր, ամէնքը նստան ուտելու, բայց վոքը ինչ ուտելից յետոյ ամէնքը կանչեցին: Ամարդ Աստուծոյ, մենք կորանք, մենք գեղած ենք: Այս կերակրի մէջը թոյն է խառնած: Եղիսէն հրամացեց ածել ալիւր սղնձի մէջ և ասաց ծառային, այժմ՝ տուր. թող ուտեն աներիւղ: Ամէնքը կշտացան և մնացին առողջ պատուղները կորցրին իրենց վնասակար յատկութիւնը:

Մարդարէի որդիքը ասացին Եղիսէին, թէ այսաւդ, ուր մենք բնակում ենք, շատ նեղացած է: Մենք զնանք

Յորդանանի մօտ, կարենք փայտ և շինենք մեղ համար բնակարաններ: Եղիսէն էլ զնաց նոցա հետ: Երիտասարդներից մէկը իր կացինը վեր գցեց ձեռքից գետի մէջ. «Ո՛հ, ես ի՞նչ անեմ հիմիկ, կացինա էլ փոխ ուզած էր», ազաղակեց նա: «Ցոյց տուր ինձ», ասաց Եղիսէն, կացինդ որ տեղ վեր գցեցիր: Երիտասարդը ցոյց տուեց այն տեղը, ուր ընկաւ կացինը. Եղիսէն գցեց այն տեղ մի փայտի կտոր—և կացինը գուրս եկաւ ջրի երեսը: «Ո՛ո, քո կացինդ», ասաց Եղիսէն: Երիտասարդը ձգեց իր ձեռքը և առաւ կացինը:

Մի քաղաքում երեխայք մաքերը զրին մարդարէին վերաց ծաղը անել: Քաղաքից գուրս զալով կանչում էին նորա ետելից. «Գնա կնտակ, զնա կնտակ». Այն ըուպէին գուրս եկան անտառից երկու արջ և պատառեցին քառասուն երկու երեխայք:

Գլուխ 2.

### Նկարան ԱՍՈՐԻԻ ԲԺՇԿՎԻԼԻ

Խորայէլի երկրի հիւսիսյին սահմանը է Ասորոց երկրը: Ասորոց թագաւորի առաջին գօրավարը՝ Նէեման էր ըստ վիճուռական առաքինութեանց տէր մարդ և սիւրելի շատ իր թագաւորին: Նա շատ երևելի էր և հարուստ, բայց այս ամէն արտօնութիւնները ոչինչ էին նորա աչքում: որովհետեւ ինքը բոլոստութիւն ստացաւ, որ սարսափելի և զրեժէ անկուժելի ցաւ է:

Միանդամ մի քանի Ասորի զինուորներ յարձակեցան քանանացւոց երկիր և յափշտակեցին ուրիշ գերիների հետ միասին մի փաքրիկ աղջեկ էլ, որին ըերին

իրենց հետ և տուին Նէեմանին: Զօրավարի կինը առաջ գերի աղջկան և պահում էր իր մօտ: Փոքրիկ Խարայէլացի աղջիկը կարեկցութեամբ նայում էր հիւանդ Նէեմանի վերայ: Ո՛չ ասաց նա միանգամբ Նէեմանի ինչ: «Եթէ մեր տէրը գնար Սամարիա Մարգարէի մօտ, յայտնի բան է, սա կ'բժշկէր նրան»: Կինը կրինեց աղախնի խօսքերը իր մարդուն և սա էլ ասաց թաղաւորին: «Գնա Սամարիա, ասաց թաղաւորը, ես կ'տամ քեզ նամակ Խարայէլացւոց թաղաւորի վերայ: Նէեման առանց ուշանալու զնաց, և առաջ հետքը տասն տաղանդ արծաթի, վեց հազար դահնեկան և տասն ձեռք ծանրագին շօրեր: Արք Ասմարիա հասաւ, նա խրիեց Խարայէլի թաղաւորին իր թաղաւորի նամակը, որ զրած էր այս մոքով, թէ այս նամակը կ'բերէ քեզ իմ ծառայս՝ Նէեման, որին խրիում եմ քեզ մօտ, որ դու բժշկես նրան բորոտութիւնից: Խարայէլի թաղաւորը շփոթվեցաւ և ասաց. միթէ՞ ես Աստուած եմ, նա միայն կարող է յարուցանել մեռելներուն և բժշկիլ բորտներուն: Ասուրց թագաւորը վնասում է պատճառ ինձ պատերազմ յայտնելու»: Եղիսէն խրիեց թագաւորի մօտ մարդ և հրամայեց նրան ասել. «ի զուր ես տրամում դու, խրիիր Ասորիին ինձ մօտ, թող նա իմանայ, որ Խարայէլի մշջը կայ Մարգարէ»:

«Աէեման նասաւ իր կառքը, զնաց Եղիսէի մօտ և կանգնեցաւ նորա տան զրան առաջը: Եղիսէն խրիեց իր ծառային նրան ասելու, որ նա զնայ Յորդանասնի մօտ և հօթն անգամ՝ լրւացվի այն գետում, այն ժամանակ նա կ'սրբի բորոտութիւնից: Նէեման, սաստիկ նեղացած, աւ

ասաց. «Ես սպասում էի, որ Մարգարէն ինքը դուրս կը գայ ինձ մօտ, աղօթք կ'անէ իր Աստծուն, կ'զնէ իր ձեռքը իմ վերքերին վերայ և կ'բժշկէ ինձ: Մի՛թէ Ասուրց գետերը Խարայէլի գետից վատ են: Ինչու խրիում է նա ինձ Յորդանանում Եղինալու»: Նա բարկացած կամենում էր արդէն հեռանալ, բայց ծառաները, որոնք բոլոր սրառով սիրում էին նրան, ասացին: «Եթէ Մարգարէն ասէր քեզ մի ծանր բան, մի՛թէ դու չեիր կատարել քո բժշկութեանդ համար նորա հրամանները: Իսկ նա ասաց քեզ: «Ըստայվիր և կ'առողջանաս»: Նէեման ըեց նոցա խորհուրդը, լուացվեցաւ Յորդանանում եօթն անդում և սրբվեցաւ բորտութիւնից: Այն ժամանակ գարձաւ նա Մարգարէի մօտ բոլոր իր ուղեկիցներով, մտաւ նորա տունը և ասաց. «այժմ ես ծշմարտութեամբ տեսնում եմ, որ բոլոր աիեղերում չկայ ուրիշ Աստուած, բայց ՚ի Խարայէլի Աստուծմէ: Խնդրում եմ քեզ, ընդունիր ինձնից այս ընծաները: Նա կամենում էր տալ Մարգարէին բոլոր իր ուկին, արծաթը և ծանրագին շրիերը:

Բայց Եղիսէն պատասխանեց, «իկայ է Ամենազօր Աստուածը, որ ես չեմ ընդունիլ ոչինչ... Նէեման ամէն կերպի աշխատում էր համողել նրան. բայց մարգարէն մնաց անհամանգելի և ասաց նրան. «Գնա խաղաղութեամբ»:

ԳԼՈՒ ԶԱ.

ԳԵԼԵԶԵ

Եղիսէ մարգարէի ծառան գէեզին չուներ իր տիրոջ անարծաթասիրութիւնը: Ինչու համար, մասածեց նա, ինայեց տէրս այն Ասորիին, ինչու ընդունեց նա նրան

նից ոչ մի ընծայք ևս կ'հասնեմ նորա ետևից և կ'առանեմ նրանից մի բան»; Գէեզին գնաց Նէեմանի ետևից:

«Նէեման, երբ տեսաւ Մարդարէի ծառային, ինքը դուրս եկաւ նորա առաջ և քաղցրութեամբ ընդունեց նրան: Գէեզին ասաց Նէեմանին, որ իր տիրոջ Եղիսէին մօտ եկել են Եփրէմի սարից երկու աղքատ տղայք, որ մարդարէի որդիք են և թէ նոցա տէրը խնդրում է Նէեմանին ընծայել նրանց մի մի տաղանդ արծաթ և մի մի ձեռք շոր: Նէեմանի ծառաներից երկուազ տարան Գէեզիի ետևից ընծաները: Գէեզին, երբ տուն հասաւ, ծառաներուն յետ խրկեց, թաղցրեց առած ընծաները և Եղիսէին ոչինչ չասաց այդ մասին:

«Որտեղեց եկար Գէեզի»: Հարցրել Եղիսէն: «Ես ոչ մի տեղ չեմ գնացել, պատասխանեց Գէեզին: Բայց ի՞նչ կարող էր ծածուկ մնալ Մարդարէից: Եղիսէն ամենը զիտէր արդէն: «Ես տեսայ, ինչու զու խորամանկութեամբ առար փող, որ զնես քեզ համար պարտէվներ, այդիներ և խաչներ». ասաց Մարդարէն: «Պու խաբերայութեամբ ստացար Հարասութիւնը խնդրեցիր Նէեմանից փող և շորեր: նոցա հետ միասին ընդունիր ուրեմն նորա ցաւն էլ»:

Գէեզին դուրս եկաւ Մարդարէի մօտից բոլորվին բորստած, ինչպէս էր Նէեման:

Գլուխ ԶԲ.

### ՅՈՒԱՆ ՄԱՐԴԱՐԵՆ

Մարայէլի թագաւորութեան մէջ բնակում էր Յովիսան մարդարէն: Աստուած ասաց նրան: «Ան կաց, գնա՛ Նի-

նուէ քաղաքը և քարողին ժողովրդին ապաշխարութիւն: Այս ընդարձակ, բարձմանարդ քարդաքը սարսափելի անօրէ՝ նութիւնների մէջ ընկաւ, որոնց ձայնը հասած երկինք»:

«Յովիսան, ակամաց հպատակելով Աստուծոյ Հրամանին, ճանապարհ ընկաւ, միայն ոչ նինուէ քաղաքը երթալու համար. նա վարձեց իրեն տեղ մի նաւի վերայ, որ գնում էր Թարսիս, և կամենում էր անցնել ծովը, որ աղասիի Աստուծոյ Հրամանը կատարելց:

«Կայց ի՞նչ պատահեցաւ: Վեր կացաւ մըրիկ սաստիկ և նաւը մեծ վտանգի մէջ էր: Ամէնքը սարսափեցան և սկսան աղօթք անել. որովհետեւ վտանգի ժամանակ ամէնից մեծ չարագործն էլ դառնում է գէպի Աստուած:

«Յովիսան այս ժամանակ քնած էր: Նաւի տէրը ասաց Յովիսանին: «ամօթ չէ քեզ, որ քնում ես: Վեր կաց և աղօթք արա քո Աստուծուդ, զուցէ Նա ազատէ մեղմահից»:

Ամէնքը կարծում էին, թէ Աստուած վերէ կացրել մըրիկ պատժելու համար մի մեծ չարագործի, որ իրենց մէջ է: Ամէնքը ժողովեցան միասին և սաղում էին. «Եւ կէք, վիճակ զցենք, որ իմանանք, թէ ով է պատճառը այս պատուհասին, որ ամէնուս սպառնում է»: Աստուած այն պէս կարգեց, որ վիճակը ընկաւ Յովիսանին: Այն ժամանակ ամէնքը սկսան նրան հարցնել. «ասա, ով ես դուք ուր կամենում էիր դու երթալ և ինչո՞ւ Աստուած պատժում է մեզ քեզ համար»: Յովիսան պատասխանեց: «Ես, Խարայէլացի եմ և երկրպագութիւն եմ տալիս Ամենազօր Աստուն, որ ստեղծեց երկնքը, ջրերը և ցամաքը»: Յովիսան չի ծածկեց, որ ինքը կամենում էր

Աստուծոյ հրամաններից վախչել։ Այն ժամանակ առ մէնքը տեսան, որ նա մեղանչել է և վախենալով ասում էին նրան, «ինչո՞ւ վախչում ես զու քո Աստուծոյ երեսից։ Ի՞նչ անենք ուրեմն մէնք այժմ», որ գաղաքարեցնենք մրբիկը։ Յովիսան պատասխանեց, «զցեցք ինձ ծովը, ես դիտեմ, որ մրբիկը իմ պատճառով է վեր կացել։

Բայց ծովագնացները մարդասէր մարդիկ էին, նորա կամենումեմ էին Յովիսանին ափը հանել, աշխատում էին մօսենալ ցամաքին և երկար ժամանակ կրկում էին մրբիկի հետ, բայց ալեքը անդադար նրանց հեռացնում էին, այնպէս որ վերջապէս զօրութիւնից ընկան ծեսնելով, որ իրենց ամէն աշխատանքները ՚ի զուր են, սկսն աղօթք անել, ասելով նոյն ժամանակ յետադայ խօսքերն էլ. «Տէր, մի կորցնիր մեզ ամէնուս այս մի մարդու անօրէնութեան համար և սորա մահը մեզ մեղք մի համարիր, մենք կատարում ենք քո կամքը»։ Նորա վեր առան Յովիսանին և զցեցին ծովը։ Մրբիկը այն բուդէն դադարեցաւ։

Եսակ վերայ բոլոր դանուովները զօրացան կենդանի հաւատով Աստուծոյ և Ձերմեռամբութեամբ։ Նորա զոհքերին Ամենաբարձրեալ Աստծուն և խոստացան պահել նորա պատուիրանները։

Գլուխ 24.

ՅՈՎԻՍԱՆ ԿԵՑ ԶԿԱՆ ՓՈՐՈՒԽ

Այն բուդէն, երբ Յովիսանին ծովը զցեցին, Աստուծու հրամայեց մեծ ձկան, որ նրան կուլ տայ, բայց կետի փորումն էլ պահպանեց Աստուծու նորա կեանքը։ Յովի-

նան մնաց անվիսաս երեք օր և երեք դիշեր ձկան փորում։

Եյս Յովիսան մարդարեկ անցքը էր օրինակ մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի երեքօրեայ թաղման և յարութեան։ Եւ աղօթքը, որ Յովիսան կէտի փորում ասաց, պարունակում է իր մէջ շատ մարդարէութիւն։

Աստուծու լսեց Յովիսանի աղօթքը և հրամայեց կետին, որ նրան ցամաքը դուրս զցէ։

Աստուծու երկրորդ անգամ հրամայեց Յովիսանին երթալ Նիսուէ և նորա բնակիչներին ապաշխարութիւն քարոզել։ Նա անյապաղ ընկաւ Ճանապարհ։ Նիսուէն Ասորեստանի թագաւորութեան մայրաքաղաքն էր և այնպէս ընդարձակ էր, որ Յովիսան բոլոր օր զնում էր մի ծայրից մինչև միւս ծայրը, անդադար ձայն տալով։ Եկանցնի էլի երեք օր—և Նիսուէն կ'կործանվի։ Նիսուէի բնակիչները, վախենալով այս սպառնալիքներից, ապաշխարեցին, պահք դրին իրենց, հաղան քուրձ և նստան մնիսի վերայ ամենքը, թագաւորից սկասծ մինչեւ վերջին մարդը, թողին իրենց ամէն զործերը և մեծ ջերմեռանդութեամդ աղօթք էին անում։ Աստուծու, տեսնելով նոցա սրտանց զղումն, ներեց նրանց։

Յովիսան դուրս եկաւ քաղաքից և փոքր ինչ հեռու նստաւ նորա հանդէպը և սպասում էր, թէ ինչ կը պատահի քաղաքին։ Այս ժամանակ Աստուծոյ հրամանով դրւա ելաւ այն տեղումը, ուր Յովիսան էր, գդմէնի, որ իւր լսին տերեններով պահպանում էր նրան օրվան շոքից։ Այնուեղ նստաւ նա և քաղաքին նոյելով սպասում էր իր մարդարէութեան կատարվելուն։ Բայց տեսնելով, որ Նիսուէն անվիսաս կեցած է, նա սկսաւ տրտմիլ, որ

իր մարդարէութիւնը չկատարվեցաւ։ Նա մինչեւ անդամ մահ էլ խնդրեց իրեն Աստուծմէ և առամ էր, ահա ինչու ես չեի ուզում Նինուէ երթալ, ես գիտեմ, Տէր, որ Գու երկայնալիս ես և բազմողորմ և թողութիւն ես տալիս զղջացած մեղաւորներին։ Այժմ, Խնդրում եմ քեզ, Տէր, առ իմ կեանքս, ես աւելի կամենում եմ մեռնիւ, քան թէ ապրել։

Միւս օր էլ չկար դդմենին, Ճիճուն կերաւ նրան և նա թառամեցաւ արեգակի տաքրութիւնից։ Յովնան աւելի տիրեցաւ։ Նա էլի սկսաւ կանչել մահը, որով հետեւ Աստուած խեց նրանից դդմենու շուապն։ Այն ժամանակ Աստուած տասց նրան զՅովլան, դու չես արնկել դդմենին, հոգս չես քաշել նորս մեծանալու վերայ, բայց արտօնում ես նորա կորուսաի համար։ Նա գուրս եկաւ մի զիշերում և մի զիշերումն էլ թառամեցաւ։ Դու ցաւում ես նորա վերայ և ուզում ես, որ ես ջրն ջեմ մեծ քաղաքը, որի մէջ Հազարներով մարդիկ են կենում, ուր 12000 ից աւելի մարդիկ կամ, որոնք չեն կարող գեռ բարին չարից դանազանել և շատ էլ անասուններ։

Գլուխ չե.

ԽՍՐԱՅԷԼԻ ԹԱԴԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲՆԿՆԻԼԻ

Ասորիները և Երբայեցւոց միւս դրացիները քանիցս անդամ յափշտակեցին Խարայէլի գեղեցիկ երկիրը։ Խարայէլացիները գեռ կարողանում էին լնողիմնանալ դրացիներին և պաշտպանել իրենց նոցա յարձակումներից։ Բայց վեր կայաւ Ասորեստանցւոց ազգը և բոլորովին

նուածեց Խարայէլի թաղաւորութիւնը։ Ովել թաղաւորը անհաւատագութեամբ վարմվեցաւ Ասորեստանի թաղաւորի հետ և այն պտուծանով զրկվեցաւ թաղաւորութիւնից և եղաւ Խարայէլի վերջին թագաւորը։

Ասորեստանցւոց բազմաթիւ զօրքը աիրեց Ասմարիստին։ Ովել թագաւորը, զրեթէ բոլոր իր հպատակներով, գերի զնաց։ Այսուհետեւ և Խարայէլի թագաւորութիւնը բոլորովին վերջացաւ։ Խարդակ տեղերում բնակվեցները, որոնց հետ միացան մնացած փոքրաթիւ Խարայէլացիներն էլ և սկսան այնուհետեւ Սամարացիք հոչվել։

Այսպէս ընկաւ Խարայէլի՝ Հրեից տան ցեղերի թաղաւորութիւնը Ասորեստանի Սաղամանասար թագաւորի ձեռքով 722 տարի Քրիստոսի ծննդից առաջ։

Գլուխ ան.

ՍՊԻՐԻ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ

Ա.Հ. ԱՅՆ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՅ ԳՐՈՒ-

ԱԾԲԸ ԴԻԱԾ ԵՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՄԷԶ

Խարայի, Ամովսի որդին, բնակում էր Յաւդայի երկրում, Ողեայի, Յովիթամի, Աքազի և Նզեկիայի թաղաւորութեանց ժամանակ։ Խնչքան արտամեցնում էին նրան չար թագաւորների անաստուածութիւնը և մեղքերը, ըստ հակառակն այնքան էլ աւելի ուրախացնում էին բարի թագաւորների առաքենութիւնները և բարեպաշտութիւնը։ Եզեկիան Յուգայի թաղաւորների լաւերից մէկն էր։ Նորա թագաւորութեան ժամանակ Ասո-

ըեստանցիք պատերազմ՝ բաց արին Յուղայի հետ և շատ յաղթութիւններ արին այնպէս որ Եղեկիան սպասում՝ էր, որ իր թագաւորութիւնը կքանդվի. բայց Եսայի մարդարէն խոստացաւ նրան Աստուծոյ մերձակայ և շուտ օդնութիւնը, որ և Շշմարտիւ կատարվեցաւ: Ամանապէս Եղեկիցի ծանր հիւանդութեան ժամանակ, Եսային խոստացաւ նրան բժշկութիւն և հաւատացրեց այն նրան, հրաշքով. նա արեգակի ստուերը տան աստիճան յետ դարձրեց: Եսային լցեալ էր Աստուծոյ Հոգւով. նա վառ զգացմամբ խօսում է, Աստուծոյ և նոյն երածանիութեան վերայ, որնկը երկրազագութիւն են տալիս նրան հաւատով. նա յայտնի մարդարէանում է դաւթի այն զաւակի վերայ, որ կ'ծնի Կոյսից, մարդոց փրկելու համար. նա խօսում է նմանապէս այն չարչարանքների վերայ, որնոց նա կ'տանէ. մարդկային ազգի համար. Մարդարէներից ոչ մէկը այսպէս պարզ չէր գուշակում Մեսախային Յիսուսի Քրիստոսի ծնունդը, չարչարանքները և փառքը: Այս պատճառով մի քանի Սուրբ Հայրերը Սուրբ Եսայիին անուանում են հին ուխտի աւետարանիչ:

Երեմիա մարդարէն ուրիշների պէս մարդարէանում էր Մեսախայի գալուստը, և յորդորում էր Աստուծոյ ժողովրդին ասպաշխարելու և գուշակեց Երուսաղէմի քանազիը և նոքն էլ տեսաւ իր գուշակութեան կատարումն:

Դամիկէլ մարդարէին մերայ աւելի ընդարձակ կը խօսենք յետոյ:

Մարդարէները Եղեկիէլ, Ովու, Յովիէլ, Ամովս, Արշիու, Յովնան, Միքիա, Նաւում, Ամբակում, Սովոնիա,

Անդէ, Զաքարիա և Մաղաքիա մարդարէացան նոյնպէս Մեսախայի և Յուղայի թագաւորութեան ու ուրիշ ազգերի զանազան վիճակների վերայ:

ԳԼ.ՕՒ. 22.

ՏՈՎ.ԲԻԹ

Եյն Խարայէլայիների մէջ, որնց Ասորեստանցիք գերի տարան, կար մի բարեպաշտ մարդ Տովեիթ անունով: Նրան բերին Նինուէ՝ Ասորեստանի մայրագազաքը, իր կնոջ և միակ որդու հետ միասին: Բայց օտար երկրումն էլ հաստատ մնաց նա իր հաւատին և կատարում էր Աստուծոյ պատուիրանները: Սազմանաստոր, Անորեստանի թագաւորը, սիրում էր այս բարեպաշտ մարդուն և հրամայում էր նրան ազատ ման գալ իր բոլոր աէրութեան մէջ: Տովեիթ այս հրամանը գործ էր գնում, որ միսիմարէ իր գերի եղբայրներուն, օգնէ նրանց իր կարողութեան չափ և տայ նրանց օգտակար խորհուրդներ: Նա ամէն տարի գնում էր իր ազգականների և ծանօթների մօտ և նրանց էլ մասն էր հանում ամէնից, ինչ որ ունէր:

Տովեիթ վաճառականութեամբ շահեցաւ տան տաղանդ արծաթ. Այս վողերը որ հաւաքեց, զնաց Մարասանի Հռագաքը, որ այնուեղ էլ թեթևացնէ գերի Խարայէլայիների վիճակը:

Ըստ սրանից յետոյ մեռաւ Սաղմանասար և նրանից յեա թագաւորեց նորա որդին Սէնեքերիմը: Սա խրապութեամբ էր վարփում Խարայէլայիների հետ և ասում էր նրանց: Այս ազգի թշուառութիւնը սարասիել էր.

նորա մեծ մասը չուներ ոչ օրինան հաց և ոչ շոր, շատ տերը սպանվեցան և դիերը զյվեցան քաղաքի պատերից դուրս, որ փայլի գաղաններն և պատառող թրուռներին կերակուր լինեն: Այս թշուառ ժամանակիները Տովելիթի ողբածութիւնը առաւել աւելացաւ, նա կերակրում էր քաղցածներուն, հաղցնում էր մերկերուն և թաղում էր մեռածներուն:

Կորա այսպիսի անխոնջ բարեգործութեան համբաւը հասաւ թագաւորին, Սենեքէրիմ բարկացաւ, հրամայեց խել Տովելիթից Նորա բոլոր ստացուածը և իրին սպանել. Թշուառականը, ամէն բանից զրկած, փախաւ: Նորան թագցնում էին բարեկամները, որովհետոն իր առաքինութիւններով շատ բարեկամներ դառն էր:

Տովելիթի փախուստից յետ յիսուն օր հաղիւ անցել էր, որ Սենեքէրիմ սպանվեցաւ իր հարազատ որդիւներից: Նրանից յետոյ թագաւորից Ասորդան Նորա որդին, որի մօտ Տովելիթի ազգականներից մէկն էր երեմի իշխան: Սա խնդրեց Տովելիթին համար թողութիւն, և նա յետ ստացաւ կրկին իր կոոջ, որդուն, իր տունը և բոլոր ստացուածը: Նա առաջվան պէս սկսաւ բնակիւ Նինուէռում իր ընտանիքով:

Եկաւ եօթներորդ շաբաթը, Պենտէկոստէի տօնը: Տովելիթի տանը պատրաստվեցաւ մեծ ճաշ: Տովելիթ, աւեմնելով կերակուրների առատութիւնը, ասաց իր որդուն, «զնա, կանչիր ինձ մօտ իմ աղքատ եղբայրներիցս մի քանիսին, որոնք պահում են Աստուծոյ օրէնքները և թոյլ տօնեն այս մեծ օրը. Ես քեզ ճաշի կ'ապասեմ: Կորա որդի Տովելիթ, ելք յետ դարձաւ, պատմեց, թէ

տեսաւ վողցում մի սպանած Խորայէլացիի մարմին Տովելիթ սեղանից վեր կացաւ և թագուն մեռելին բերաւ իր տուն, որ արեգակի մննելից յետ թաղէ: Դրա բայցները նախատում էին նրան, ասելով, «Զան ժամանակնակի է, որ թագաւորը քեզ կամենում էր սովանել մեռելներուն թաղելուդ համար: Հաղիւ ազատվեցար մահուան վճռից և էլի մի և նոյնն ես անում: Բայց Տովելիթ թաղեց սպանածի մարմինը:

Գիշերով, թագումից յետ դառնալով, չմասաւ իր տուն, այլ պարիեցաւ տան պատի մօտ և չնկատեց, որ ուղիղ իր գլխի վերայ կար ծակի բոյն: Այս բունից ընկաւ նորա աչքի մէջ ծերտ, որից եկաւ աչքի վրան փառ: Տովելիթ գնաց բժիշկների մօտ, միայն նորա ոչինչ օգնութիւն չառեն նրան և նա բոլորովին կուրացաւ: Բայց այս թշուառութեան էլ տանում էր նա համբերութեամբ:

Վճանան, Տովելիթի կինը, անխոնջ աշխատում էր, որ կերակրէ իր ընտանիքը, նա մամում էր բուրդ: Միանգամ նա, երբ տարաւ տիրոջ իրեն յանձնված աշխատանքը, սասացաւ բացի իր վարձից մի ուլ էլ ընծայ: Տովելիթ, որ լսեց Նորա ձայնը, չէր իմանում: թէ այն ինչ է նշանակում: Տես, ասաց նա իր կոոջ, գողացած չէ արդեօք ուլը. յետ տոնը այն տիրոջը, գողունի բան ուրեմն մեղք է»: Կինը շատ բարկացաւ Նորա այս կասկածաննքի համար: Նա ասաց նրան շատ աւելորդ խօսքեր: Տովելիթը լսութեամբ համբերում էր Նորա Հայհցանքներին և յանդիմանութիւններին, նա հոգոց էր հանում: Եր որսում խնդրում էր Աստուծոյ, որ կամ թեթեւ

այսէ իր վեճակը և կամ խրկէ իրեն մաշ: Աստուած լեց նրա աղօթքը և խրկէց նրան օդ-նութիւն իր Ռամփայէլ հրեշտակին:

ԳԱՅԻՆ ԶԵ.

ՏՈՎԲԻԹԻ ԻՐ ՈՐԴՈՒՆ ՏՈՒԱԾ ԽԲԱՏՆԵՐԸ

**Տովեիթը** հաւասում էր, որ Աստուած լել է իր աղօթքը և շուտ կ'իրկէ իրեն մաշ և այս պատճառով կանչեց իր որդուն և ասաց նրան յետագայ խօսքերը. «որդեակ, լսիր քո հօրդ և պինդ պահիր իմ խօսքերս սրտումիք»:

**Երբ Աստուած կ'կանչէ** իր մօտ իմ հոգիս, թաղիր իմ մարմինս:

Պատուիր մօրդ, մի՛ մոռանար երբէք, ինչոր նա քաշել է քեզ համար: Եւ երբ նա կ'մոռնի, թաղիր նորան ել ինձ մօտ մի գերեզմանում»:

Ասածուն միշտ աշքիդ առջեւ ունեցիր, կառարիր նորա պատուիրանները, և վախիր մեղքից:

«Ողորմութիւնը արա քո կարողութեանդ համեմատ և երբէք երեսդ մի՛ գարձնիր աղքատից. այն ժամանակ Աստուած էլ քեզնից չի դուրձնել իր երեսը»:

«Օգնիր ամէնին, ինչքան կարող ես: Եթէ դու հարաւատ կ'լինես, առեր շատ, եթէ դու աղքատ կ'մնաս, առեր փոքր, միայն բարի սրտով: Այսպէսով կ'հաւաքիս մեծ գանձ թշուառութեան ժամանակի համար: Ողորմութիւնը փրկում է մահից և չէ թողնում մարդու խաւարը երթալ:

«Եղիր ողջախոհ, հեռայիր զեղս մարդոց հաս-

լակութիւնից և մի՛ առնիր քեզ կին կռապաշտ, այլ ընտրիր մեր աղղից»:

Փախիր հպարտութիւնից, նա չպէտք է աեղ ունենայ սրտումդ: Հպարտութիւնը և փառամոլութիւնը մարդուն ամէն բարի որպիսութիւնները խախտում են և զցում են նրան ամէն մեղքի մէջ»:

«Տուր վարձ արդարութեամբ ամէնին, ովոր քեզ համար կ'աշխատե, և մի՛ սպահիր մօտդ վարձկանի աշխատանաց դինը»:

«Մի անիր ուրիշնե այն, ինչ որ չես ուզում, որ քեզ անեն»:

«Մի խնիր զիսի այնքան, որ հարթեա».

«Խաժանիր հացդ կարօսեաների հետ և հացցումերին քո շորերդ»:

«Ճարցրու խորհուրդ միշտ խմաստուն մարդելից»:

Անացդ ամէն դիպուածներում փառարանիր Աստծուն և խնդրիր նրան, որ կառավարէ ամէն քո դործքերդ և խորհուրդներդ: Որովհեաւ Աստուծմէ է ամէն բարին: «Նա բարձրացնում է, և խոնարհեցնում է, ում որ կամննում է»:

«Երիացիր, որդեակ, մենք աղքատ ենք. բայց եթէ կ'կենանք Աստուծոյ կամաց յարմար և կ'փախչենք մեղքից, այն էլ, ինչ որ ունինք, բաւական կ'լինի մեղք»:

Երիասասարդ ծուբիայի սիրտը շարժեցաւ այս խօսքերից: «Նա ասաց իր հօրը. «Հայր իմ. Ես կ'կատարեմ բոլոր քո հրամաններդ», և պահեց իր խօսքը:

ԳԼՈՒԽ

ԵՐԻՑԱՍԱՐԴ ՏՈՒԲԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՂՈՒԹԻՒՆԸ

Եր խրասնելը վերջայնելց յետ, Տովեիթ ասաց իր որդուն, «Ես քեզ որէաք է էլ յայտնեմ, որ քո մանկութեանդ ժամանակ, Մարտասանի Հռապա քաղաքում Գարսյէլի մօտ պահ տուել եմ տասն տապանդ արծաթ. դնան նողա մօտ, որդեակ: Բայց առաջ գտիր քեզ ընկեր, որ առաջնորդէ քեզ Հռապա և էլ յետ ինձ մօտ կատարիր այս իմ մահից առաջ»:

Երիտասարդ Տուբիան գնաց իրեն ընկեր վիճուելու և պատահեցաւ մի երիտասարդի, որ շատ դեղիցիկ էր տեսքով: Այս երիտասարդը էր Հռափայէլ Հրեշտակը. նա հագած էր Ճանապարհի շորեր: Տուբիան, չխմանալով, թէ ով է նա, մօտեցաւ Հրեշտակին, ողջունեց և ասաց. չդիտե՞ս արդեօք Մարտասանի Հռապա քաղաքի Ճանապարհը: — «Գիտեմ, պատասխանեց : Ի շատակը, ես այնանդ քանիցս անգամ՝ եղել իմ մեր եղբօր՝ Գարսյէլի մօտ: Տուբիան ասաց. «Ապամի՞ր ինձ այսանդ, մինչ ես այդ յայտնեմ հօրս»: Հայրը զարմացաւ, տեսնելով, որ Տուբիան այնպէս շուտ գտաւ իրեն ուղիղոց և Հրամացեց որդուն իր մօտ կանչել երիտասարդին: Ա՛հայ մաճայնե՞ս դու իմ որդուս Հռապա Գարսյէլի մօտ առաջնորդելու. Հարցրեց Տովեիթ: Երբ զու կ'զառնաս նորա հետ միամին, մենք քեզ կ'անք աշխատանացդ վարձը, աւելցրեց նա: «Ուրախութեամբ պատասխանեց երիտասարդը. «Ես կ'տանեմ որդուդ Հռապա և յետ կ'դարձնեմ նրան էլիս: «Ուրիմն», ասաց Տովեիթ, զնաւ

ցէք, Աստուած ձեղ հետ լինի, Աստուած թող իրիէ ձեղ ուղեկից իր հրեշտակին»:

Երիտասարդ Տուբիան պատրաստեցաւ Ճանապարհի, Հրամաժարական ողջոյն տուեց իր հօր և մօր, առաւ նույա օրհնութիւնը և գնաց երիտասարդի հետ»:

Ճանապարհորդութեան առաջին օրը նոքա հասան մինչև Տիգրիս գետը: Տուբիան գնաց գետում լեզնալու: Յանկարծ մի մեծ ձուկը դուրս եկաւ. ջրից և կամենում էր կուլ տալ նրան: Տուբիան վախեցաւ, պինդ գոռաց և օգնութիւն կանչեց իր ընկերոջը: Հրեշտակը ասաց. «Բոնիր այդ ձիան և հանիր ջրից»: — Տուբիան հանեց ձիան ցամաքը. «Այժմ», ասաց Հրեշտակը, Ճեղքիր վարը, սիրու, լեզն և լեարդը պահիր դոքա դեղ են: Տուբիան կատարեց, ինչ որ իրեն Հրամացվեցաւ: Այս ձինից մի քանի կտոր նա խորովեց ընթրիփի համար:

Յետոյ դնացին առաջ և եկան Եկրատանա քաղաքը: «Ուր իջևանենք մենք», հարցրեց Տուբիան Հրեշտակին: «Այս աեղ կինում է մի մարդ Հռափուէլ մասունավ, ասաց Հրեշտակը. Նա քեզ աղդական է և բացի մի աղջկից, որի անունը Ասաւ է, ըսնէ ուրիշ զաւակ: Նա գեղեցիկ է, խելօք և բարեբարոյ: Կա կ'խօսեմ քեզ վերաց նորա հօր հետ, նա կ'համայնացնի նրան քեզ տալ. զու ևս նորա ստացուածների օրինաւոր ժառանգը: «Ես լսել եմ նորա համար», պատասխանեց Տուբիան. Աւ սում են, թէ նա չար գեի իշխանութեան տակն է. թէ նա եօմն անգամ ամուսնացել է և թէ նորա ամին եօմըն մարդերն էլ ամուսնութիւնից յետ առաջին դիշը մեռել են: Կա վախենում եմ, որ ինձ հետ էլ մի

և նոյնը չպատահի: Աթէ ևս մեռնեմ, ով հոդս կ'քաշէ ծնողացս վերայ: Ես եմ՝ նոցա միակ նեցուկը: Տըրտմութիւնը նրանց գերեզման կ'իջեցնէ:

«Մի վախիր, ասաց Հրեշտակը: չար ողին քեզ վնաս չի տալ. միայն ջերմեռանգութեամբ աղօթք արէք ամենաբարձրեալ Աստծուն և նա կ'ապատէ ձեզ և կ'ողորմի:

Գլ. 111. 28.

### ՏՈՒՐԻԱՅԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Տուրիան Հրեշտակի ուղեցկութեամբ եկաւ Հռադուկի մօտ և Սառան ընդունեց նրան. Հռադուկը, Տուրիային նայելով, ասաց իր կողմէ Հեղնային. «Նայիր ի՞նչ պէս նման է այս երիտասարդը մեր ազգականին Տովեթիւնու: Յետոյ, դառնալով ճանապարհորդներին, հարցրեց նա, արտազից էք գալիս, սիրելի եղացիներու: «Մենք գերի Խրայէլացիներից ենք. Նեփթաղիմի ցեղից, որ Նիւնուկումն ենք. պատասխանեցին նոքա: «Զէք ճանաչում արդեօք այնաեղ իմ ազգական Տովեթիւնու: Հարցրեց Հռադուկը: «Ճանաչում ենք»: Պատասխանեցին նոքա: «Նա իմ հայրս է». ասաց Տուրիան: Այն ժամանակ Հռադուկը կրկեց Տուրիային և լոց եղաւ ուրախութիւնից: «Օրհնում եմ քեզ, որդիքակս, ասաց նա. դու ունես առաքինի և բարեպաշտ հայր»: Հէգնան, Հռադուկը կենը և Սառան, նորա աղջիկը, ուրախութեամբ բարեցին Տուրիային, բայց ամէկըն էլ շատ տիսրեցան, երբ լրացին, որ ծերունի Տովեթիւնը գրկելը է աչքից:

Հռադուկը հրամայեց մեծ ճաշ պատրաստել և ինսպեց իր հիւրերուն, որ նատեն: Բայց Տուրիան ա-

սայ. «Ես ոչ կ'ուտեմ և ոչ կ'խմեմ, մինչեւ չես համաձայնել իմ լնդիլքս կատարելու Տուր ինձ կին քո աղջկանդ Սառայինու: Հռադուկը վախեցաւ այսպիսի առաջարկութիւնից. մասձելով, թէ արդէն իր աղջկան եօթըն ամուսինները մեռան, նա վախենում էր, որ նոյն վեճակը Տուրիային էլ չհամարի. բայց Հրեշտակը ասաց նրան. այս վախիր, սա բարեպաշտ մարդ է և Աստուած ինքը նշանակել է նրան քո աղջկանդ համար. ահա ինչու մինչեւ հիմիկ ոչ ոք չեր կարողանում տիրել նըրանու: Այն ժամանակ Հռադուկը միացրեց Տուրիայի և Սառայի ձեռերը, ասելով. «Աստուած տեսաւ իմ արտասունքներս և լսեց իմ աղօթքս: Տալիս եմ նրան քեզ: Արրահամի, իսահակի և Յակովի Աստուածը օրհնէ ձեր պատկը»:

Իս դիշերից յետ Հռադուկը կանչեց իր ծառաներուն և գնաց նոցա հետ միասին պարաեզ, որ գերեզմանն փորէ իր աղջկան նոր մարդուն համար: Երբ զերեզմանը պատրաստեց, նա դարձաւ իր կողմէ մօտ և ասաց նրան, «Կարկիր քո աղախիններից մէկին, որ տեսնէ, չէ՞ մեռել արդեօք Տուրիան, որ մենք կարողանանք նըրան թաղել արեգակի ծագելից առաջ և այսպէսով ծածկենք նորա մահը»: Աղախինը դարձաւ և համբարերից, որ երկու նոր սմունացածներն էլ ողջ և առողջ են: Տուրիան Հրեշտակի հրամանավ, իր համար պատրաստած սենեակը ծխեց սրտովը և լեարդովը, որ հանեց իր բանած ձիսից, և Սառայի հետ միասին երեք օր աղօթքով անցկացրեց: Աստուած ողորմեց նրանց. Հռադուկը հրամացեց իր ծառաներին ծածկել փորած

դերեվմանը. իսկ ինքը և իր կինը աղօթք էին անում  
և շնորհակալ լինում Աստուծոյ:

Գ. Ա. Պ. Դ.

ՏՈՒԲԻՍ. Դ. Ա. Զ. Զ.

Հռագուէլ պատրաստեց հարասնիքի խնջոյք, ու հրա-  
փեց ամբն իր բարեկամներուն և դրացիներուն: Նա  
խնդրեց իր փեսային, որ մնայ իր մօտ էլի երկու շաբաթ:  
Տուբիան, չկարողանալով բացասէլ իր աներոջ և մի և  
նոյն ժամանակ վախճառարով իր երկարժամանակեայ բա-  
ցակայութեամբ իր ծնողացը անհանդասութիւն պատ-  
ճառել խնդրեց հրեշտակին, որ իրեն Աղարխա էր ա-  
նուանում, որ գնայ առանց իրեն Հռագոյ Գարայէլի  
մօտ և ձեռազրի գորութեամբ ստանայ նրանից վողը և  
իրեն էլ հրաւիրէ հարսանիքի խնջոյքը: Հրեշտակիր  
կատարեց Տուբիայի յանձնարարութիւնը: Գարայէլ տու-  
եց բոլոր արծաթը, որքան պարագ էր և ինքն էլ ու-  
րախութեամբ եկաւ Տուբիայի հարսանիքը:

Երկու շաբաթից յետոյ Հռագուէլը ասաց Տուբիային.  
«Անա իմ մօտ մի քանի ժամանակ, ես կիրքիմ՝ քո  
հօրդ մօտ մարդ ասելու, որ զու առողջ եա:» «Չէ՞»  
պատասխանեց Տուբիան, «ես գիտեմ», որ իմ ծնողքս  
համարում են այժմ ամբն բոսէն և իմ բացակայու-  
թիւնս անհանդասացնում է նրանց»: Թէև շատ խրնդ-  
րեց Հռագուէլ նրան, բայց Տուբիան ոչ մի կերպով չհա-  
մաձայնեցաւ մնալ: Ուստի Հռագուէլ տուեց նրան իր  
աղջկան՝ Սառային, իր բոլոր խաների կեսը, իր փողերի  
կեսը, տուեց նրան ժառաներ, աղախիններ և ցանկալով

Կրանց բարի Ճանապարհ, ասաց նրանց. «Աստուծոյ սուրբ  
Հրեշտակը ուղեկից լինի ձեզ և հայնէ ձեզ յաջողու-  
թեամբ ձեր տուն: Աստուծուծ տայ, որ ծնողացդ առողջ  
զանես և ես իմ մահիցս առաջ արժանանամ՝ ձեր  
որդոցը տեսնել»: Հռագուէլ և Հեղնան դրկեցին իրենց  
փեսային և աղջկան ու համբուրելով հրամայեցին Սա-  
ռային, որ սիրէ իր մարդուն և պատուէ իր սկսուրին  
և սկեսրայրին և պահէ իրեն ոյնպէս, որ ոչ մի յան-  
դիմանութեան չարժանանայ: Սառան, արտասուք թա-  
փելով, խոսացաւ, որ երեք չի մոռանալ իր ծնողաց  
խրանները: Յետոյ նոքա բաժանվեցան:

Խակ ծերունի Ցովեիթ և նորա կինը շատ անհան-  
դասանում էին իրենց որդու վերայ, որ փոքր ինչ ու-  
շացաւ հարանիքի խնջոյքի պատճառով: «Ի՞նչ բան  
կարող էր պատահել մեր որդուն», ասում էր նա իր կը-  
նոջը: Գուցէ Գարայէլը մեռել է և նա չգիտէ ումնից  
ստանայ փաղերը: Տուբիթ և Աննան ժամից ժամ տւելի  
անհանդասանում էին, նոքա լայ էին լինում, տեսնե-  
լով, որ իրենց որդին նշանակած ժամանակը յետ չէ  
գառնում: Մայրը չէր գագարում արտմելից, «Ոհ որդ-  
եակ իմ», որդեակ իմ», ասում էր նա, «ինչո՞ւ խրկեցինք  
մենք քեզ օսար երկիր՝ գու մեր աչքի լոյսը, մեր ծե-  
րութեան նեցուկը, մեր կետնիքի միիթարութիւնը, մեր  
ցեզի յոյսը: Միթէ մենք բաւական հարուստ չէինք, երբ  
քեզ ունենիք»: Ցովեիթ միմիթարում էր նրան, ասե-  
լով, «բաւական է, մի՛ տիրիթը. յայտնի բան է, որ մեր  
որդին առողջ է, ընկերը, որ նորա հետ գնայ, արդար  
և հաւատարիմ մարդ է: Բայց Աննան չէր կարողանում

միսիթարվել և ամէն օր դնում էր այն ճանապարհը, որով պէտք է նորա որդին գառնար: Այս տեղ բարձրութեան վերայ նատած նայում էր հեռու: Վերջապէս հեռուից տեսաւ ճանապարհորդներ, որով դախա էն այն ճանապարհով և նրանցից մէկն ճանաչեց, որ իր որդին էր: Անսան ուրախացած լազեց իր մարդուն մօտ աղաղակերով: «որդին դախիս է»:—

Տուրիան Հռափայէլի հետ միասին դնաց առաջ, որ շուտով տեսնվի ծնողաց հետ, իսկ Սառային բոլոր ծառաներով և խաչներով յետ թողին: սա կամաց կամաց հետեւում էր նրանց:

Հրեշտակը ասաց Տուրիային: «վեր առ հետդ լեղին, որ ձկնից հանեցիր և քսիր այն հօրդ աչքին: այսպէս սով կ'բժշկես նորա աչքերը»:

Օերունի կոյրը Տովեիթ, շոտովելով իր որդուն առաջը գուրս դաշ, գլուխեցաւ և որդին շուտ դնաց նրան բարձրացրեց: Հայրը և մայրը զրկեցին իրենց սիրելին և ամէնքը միասին շնորհակալ եղան Աստուծոյ և ջերմեռանգութեամբ աղօթք արին: Երբ փոքր ինչ հանդառացան, ուրախութեան առաջն բորիներից յետոյ, Տուրիան առաւ ձկան լեղիով լիք ամանը և օծեց նրանով իր հօր աչքերը: նոյն բուլին փառը աչքերի բիրից հեռացաւ և Տովեիթ միասւ տեսնել: Ամէնքը փառաւորեցին Աստուն: Եերունի Տովեիթ ասաց ուրախութեամբ: «Տէր Աստուած Խրայէլ, շնորհակալ եմ Քեդնից: Դու պատմեցիր ինձ, բայց Դու էլ ողորմեցար, և էլ տեսնում եմ իմ որդուս Տուրիային:

Բարեպաշտ Տովեիթ առաջն խօսքերը, աչքերի

բացվելից յետ, էին շնորհակալութեան աղօթքը Աստուծուցոյ: Նա զիտէր, որ ամէն ուրախութիւն Աստուծոյ պարզեւ է և ամէն բանի մէջ տեսնում էր նա Աստուծոյ բարութիւնը:

Տովեիթ ուրախ սրտով գնաց իր հարսի առաջը Նիւնուէի զոներիցը զուրս, ով որ նրան ճանաչում էր, զարմանանում էր, որ նա առանց առաջնորդի գնում է, իսկ Տովեիթ ամէնի առջեր փառաւորում էր Աստուծոյ, որ դարձրեց նրան աչքի լոյր: Տովեիթի բոլոր աղբականները ուրախանում էին և եօթն օր տօնում էին Տուրիայի պատկը: Խնջոյքի օրերը անցնելից յետ, երակումն էլ, հայրը և որդին, ինպրեցին ծառեալ Ապարակային, որ իրմեւ շնորհակալութեան նշան ընդունէ իւրենց բոլոր առայուածի կեսը. բայց հրեշտակը ասաց նրանց: «Փառաւորեցէք Աստուն ամէնի առջեւ, նա խրկեց ձեզ մեծ ողորմութիւններ. թագաւորի գաղտնիքը պահն հարկաւոր է: իսկ Աստուծոյ գործքերը յայնեւը բարի է: Պահը, աղօթք, և ողորմութիւն ամէն դարձերից լաւ են: Լաւ է քիչը արդարութեամբ, քան թէ շատը անարդարութեամբ: Ողորմութիւնը փրկում է, մահից և սրբում է մեղքերը, ողորմութիւն և արդարութիւն անողները կեանք կ'ասանան. խստախրտ մեղաւորը իր հոգւոյ թշնամին է: Ես չեմ ծածկիլ ձեզնից մեծ գաղտնիքը: «Այն ժամանակ», ասաց Հրեշտակը Տովեիթին, «Երբ դու աղօթք էիր անում և քո հարսդ Սառան էլ աղօթք էր անում, ես տանում էի ձեր աշխաթքը Ամենարարձեալի առաջը: Երբ դու թաղում էիր մեռածներան և այս բարի զուծի համար չծուլացար

մեղանից էլ վեր կենալ և թողնել քո ճաշդ, ևս քեզ  
չեա էի այն ժամանակ. ևս այն բողը տեսայ: Աստու-  
ած խրիեց ինձ, որ պատկեմ քեզ և քո հարաիդ Սա-  
ռային: Ես Հռափային եմ, մէկը այն եօթն սուրբ  
Հրեշտակերից, որոնք տանում են սուրբերի աղօթքը  
և կանգնում են Ամենաբարձրեալի աթոռի առջեր:

Այս որ լսեցին Տովեիթ և իր որդին, դողացին և  
յարգութեամբ ընկան Հրեշտակի առջեր:

«Պաղաղութիւն ձեղ», շարունակեց նա, «Ո՛ վախե-  
նաք ոչընչեց, ևս ոչ թէ իմ կամքովս, այլ Աստուծոյ  
Հրամանով եկայ ձեղ մօտ և բնակեցայ ձեր մէջ: Փա-  
ռառողեցէք Նրան, աղօթք արէք Նրան, այժմ ևս զա-  
նում եմ Նորա մօտ, Ավ ինձ խրիեց. յայանեցէք մար-  
դոց և զրեցէք Հրաշքները, որոնք ձեղ պատահեցան»:

Այս ասելից յետ Հռափային Հրեշտակը անհետա-  
ցաւ: Տովեիթ և իր որդին ընկան գետին, փառաւորեցին.  
Աստծուն և ամէնին պատմում էին իրենց պատահած  
Հրաշքները:

Արանից յետոյ ծերտնի Տովեիթը ասզրեցաւ էլի վաթ-  
առն երկու տարի յաջորդութեամբ և տեսաւ իր թոռ-  
ներուն: Իր մահից առաջ նա նախադուշակեց որդոցը,  
որ Նինուէն շուտ կ'քանդվի և Խարայէլացիները կ'զառ-  
նան իրենց հայրենիք: Տովեիթ մեռաւ խորին ծերու-  
թեան մէջ հարդիք յիտան ութը տարեկան և պատ-  
ուով թաղվեցաւ: Տուրիա, Նորա որդին, կեցաւ իր մօր  
մօտ մինչեւ Նորա մեռնիը և յետոյ տեղափոխեցաւ Նկ-  
բառունոց իր աներոջը՝ Հռափուելի մօտ և պատվում էր  
Նրան և Նորա կոտ Հեղանային իրեն Ցնողներուն.

Նա վատկեց նոցա աչքերը: Տուրիան կեցաւ երկրիս ե-  
րեսին հարիւր քսան եօթն տարի և համովիստ վախ-  
ճան այսու արդարների մահով:

ԳԱՐԻՒԹ. Դ.Ա.

ՅՈՒԴ.Ի.Թ

«Արիլոնի թագաւորը, Նարուգողոնոսոր, պատուերազմ  
էր տալիս Մարաց Արփաքաստ թագաւորի զէմ: Նա  
խրիեց ամէն զրացի աղջերին մօտ օդնութիւն խնդրե-  
լու, միսցն ամէնքն էլ բացասակցին: Երբ յաջողութեամբ  
վերջացրեց պատերազմը Մեդացւոց թագաւորի զէմ,  
Նարուգողոնոսոր միտքը զրեց վրէժ համել նրանցից, ո-  
րոնք օդնութիւն չոտուին իրեն: Այս բանի համար խրիեց  
նա իր Հողերինոնէս զրապարին բազմաթիւ զօրքով  
նոցա զէմ: Այս զօրավարը սրով և կրակով ջնջում  
էր ամէն իրեն ընդիմացողներուն: Յուդացի բնակիչները,  
որոնք նմանապէս նրանցից էին, որ բացասակցին Նարու-  
գողոնոսորին օդնութիւն, սպասում էին նոյն վիճակը:  
Նոքա պահք կարդեցին և վճռեցին մինչև վերջին զօ-  
րութիւնը պաշտպանել իրենց: Հողերինոնէս զարմացաւ  
նոցա սյապիսի հաստատամութիւնն վերայ: Նա պա-  
շտեց Բետուղիս բերդը, կարեց ջրի աղբւալները և  
քարաքի բնակիչները քաշում էին ջրի մեծ պակասու-  
թիւն: Թշուառութիւնը Բետուղիսի մէջ սարասիելի էր  
և շատերը կամենում էին վերջապէս անձնատուր լինել.  
Քան թէ մեռնիլ ծարաւից: ՎՃՌԵՋԻՆ էլի հինդ օր  
սպասել և եթէ այս միջոցումն Աստուած իրենց օդ-  
նութիւն չի տալ, մասնել ըերդը թշնամեաց ձեռքը:

Բետուղիա քաղաքում բնակում էր մի բարեպաշտ և գեղեցիկ այրի կին, Յուղիթ անտևսով, որ միաը դրեց փրկել քաղաքը: Նա ոչ ոքին չայսնեց իր խորհուրդը. բայց միայն խնդրեց իր քաղաքացիններուն, որ աւելի ջերմեռանդութեամբ աղօթք անեն իրեն համար Աստծուն: Յետոյ հանեց իր սգոյ շորերը, որ իր մարդու մահուան պատճառով հաղած ունէր, զարգարիցաւ Ճիշտութեամբ և դնաց թշնամեաց բանակը: Նրան տարան Հողեփեռնէսի մօտ, որին նա ասաց, թէ ինքը կարող է գանել միջոց հեշտութեամբ քաղաքին տիրելու, յետոյ նա խնդրեց միայն, որ իրեն և իր հետ եկած աղամին հրաման տայ ամէն առաւած և երեկոյ բանակից գուրա դնալ աղօթք անելու համար:

Հողեփեռնէսը շատ բաւական մնաց այս առաջարկութեամբ և հրամաց պահապանին, որ չարդել Յուղիթին և նորա աղամինին բանակից գուրս գալու առաւածները և երեկոյները: Նա սիրահարեցաւ Յուղիթի գեղեցիկութեան և խոհեմութեան վերայ: Նորա գալստի չորրորդ օրը հրաւիրեց նրան իր սեղանի մօտ նաև: Երբ նա վրանը մտաւ, Հողեփեռնէս ասաց, մի՞տո մեզ հետ, կեր, խմ'ր, և ուրախացիթ: «Ոհ», յայնի բան է, ես ուրախ կլինեմ», պատասխանեց Յուղիթ, «ինձ գեռ ոչ ոք երթք այսպիսի յարդանք չէ ցցց առել: Հողեփեռնէս, Յուղիթի ներկայութեամբ ուրախացած, իր մում էր սովորականից աւելի, նոյնպէս էլ նորա սպասաւորները: Սեղանից յետոյ ամէնքը հեռացան մէկ մէկից, ով կողմն կամեցաւ. վրանում ոչ ոք չմնաց բացի Յուղիթից և Հողեփեռնէսից, որ այնպէս հարթեցաւ, որ

պատկած էր անկողնի վերայ առանց զգացողութեան: Յուղիթ, նրան մօտենարով, ասաց արտասովով. «Տէր Աստուած Խորացիի, զօրացրու ինձ այս ժամիս»: Յետոյ նո վեր առաւ Հողեփեռնէսի սուրբ, որ կախած էր նորա զլիի վերայ, և կտրեց նորա զլուկը: Յուղիթի աշխանմը Հողեփեռնէսի զլուկը զրաւ պարկի մէջ:

Եռաւօտը իրենց սովորութեամբ դուրս գնացին նոքտ բանակից իրենց աղօթքը կատարելու. բայց էլի բանակը գառնալու փոխարէն նոքա մտան քաղաքը:

Երբ քաղաքի ծերերը ժողովեցան հրապարակում, Յուղիթ ցոյց տուեց նրանց Հողեփեռնէսի զլուկը: Բետուղիասում տմէնքը ուրախացան շատ և նոյն ժամին վճռեցին դուրս գալ քաղաքից և յարձակել թշնամեաց վերայ: Ոշնամիները, գեռ չիմանալով իրենց զօրավարի մահը, ծաղրում էին Յուղացիներուն, նոքա ժողովեցան Հողեփեռնէսի վրանի ըղա կոմը, կարծելով, որ նա գեռ քնում է, բայց տեսնելով, որ նոյա զօրավարը շատ ուշ է զարթում, մի քանիսը յանձն առան վրանը մանելու և գտան այնուեղ Հողեփեռնէսի զլիսատած մարմինը: Զօրավարի մահուան համբաւը մեծ խովութիւն զցեց բանակի մէջ: Զօրքը բանակը թողնելով փախաւ և բետուղիայի բնակիչները մտան բանակ և գտան այնուեղ մեծ աւար, որ երեսուն օրվան մէջ հազիւ կարողացան քաղաք տանել: Յուղիթը երգեց գովասանական երդ Աստծուն:

ԳԱՅԻՆ Դ.Բ.

## ԲՈԲԵԼՈՆԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ. ԴԱՆԻԵԼ.

Քարելոն տարած գերի Եբրայեցիների մէջ կօյն շառաերը թագաւորական ցեղից և մեծամեծների որդիքը: Նարուգովոնսոր հրամայեց այս ընտանիքներից ընտրել խելօք և գեղեցիկ երեխաներուն: Նա նշանափեց նրանց իրեն ծառայելու համար, հրամայեց առվորցնել նրանց ամէն զիտութիւններ և արհեստներ, սրահել լաւ, տալ նրանց կերակուր և զինի իր սեղանից:

Այս երեխաների անուններն էին Դանիել: Անանիա, Ազարիա, և Միասել: Նոքա մաքերը զրին չպրծածելու նոյա բերած ոչ քաղցրահամ կերակուրները և ոչ թանգաղին զինները: Չնայելով իրենց մատաղ և փափուկ հասակին, Եբրայեցի երեխաները էին բարեխառն, Նոքա ոչինչ էին համարում ամէն երկրային բարութիւնները, և ոչինչ ուրիշ բանի վերայ չէին մտածում, բայց միայն որ կատարեն Ասուծ. Ժոյ պատուիրանները: Նոքա զիտէին, որ թագաւորի սեղանում դանիվում են շատ այնպիսի կերակուրներ, որոնք Մովսէսի օրէնքներով արշկերմած են, և վախենալով, որ նրանցից չանցնեն, նախադասելի համարեցին բաւականանալ հացով, կանանչեղենով և ջրով: Եբրայեցի մանուկների վերակացն, որ թագաւորի առաջին պաշտօնեաններից մէկն էր, յայտնում էր Դանիելին և նորա ընկերներին, որ իր վերայ կ'բարկանայ թագաւորը, եթէ կ'իմացվի, որ նոքա չեն կերակուր վում արքունի սեղանից բերած կերակուրներով և եթէ թագաւորը կ'աենէ նոյա երեսները գեղնած և ախուր-

բայց Դանիել խնդրեց նրան, որ միայն սասմորեայ վորձ անէ և եթէ այս միջոցումն կ'նկատէ, որ իրենք վատանում են կամ գեղնում, նա խոստացաւ ուտել այն, ինչ որ կ'հրամայեն: Վերակացուն համաձայնեցաւ: Նրանց սկսան ուտելու տալ միայն ունտ, հայ և ջուր խմելու համար: Նշանակած տասնորեայ ժամանակից յետ, նոքա աւելի առողջ և զւարիթ երեսում էին, քանի թէ այն երեխանց երեսները, որոնք ուտում էին թագաւորի սեղանի կերակուրներից: Այս տեսնելով, վերակացուն հրամայեց նրանց գործածել այն կերակուրը, ինչ որ կ'բարեհածեն երենք: Ասաւած վարձարեց այս բարեկացտ և բարեխառն երեխաններուն, տալով ընդունակութիւն դիսութիւններ սովորելու: Նոքա մեծ յառաջադիմութիւններ արին և զիտութեամբ անցան ամէն բարեկացի ուսեալներից և իմաստուններից, նրանց յանձնեցին երեւելի գործքեր բարելոնի երկրում (Պան. գ. 12.:

ԳԱՅԻՆ Դ.Բ.

## ԵՐԵՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԿՐԱԿԻ ՀՆՈՑԻ ՄԷջ

